# ԷՋՄԻԱԾԻՆ



Թ

2002

ДУБЛЕТ

ԾԸ ՏԱՐԻ

# ԷՋՄԻԱԾԻՆ

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ
ԱՄՍԱԳԻՐ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ
ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ

Սեպտեմբեր
**2002**

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

## ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՆԴԱԿՆԵՐ ԵՎ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳՐԵՐ

ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ կոնդակը
Էդիկ Բաղսեղյանին «Ս. Գրիգոր Լուսավորիչ»
շքանշանով պարգևատրելու մասին . . . . . . . . . . . . . . . . 3
Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի Օրհնության և
գնահատանքի գիրը ՀԲԸՄ-ի Ընդհանուր Ժողովի անդամներին . . . . 5
Հայրապետական գնահատություն . . . . . . . . . . . . . . . . 7

## ՊԱՇՏՈՆԱԿԱՆՔ

Հայաստանի անկախության 11-րդ փարեդարձը
Մայր Աթոռ Ս. Էջմիածնում . . . . . . . . . . . . . . . . 8
Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի շնորհավորական
ուղերձը Անկախության օրվա առիթով . . . . . . . . . . . . . . 8
Հռոմի Սրբազան Քահանայապետ Նորին Սրբություն
Հովհաննես-Պողոս Բ Պապն իր աջակցությունն է հայտնում
Ամենայն Հայոց Հայրապետին . . . . . . . . . . . . . . . . 9
Գոհաբանական աղոթք Երևանի Ս. Գրիգոր Լուսավորիչ
Մայր եկեղեցում . . . . . . . . . . . . . . . . . . . . 10
Մայր Աթոռ Ս. Էջմիածնում կատարվեց հոգեհանգստյան
արարողություն՝ ի հիշատակ սեպտեմբերի 11-ի
ահաբեկչության զոհերի . . . . . . . . . . . . . . . . . . 11
Հոգեհանգստյան արարողություն երջանկահիշատակ
Վազգեն Ա Հայրապետի շիրիմի առջև . . . . . . . . . . . . . . 12
Գերագույն Հոգևոր Խորհրդի նիստ Մայր Աթոռ Ս. Էջմիածնում . . . . . . 13

## ՔԱՐՈԶԽՈՍԱԿԱՆ

Տ. Պարգև արքեպիսկոպոս Մարտիրոսյանի քարոզը՝
խոսված Ս. Էջմիածնի Մայր Տաճարում Խաչվերացի տոնին . . . 14
Տ. Սասուն ծ. վարդապետ Զմրուխտյանի քարոզը՝
խոսված Ս. Էջմիածնի Մայր Տաճարում Վարագա Խաչի տոնին . 16
Տ. Արշակ վարդապետ Խաչատրյանի քարոզը՝
խոսված Ս. Էջմիածնի Մայր Տաճարում . . . . . . . . . . . . 18

## ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ

**ԵՂԻՇԵ ԲԱՋՈՅԱՆ** - Էջմիածնի Մայր Տաճարի պատի
մի քանդակի պատմությունը . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 21

**Երաժշտագիտական**
**ԼԻԼԻԹ ՍԻՄՈՆՅԱՆ** - «Խորհուրդ մեծ և սքանչելի»
Ս. Ծննդյան շարականի ժողովրդական փարբերակները . . . . . . . . . 32

**ՀՈՎՀԱՆՆԵՍ ՔԱՏԻԿՅԱՆ** - Կարինի նահանգի
Կարնո գավառակի եկեղեցիները . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 42
**ՄԱՐԳՈ ՄԽԻԹԱՐՅԱՆ** - Խորեն եպիսկոպոս Ստեփանեի
կյանքն ու լրագրային գործունեությունը . . . . . . . . . . . . . . . . . . 46
**ՌԻՄԱ ԱՐՏԱՎԱԶԴԻ ՄԻՐՈՒՄՅԱՆ** - Կրոնի և Եկեղեցու
նշանակությունը հայ ժողովրդի պետաիրավական
կյանքի կազմակերպման գործում ըստ XIX դարի հայ մտածողների . . . 58
**ԱՐՄԵՆ ՀԱԿՈԲՅԱՆ** - Թաթախոս հայերի լեզվական մշակույթի շուրջ . . 70
**ՎԱՉԱԳԱՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ** - Ասփվածաշնչյան թեմաները
Լևոն Շանթի ստեղծագործություններում . . . . . . . . . . . . . . . . . 83
**ԳՈՒՐԳԵՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ** - Գևորգյան Հոգևոր ճեմարանի
սաների շարադրությունները և ավարտաճառերը . . . . . . . . . . . . . 89

**Հրապարակում**
**ՍԱՆԴՐՈ ԲԵՀԲՈՒԴՅԱՆ** - Վազգեն Վեհափառի
«Տխուր խոսքը»-ը . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 94
**ՎԱԶԳԷՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ** -
Մեր փխուր խոսքը . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 95

## ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ ԵՎ ԹԵՄԵՐՈՒՄ

Սկսվեց Գևորգյան Հոգևոր ճեմարանի ուսումնական նոր փարին . . . . 96

Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրանոց
Ձեռամբ Ամենայն Հայոց Կաթողիկոսի բացվեց Սևանի Վազգենյան
Հոգևոր Դպրանոցի կացարանային նոր մասնաշենքը . . . . . . . . . 99
Սկսվեց Վազգենյան Հոգևոր ճեմարանի ուսումնական նոր փարին . . 100

**ԳԵՎՈՐԳ ՍՐԿ. ՄԱԿԱՐՅԱՆ** - Հանդիսություն Վեհարանում՝
նվիրված Անիի Մայր եկեղեցու օծման 1000-ամյակին . . . . . . . . . 101

Նոր խաղահրապարակ և համակարգչային լսարան
Նորքի Հայորդյաց տանը . . . . . . . . . . 104
ԱՐԻՍՏԱԿԵՍ ՄՐԿ. ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ - «Ես դնեմ զձեռս
ի վերայ սոցա, եւ դուք ամենքեան աղօթս արարէք» . . . . . . . . 105
Տ. Պսակ աբեղա Մուրադյան . . . . . . . . . . 108
Տ. Գաբրիել աբեղա Սարգսյան . . . . . . . . . . 109
Տ. Նահապետ քահանա Խաչատրյան . . . . . . . . . . 110
Տ. Նշան քահանա Պանֆյորով . . . . . . . . . . 111
Տ. Ասողիկ քահանա Կարապետյան . . . . . . . . . . 112
Տ. Ադամ քահանա Մակարյան . . . . . . . . . . 113
Տ. Տրդատ քահանա Բոզիկյան . . . . . . . . . . 114
Տ. Պետրոս քահանա Եզեկյան . . . . . . . . . . 115

ՎԱՀԱՆ ՄԵՂԱՅԱՆ - Նոր հուշակոթողի բացում . . . . . . . . 116
Բացվեց մանկատանը կից հանրակացարան . . . . . . . . 119

Լուրեր Գուգարաց թեմից
ՆՈՒՆԵ ԲԱԼՅԱՆ - Ուխտագնացություններ Ախթալայի
Ս. Աստվածածին վանք և Ղուրսալուի Ս. Գևորգ եկեղեցի . . . . . . . 120
ԼՈՒՍԻՆԵ ԲԱԼՅԱՆ - Եկեղեցասեր Երիտասարդաց Միության
անդամները պատկերասրահում . . . . . . . . . . 121

ՍԵՊՈՒՀ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՉՈՒԼՋՅԱՆ - Նարեկացու «Մատյան»-ի
գրության 1000-ամյակին նվիրված գիտաժողով Վենետիկի
Մխիթարյան միաբանությունում . . . . . . . . . . 122

## ՄԻՋԵԿԵՂԵՑԱԿԱՆ

ԳԱՅԱՆԵ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ -ԵԵԿ-ի նախապատրաստական
ծիսական վերջին ժողովը . . . . . . . . . . 124
Բոզեի 10-րդ էկումենիկ գիտաժողովը . . . . . . . . . . 125

ՀԱՅԿԱՆՈՒՇ ՄԵՍՐՈՊՅԱՆ - Եռանդաշատ հոգևորականը . . . . . . 126

## ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Իսի-լե-Մուլինո քաղաքի .
քաղաքապետ Անդրե Սանտինիին . . . . . . . . . . 128
Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ՀՀ
Քաղաքացիական ծառայության խորհրդի անդամներին . . . . . . . 128

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Ալեքսանդր Վոլոշինին . . . . . 129
Գարեգին Երկրորդ Վեհափառն ընդունեց Սամցխե-Ջավախեթիի լիազոր ներկայացուցչին . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 129
Վեհափառ Հայրապետն ընդունեց Սարատովի նահանգապետին . . . . . 130

ՀԱՅԿԱՆՈՒՇ ՄԵՍՐՈՊՅԱՆ - Հանգիստ Վիրահայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Գևորգ արքեպիսկոպոս Սերայդարյանի . . 131

Եկեղեցական բեմ. լուրեր . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 134
"Эчмиадзин" официальный журнал Эчмиадзинского Католикосата . . . 136
"Etchmiadzin" official monthly of Holy Etchmiadzin . . . . . . . . . . . . . . . 140
"Etchmiadzine" organe officiel du Saint-siège d'Etchmiadzine . . . . . . . . . . 144

ՀՐԱՄԱՆԱՒ

# Տ. Տ. ԳԱՐԵԳՆԻ ԵՐԿՐՈՐԴԻ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

# ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ ԷԴԻԿ ԲԱՐՍԵՂՅԱՆԻՆ «Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ» ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

## ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱԶԱՏ ԶԱՒԱԿՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ ՄԵԾԱՐԳՈՅ ՏԻԱՐ ԷԴԻԿ ԲԱՐՍԵՂԵԱՆ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր ողջոյնն ու օրհնութիւնն ենք յղում Ձեզ՝ մեր ժողովրդի եւ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու արժանի հաւատաւոր զաւակին:

Մեծարգոյ պրն Բարսեղեան,

Տիրոջ կամքով Ձեզ անձնապէս ճանաչելու առիթ ենք ունեցել եւ բազում անգամներ գոհունակութեամբ ականատես եղել Ձեր որդիական անսակարկ սիրուն ու ծառայասիրական պատրաստակամութեանը՝ հանդէպ Մայր Եկեղեցին եւ համազգային մեր նուիրական սրբավայր լուսաւորչապսակ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը:

Բարձր ենք գնահատում, որ Մայր Հայրենիքում հոգեւոր վերազարթօնքի այս շրջանում Դուք յամենայնի օգնական ու աջակից էք Սիւնեաց թեմի բարեջան հոգեւոր դասին՝ ի խնդիր Մայր Եկեղեցու Տիրաւանդ առաքելութեան արդիւնաւոր իրականացման: Շնորհիւ Ձեր օժանդակութեան, ղողանջում են զանգերը Կապանի Սուրբ Մեսրոպ Մաշտոց եկեղեցու, որը Քրիստոնէութիւնը Հայաստանում պետական կրօն հռչակման 1700-ամեակի յոբելեանական պարում աստուածահաճոյ գեղեցիկ ընծայ եղաւ բարեպաշտ մեր ժողովրդին: Սիւնեաց աշխարհի հնագոյն եւ աւանդոյթներով հարուստ Կապան քաղաքի բարեպաշտ հաւատացեալները երախտագէտ աղօթքով ու օրհնութեամբ են յիշում

Ձեզ եւ Ձեր աջակցութիւնը, որով կառուցուեց եւ թարգմանիչ սուրբ վարդապետի անունով օծուեց վեհաշուք սրբավայրը:

Մեծարգոյ պրն Բարսեղեան, Ձեր եկեղեցաշէն ծառայութեանց ու վաստակի բարձր գնահատանքով սիրով ընդառաջում ենք Միննաց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Աբրահամ եպիսկոպոս Մկրտչեանի ազնիւ խնդրանքին եւ շնորհում Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

## . ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

պատուոյ բարձրագոյն շքանշանը:

Ի խորոց սրտի աղօթում ենք առ Ամենակալն Աստուած, որ Իր Հայրական օրհնութեան ներքոյ պարգեւի Ձեզ քաջառողջ երկար կեանք եւ երկնատուր ամենայն բարիք, որպէսզի Դուք հայրենապաշտ ոգով ու եկեղեցանուէր գործերով շարունակէք Ձեր ծառայութիւնը Տիրախնամ մեր Եկեղեցուն եւ հաւատաւոր ժողովրդին:

*Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ընդ ձեզ եւ ամենեսեան. ամէն:*

Օրհնութեամբ՝

**ԳԱՐԵԳԻՆ Բ**
**ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ**

Տուաւ Կոնդակս ի 4-ն Սեպտեմբերի
յամի Տեառն 2002 եւ ի թուին հայոց ՌՆԾԱ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 110

# ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏԱՆՔԻ ԳԻՐԸ ՀԲԸՄ-Ի ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄՆԵՐԻՆ

## ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՍ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱԶԱՏ ԶԱՒԱԿՍ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ ԱՆԴԱՄՍ ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԵԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ, ՈՐ Ի ՆԻՒ ԵՈՐՔ, ԱՄՆ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից ջերմ ողջոյն ենք յղում եւ Հայրապետական Մեր օրհնութիւնը բերում ՀԲԸ Միութեան Ընդհանուր Ժողովին՝ Միութեան Մեծարգոյ Նախագահ Տիար Պերճ Սեդրակեանին, Գործադիր Վարչութեան յարգարժան անդամներին, Միութեան անդամ բարեգործ հայորդիներին, փարբեր երկրներում գործող ՀԲԸՄ-ի մասնաճիւղերին ու հաստատութիւններին:

Միաւորուած դրօշի ներքոյ Բարեգործութեան, որը առ Աստուած հաւատի ու մարդկային առաքինութեան մեծագոյն արտայայտութիւն է, դուք աշխարհի տարբեր կողմերից հաւաքուել էք Նիւ Եորքում, ՀԲԸ Միութեան տարեկան գործունէութեան արդիւնքը ի մի բերելու, գնահատելու եւ յետագայ աշխատանքները ուղղորդելու համար:

ՀԲԸ Միութեան գործունէութեամբ մեր ժողովրդի կեանքում տեսանելի է ամենուր բարեգործութեան արարող ուժը: Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան անունը քաջածանօթ է եւ Սփիւռքում, եւ Հայրենիքում: Բազմաթիւ հայորդիք մայրենի մեր լեզուին, մեսրոպատառ գրին, հնագոյն ու հերոսական մեր պատմութեանն ու հարուստ մշակոյթին հաղորդ են շնորհիւ Բարեգործականի հովանաւորութեամբ գործող հաստատութիւնների: Բազում են եկեղեցիները, ազգային դպրոցներն ու կրթօջախները, մշակութային ու մարզական կազմակերպութիւնները, խնամատար հաստատութիւնները, որոնք կառուցուած ու հիմնադրուած են Միութեան կողմից եւ այսօր ծառայում են հաւատր մեր ժողովրդին՝ յանուն համազգային մեր կեանքի առաջընթացի ու աշխարհասփիւռ հայոց միասնականութեան:

Սիրելիներ, Ընդհանուր Ժողովի գումարման այս հանդիսաւոր առիթով բարձր գնահատանքով ենք նշում Միութեան հաւատարմութիւնը, սէրն ու նուիրումը համայն հայութեան հոգեւոր կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հանդէպ եւ կարեւորում այն աւանդը, որ բերում է Բարեգործականը յանուն Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու պայ-

ծառութեան ու շինութեան: Աղօթական հոգով ենք յիշում ՀԲԸՄ-ի երկարամեայ Նախա-ծառութեան ու շինութեան: Աղօթական հոգով ենք յիշում ՀԲԸՄ-ի երկարամեայ Նախագահ հոգելոյս Ալեք Մանուկեանին եւ Մեր առանձնակի գնահատանքը բերում նրա արժանաւոր յետնորդ Տիկին Լուիզ Մանուկեան-Սիմոնին, որոնց ջանքերով Մայր Աթոռի հանդէպ Միութեան սէրն ու ակնածանքը արգասաւորուեց նոր նախանձախնդրութեամբ ու նոր ձեռնարկներով: Այսօր ուրախ ենք հաստատելու, որ քաջածանօթ ենք նաեւ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան նոր Նախագահ Տիար Պերճ Սեդրակեանի՝ առ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին ունեցած որդիական խանդաղատանքին ու նուիրումին, եւ միանշանակ է Մեր համոզումը, որ Միութեան գործունէութիւնը նրա նախագահութեան շրջանում պիտի յատկանշուի Մայր Աթոռին զօրակցութեան ու նրա հետ համագործակցելու նոյն ոգով ու եռանդով:

Մեծապէս ուրախալի ու քաջալերող է, որ աւանդոյթներով հարուստ, [illegible] Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութիւնը գործուն մասնակցութիւն է բերում եւ բազմարդիւն ներդրումներ կատարում Մայր Հայրենիքում, որը վերահաստատուած անկախ պետականութեան կայացման ճանապարհին ունի բազում խնդիրներ, որոնք կարօտ են համազգային միաբանութեան:

Ի խորոց սրտի Մեր աղօթքն է, որ Բարին Աստուած Իր հանապազ օրհնութեան ներքոյ հաստատուն պահի Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութիւնը եւ նոր յաջողութիւններ պարգեւի նրա ազգաշէն ու հայրենանուէր գործունէութեանը: Եւ թող այս Ընդհանուր Ժողովը նոր հանգրուան դառնայ Միութեան վսեմ առաքելութեան ճանապարհին:

*Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Սուրբ Հոգւոյն եւ յաւէտ օրհնեալ ի Մէնջ. ամէն:*

Օրհնութեամբ՝

**ԳԱՐԵԳԻՆ Բ**
**ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ**

Տուաւ Գիր Օրհնութեան ի 11-ն Սեպտեմբերի
յամի Տեառն 2002 եւ ի թուին Հայոց ՌՆԾԱ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 295

# ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒԹՅՈՒՆ

2002 թվականի սեպտեմբեր ամսվա ընթացքում Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Հայրապետի Կոնդակով

**«Ս. Ներսես Շնորհալի»** շքանշանով պարգևատրվել են.
Արամ Եզփանյան (ԱՄՆ Արևելյան թեմ)
Սոնիա Ջոն (Հնդկաստան)
Հարրի Սողիկյան (ԱՄՆ Արևելյան թեմ)
Դին Շահինյան (ԱՄՆ Արևելյան թեմ)
Անահիտ Գալայճյան (ԱՄՆ Արևելյան թեմ)

**Օրհնության գիր** է տրվել.
Շըրլի Մահեռն (Կանադահայոց թեմ)
Մարսել Փրյուպոմ (Կանադահայոց թեմ)
Ռեյմոն Սեթլաքուեե (Կանադահայոց թեմ)
Արշամ քհն. Պոզոյան (Արգենտինայի հայոց թեմ)
Ս. Հովհաննու Կարապետ եկեղեցու ծխական համայնքին (ԱՄՆ Արևմտյան թեմ)
Ս. Անդրեաս եկեղեցու ծխական համայնքին (ԱՄՆ Արևմտյան թեմ)
Ս. Աստվածածին եկեղեցու ծխական համայնքին (ԱՄՆ Արևելյան թեմ)
Կոմիտաս դպրաց դասին (ԱՄՆ Արևելյան թեմ)
Ամերիկայի հայկական համագումարին (ԱՄՆ Արևելյան թեմ)

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ 11-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Հայաստանի անկախության 11-րդ տարեդարձի օրը, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետությամբ, Մայր Աթոռ Ս. Էջմիածնում տեղի ունեցավ Հանրապետական մաղթանք: Վեհափառ Հայրապետը Իջման Ս. Սեղանի առջև ծնկաչոք աղոթք առաքեց առ Աստված՝ Հայաստանի Հանրապետության անսասանության և շենացման համար:

Նույն օրը Նորին Սրբությունը բարձրաստիճան հոգևորականների ուղեկցությամբ եղավ նաև Եռաբլուրում, ուր տեղի ունեցավ զոհաբանական աղոթք:

## Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՕՐՎԱ ԱՌԻԹՈՎ

Սիրելի ժողովուրդ հայոց ի Սփյուռս աշխարհի.

Անկախության 11-րդ արշալույսն է բացվել հայոց երկնքում:

Անկախության օրվա ուրախ առիթով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից ջերմորեն ողջունում և շնորհավորում ենք բոլորիդ և հղում Հայրապետական Մեր օրհնությունը:

Ազատ ապրելու ցանկությունը բնական ձգտումն է յուրաքանչյուր ժողովրդի և նրա անկողոպտելի իրավունքը, քանզի պարգևն է Աստծո:

Ազատության համար շատ ենք մաքառել: Ազատության սիրով, գալիքի հանդեպ հավատով ու լավատեսությամբ 1991 թվականին վերահաստատեցինք հայոց անկախ պետականությունը: Գոհություն ու փառք մատուցենք Ամենակարող Բարձրյալին և վերստին արժևորենք մեր անցած դժվարին ուղին ու գնահատենք մեր ձեռքբերումները: Անկախության օրվա սրբազան խորհրդով հաստատենք մեր կամքը հավատարմորեն ծառայելու հայրենի պետականության զորացմանը ու միաբանության սիրով միավորենք մեր ուժերը, մեր եռանդն ու ջանքերը, որպեսզի համայն հայոց Հայրենիքը լցվի շինությամբ ու նորոգվի պայծառությամբ:

Միածնաէջ Սուրբ Սեղանի առջև Հայրապետիս աղոթքն է, որ Աստված Իր օրհնության ներքո խաղաղ պահի աշխարհը համայն ու պահպանի աշխարհասփյուռ ազգս հայոց և Հայրենիքը մեր. ամեն:

**ԳԱՐԵԳԻՆ Բ**
**ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ**

Ս. Էջմիածին,
20 սեպտեմբերի 2002 թ.

# ՀՌՈՄԻ ՍՐԲԱԶԱՆ ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏ ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ-ՊՈՂՈՍ Բ ՊԱՊՆ ԻՐ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ Է ՀԱՅՏՆՈՒՄ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմից հատուկ գրություն էր առաքվել քույր Եկեղեցիների հովվապետերին՝ կապված Երուսաղեմի հայոց Պատրիարքությանը պատկանող «Պարոն Տեր» կալվածքի շուրջ ծագած խնդիրներին:

Ի պատասխան Նորին Սրբության նամակի, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում ստացվել է Հռոմի Սրբազան Քահանայապետ Նորին Սրբություն Հովհաննես-Պողոս Բ Պապի նամակը:

Կաթոլիկ Եկեղեցու հոգևոր պետն իր մտահոգությունն է հայտնել Վեհափառ Հայրապետին՝ տեղեկացնելով, որ հանձնարարական է տրվել Վատիկանի արտաքին գործոց գրասենյակին՝ դիմելու Իսրայելի կառավարությանը՝ «Պարոն Տեր» կալվածքի շուրջ ծագած խնդրի արդարացի լուծման համար:

«Հուսով եմ, որ բարի կամքի և փոխադարձ հարգանքի ոգով հնարավոր է այս ծավալի իրավիճակից լուծում գտնել, որով կպահպանվի Երուսաղեմի հնագույն հայոց Պատրիարքությունը և այսպիսով կկանխվի ևս մեկ հարված՝ ուղղված քրիստոնեության առկայությանը Ս. քաղաքում», - նշել է Հովհաննես-Պողոս Բ Պապն իր նամակում:

4 սեպտեմբերի 2002 թ.

*ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ*
*ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*

# ԳՈՀԱԲԱՆԱԿԱՆ ԱՂՈԹՔ ԵՐԵՎԱՆԻ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑՈՒՄ

**Ամենայն Հայոց Հայրապետը եկեղեցաշեն բարերարներ Լուիզ Սիմոն-Մանուկյանին և տեր և տիկին Նազար և Արտեմիս Նազարյաններին պարգևատրեց 1700-ամյակի շքանշաններով**

Սեպտեմբերի 9-ին Երևանի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցում, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի բարձր հանդիսապետությամբ, կատարվեց գոհաբանական աղոթք՝ մասնակցությամբ Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Նավասարդ եպս. Կճոյանի, Տ. Փառեն եպս. Ավետիքյանի և Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբան Հայրերի: Արարողությանը ներկա էին Երևանի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցու բարերարներից Լուիզ Սիմոն-Մանուկյանն ու տեր և տիկին Նազար և Արտեմիս Նազարյանները, ինչպես նաև Հայ Եկեղեցու բարերարներ տեր և տիկին Ցակուբյաններն ու տեր և տիկին Հաճիթյանները:

Արարողության ավարտից հետո Վեհափառ Հայրապետն իր օրհնության խոսքն ուղղեց ազգային բարերարներին և մեծաթիվ հավատավոր ժողովրդին՝ ի մասնավորի նշելով, որ հավատի այս տաճարը կառուցվել է հանգուցյալ ազգային հերոս և բարերար Ալեք Մանուկյանի միջոցներով ու իր զավակներ Ռիչարդ և Լուիզ Սիմոն Մանուկյանների ազնիվ նվիրատվություններով, որոնք իրենց հանգուցյալ ծնողների երազն իրականություն դարձրին իրենց եկեղեցանվեր ու ազգանվեր գործունեությամբ:

Ապա Վեհափառ Հայրապետը արարողությանը ներկա եկեղեցաշեն բարերարներ Լուիզ Սիմոն-Մանուկյանին և տեր և տիկին Նազարյաններին, իրենց ազգանվեր գործունեության համար, պարգևատրեց 1700-ամյակի հոբելյանական շքանշաններով:

Արարողությունից հետո եկեղեցական թափորն ուղղվեց դեպի Ս. Տրդատ արքայի մատուռ՝ կառուցված տեր և տիկին Նազարյանների բարերարությամբ: Մատուռում կատարվեց հոգեհանգստյան կարգ՝ ազգային բարերարների ընտանիքների և մեր ժողովրդի ննջեցյալների հոգիների հանգստության համար:

*ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ*
*ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*



ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԵՎ ՁԵՌԱՄԲ ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅԱՆ 1700-ԱՄՅԱԿԻ ՇՔԱՆՇԱՆՆԵՐՈՎ
ՊԱՐԳԵՎԱՏՐՎԱԾ ՆԱԶԱՐ ԵՎ ԱՐՏԵՄԻՍ ՆԱԶԱՐՅԱՆՆԵՐԸ



ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԵՐԵՎԱՆԻ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑՈՒՄ
1700-ԱՄՅԱԿԻ ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄ Է ԼՈՒԻԶ ՍԻՄՈՆ-ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ

# ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ ԿԱՏԱՐՎԵՑ ՀՈԳԵՀԱՆԳՍՏՅԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆ՝ Ի ՀԻՇԱՏԱԿ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 11-Ի ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ ԶՈՀԵՐԻ

Սեպտեմբերի 10-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետությամբ տեղի ունեցավ հոգեհանգստյան արարողություն՝ ի հիշատակ 2001 թվականի սեպտեմբերի 11-ին ԱՄՆ-ում կատարված սոսկալի ահաբեկչության զոհերի:

Արարողությանը ներկա էին Հայաստանի թեմական առաջնորդները, Մայր Աթոռի միաբանությունը, ՀՀ Արտաքին գործերի նախարար Վարդան Օսկանյանը, Հայաստանում հավատարմագրված դիվանագետներ, Հայաստանում գործող միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամներ, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի պաշտոնեությունը և բազում հավատավոր հայորդիներ:

Արարողության ընթացքում ընթերցվեց Վեհափառ Հայրապետի ցավակցական գիրը՝ ուղղված ԱՄՆ նախագահ Ջորջ Բուշին, ապա այն հանձնվեց Հայաստանում ԱՄՆ արտակարգ և լիազոր դեսպան Ջոն Օրդուեյին:

*ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ*
*ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*

# ՀՈԳԵՀԱՆԳՍՏՅԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆ ԵՐՋԱՆԿԱՀԻՇԱՏԱԿ ՎԱԶԳԵՆ Ա ՀԱՅՐԱՊԵՏԻ ՇԻՐԻՄԻ ԱՌՋԵՎ

Սեպտեմբերի 20-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, երջանկահիշատակ Վազգեն Ա Կաթողիկոսի ծննդյան օրվա առիթով, Հայոց 130-րդ Կաթողիկոսի շիրիմի առջև տեղի ունեցավ հոգեհանգստյան արարողություն՝ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանի հանդիսապետությամբ և Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի աղոթական մասնակցությամբ:

Ինչպես նշեց Ներսես Սրբազանը, հոգելույս Հայրապետը 39 տարիներ շարունակ Լուսավորչի գահին բազմած հովվեց իր հոտը խորհրդային անաստվածության դժվարին ժամանակաշրջանում և սակայն թողեց իր մնայուն հետքը Հայ Եկեղեցու երկնակամարում՝ արժանիորեն վաստակելով Շինարար Կաթողիկոս անունը:

Հոգեհանգստյան արարողության երգեցողությունը կատարում էին երջանկահիշատակ Կաթողիկոսի անունը կրող Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրանոցի սաները, որոնց համար արդեն ավանդական ուխտ է դարձել այցելությունը Վեհափառի շիրիմին՝ Հայրապետի ծննդյան տարեդարձի օրը:

*ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ*
*ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*

# ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Սեպտեմբերի 25-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի նախագահությամբ, տեղի ունեցավ Գերագույն Հոգևոր Խորհրդի հերթական նիստը:

Մինչ նիստի աշխատանքներին անցնելը, ժողովականներն աղոթեցին նորոգ հանգուցյալ Վիրահայոց թեմի առաջնորդ Տ. Գևորգ արքեպս. Սերայդարյանի հոգու հանգստության համար:

Նիստի ընթացքում քննարկվեցին մի շարք կազմակերպչական հարցեր:

Օրակարգի կարևորագույն հարցերից էր Ս. Էջմիածնի Մայր Տաճարի օծման 1700-ամյակի տոնակատարության կազմակերպման հարցը: Հոբելյանական այս փառատոնը լրանում է 2003 թվականին և նկատվում որպես հոգևոր վերելքի մի նոր առիթ: Նշանակալի տոնին պատշաճ կերպով նախապատրաստվելու համար ստեղծված է հանձնախումբ, որի ատենապետ նշանակվեց Տ. Խաժակ արքեպս. Պարսամյանը:

Անդրադառնալով Երուսաղեմի հայոց Պատրիարքության «Պարոն Տեր» կալվածքի խնդրին՝ ԳՀԽ-ը բարձր գնահատեց վերջինիս արդարացի լուծման համար Մայր Աթոռ Ս. Էջմիածնի և թեմերի գործադրած ջանքերը: Այժմ Իսրայելի կառավարության և Պատրիարքության միջև տարվող բանակցությունները գտել են իրենց լուծումը, և պատրաստվում է համապատասխան համաձայնագիր:

ԳՀԽ-ի նիստի օրակարգում ընդգրկված էին նաև հարցեր Հայ Եկեղեցու կանոնադրության ընդունման, Եպիսկոպոսաց ժողովի հրավիրման և եկեղեցական այլ խնդիրների վերաբերյալ:

Անդրադառնալով հայրենիքի զորացման և վերաշինության գործին Հայ Առաքելական Եկեղեցու մասնակցությանը՝ ԳՀԽ-ը առանձնակի կարևորությամբ ընդգծեց Մայր Եկեղեցու և թեմական կառույցների զորակցության անհրաժեշտությունը «Հայաստան» համահայկական հիմնադրամի աշխատանքներին: Միաժամանակ ԳՀԽ-ը գոհունակություն հայտնեց Հայ Առաքելական Եկեղեցու և ՀՀ կառավարության միջև վերջերս կնքված համաձայնագրի առնչությամբ, ըստ որի հանրակրթական դպրոցներում որպես ծրագրային առարկա ընդգրկված է Հայ Առաքելական Եկեղեցու պատմությունը:

Տեղեկացվեց Անտիոքի և Համայն Արևելքի Ասորի Ուղղափառ Եկեղեցու պետ Զաքքա Ա Իվաս Պատրիարքի առաջիկա հոկտեմբերին Մայր Աթոռ Ս. Էջմիածին կատարելիք այցի, ինչպես նաև նոյեմբեր ամսին Ամենայն Հայոց Հայրապետի Ավստրալիա հովվապետական այցի մասին:

Նորին Սրբությունը տեղեկացրեց նաև, որ հոկտեմբեր ամսից Վիրահայոց թեմում իբրև թեմակալ առաջնորդ իր պարտականությունների ստանձնմանը կանցնի Տ. Վազգեն վրդ. Միրզախանյանը: Վեհափառ Հայրապետի կողմից ընդունվել է նաև Արևմտյան Եվրոպայի Հայրապետական պատվիրակի փոխանորդ Տ. Տարոն եպիսկոպոս Ճերճյանի հրաժարականը:

Նիստի ավարտին որոշվեց ԳՀԽ-ի ընդլայնված նիստ հրավիրել հոկտեմբերի վերջին:

*ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ*
*ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*

## ՔԱՐՈԶ ԽՈՍԱԿԱՆ

# Տ. ՊԱՐԳԵՎ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ԽԱՉՎԵՐԱՑԻ ՏՈՆԻՆ

(15 սեպտեմբերի 2002 թ.)

«Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ. ամէն»:

Այսօր Հայոց Եկեղեցին տոնում է տարվա վերջին տաղավար տոնը, որ կոչվում է Խաչի տոն կամ Խաչվերացի տոն: Մենք չորս տոներ ունենք նվիրված խաչին՝ Խաչի Երևում, Գյուտ Խաչի, Խաչվերաց և Վարագա Խաչ:

Մենք, որպես քրիստոնյաներ, հաճախ ասում ենք՝ ո՛վ Տեր, Քո սուրբ խաչը «եղիցի մեզ վահան ամրութեան և զէն յաղթութեան»: Թող այդ խաչը լինի հաղթանակի զենք և մեզ համար լինի զենք ապահովության: Ինչո՞ւ, մի գործիք, մի խաչ, որի վրա պատժում էին հանցագործներին, մեղավորներին, ինչո՞ւ հեթանոս աշխարհը և բուն հռոմեացիք կիրառում էին խաչը որպես մահապատիժ, որպես պատժիչ գործիք ընդդեմ հանցագործների, այնուհետև պիտի պաշտեին, պիտի նրանից զորություն խնդրեին, նրանով պիտի պաշտպանվեին:

Ինչո՞ւ ենք մենք քրիստոնյաներս դիմում Տիրոջը այդ խնդրանքով և խաչի նշանն էլ մեր կրծքի վրա ենք կրում որպես մի նշան՝ ցույց տալու համար, որ մենք քրիստոնյաներ ենք: Հնում թեև այդ գործիքը մեղավորներին պատժելու և հալածելու համար էր, սակայն երբ Քրիստոսին խաչ բարձրացրին, մեխերով գամեցին աջ և ձախ ձեռքերը, մենք գիտենք, որ այդ պահին Քրիստոս կամավոր կերպով բարձրանալով խաչ, Իր աջ ձեռքում գամեց մարդկային մեղքը, որը դարձավ պատճառ մահվան, և ձախ ձեռքով խաչի վրա գամեց մահը, Իր աստվածային այդ զորությամբ սրբագործեց, մի նոր զորություն տվեց խաչի նշանին, որը առաջ մարմնական պատժի էր ենթարկում հանցագործներին: Ուստի Քրիստոսի խաչելությունից հետո այդ խաչափայտի վրա երբ որ գամվում են մեղքը, մահը, այն ստանում է այլևս հոգևոր մի նոր իմաստ և բովանդակություն և մի նոր զորություն, որով մարդու համար ճանապարհ է հարթվում դեպի հավիտենականություն:

Չկա հարություն՝ առանց խաչվելու, չկա հավիտենական կյանք՝ առանց փառապանքի, առանց տուրքը տալու ընդդեմ գործած մեղքերի: Մեր տուրքը խաչափայտի վրա տվեց մեր Փրկիչ Հիսուս Քրիստոս, դրանով վճարեց և հարթեց մեր փրկության ճանապարհը, և ահա այս պատժամիջոցը Քրիստոսի խաչելությունից հետո դառնում է կրկնակի պատժամիջոց, սակայն արդեն ընդդեմ մեղքերի և ընդդեմ մահվան: Սրանով է, որ մենք հալածում ենք դևերին, կախարդներին: Սրանով է, որ մենք պաշտպանում ենք մեզ ընդդեմ չարերի, խաչակնքում ենք և ասում. «Մեղքերից հեռու պահիր, Տե՛ր Աստված»:

Ահա այս պատճառով մենք խաչի մեջ տեսնում ենք ոչ միայն գործիք, այլև բուն Հիսուս Քրիստոսի: Այսինքն՝ Հիսուսի խորհրդանիշը խաչն է դառնում: Սրանով է, որ մենք

պաշտպանվում ենք, սրանով է, որ պիտի առաջ գնանք, սրանով են մեր հայրերը պայքարել, հաղթանակներ տարել: Հիշենք Շուշիի ազատագրումը, որ սկսվեց Խաչի Երևման տոնի օրը, բուն օրը մայիսի 7-ին, երբ բոլորի վրա խաչի նշանը կար: Հենց այդ խաչով էլ մերոնք հաղթություն սպասեցին Աստծուց: Եվ ահա թե ինչու մենք պարտավոր ենք հպարտությամբ, ուրախությամբ կրել աստվածային այդ զինանշանը՝ Քրիստոսի խորհրդանիշը մեզ վրա:

Այսօր մենք նշում ենք մի յուրահատուկ տոն, որը մեզ հիշեցնում է յոթերորդ դարի հետևյալ դրվագը, երբ պարսից Խոսրով թագավորը, գրավելով Երուսաղեմը, գերեվարում է այն խաչափայտը, որի վրա խաչվել էր Հիսուս Քրիստոս, որով խաչը քրիստոնյաներիս համար դարձել էր մի մեծ սրբություն, մի մեծ զորություն:

615 թ. Հերակլ կայսրը կարողանում է մեծ բանակ կազմել, որին միանում են նաև հայկական գնդերը, և արշավում է դեպի Պարսկաստան՝ ապավինելով Աստծուն, և հաղթանակ տանում: Հաշտության պայմաններում կար ևս մեկ կետ, որով պարսիկները պարտավորվում էին վերադարձնել Քրիստոսի խաչափայտը, և այն մեծ հանդիսություններով, շարականներով, մոմերով և խնկարկությամբ ու աղոթքներով բերվում է Պոլիս: Բոլորը երկրպագում էին Սուրբ Խաչին՝ ականատես և վկա լինելով զանազան հրաշքների: Խաչափայտից փոքրիկ մասունքներ են բաշխվում ողջ քրիստոնյա աշխարհին: Մենք, որպես հայ քրիստոնյաներ, ստանում ենք մեր բաժինը, որն այստեղ՝ Սուրբ Խորանի վրա է դրված, և որը թող մեզ և ձեզ լինի հավետ պահապան և ճառագայթյալ լույս հավիտենական, փրկական ճանապարհին:

Եթե հիշենք, թե ինչպես իշխանության եկավ Մեծն Կոստանդին կայսրը, ապա կհիշենք այն դրվագը, երբ նա տեսիլքի մեջ տեսնում է խաչի նշանը, և Աստված նրան ասում է. «Սրանով ես հաղթելու թշնամիներիդ»: Զարհուրած այդ տեսիլքից, իր դրոշների վրա ամեն տեղ դնում է խաչի նշանը և փոքրաթիվ բանակով սքանչելի հաղթանակ տանում: Հետագայում դառնում է քրիստոնյա և տարածում քրիստոնեությունը կայսրության ողջ տարածքում, որից առաջ, դեռևս 301 թ., մեր հայոց Տրդատ թագավորը Լուսավորչի աղոթքներով, տառապանքներով առաջինն ընդունեց այս նշանը և քրիստոնեական հավատքը ամուր պահեց մեր մեջ:

Ինչպե՞ս կիրառենք այս սքանչելի զենքը հոգևոր իմաստով մենք մեր մեջ. ինքներս պիտի խաչվենք, մենք մեր մեջ պիտի խաչենք մեր կրքերը և մեղքերը, մենք պիտի հալածենք մահվան պատճառը մեր մեջ, որպեսզի արժանի լինենք դառնալու հավիտենական կյանքի ժառանգորդը, որպեսզի կարողանանք ճշմարտապես արժանի լինել քրիստոնյայի անունը կրելու, վաստակելու: Ուստի թող Տերը մեզ զորություն տա, ներսից մենք մեզ անարյուն կերպով խաչենք և մեղքը գամենք մեր ներքին խաչի վրա, մենք մեր Գողգոթայով անցնենք, քանզի Քրիստոս մեզ համար թափեց իր արյունը խաչի վրա, որպեսզի մենք անարյուն պատարագով, անարյուն ճգնությամբ, անարյուն նահատակությամբ կարողանանք ընթանալ ճշմարիտ և անսասան ճանապարհով: Թող Սուրբ Խաչի զորությունը և զորավոր շնորհը հավիտյան լինեն ձեզ հետ, մեզ հետ և ամեն մի հայի հետ այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն:

# Տ. ՍԱՍՈՒՆ Ծ. ՎԱՐԴԱՊԵՏ ԶՄՐՈՒԽՏԵԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՕՍՎԱԾ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ՎԱՐԱԳԱ ԽԱՉԻ ՏՕՆԻՆ

(29 սեպտեմբերի 2002 թ.)

Տօն է այսօր Սուրբ Եկեղեցւոյ մէջ, տօն մը, որ կը տօնեն բոլոր հայ եկեղեցիները Հայաստան աշխարհի, ինչպէս նաեւ ի Սփիւռս աշխարհի: Այսօր Վարագայ Սուրբ Խաչի տօնն է եւ այս տօնը իւրայատուկ է միայն Հայ Եկեղեցիին համար: Ուրիշ քրիստոնեայ Եկեղեցիներ այս տօնը չունին, քանզի այս տօնին առնչուող աւանդութիւնը կը վերաբերի միայն հայ ժողովուրդի հոգեկան փորձառութեան եւ զարթօնքի ճանապարհին եւ այն կապ ունի Սուրբ Հռիփսիմէ կոյսին հետ: Երբ ան կու գար Վաղարշապատ քաղաք՝ փախչելով քրիստոնեաներուն դէմ ծաւալուած հալածանքներէն, աւանդութիւնը կ՚ըսէ, թէ անոր պարանոցէն կախուած էր խաչափայտէն մասունք մը, եւ ան այդ խաչափայտի մասունքը ապահովութեան համար կը թաքցնէ Վարագայ լեռան քարայրներէն մեկուն մէջ եւ ապա նոր կու գայ Հայաստան:

Դարեր շարունակ այս աւանդութիւնը ծանօթ էր, եւ ահաւասիկ Թոդիկ եւ Յովել ճգնաւորներ, քաջ իմանալով այս աւանդութեան մասին, կը ճգնէին Վարագայ լեռան վրա: Աւանդութիւնը կ'ըսէ, թէ օր մը երկինքէն տասներկու լուսաւոր սիւներ եկան ու երեւեցան Վարագայ լեռան վրա: Այս հրաշքին մասին յայտնեցին Ներսէս Գ Տայեցի Կաթողիկոսին, եւ ժամանակի իշխանը՝ Վարդ Ռշտունին, շտապելով այդտեղ, ականատես կ'ըլլայ այս հրաշքին, եւ այս տասներկու լուսաւոր սիւներ կու գան, կը հանգչին այն եկեղեցիին մէջ, ուր կը զետեղուի Սուրբ Խաչի մասունքը, եւ այդ եկեղեցին կը կոչուի Սուրբ Նշան, որ կը նշանակէ հրաշքի եկեղեցի: Եւ դարեր ետքը, 17-րդ դարուն, Քրիստոսի խաչափայտին այս մասունքը կը տարուի Վանի Սուրբ Տիրամայր եկեղեցիին մէջ, որ կը վերանուանուի Սուրբ Նշան:

Այսօրուայ տօնը Ներսէս Գ Տայեցին կը հաստատէ 7-րդ դարուն: Հետեւաբար 7-րդ դարէն ի վեր Հայոց Եկեղեցին կը տօնէ խաչին յատուկ այս տօնը: Խաչը քրիստոնիային համար խորհրդանիշ մըն է, եւ այդ խորհրդանիշով ան իր կեանքը պահած է եւ պաշտպանած է թշնամիներէն: Խաչին գաղափարը, խաչի աստուածաբանութիւնը շատ գեղեցիկ կերպով մշակած է Սուրբ Պօղոս առաքեալը, եւ այսօր գաղատացւոց թուղթէն կուզեմ այս հատուածը կարդալ, որ այս պահին ինձ աւելի կը խօսի, քան երբեւիցէ, որ կ'ըսէ. «Սակայն քաւ լիցի, որ ես պարծենամ այլ բանով, քան մեր Տէր Յիսուս Քրիստոսի խաչով, որով աշխարհը խաչուած է ինձ համար, ես էլ՝ աշխարհի համար»:

Ի՞նչ կը նշանակէ առաքեալի այս խօսքը, թէ՝ քաւ լիցի, որ ես ուրիշ որեւէ մէկ բանով պարծենամ, եւ մարդկային է, բնական է, որովհետեւ մարդիկ երբ իրենց առօրեայ կեանքին մէջ իրագու կ'ուզեն տպաւորել, կը պարծենան իրենց ինչքով, ունեցածով եւ կամ անելիքներով: Պօղոս առաքեալ շատ բան ունէր պարծենալու, բայց ան ընտրեց պա՛րծենալ Յիսուս Քրիստոսի խաչով, որովհետեւ աշխարհը խաչուած էր իրեն համար եւ ինքն էլ՝ աշխարհի համար: Այսինքն Քրիստոս Իր խաչին վրայ բարձրացուց աշխարհի

մարդոց համայն մեղքերը եւ Ան առանց փրփունջի կամովին բարձրացաւ՝ զոհուելու մարդկութեան փրկութեան համար:

Պօղոս առաքեալը ինք իրեն նկատելով Քրիստոսէ ընտրեալը, կ'ըսէ. «Քանի աշխարհը խաչուած է Յիսուսի համար, ես ալ Իրեն համար պիտի խաչուիմ», եւ խաչուեցաւ: Իբրեւ առաքեալներ Աստուծոյ, իբրեւ հոգեւորականներ եւ այս թիւին մէջ նաեւ քրիստոնեայ հաւատացեալներ, բոլոր անոնք, որոնք մկրտութիւն ունին իրենց ճակտին, կը նկատուին առաքեալները Աստուծոյ, որ պէտք է խաչուին Աստուծոյ համար: Պարտ է իրենց ընդունիլ մեղքերը եւ այդ մեղքերու նկատմամբ նմանիլ մեր Տիրոջ, ինչպէս Ինք Իր օրինակով բարձրացաւ:

Ան արդար էր, անմեղ էր, բայց եւ մեր մեղքերուն համար Իր կեանքը տուաւ: Հետեւաբար եթէ մենք տուած ենք մեր կեանքը Քրիստոսի համար, ինչպէս Պօղոս առաքեալ կ'ըսէ իր՝ Կորնթացիներուն ուղղուած թուղթին մէջ. «..., որովհետեւ կորստեան մատնուածներուն համար խաչի քարոզութիւնը հիմարութիւն է, իսկ մեզ՝ փրկուածներուս համար՝ Աստուծոյ զօրութիւն»:

Տրամաբանութեան դէմ էր, երբ կը քարոզէին խաչեցեալ Քիրստոսը, որովհետեւ յոյները այն ժամանակ իմաստութիւն կը փնտրէին, իսկ հրեաները՝ հրաշք. Պօղոս առաքեալն ալ կ'ըսէ. «..., իսկ մենք կը քարոզենք խաչեցեալ Քրիստոսը, որ շատերուն համար անհասկանալի էր, իսկ մեզ՝ փրկուածներուս համար՝ Աստուծոյ զօրութիւնը»:

Հետեւաբար, սիրելիներ, եթէ կը ընդունիք կամ ընդունած էք Քրիստոսը իբրեւ ձեր Փրկիչը եւ կը հաւատաք Հայ Եկեղեցւ առաքելութեանը, կը հաւատաք անոր դաւանութեանը, ուսուցմանը, հաստատ մնացէք ձեր հաւատքի մէջ, մի՛ հետեւիք ուրիշ քարոզութիւններուն եւ մի՛ կասկածէք Հայ Եկեղեցւ ուղղափառութեան մէջ, այլ նուիրեցէք ձեր կեանքերը, ձեր հոգիները, ինչպէս առաջին դարուն, երբ մեր սուրբերն ու առաքեալները նուիրեցին:

Հոգ չէ, թէ մարդիկ երբեմն անարդար կերպով կը վերաբերին ձեր նկատմամբ, հոգ չէ, թէ ձեր իրաւունքները երբեմն կը մերժեն, բայց եթէ այդ պարագային պահ մը մտաբերէք Քրիստոսի օրինակը, այն ժամանակ Պօղոս առաքեալի խօսքը անիմաստ կը դառնայ: Հետեւաբար, իմաստաւորելու համար Աստուածաշունչի խօսքը, պէտք է միշտ հետեւինք Քրիստոսի օրինակին:

Մարդիկ կրնան մեզ չսիրել, մարդիկ կրնան մեր հանդէպ անարդար ըլլալ, բայց իմացէք. Աստուած կը նէրէ, Աստուած միշտ արդար է: Ուստի փառք տանք Աստուծոյ, որ այսօր տուաւ մեզ ուժ ու կարողութիւն ըլլալու այս Մայր Տաճարի մէջ, աղօթելու եւ մեր ուխտը վերանորոգելու, ծառայելու Աստուծոյ Հայ Առաքելական Եկեղեցւ միջոցաւ: Հոգ չէ, թէ ում կողմն է իրաւունքը կամ ճշմարտութիւնը կամ արդարութիւնը, քանի որ կոչուած ենք ծառայելու եւ կը շարունակենք ծառայել եւ կը խոստանանք այսօր Աստուծոյ առջեւ, որ դեռ պիտի շարունակենք մեր առաքելութիւնը, որքան ատեն որ Աստուած մեզ ուժ եւ կարողութիւն տայ: Թող Աստուծոյ փառքը շատնայ ձեր մէջ, թող Քրիստոսի խաչի նշանը ըլլա ձեզ ապաւէն այժմ եւ միշտ եւ յաւիտեանս, ամէն:

# Տ. ԱՐՇԱԿ ՎԱՐԴԱՊԵՏ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

(22 սեպտեմբերի 2002 թ.)

*«Եւ եղիցի յաւուր յայնմիկ, հանգուսցէ զքեզ Տէր ի ցաւոց եւ ի սրտմտութենէ քումմէ»:*
*«Այն օրը Տերը հանգստացնելու է քեզ քո ցավերից ու նեղություններից»:*
*(Եսայի ԺԴ 3)*

Միրելի հավատացյալ, ահա այսպիսի խոսքերով է Եսայի մարգարեն դիմում իր ժողովրդին: Քիչ առաջ այս Սրբազան կամարների ներքո, սուրբգրային ընթերցվածների ժամանակ, ընթերցվեց Եսայի մարգարեի մարգարեության ԺԴ գլխի 3-17-րդ համարներում ամփոփված հատվածը, որի մեջ ընդգրկված են նաև այս խոսքերը:

Իրապես հրեա ժողովուրդը դառն ճակատագրով մի ժամանակաշրջան ապրեց, որի ընթացքին գերեվարվեց նաև Բաբելոնյան պետության կողմից, որը գտնվում էր Միջագետքում, այժմյան Իրաքի տարածքում, և հզոր մի տերություն էր դարձել շնորհիվ իր կատարած ռազմական հաջող արշավանքների: Եվ ահա այդ պետությունը Ք. ա. 490-89 թթ. հարձակվեց նաև Իսրայելի վրա: Այդ օրերից սկսյալ տեղի ունեցավ հրեաների երկրորդ գերեվարությունը Եգիպտոսից հետո, այս անգամ արդեն՝ Բաբելոն:

Այդ գերեվարությունը տևեց շուրջ 40 տարի, երբ, ի վերջո, 448 թ. Ք. ա. Իսրայելի ժողովուրդն ազատագրվեց իր բազմամյա գերությունից: Եվ Եսայի մարգարեի խոսքերը գալիս են սփոփելու, մխիթարելու հրեա ժողովրդին, թե հեռու չէ այն օրը, երբ Աստծո ժողովուրդը պիտի ազատագրվի այդ գերությունից և պիտի հանգստանա իր կրած բազում զրկանքներից, տառապանքներից և ցավերից: Այս խոսքերը, այս ներշնչումը, ինչպես որ արձանագրված է Սուրբ Գրքի մեջ, Եսայի մարգարեն ստացավ տեսիլքի միջոցով:

Տիրոջ գաղտնի խորհուրդներն ու խորհրդածությունները մշտապես իր ընտրյալներին ընծայվում են, բացահայտվում են այդպիսի տեսիլքների միջոցով, և եթե Աստվածաշունչը կարելի է այլ խոսքերով ևս բնորոշել, ապա՝ «Պատմութիւն Տեսլեաց»՝ Տեսիլքների Պատմություն, որում Աստված մշտապես հայտնվում էր Իր ընտրյալ ժողովրդին, Իր ընտրյալ զավակներին՝ առաջնորդելու Իր հոտը դեպի փրկություն, դեպի Ավետյաց երկիր: Աստված նաև փրկության որոնումների ճանապարհին մշտապես տեսիլքի միջոցով է հայտնել Իր ժողովրդին Իր կամքը:

Իրապես, սիրելի հավատացյալներ, հրեա ժողովուրդը՝ Աստվածաշնչի ժողովուրդը, դառնությամբ լի մի կյանք ապրեց, և Աստվածաշունչն այդ պատմության արձանագրումն է, պատմություն, որը դրսևորում է, ներկայացնում է այդ ժողովրդի կյանքն իր վայրիվերումներով, ելևէջումներով, իր ամբողջ ներկապնակով՝ թափառումներից սկսյալ

մինչև պետականության կերտում, պետականության անկումից հետո՝ վերստին դեգերումներ, և այն շատ բանով մեզ հիշեցնում է պատմությունը մի ժողովրդի, որի զավակն ենք մենք:

Մեր ժողովուրդը ևս իր պատմության ընթացքին բազմաթիվ աղետներ, բազմաթիվ ավերածություններ, բազմաթիվ փառապանքներ ու զրկանքներ է տեսել, և թերևս չէր կարող շարունակվել մեր ժողովրդի ընթացքը դեպի հավերժություն, եթե չլինեին այն անձերը, ովքեր որ Տիրոջից ստացած տեսիլքով առաջնորդեցին մեր ժողովրդին դեպի Տիրոջ՝ մեզ համար նախապատրաստված ցանկալի և բաղձալի նավահանգիստը:

Ահա այդ ընտրյալներից մեկը՝ Գրիգոր Լուսավորիչը, տեսիլքի մեջ տեսավ էջքը Միածին Որդու, որ ոտն ի ձեռին հարվածեց ճիշտ այն վայրին, ուր ներկայիս կառուցված և կանգնեցված է Տիրոջ Իջման Սուրբ Սեղանը. և ինչպե՛ս է պատմիչը ներկայացնում Միածնի էջքը Լուսավորչի տեսիլքում: Տիրոջ Միածին Որդին իջավ՝ ոտով հարվածելով գետնին, և այնուհետև պատկերվեցին լուսավոր ուրվագծումները եկեղեցիների: Ինչո՞ւ է տեսիլքի մեջ լույս: Լույս, քանզի տեսիլքը ինքնին լույս է, լույսը Տիրոջ զգեստն է, իսկ Տերն ինքնին կյանք է, այսինքն՝ տեսիլքն ինքը կյանքի պարգևման, կյանքի շարունակման երաշխիք և գրավական է դառնում մեր ժողովրդի կյանքում այս տեսիլքով:

Հաջորդը, որ կրկին իր տեսիլքով շարունակելի, հավերժացնա դարձրեց մեր ժողովրդի ճանապարհը և ուղին, տեսիլքն էր Ս. Մեսրոպ Մաշտոցի, տեսիլք, որում ի վերուստ իրեն պարգևվեցին հանճար, իմաստություն՝ ստեղծելու հայոց գրերը և դրանով չհետապնդելով որևէ այլ նպատակ, այլ միայն Աստուծո խոսքը սեփական ժողովրդին սեփական լեզվով թարգմանելու առաքելությունը և որը նաև պատմության ընթացքին, ինչը բնորոշ է թերևս միայն երկնքից տրված, երկնքից ընձայված պարգևներին, նաև բացի այն, որ հնարավորություն տվեց մեր ժողովրդին սեփական լեզվով թարգմանելու Աստծո թարգմանը լինելու, դարձավ նաև տարատեսակ դժվարությունների, տարատեսակ հարձակումների դեմ պատնեշ ինչպես քաղաքական, այնպես էլ տնտեսական և այլևայլ ոլորտներում հիմնավոր և անխորտակելի մի պատվար:

Ուրիշ մի տեսիլք, որ վերստին առաջնորդեց, վերստին ամրապնդեց մեր ժողովրդի գոյությունն ու ինքնությունը, եղավ 15-րդ դարում, երբ Հայոց Հայրապետական Աթոռը տակավին գտնվում էր Կիլիկիո լեռների մերձակայքում՝ Սիսում, և Թովմա Մեծոփեցի անունով մի վարդապետ, ով նաև պատմիչ էր, իր տեսիլքի մեջ տեսավ կանթեղը, որ ապիճանաբար լուսավառում է, ասփիճանաբար առատացնում է իր լույսը, որը և պատմիչի բնորոշմամբ խորհրդանշում է, թե «կանթեղը լույսն է Էջմիածնի, որը Տիրոջ ողորմությամբ վերստին աստիճանաբար պիտի բոցավառվի Հայրապետական Աթոռում՝ Սուրբ Էջմիածնում դրվելով»: Եվ Հայրապետական Աթոռը 1441 թ. վերստին հանգրվանում է իր բնուստ հիմնադրված վայրում: Եվ ահա, ինչպես որ ենթադրելի է, սիրելի հավատացյալներ, այս տեսիլքները, Աստծուց ընձայված պարգևներն աղբյուր են հանդիսացել մեր ժողովրդի կյանքի ու գոյատևման, և մշտապես այդ տեսիլքով է, այդ գաղափարականով և այդ նպատակով է, որ պիտի կարող լինենք ապրել ու գոյատևել:

Տեսիլքն իր բուն արտահայտության մեջ որոշակի ձև ու կերպարանք ունեցող գրական ժանր և ստեղծագործություն է, սակայն այսօրվա մեր հասկացողության մեջ այն ա-

վեհ է, քան ժամը: Այն մեզնից յուրաքանչյուրի համար նպատակ է, առաքելություն. և եթե երբեք որևէ ժողովուրդ դադարի տեսլապաշտ լինել, դադարի տեսիլք ունենալ այս կյանքում, նա նաև կդադարի գոյություն ունենալ և հավասարազոր գոյակցություն ապահովել այս արևի տակ՝ մյուս ազգերի կողքին:

Տեսիլքի նկատմամբ մեր ժողովրդի բուռն սերն ու տեսլապաշտությունն է, որ այսօր արդյունավորվել է Հայաստանի պետականության վերակերտումով և այդ վերակերտումը կրկին անգամ լինելով տեսիլքի արդյունքը, վերստին մեզ տեսլապաշտության է մղում, որ այս անգամ մեր մեջ սնուցենք տեսիլքը՝ մեր պետությունը զորացնելու, մեր ժողովրդի կյանքը բարելավելու և մեր ժողովրդի հոգևոր-բարոյական արժեքներն առավել ևս պանծացնելու և պայծառացնելու:

Այս տեսիլքով է, որ Ազգիս Վեհափառ Հայրապետ Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի տնօրինությամբ և Մեսրոպ արքեպս. Աշճյանի ջանքերով այսօր Վեհարանի հանդիսասրահում կատարվելու է բացումը Անիի Մայր տաճարի հիմնադրության 1000-ամյակի հոբելյանական տոնակատարության:

Մենք չենք կարող երբեք առաջ նայել, եթե հետ չնայենք: Մենք չենք կարող լավ հասկանալ ապագան, եթե երբեք չկարողանանք գնահատել անցյալը: Եվ ահա այս է մտահոգությունը, այս է տեսլականը և այս է գաղափարը, որ այսօր մենք հայացքով հետ ենք դառնում շուրջ 1000 տարիներ՝ անդրադառնալու, հպարտանալու այն արժեքով, որն իր մեջ կրում է Անիի Մայր տաճարը, ողբալու այն իրողությունների համար, որոնք պատճառ դարձան հոյակերտի փլուզմանը, եզրահանգելու, թե ինչպես պետք է անենք, որ նման տաճարներն այլևս անփլուզելի և անխորտակելի լինեն: Հանդիսությունների շրջանագծում հայ ուխտավորներ Ախուրյանի ափից պիտի տեսնեն Անիի ավերակները, նորոգեն իրենց մեջ ուժն ու վճռականությունը՝ տաճարը ամենաիմա իր խոյանքով տեսնելու:

Արդարև, ինչպես բանաստեղծը կասեր, «տեսնեմ Անին ու նոր մեռնեմ»: Սակայն՝ ո՛չ ... մահ չկա: Մենք կյանք ունենք, և կյանքը գերագույն բարիք է երկնքից տրված, և այդ կյանքը մենք պիտի ծառայեցնենք ազգային մեր արժեքների ու սրբությունների վերապանծացման նվիրական տեսիլքին, քանզի ժողովուրդը, որ չունի տեսիլք, մահվան երախում է:

Ահա այս մտածումներով ցանկանում եմ հայցել Տիրոջ ամենագութ ողորմությունն ամենքիս, որպեսզի մշտապես լցվենք մեր արժեքների նորոգումի զորացման ոգով՝ մեր անցյալը վերագնահատելու և ապագան կերտելու նվիրական գործին:

***«Շնորհք, սէր եւ խաղաղութիւն Տեառն մերոյ եւ Փրկչին Յիսուսի Քրիստոսի եղիցի ընդ ձեզ եւ ընդ ամենեսեան. ամէն»:***

## *ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ*

*ՏԵՍԱԿԵՏ*

*ՆՎԻՐՎՈՒՄ Է Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻ ՕԾՄԱՆ 1700-ԱՄՅԱԿԻՆ*

*ԵՂԻՇԵ ԲԱՋՈՅԱՆ*

# ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻ ՊԱՏԻ ՄԻ ՔԱՆԴԱԿԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Մայր Տաճարի հյուսիսային պատին, աբսիդի հարևանությամբ, գտնվում է մի փոքրիկ քանդակ՝ 0,52x0,68 մ չափերով (նկ. 1), շրջագծի մեջ վերցրած խաչով, որի երկու կողմերում գտնվում են երկու աղավնիներ: Շրջագծի մեջ հունարեն գրված է. «Օգնեա ամենայն աղօթողաց յենկեղեցւոջ»[1], խաչի թևերի մեջ Զվիթայի մաղթանքն է: Շրջագծի աջ կողմում, դրսից, կարդացվում է. «Տէր, ողորմեա ծառայի քում Արքեա», իսկ ձախ կողմում «Տէր, ողորմեա Եղպիդեա»: Ներքևում, տրապեցաձև շրջանակի մեջ, դարձյալ հունարեն գրված են երեք անուններ՝ ΔΑΝΙΗΛ,-Դանիել, ΤΙΡΕΡ-Տիրեր (Տիրայր) և ΓΑΡΙΚΙΝΙΣ*-Գարիկինիս (Գարեգին):




Նկար № 1

Այս քանդակի մասին առաջին հիշատակությունը թերևս պատկանում է Բորրեին, որը Էջմիածին է այցելել 1838 թ.: Նա ենթադրում է, որ այն գալիս է Լուսավորչի և Տրդատի ժամանակներից[2]: Ստրժիգովսկու համար այս բարձրաքանդակի ժամանակը որոշելու գործում հիմք է ծառայել տաճարի հյուսիսային պատին գտնվող մեկ այլ քանդակ: Դա 0,47x0,65 մ չափերով մի սալ է (նկ. 2), որի վրա դրվագված կամարակապ երկու խորաններում պատկերված են՝ ձախից՝ Թեկղի կույսը, և աջից՝ Պողոս առաքյալը: Այս պատկերը Ստրժիգովսկին համեմատել է Բրիտանական թանգարանում պահվող, փղոսկրի

---

[1] Ընթերցումն ըստ Հ. Էփրիկյանի, Բնաշխարհիկ բառարան, հ. Ա., Վենետիկ, Ս. Ղազար, 1900 թ., էջ 779:

* Այս վերջին Garigines անունը վերցրել ենք Բ. Առաքելյանի «Հայկական պատկերաքանդակները IV-VII դդ.» աշխատությունից, քանի որ Էփրիկյանի մոտ այս անունը գրված է Gariginios, որի նախավերջին o տառը չի համապատասխանում արձանագրության բուն տեքստին:

[2] Բ. Առաքելյան, Հայկական պատկերաքանդակները IV-VII դդ., Երևան, 1949, էջ 42:

վրա արված նույնանման մի քանդակի հետ, որը պատկանում է IV-V դդ., և եզրակացրել,
որ Էջմիածնի քանդակները վերաբերում են V-VI դարերին[3]:
Գարեգին Հովսեփյանն այն համարում է Քրիստոսի փակագիրը[4]:
Բաբկեն Առաքելյանը այդ պատկերաքանդակը համարում է վաղքրիստոնեական ար-
վեստի արգասիք, որը աչքի է ընկնում պարզ հորինվածքով ու արխաիզմով և թվագրում IV-V դարերով՝ առավելապես համեմատելով այն Աղցի Արշակունյաց դամբարանի և Թալինի տաճարի մոտ հայտնաբերված կոթողների վրա հանդիպող պատկերների հետ: Ավելին, նա համարում է, որ այդ շրջանի քանդակագործները իրենց նախորդներից փորձ և վարպետություն չեն ժառանգել և մի կերպ պատկերել են այն, ինչ կամեցել են[5]: Ինչպես, սակայն, իրավացիորեն նշել է Լ. Ազարյանը, այդ քանդակները ինքնին չեն վկայում վաղ միջնադարի վարպետների անփորձությունը[6]:




Նկար № 2

Հուշարձանը եթե չի համապատասխանում հելլենիզմի դարաշրջանի հունական արվեստի չափանիշներին, ապա չպետք է շտապել այն «արխաիկ» և «պրիմիտիվ» որակել, այլ պետք է հաշվի առնել, որ ոճավորումն ու ոճական ինքնատիպությունը որոշակի գեղագիտական կոնցեպցիայի դրսևորման արտահայտություն է և ոչ թե ցածր արվեստի: Առհասարակ չպետք է մոռանալ, որ 20-րդ դարի 40-70-ական թվականներին հայագիտության մեջ տարածվել էր մ.թ. I-IV դդ. հայկական մշակույթը զուտ հելլենիզմով պայմանավորելու վտանգավոր մտայնությունը, երբ հատկապես քանդակագործության բարձրարվեստ նմուշները վերագրում էին վերջինիս ազդեցությանը և անտեսում, որ մինչև հելլենիզմի հանդես գալը Հայաստանում արդեն կային ճարտարապետության ու քանդակի բարձրարժեք ավանդույթներ: Բավական է ասել, որ դեռևս Ուրարտուի ժամանակներում մեր նախնիները կարողանում էին նախագծել ու կառուցապատել հսկայական քաղաքներ, իսկ Մուսասիրի տաճարի ճարտարապետական ձևերը բացառիկ էին իրենց բնույթով և միաժամանակ տարբեր՝ Միջագետքի, Ասորեստանի և Բաբելոնի տաճարների հայտնի ձևերից:

Ինքնատիպ ոճավորման օգտին է խոսում նաև այն փաստը, որ քրիստոնեական վաղ շրջանի պատկերաքանդակների մեծագույն մասը արտահայտում է գրեթե նույն թեմատիկ գաղափարը, ինչպես, օրինակ՝ Դանիելը առյուծների հետ, Աբրահամի զոհաբերությունը, Դավթի և Գողիաթի, երեք մանուկների պատմությունները, որոնք բոլորն էլ վերցված են

[3] Հ. Ստրժիգովսկի, Էջմիածնի Ավետարանը, հայերեն թարգմանությունը քաղվածաբար հրատ. «Հանդես ամսօրեայի» 1901 թ. ապրիլ-մայիս համարների մեջ, ինչպես նաև առանձին գրքով:

[4] Գ. Հովսեփյան, Նյութեր և ուսումնասիրություններ հայ արվեստի պատմության, հ. Բ, Երևան, 1983 թ., էջ 56:

[5] Բ. Առաքելյան, նշվ. աշխատությունը, էջ 41:

[6] Լ. Ազարյան, Վաղ միջնադարյան հայկական քանդակը, Երևան, 1975 թ., էջ 14:

Հին Կտակարանից և պատկերման իրենց ձևերով իրոք տարբերվում են հելլենիստական արվեստի արտահայտչականության ձևերից:

Այդ տիպի քանդակը կազմավորվում է երկու բնորոշ պլանով՝ հարթ, չեզոք ֆոն և նրան սերտորեն համակցված ու նրանից միայն կոնտուրային գծաստվերով անջատված, երկրաչափորեն ձևակերպվող ֆիգուր, ընդ որում՝ խստագույնս պահպանվում է հարթության ամբողջականությունը և չկա ոչ մի ուռուցիկ մակերես: Ուսումնասիրողները հենց այդ ոճավորումն էլ փաստարկ են համարել վերոհիշյալ բարձրաքանդակների տարիքը որոշելու համար:

Այստեղ իսկապես կա զորեղ կռվան. դա Ներկայիս Զորափ գյուղի մոտ գտնվող (նախկինում՝ Աղց) Արշակունի թագավորների դամբարանն է, որի մասին գրում է Մովսես Խորենացին[7], և գոնե հստակ հայտնի է, որ Դարանաղյաց Անի ամրոցը արքունի գանձերով ու թագավորների ոսկորներով կողոպտվում է 364 թ. և նույն տարում էլ թագավորական մասունքները ետ են տրվում հայ իշխաններին: Ամենայն հավանականությամբ նույն այս շրջանում էլ կառուցվել է դամբարանը:

Բավականին հետաքրքիր են նրա պատերին արված քանդակները, որոնք, իրապես, հեթանոս ու քրիստոնյա Արշակունի արքաներին խորհրդանշող՝ հեթանոսական ու քրիստոնեական գաղափարների ու թեմաների «խաղաղ գոյակցության» արտահայտությունն են:

Այդ քանդակները ոչ միայն կատարված են նույն տեխնիկայով, ինչպիսին Էջմիածնի բարձրաքանդակներն են, այլև բազմաթիվ տեղերում կրկնում են նրա գաղափարական սիմվոլիկան. հավասարաթև խաչ՝ շրջանակի մեջ, իսկ խաչի երկու կողմերում՝ թռչուններ (աղավնիներ): Որպեսզի ճիշտ թվագրենք Էջմիածնի Մայր Տաճարի քանդակների տարիքը և հասկանանք այդ յուրօրինակ կոդավորված հասկացությունների իմաստը, պետք է այն քննության ենթարկենք վաղքրիստոնեական ձևավորվող գաղափարախոսության և քանդակագործության արտահայտչաձևերի ամբողջության մեջ: Նախ ասենք, որ հավասարաթև խաչը շրջագծի մեջ՝ զուգորդված թռչնապատկերներով, իսկ հետո, որպես պատկերի բնական զարգացման արդյունք՝ նաև կենդանիներով, հանդիպում է Հայաստան աշխարհի տարբեր վայրերում, տարբեր կոթողների ու տաճարների վրա: Դրանք պարզապես ամենուր են իրենց դրսևորման տարբեր ձևերի մեջ, ինչպես, օրինակ՝ Դարբանդի կոթողներում, Քասաղի բազիլիկայի պատերին, Մրենի տաճարի վրա և այլուր:

Այդ պատկերների այլաբանորեն արտահայտած գաղափարական բովանդակությանը մենք դեռ մանրամասն կանդրադառնանք, այժմ վերադառնանք Էջմիածնի Կաթողիկեի քանդակների թվագրման խնդրին: Կան մի շարք լուրջ փաստարկներ՝ պնդելու համար, որ այս աղավնապատկեր քանդակը Աղցի դամբարանից ավելի հին է և ահա թե ինչու: Առաջին իսկ հայացքից պարզ երևում է, որ այդ քանդակազարդ սալը իր տեղում չէ, այն ակնհայտորեն մի քանի սանտիմետրով բարձր է իր հարևան հավասարաչափ քարերից և չնայած գույնով չի տարբերվում նրանցից, բայց այն տպավորությունն է ստեղծվում, թե այն պարզապես հարմարեցրել են տաճարի հյուսիսային պատին: Բացի այդ, զարդաքանդակ-

[7] Մովսես Խորենացի. Հայոց պատմություն, Երևան, 1981, էջ 264:

նները, որպես կանոն, տեղադրվել են հայկական եկեղեցիների ու տաճարների հարավային, արևելյան ու արևմտյան մասերում, այսինքն այնտեղ, որտեղ ավելի լուսավոր է օրվա մեծ մասը և ավելի լավ է երևում[8]: Իսկ այն դեպքերում, երբ դրանք, այնուամենայնիվ, հյուսիսային՝ ավելի ոչ լուսավոր մասում են, պայմանավորված է տեղադրման մասին պատվիրատուի անտեղյակությամբ[9]:

Հայաստանում տարածված արձանագրությունների առավել հին տեսակը պատի մեջ խորացված մակագրություններն են: Հեշտությամբ փորագրվելով, նրանք չեն պահանջում աշխատանքի կատարման մանրակրկիտ ճշտություն, իսկ փորագրության որակը ավելի բարձր է լինում: Այդպես էին փորագրվում նաև սեպագիր արձանագրությունները: Մայր Տաճարի այս հունագիր քանդակից զատ, Էջմիածնի տարածքում հայտնաբերվել է մեկ այլ հունատառ արձանագրություն, ավելի հին շրջանի (մ. թ. II դ.)՝ Էլիա-Վալենտի անունով, նույնպես վերցրած ուղղանկյան մեջ, որը մեմորիալ բնույթի է:

1955-59 թթ. ճարտարապետ Ալ. Սահինյանի ղեկավարությամբ իրականացված պեղումները ի հայտ բերեցին Լուսավորչի կառուցած տաճարի խարիսխները, որոնց հետ մեկտեղ հայտնաբերվեց նաև մի հեթանոսական մեհյան՝ իր կրակարանով: Այդ պեղումների ընթացքում հայտնաբերվել են մեծ թվով կապույտ ու կանաչ գույների խճանկարի մնացորդներ, ապակու ոսկեզօծ կտորներ, ինչպես նաև հին ջրհորի մոտ՝ 1.20 x1.80 մակերեսով որմնանկարի բավականին մեծ մի կտոր, որոնք, Սահինյանի կարծիքով, Վահան Մամիկոնյանի ժամանակներում արդեն ավերվել էին[10]:

Գտնված խճանկարի ոսկեզօծ հատիկների առատությունը վկայում է դրա պատկանելությունը վաղ քրիստոնեական ճարտարապետությանը և հավանաբար հենց Տրդատի ժամանակների տաճարին: Դրանց չափերն ու գունավորումը համապատասխանում է IV-VI դարերի խճանկարային արվեստին[11]: Այսպիսով, V դարի վերջին տեղի է ունեցել տաճարի վերակառուցում, որը անձամբ տեսել է Փարպեցին և արձանագրել. «...հիմնարկեալ նորոգեաց մեծապայծառ շքեղութեամբ զհնացեալ գործ նախնեացն իւրոց քաջ զօրավարն հայոց Մամիկոնեանն Վահան»[12]:

Նշանակում է, որ այդ քանդակը չէր կարող պատկանել Մամիկոնյանի ժամանակաշրջանին (հմա՝ 5-րդ դարին), այլ դրված է եղել Լուսավորչի կառուցած տաճարի պատին: Այդ է վկայում նաև բարձրաքանդակում հիշատակված Զվիթա քահանայի անունը, որը եղել է մեր առաջին քահանայապետի ժամանակակիցը:

Նոր ձևավորվող քրիստոնեական ընդհանուր պատկերացումների մեջ շրջագծով խաչը, կամ խաչը ընդհանրապես, արարչագործական նշանակություն ունի և կապված է կյանքի արարման, Կենաց ծառի, Աստծո համապարփակ կամքի և նրա տիեզերածավալ էության գաղափարների հետ: Խաչը աստվածային ոգին է և լույսը, որի ճառագայթները

---

[8] Հ. Խալփախչյան, Արձանագրությունները հայկական ճարտարապետության կոմպոզիցիայում, «Էջմիածին», 1959, Գ, էջ 45:

[9] Նույն տեղում :

[10] Ալ. Սահինյան, Էջմիածնի Մայր Տաճարի ճարտարապետական կերպարը, «Էջմիածին», 1961, էջ 63:

[11] А. Винер. Материалы и техника Мозаичной живописи, Москва, 1953 г.

[12] Ղազարի Փարպեցւոյ Պատմութիւն հայոց, ... Թիֆլիս, 1907, էջ 345-346:

իրար են միանում մեկ աստվածային էության մեջ և, դառնալով մեկ հորդաբուխ ու լուսառատ աղբյուր, գնում են լվանալու հոգու աղտը՝ մարմնականով հանդերձ, ինչպես ասում է Ագաթանգեղոսը: Խաչը, պատկերված արմավենու հետ, խորհրդանշում է Հին ու Նոր Կտակարանները[13], քանի որ քանդակներում պատկերված ոճավորված ծառը (որը նույնպես արմավենին է) խորհրդանշում է Սողոմոնի կառուցած տաճարը («տուն անուն Տեառն Աստուծոյ»), այսինքն Հին Կտակարանը, որի գաղափարական հիմքի վրա էլ կառուցվում է քրիստոնեական Եկեղեցու (խաչ) գաղափարախոսությունը:

Անհրաժեշտ է նշել, որ ինչքան էլ քրիստոնեությունը պատկերանշանների միջոցով արտահայտում էր աբստրահարված ընդհանուր գաղափարներ, այն չէր ծագել դատարկ տեղում և շատ հարցերում հիմնվում էր Հին Արևելքի ժողովուրդների մոտ ձևավորված հեթանոսական ըմբռնումների ու ավանդույթների վրա: Այս տեսանկյունից արդեն, խաչի նշանի միջոցով պատկերվող, քրիստոնեության մեջ ամենատարածված մտաարտահայտությունն ինքը՝ Քրիստոսն է և Տիրոջ պատկերների այլակերպությունը. «Նրա վրայի (իմա՝ եկեղեցու) խաչն ինքը մեծ քահանայապետությունն է ժողովուրդների մեջ, օրինակն է Քրիստոսի մարմնացյալ պատկերի, Աստվածորդու քահանայապետության օծության»,- ասում է Ագաթանգեղոսը[14] և ավելացնում, որ խաչերը խորհրդանշում են նաև նահատակների չարչարանքը, որոնք զոհվեցին հանուն հավատքի:

Աղավնին քրիստոնեական արվեստում խորհրդանիշն է Սուրբ Հոգու կամ մարդկային հոգու նշանակ, իսկ քրիստոնեության մեջ՝ ընդհանրապես որպես մաքրության, անմեղության, ազնվության ու բարության: Ընդ որում, եթե սկզբում աղավնուն հանդիպում ենք Նոյան տապանի վրա՝ ցամաք փնտրելիս, ապա Նոր Կտակարանում հանդես է գալիս իբրև անարատ հղությունը ներկայացնող և միաժամանակ դառնում նաև Աստվածորդու ծնունդը աշխարհին ու մարդկությանը ավետող պատգամաբերը:

Աղավնու պատկերով քանդակներ Հայաստանում հանդիպում ենք ամենուր՝ և՛ Աղցի դամբարանում, և՛ Մաստարայի կոթողի վրա, Բրդաձորի և Օձունի կոթողներում, ավելի ուշ արդեն՝ խաչքարերի վրա, իսկ, օրինակ, Վայոց ձորի Կեչուտ գյուղի 6 մետրանոց խաչքարի վրա, որպես թեմայի բնական զարգացման արդյունք, զույգ աղավնիներից բացի խաչի թևերի ներքևում առկա են նաև երկու բադ և արագիլ[15]: Ավելացնենք, որ իռլանդական խաչքարերի վրա խաչելության հետ աղավնու փոխարեն երևան է գալիս արծիվը, որը, ըստ Ստրժիգովսկու, Արևելքի ազդեցության արդյունքն է[16]:

Սուրբ Հոգին աղավնու կերպարանքով երևան է գալիս Հոգեգալստյան և Էտիմացիայի պատկերագրության մեջ Իտալիայում. ինչպես, օրինակ, Ռաբուլայի Ավետարանում և Ռավեննայի սարկոֆագների վրա, բայց այս վերջինում աղավնին արդեն մարդկային հոգու պարզ նշանակ է, ոչ թե Սուրբ Հոգու: Սկսած IX դարից աղավնին որպես սիմվոլ է դառնում նաև ավետարանիչների համար, իսկ ավելի վաղ շրջանում՝ V-VI դարերում, այն հանդես է՛ գալիս օրհնող աջի զուգակցությամբ (Ռավեննայի Ս. Վիտագիոսի մոզայի-

---

[13] Լ. Ազարյան, նշվ. աշխատությունը, էջ 44:

[14] Ագաթանգեղոս, էջ 421:

[15] Գ. Հովսեփյան, նշվ. աշխատությունը, հ. Ա, էջ 56:

[16] Նույն տեղում:

կա)[17]: Խաչի զուգակցությամբ զույգ աղավնիները հետագայում վերափոխվում են լուսափետուր թևերով աղջիկների և հրեշտակների, որոնք հանդես են գալիս որպես Քրիստոսի պատգամաբերներ:

Այժմ տեսնենք, թե խաչն ու աղավնիները ինչ են արտահայտել վաղ հեթանոսական շրջանի պատկերացումներում և ինչպես են դրանք կապվում Էջմիածնի Մայր Տաճարի բարձրաքանդակի հետ: Արդեն փաստ է, որ խաչի նշանը դեռևս հազարամյակներ առաջ հայտնի է եղել Հնդկաստանում, Միջագետքի երկրներում և առկա է եղել Հին Եգիպտոսի արևապաշտ փարավոնների թագերին: Սառցակալման երկարատև ժամանակաշրջանից հետո արևի երևան գալը շատ ժողովուրդների մոտ առաջացրել է արևի պաշտամունք և արևը սկսել է դիտվել որպես ամենայն ինչի արարիչ, կյանքի և արգասաբերության աղբյուր, լույսի ու ջերմության շտեմարան և գերագույն աստված: Իրոք, դժվար է գերագնահատել արևի դերը մեր նախնիների աշխարհաստեղծման վերաբերյալ կոսմոգոնիական պատկերացումներում, երբ գրեթե ամեն ինչ այն ժամանակ արևով էր պայմանավորված:

Պատահական չէ, որ հին մարդու «գեղարվեստական» առաջին ստեղծագործություններում՝ ժայռապատկերներում, կենդանակերպ ու պրիմիտիվ պատկերների մեջ, մեծ տեղ էին զբաղեցնում լուսատուների և հատկապես արևի պատկերները: Դրանք, բնականաբար, վերարտադրված էին տեսողական առաջին տպավորությամբ պայմանավորված տեսքով՝ արևի բնական կլոր ձևով: Հետո արդեն, երբ արևի ամենօրյա ելքն ու մուտքը հին աշխարհում առաջացրեց նրա մեռնող ու հառնող էության մասին պատկերացումները, առաջ եկավ նրա առաջին խորհրդանշանը՝ հավասարաթև խաչը:

Խաչով պատկերներ Հայաստանում շատ կան, որոնք տարածվում են Սևանից մինչև Զանգեզուր, բայց հատկապես հետաքրքրական են Վարդենիսում գտնվողները: Այդ ժայռախմբի մեջ պտղաբերության գաղափարն ու պաշտամունքը ուղղակիորեն արտահայտող շատ պատկերներ էլ կան, որոնց մեջ ներկայացված են կենդանիների (հատկապես նոխազների) արգասավորման և մարդկանց կողմից՝ գնդի ձևով պատկերված երկրագունդը բեղմնավորելու հմայական գործողություններ, կանանց, արևային ու կայծակնային աստվածությունների և աստղանշանների միջավայրում, որոնք գալիս են արդեն էնեոլիթյան ժամանակներից:

Քիչ ավելի ուշ խաչի տարբեր ձևերը Հայաստանում հանդիպում են պարզապես ամենուրեք, ինչպես, օրինակ, Շենգավիթում, Շրեշ-բլուրում, Մեծամորում և նույնիսկ միջնադարյան հայ վարպետների անձնադրոշմներում[18]:

Սրանք բոլորն էլ արևի և նրա մեռնող ու հառնող, նաև արական էության պաշտամունքի դրսևորումներն են և ցույց են տալիս, թե արևապաշտությունը ինչքան արմատացած է եղել մեր նախնիների մոտ, որ հարատևել է մինչև XII-XIII դարերը*:

Արան ինքն արևային էությամբ աստվածություն էր և իր ձևավորման վաղ շրջանում, բացի մեռնող ու հառնող բուն գործառույթից, խորհրդանշում էր նաև գարնան զարթոնքն

---

[17] Նույն տեղում, էջ 57:

[18] Ալ. Վարպետյան, Ովքեր են ի վերջո արիացիները, Երևան, 1990 թ., էջ 33, նայիր գծանկարների աղյուսակը:

* Փոքր Հայքի Սամոսատ քաղաքում մինչև XIII դարը գործել է արևորդիների կրոնական համայնքը:

ու բուսականությունը, երկրագործությունն ու արգասաբերությունը, բայց նաև ջուրն ու նրա պաշտամունքը[19]: Արայի այս ֆունկցիաները արտահայտելու և շեշտելու համար Հին Հայաստանի քրմերը մեր լեռնաշխարհի շատ տեղերում՝ Արագածի և Գեղամա սարերի բարձրադիր վայրերում, Մեծամորի և նրան հարակից շրջաններում տեղադրում էին ֆալլիկ արձաններ և ձկնակերպ վիշապաքարեր[20], իսկ վերջիններիս վրա, բացի խաչերից, նաև գլխաքանդակներ՝ առջևի ոտքերով: Խոյը կամ քարայծը հիրավի համարվում է հայկական լեռնաշխարհի ընդոծիններից մեկը (Փառք Աստծո, հիմա դա այլևս ոչ ոք չի ժխտում) և նրա արևաբույր խոյակները պատճառ են դարձել, որպեսզի այդ կենդանին դառնա Արա Գեղեցիկի հոմանիշ ու հավերժության սիմվոլ: Ավելին, այն մտավ աստղային Աղթարքի մեջ՝ իր անունը տալով մարտ ամսին. «...Ծմանութեամբ առաջինն ի կենդանակերպին, յոր մտանէ արեգակն ի մուտս գարնանոյ...»[21], իսկ այդ ամիսը, համաձայն հայոց տոմարի, կոչվում էր Արաց, այսինքն՝ Արայի օրեր[22]: Ավելացնենք նաև, որ մեռնող ու հառնող աստծո մասին գաղափարներն այնքան հին են եղել Հայկական լեռնաշխարհում, որ դրանք խոյի նշանի տեսքով հայտվել են Գեղամա լեռնասարի Պայտասար աղբյուրի մոտ գտվող 6000 տարեկան ժայռապատկերների մեջ՝ Վիշապի, Հերակլի (հայկ. Վահագն), Թագի, Դելֆինի և այլ համաստեղությունների խորհրդանշող ուրիշ պատկերների հետ միասին[23]:

Գալով Էջմիածնի Մայր Տաճարի բարձրաքանդակի վրա պատկերված զույգ աղավնիներին, պիտի ասենք, որ աղավնիների կապը խաչի նշանի հետ մեզ դարձյալ տանում է դեպի վաղնջագույն ժամանակները, երբ կազմավորվող հայ ժողովրդի մեջ մտնող առանձին ցեղեր իրենց նախնիներ էին ընտրում կենդանակերպ կամ թռչնակերպ տոտեմները: Այդ նույն Գեղամա ժայռապատկերներում, խաչի հետ միասին, մեր երկրի հնաբնակները պատկերել են աղավնու, բադի, կաքավի և այլ թռչունների սխեմատիկ նկարներ, իսկ նրանց ոսկրային պեղածո մնացորդները հանդիպում են Արարատյան դաշտի մ.թ.ա. V-I հազարամյակների բնակատեղիների պեղումների ժամանակ[24]:

Մանուկ Աբեղյանը գրի է առել հայկական բազմաթիվ բանավոր զրույցներ, ուր տիեզերական լուսատուների ու վիշապների հետ միասին խոսվում է Ջմրուխտ Ղուշի մասին, որի ձագերին վիշապը կուլ է տվել: Հետաքրքիր է նաև, որ մի պատանի հերոսը փրկում է ճտերին վիշապի երախից և արժանանում թռչնի հովանավորությանը[25]: Ի՞նչ է այդ Ջըմրուխտ Ղուշը կամ Հավքը: Վանի շրջակայքից պեղված մի թևավոր արձանիկ, որի պատկերը իր գրքում բերել է Ալիշանը,[26] օգնում է մեզ դա հասկանալ:

[19] Գր. Ղափանցյան, Արա Գեղեցիկի պաշտամունքը, Երևան, 1945, էջ 146:

[20] Նույն տեղում, էջ 133:

[21] Նոր Բառգիրք Հայկազեան Լեզուի, Վենետիկ, 1838, տե՛ս խոյի բառահոդվածը:

[22] Գր. Ղափանցյան, նշվ. աշխատություն, էջ 107:

[23] Ալ. Վարպետյան, նշվ. աշխատություն, էջ 63:

[24] С. Мезлумян. Млекопитающие эпохи бронзы на територии Армении (թեկն. դիս. սեղմագիր):

[25] Մ. Աբեղյան, Երկեր, Երևան, հ. Ա, 1966, էջ 384:

[26] Ղ. Ալիշան, Հին հավատք կամ Հեթանոսական Կրօնք Հայոց, Վենետիկ, Ս. Ղազար, 1895 թ.:

Կնոջ գլխով այդ կուռքը, որի պարանոցը օղակում է լայն շրջանակը, նույն աղավնին է, որի մեջ համատեղված կիսակենդանու-կիսամարդու-կիսաաստծո գաղափարը ընկած է բոլոր հայկական հեքիաթների հիմքում՝ Հազարան Բլբուլի կամ իմաստուն թռչունի կերպարով: Այդ կլոր շրջանակը հատկապես շեշտում է կուռքի իգական էությունը, քանի որ ժայռապատկերներում հանդիպող ֆիգուրների վրա կլոր շրջանակով են պատկերված կանացի պտղաբերության օրգանները: Դրանց մեջ կան ֆիգուրներ, որոնք պատկերված են ցուլի կամ եզի վրա կանգնած, իսկ դրանց կողքին՝ կլոր լուսինը կուլ տվող գոմեշներ:

Սա ակնհայտորեն ցույց է տալիս ցուլի իգական էությունը, և պատահական չէ, որ կրքերն ու աշխարհիկ վայելքները արտահայտող իգական էությամբ ցուլը նույնպես հայտնվել է Աղթարքում՝ զսպվածությունն ու ոգեղինությունը խորհրդանշող արական էության խոյի կողքին: Այս և ցլակերպ այլ արձանիկների հետ պեղված կանացի բազմաթիվ կուռքերը ցույց են տալիս, որ մենք գործ ունենք Մայր աստվածուհու շատ վաղ առաջացած պաշտամունքի հետ, որը հանդես է գալիս աղավնու, ցուլի և շրջանաձև պայմանական սիմվոլների հետ միասին:

Այդ աստվածուհին շատ հին շրջանում հանդես է եկել Ար աստծո հետ և հավանաբար կոչվել Նար, որի անունը մնացել է հայ ազգագրական պատարիկներում՝ զրույցներում, ծիսական երգերում[27]: Սրա խոր հնության պատճառով նրա ֆունկցիաները դեռևս լիովին պարզված չեն, բացի նրանից, որ Նարը կապ է ունեցել ջրի հետ և հովանավորել կանանց պտղաբերությունը[28]: Այս աստվածուհին ամենայն հավանականությամբ ունեցել է լուսնային բնույթ, որը կապված է լուսատուների պաշտամունքի հետ: Եթե Արը արևի աստվածն է, ապա նրա ընկերուհին անզեն աչքով տեսանելի մյուս խոշոր լուսատուի՝ լուսնի աստվածուհին պիտի լինի:

Ժամանակի ընթացքում սա իր տեղը և գործառույթները զիջել է Հայաստանում շատ սիրված ու ընդունված այնպիսի մի Տիկնոջ, որին թերևս նվիրված են եղել երկրում ամենաշատ մեհյանները: Դա, իհարկե, Ոսկեծին ու Ոսկեմայր Անահիտն է՝ բոլոր մայրերի ու պտղաբերության, սիրո և գեղեցկության աստվածուհին, որի՝ Սատաղից հայտնաբերված բրոնզե արձանի ճակատին լուսնի մահիկի տեսքով թափված երկու խոպոպիկները մատնում են նրա լուսնային ծագումը:

Փոքրասիական հնագույն մայր աստվածուհիները նույնպես լուսնային բնույթ են ունեցել: Ասորեստանցիների Միլիտան, փյունիկեցիների Աստարտան, եգիպտացիների Իսիսը, հույների Արտեմիսը և ուրիշներ հաճախ պատկերվել են լուսնի մահիկով: Միջագետքյան հայտնի աստվածուհի Իշտարը, որը մեծ ազդեցություն է ունեցել հարևան շատ ժողովուրդների դիցարանի վրա, պատկերվում էր Արուսյակ մոլորակի հետ, իսկ Ասորիքում և Փյունիկիայում այդ դիցուհու նվիրական թռչունը աղավնին էր: Արդեն հայտնի է, որ վերոհիշյալ փոքրասիական աստվածուհիներն իրենց գործառույթներով նույնացվել են Անահիտի հետ, և բնականաբար նրանց հատկանշական սիմվոլիկան պիտի նույնը լիներ: Այս տեսանկյունից հետաքրքրական է, որ Անահիտին նվիրված Վարդավառի տոնի ժամա-

---

[27] Անժելա Տերյան, Ար աստծո պաշտամունքը Հայաստանում, Երևան, 1995, էջ 22:

[28] Ղափանցյանը կապ է տեսնում սլավոնական Մարինա և Նար անունների միջև: Ըստ նրա՝ ռուսական ոգի Մարինա կամ Մարան խրտվիլակի անունը ծագել է չպահպանված Նարինա անունից: Նշվ. աշխ-ը, էջ 109:

նաև նրա տաճարում ջուր էին սրսկում և աղավնի բաց թողնում, ինչը վկայում է, որ մեզանում այդ աստվածուհուն նվիրական են եղել աղավնին և ջուրը[29]:

Ավելին, պարզվում է, որ Անահիտին խորհրդանշող բոլորաձև շրջանը բնութագրական է եղել նաև Իշտարին ու նրա հոմանունիներին: Շրեշ-բլուրից, Շենգավիթից, Մեծամորից ու այլ վայրերից հայտնաբերված կլորագլուխ արձանիկները, կանացիակերպ կլոր նշաններով աղամաններն ու պաշտամունքային այլ առարկաները կասկած չեն թողնում, որ բոլորագիծ շրջաններով պատկերում էին Անահիտ աստվածուհուն: Բաբելական ու ասսուրական բարձրաքանդակներում Իշտարն ու Դերկետոն պատկերվում էին ձողի հետ՝ ձեռքերում բռնած օղակի հետ միասին:

Անահիտ աստվածուհին աղավնիների տեսքով հայտնվել է նաև Արտաշեսյանների հայկական թագին: Տիգրան Մեծի դրամների վրա պատկերված զույգ աղավնիները արևի շրջանակի հետ միասին փաստում են, թե ինչ առանձնահատուկ տեղ է ունեցել այդ դիցուհին հայկական պանթեոնում, որ այդպիսով նրա խորհրդանշական հովանավորությունն է հայցել մեր ամենահզոր արքան: Դեռ ավելին, պրոֆ. Ստ. Լիսիցյանը կարծում է, որ «Տիգրան Մեծի խույրը և նրա վրայի բոլոր պատկերումները մեզ համոզում են, որ նա քուրմ է եղել՝ և հատկապես Անահիտի»[30]:

Հիշենք, որ Հին աշխարհի գրեթե բոլոր պետություններում արքաները միաժամանակ համարվել են նաև երկրի գլխավոր քրմապետեր: Այսքանից հետո դուք կհարցնեք, թե ի՞նչ կապ ունի Անահիտ աստվածուհին քրիստոնեական ժամանակների բարձրաքանդակի հետ: Մեր կարծիքով՝ ունի, և այն էլ՝ ամենաուղղակի: Արա Գեղեցիկ-Քրիստոս վերաիմաստավորման նման, Անահիտը ևս նույնացվել է Աստվածամայր Կույս Մարիամին:

Մինչ այժմ մենք ցույց տվեցինք Մայր Տաճարի բարձրաքանդակի վրա պատկերված շրջագծով խաչի ու աղավնիների նշանակությունը և պարզեցինք, որ այդ նշանները հնում Արայի և Անահիտի սիմվոլիկ արտահայտություններն են եղել: Այժմ, ամփոփելով վերը շարադրված ամբողջ նյութը, փորձենք բացատրել, թե այդ երկուսը մի քանդակում ինչպես են կապված իրար հետ և ինչ գաղափար են ներկայացնում իրենց ամբողջության մեջ: Մեր խորին համոզմամբ, շրջագծով Արան ու Անահիտը իրենց նշաններով ու իրար հետ միասին խորհրդանշում են տիեզերածնության հիմքը՝ արական ու իգական սկիզբների, հավերժական արարչագործության, աշխարհաստեղծության ու անընդհատ սերնդածնության սրբազան գաղափարը: Ընդ որում, դա իր իմաստը որոշ փոփոխություններով փոխանցել է նաև քրիստոնեությանը:

Մեր նախնիների տիեզերական պատկերացումների ծնունդ Աղթարքում տարին սկսում է մարտից*, և բոլոր ամիսները հաջորդաբար ունեն իրենց կենդանանշանները: Մարտ ամսվա նշանը խոյն է - Արան, քանի որ դա գարնան առաջին ամիսն է, և բնությունը սկսում է վերակենդանանալ: Մարտ. արական սկզբունք: Խորհրդանշում է՝ եռանդ, վերածննդի՝ «կայծքար», արարչության հորդորանք, զարթոնք և այլն: Մարտին հաջորդում է

[29] Մ. Աբեղյան, Ծամիրամի առասպելը, «Արարատ», 1901, Ա, էջ 115:

[30] Մեջբերումն ըստ Մնիք-Փաշայանի: Նշվ. աշխ-ը, էջ 120:

* Բոլոր Աղթարքներն էլ տարին սկսում են մարտ ամսից:

ապրիլը, նշանը՝ ցուլ, այսինքն՝ Անահիտ: Հիշենք, որ նրան անվանում էին ծլապահ[31] և նվիրում ճակատին նշան արած երինջներ: Ապրիլ՝ իգական սկզբունք, խորհրդանշում է պտղաբերություն, արգասավորություն և հակազդեցություն: Այս երկու սկզբունքները ամփոփվում են երրորդ՝ մայիս ամսում, նշանը՝ երկվորյակներ, այսինքն երկվություն, որը խորհրդանշում է երկնայինի և երկրայինի պայքար ու միասնություն, բեղմնավորում և արարչության սկիզբ: Արական, իգական սկզբունքների և նրանց միասնության արդյունքում ստանում ենք ամենայն ինչի սկիզբը բացատրող եռակողմ մի պատկեր: Որ տիեզերքն այդպես է ծնվում կարծում է նաև Պյութագորասը.

«...Սրբազան Եռանկյունի, հսկա և հստակ Խորհրդանիշ,
Բնության ակունքն ու տիպարն Աստվածների ...»[32]:

Արան ու Անահիտը իրար հետ կապված են նաև արև-լուսին հանգամանքով, և բացի այդ՝ Արայի կինը Աստղիկի նման սոսկ գեղեցիկ ու հեշտասեր չէ, այլ Նուարդի նման առաքինի, բարձր ու հայրենասեր: Այս առումով հատկանշական է Նուարդ անվան Գավուքչյանի ստուգաբանությունը. «Նուարդ պիտի նշանակի Արդ-Արայի Նու-Անահիտը կամ Արևի սիրելի Լուսինը»[33],- գրում է նա: Արև-լուսին պաշտամունքի այս վերապրուկը նույնպես անցել է քրիստոնեության մեջ, և Քրիստոսին նմանեցնելով արևին, իսկ Մարիամին՝ լուսնին, ասում են հետևյալ շարականը. «Սրբուհի ի Լիբանանէ դիմեալ, հարսն զգեցեալ զարեգակն, արկեալ զքև և ընդ ոտիւք լուսինն, ստուերատեսակ»[34]:

Մեծամոր գյուղը ինքնին հուշում է, որ այն կապված է Անահիտ դիցուհու պաշտամունքի հետ: Ագաթանգեղոսի վկայությամբ Մեծամոր էր կոչվում արևմուտքից Վաղարշապատ մտնող կամուրջը, իսկ ոչ վաղ անցյալում նույն անունով էին կոչվում նաև Էջմիածնի գավառում գտնվող Սև ջուրն ու Այղր լիճը[35]: Հիսունական թվականներին հայտնաբերվեց մի հին բնակատեղի՝ իր երկաթաձուլարանով, որտեղից պեղված կանացի արձանիկների և քարերի մեջ փորված ու պատկերված կլոր շրջանակների մեծ քանակությունը կասկած չի թողնում, որ այդ վայրում շատ հնուց պաշտամունքի առարկա է եղել Մեծ Մայրը՝ Անահիտը: Թվում է, թե այստեղ գոնե Արան գործ չունի, բայց... նույն վայրում, բոլորաձև քարերի կողքին, առկա են մեծ քանակությամբ քարե քանդակներ, որոնց վրա պատկերված են խաչեր և էլի ինչ-որ նշաններ: Եվ, վերջապես, Վարդենիսի ժայռապատկերներից մեկը պարունակում է խիստ հետաքրքրաշարժ մի սյուժե[36]: Այն իրենից ներկայացնում է խաչաձև միջուկով մի սկավառակ՝ վրան կանգնած չորս թևատարած մարդկանց ֆիգուրներով, աջից գծագրված կանացի պայմանական զույգ պատկերով ու երկու նշանագրերով արական և իգական սկիզբ, հավերժական պայքար և հավերժական ծնունդ:

Ագաթանգեղոսի արաբական խմբագրությունում մի հետաքրքիր հիշատակություն է պահպանվել, ուր նշվում է, որ Տրդատը և Լուսավորիչը, Արտաշատի մեհյանը ոչնչացնե-

---

[31] Խ. Սամուելյան, Հին Հայաստանի կուլտուրան, հ. Ա., Երևան, 1931, էջ 178:

[32] Պյութագորասի Ոսկե տաղերը: Մեջբերումն ըստ Վարպետյանի նշվ. աշխ-ան, էջ 69:

[33] Մ. Գավուքչյան, Հայ ու Արմեն անունների ծագումը և Ուրարտուն, Բեյրութ, 1973, էջ 106:

[34] Ա. Սահմուրադեան, Հին Հայոց հեթանոսական կրօնը, Բագու, 1899, էջ 31:

[35] Խ. Սամուելյան, նշվ. աշխ-ը, էջ 298:

[36] Հայ ժողովրդի պատմություն, ակադ. հրատ., Երևան, 1971, էջ 200:

լուց հետո, «չոգան ի քաղաքն Կ-սատ-ն և հրամայեաց կործանել զտաճար Արտիմիդեայ»[37]:

Լեզվաբանորեն արդեն ապացուցված է, որ Կ-սատ-ն Քասախ գետն է, իսկ քանի որ քաղաքը նվիրված էր բուսականության, պտղաբերության ու մանկածնության[38] հովանավոր Արտիմեդային, պարզ է, որ այդտեղ պիտի գտնվեր նաև այդ աստվածուհու տաճարը: Այսպիսով, կասկածից վեր է, որ Կ-սատ-ն քաղաքը Վաղարշապատն է, իսկ Արտեմիդան՝ Մեծ Տիկին Անահիտը: Ուրեմն նաև վերոհիշյալ կրակարանն էլ նրա տաճարի մեջ է գտնվել, որի մասին մոռացել է հիշատակել Ագաթանգեղոսը, չնայած արձանագրել է, որ Էջմիածնի Կաթողիկեն Լուսավորիչը կառուցել է Մարիամ Աստվածածնի անունով: Դե քանի որ Արային պատկանող ոչ մի տաճարի մասին տեղեկություն մենք չունենք, և Անահիտի նման չքեղազարդ տիկինն էլ դժվար թե միայնակ մնար, հույս ենք փայփայում, որ այդ մեհյանում էլ գեղեցիկ Արան պետք է իր տեղն ունենար: Ուստի վերոհիշյալ քանդակն իր տեղում է: Չէ՞ որ պատահական ոչինչ չի լինում:

---

[37] Ն. Մառ, Մկրտութիւն հայոց, վրաց, աբխազաց և ալանաց ի սրբոյն Գրիգորէ: Մեջբերումը ըստ Մելիք-Փաշայանի նշվ. աշխ-ը, էջ 113:

[38] Դիցաբանական բառարան, Երևան, 1985, էջ 39:

*ԵՐԱԺՇՏԱԳԻՏԱԿԱՆ*

*ԼԻԼԻԹ ՍԻՄՈՆՅԱՆ*

# «ԽՈՐՀՈՒՐԴ ՄԵԾ ԵՎ ՍՔԱՆՉԵԼԻ» Ս. ԾՆՆԴՅԱՆ ՇԱՐԱԿԱՆԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐԸ

Ս. Ծնունդը կամ Փոքր Զատիկը հայ ժողովրդի ամենասիրված տոներից մեկն է: Պահպանվել են այդ տոնի բազում ժողովրդական երգեր, որոնք պատկանում են տոմարային ծիսական երգերի ավետիսների ենթաժանրին:

Բացի ավետիսներից, բանավոր ավանդման միջոցով մեզ են հասել նաև մի շարք երգեր, որոնց բանաստեղծական տեքստերը համընկնում են Ս. Ծննդյան եկեղեցական երգերի հետ: Միաժամանակ հարկ է նշել, որ դրանց մեղեդիները կա՛մ բավականին հեռավոր նմանություն ունեն նշված եկեղեցական երգերի հետ, կա՛մ բոլորովին տարբեր են դրանցից: Սույն ուսումնասիրությունը վերաբերում է այն հարցին, թե որքանո՞վ են «Խորհուրդ մեծ և սքանչելի» երգի բանաստեղծական տեքստով ժողովրդական երգերը մոտ այս շարականին և արդյո՞ք հնարավոր է որոշել, թե ո՛րն է բուն բնագիրը՝ եկեղեցակա՞ն մեղեդին, թե՞ ժողովրդականը:

«Խորհուրդ մեծ և սքանչելի» Ծննդյան շարականը ավանդաբար համարվում է հոգևոր ավետիս: Սակայն իր ժանրային բնութագրերով՝ թե՛ երաժշտական, թե՛ բանաստեղծական, շարականը չի համապատասխանում ժողովրդական ավետիսի խստագույնս պահպանվող նորմերին: Այդ նորմերին (երկուական կամ երեքական տողերով հանգավորվող բանաստեղծական տեքստ, ութվանկանի երկանդամ տող-միավոր, երեք հիմնական ավանդական բանաստեղծական տեքստեր, բանաձևված երաժշտություն և այլն) համապատասխանում է մեկ այլ եկեղեցական Ծննդյան երգ[1]:

Դիմենք սակայն մինչ այժմ կատարված հետազոտություններին:

Իր «Հոգևոր Երգերի ձևն ու բովանդակությունը» հոդվածում Կոմիտաս Վարդապետը տալիս է «Ավետիս» անվանման հետևյալ բացատրությունը.

«Ավետիսներ. - սոցա նյութը առնված է Ս. Ավետարանից հրեշտակների՝ հովիվներին մանուկ Հիսուսի ծնունդն ավետելու րոպեն: Ավետիսները վերագրում են Մ. Խորենացուն, բայց ոճը խիստ փոխված է՝ ժողովրդի մեջ բերնեբերան անցնելով: Այժմ ևս կան անթիվանհամար ավետիսներ, որոնք զանազան տեղեր այլ կերպ և այլ եղանակով են երգվում, բայց ընդհանրապես խոսքերի բովանդակությունը միևնույնն է. զանազանությունը բարբառի մեջ է. իսկ եղանակները կամ ԴԿ, որպես «Խորհուրդ մեծ» շարականը, կա՛մ ԱՁ դարձվածք՝ ԳՁ-ի և ԴԿ-ի խառնուրդոց բաղկացած»[2]:

---

[1] Ձայնագրեալ Երգեցողութիւնք Սրբոյ Պատարագի. Երկրորդ տպագրութիւն, Վաղարշապատ, 1878, էջ 112-113:

[2] Կոմիտաս. Հոդվածներ և ուսումնասիրություններ, Ե., Հայպետհրատ, 1941, էջ 108:

Թեև հետո Կոմիտասը մեջբերում է ժողովրդական ավետիսի մի օրինակ, իր սահմանման մեջ նա ելնում է եկեղեցական ավետիսի մասին պատկերացումից: Այս սահմանումն ընդունելի է միայն այն դեպքում, եթե համաձայնենք, որ այն վերաբերում է եկեղեցական ավետիսին իբրև ինքնուրույն, *պրոֆեսիոնալ* երգաստեղծության ժանրի: Այլապես ստիպված պիտի լինենք արհեստականորեն նույնացնել իրար հետ բանաստեղծական-բովանդակային ու առավել ևս երաժշտական առումով կապ չունեցող երևույթներ՝ հիմնվելով այն բանի վրա, որ դրանք ունեն ընդհանուր, քրիստոնեական շրջանում ներմուծված թեմատիկ նյութ: Ժողովրդական ավետիսները մեծ մասամբ ստեղծվել են այլ նպատակներով և այլ միջավայրում, թեև որոշ ավետիսների մեջ մուտք են գործել Խորենացու «Խորհուրդ մեծ և սքանչելի» շարականի տեքստի փոքր հատվածներ[3]:

Մ. Մանուկյանը թեև իր ավետիսների սահմանման մեջ չի հիշատակում «Խորհուրդ մեծ»-ը, իսկ ավետիսներն էլ համարում է քրիստոնեական շրջանում նոր բովանդակություն ստացած հնագույն հեթանոսական երգեր[4], այդուհանդերձ իր «Ժողովրդական ավետիսներ» ժողովածուի մեջ ընդգրկել է նաև «Խորհուրդ մեծ և սքանչելի» շարականի հայտնի գրառյալ նմուշը և երկու ժողովրդական տարբերակներ[5]:

Ուստի այն հարցը՝ արդյոք «Խորհուրդ մեծ և սքանչելի» շարականը կամ դրա ժողովրդական տարբերակները կարելի՞ է համարել ավետիսներ, թե ոչ, բաց է մնում:

«Խորհուրդ մեծ և սքանչելի» շարականը[6], ինչպես նաև Հայ Առաքելական Եկեղեցու Ծննդյան կանոնի բոլոր շարականներն ավանդաբար վերագրվում են Մովսես Խորենացուն[7]: Ժողովուրդը պահպանել է մի շարք երգեր, որոնց բանաստեղծական տեքստն իրենից ներկայացնում է այդ շարականի առաջին երեք տները: Առավել հաճախ հանդիպում են նմուշներ, որոնցում երգվում են առաջին երկու տները, ավելի հազվադեպ՝ մեկ կամ երեք տուն պարունակող նմուշներ:

Այս հանգամանքը թույլ է տալիս Մ. Մանուկյանին այդ երգերը համարել Խորենացու երգի տարբերակներ[8], իսկ շարականը՝ համապատասխանաբար դրանց մայր օրինակը[9]:

Մեզ հայտնի 12 ժողովրդական նմուշների մեղեդիները (Մ. Մանուկյան, «Ժողովրդական ավետիսներ», հետագայում Մ.Մ. NN 2, 3, Կոմիտասի անվան Երևանի պետական

---

[3] Մեզ հանդիպել է միայն. «Հովիւքն երգեն ընդ հրեշտակս,
Տան ուետիս աշխարհի»:

[4] «Մենք միայն Մարտունու շրջանի նմուշը ձայնագրելուց հետո համոզվեցինք, որ դրանք ավետիսների առանձին՝ մեկը մյուսից անջատ տարատեսակներ չեն, որ ժողովրդի մեջ երգվող ավետիսները ստեղծվել են [իբրև] Նոր տարվա նախաքրիստոնեական ավետման երգեր, որպես կարևոր և ծավալուն նախդիրներ միացնելով Քրիստոսի Ծնունդն ավետող ու պատմող մասերը». Մ. Մանուկյան, Ժողովրդական ավետիսներ, Էջմիածին, 1995, էջ 19:

[5] Նույն,տեղում, էջ 41-51, NN 1-3:

[6] Այստեղ և ստորև ասելով՝ Մովսես Խորենացու «Խորհուրդ մեծ և սքանչելի» շարականը, հասկանում ենք Ն. Թաշճյանի կողմից գրառված տարբերակը, որն ընդունված է գիտական շրջանառության մեջ, այսինքն. Ձայնագրեալ շարական հոգեւոր երգոց, Վաղարշապատ, 1875, էջ 66:

[7] Ն. Թահմիզյան, Գրիգոր Նարեկացին և հայ երաժշտությունը V-XV դդ., Երևան., 1985, էջ 148-149:

[8] Մ. Մանուկյան, Նշվ. աշխ., էջ 49 և 51:

[9] Նույն տեղում, էջ 46:

կոնսերվատորիայի Հայ երաժշտական ֆոլկլորագիտության ամբիոնի և ԳԱԱ Արվեստի ինստիտուտի ժողովրդական ստեղծագործության բաժնի անտիպ ֆոնդերում պահվող 10 այլ նմուշները, ինչպես նաև Մ.Մ. N 18-ի, երկու անտիպ ժողովրդական ավետիսների երկրորդ մասերը) գրառված են Արևելյան Հայաստանի տարբեր շրջաններում (Ջավախք, Արարատյան դաշտ, Շիրակ, Լոռի, Զանգեզուր և այլն) և ունեն ոչ միայն միևնույն գրեթե անփոփոխ բանաստեղծական տեքստը, այլև բուն երաժշտական մի շարք ընդհանրություններ: Նմուշների մեծ մասը գրառված են Եկեղեցու սպասավորներից կամ նրանց գավակներից:

Այս շարականի բովանդակությունը կապված է Քրիստոսի Ծննդյան խորհրդի հետ: Այն պատմում է Քրիստոսի՝ Բեթղեհեմ քաղաքի քարանձավում ծնվելու, խանձարուրի մեջ փաթաթվելու և հովիվների ու հրեշտակների օրհներգության մասին:

Բանաստեղծական տեքստը կառուցված է քառատող տներից, որոնք հանգավորվում են առաջին տան մեջ (առաջին և չորրորդ տողերը) և երրորդ տան մեջ (երկրորդ և չորրորդ տողերը), մինչդեռ երկրորդ տան մեջ հանգավորումը բացակայում է: Տողերը հիմնականում յոթվանկանի են, բացի երկրորդ տան առաջին՝ հինգվանկանի, և երրորդ տան առաջին՝ ինը վանկանի տողերից: Բանաստեղծական տեքստը բարբառային տարբերակման չի ենթարկվում, սակայն երբեմն աղավաղվում է:

Ժողովրդական «Խորհուրդ մեծ»-երը առաջին հայացքից նման չեն Ն. Թաշճյանի գրառած և «Շարակնոցում» տեղ գտած նմուշին: Սակայն նմանություն կա, և այդ նմանությունը սկզբունքային է, որովհետև այն վերաբերում է վանկաչափությանը: Ստորև բերում ենք «Շարակնոցի» տարբերակի վանկաչափությունը.

1 ˋ1 2 1 1 1 2 1 2 1 1 1 1 1(2)

Խոր – հուրդ մեծ և սքան – չե - լի, որ յայսմ ա - ւուր յայտ – նե - ցաւ,

1 1 1 1 1 2 2 1 2 1 1 1 1 2

Հո – վիւք եր - գեն ընդ հրեշ – տակս, տան ա - ւե - տիս աշ – խար – հի

Հետաքրքիր է, որ մեր դիտարկած բոլոր ժողովրդական նմուշներն այս կամ այն չափով պահպանում են այս վանկաչափական մոդելը: Երևույթն անշեղորեն վկայում է այն մասին, որ բոլոր մեղեդիները կցված են տվյալ բանաստեղծական տեքստին և չեն փոխանցվել այլ երգերից:

Կշռույթի դիտարկումից սկսած ակնհայտ են դառնում տարբերությունները: Մեզ ծանոթ ոչ մի ժողովրդական նմուշ չի վերարտադրում Խորենացու շարականին բնորոշ բազմազան կշռույթային պատկերը: Մեծ մասամբ կշռույթը բավականին ազատ է և ենթարկվում է միայն վանկաչափական ստանդարտին: Մի շարք նմուշներում (թվով 6) առկա է հիմնականում հավասար քառորդներով կամ ութերորդականներով ծավալվող շարժում: Միաժամանակ նկատվում է կշռույթային բանաձևերի առաջացման և խմբավորման միտում: «Խորհուրդ մեծ»-երը կատարվում են աշխույժ տեմպով: Զուգադրվելով որևէ ավե-

տիսի հետ (որոնք առավել հաճախ «աստեղային»[10] ավետիսներ են), դրանք ծառայում են իբրև յուրօրինակ «յորդորակներ»:

«Խորհուրդ մեծ»-երի ներքին ընդհանրությունն է՛լ ավելի նկատելի է դառնում ձայնակարգի և ինտոնացիայի դիտարկման ժամանակ:

Ընդհանուր առմամբ, «Խորհուրդ մեծ»-երի համար առավել բնորոշ ձայնակարգը տերցիայի հիմքով հիպոդորիականն է կամ հիպոէոլականը (8 նմուշ): Հիմնաձայնից ցած ձայնաշարն ընդգրկում է 1 (7 նմուշ) կամ 2 (3 նմուշ) հնչյուններ: Այսպիսի ձայնակարգային կառույցներ բնորոշ են Դ կողմ եկեղեցական ձայնեղանակին: Ուշագրավ է, որ գրեթե բոլոր ժողովրդական նմուշները պարունակում են ԴԿ ձայնեղանակին բնորոշ ինտոնացիոն դարձվածքներ: Այս փաստից ելնելով, գտնում ենք, որ Կոմիտասն ավետիսի վերոհիշյալ իր սահմանման մեջ ի նկատի ունի ժողովրդական «Խորհուրդ մեծ»-երը և ոչ՝ բուն ժողովրդական ավետիսները, որոնց համար ԴԿ ձայնեղանակը որպես ձայնակարգային բնութագրում (տերցիային հիմքով հիպոդորիական), առավել ևս իբրև մեղեդիական մոդել, բնորոշ չէ[11]:

Կան նաև «շեղումներ» նշված կանոնից: Եթե նմուշներից մեկի (Երևանի պետական կոնսերվատորիայի ֆոնդ, հետագայում ԵՊԿ, Աշտարակ-1974, N 20) ձայնաշարն ընդգրկում է ընդամենը չորս հնչյուն, ապա մեկ այլ նմուշի (Արվեստի ինստիտուտի ֆոնդ, հետագայում ԱԻ, N 14210) ձայնակարգը, փոփոխվող երկրորդ աստիճանի շնորհիվ, անես, տատանվում է էոլականի (ավելի ճշգրիտ՝ մինոր հնգալարի) և փռյուգիականի միջև: Այլ ձայնակարգային կառույցներից հազվադեպ պատահում է հիպոիոնականը (ձգտող ստորին 7-րդ աստիճանով մաժոր քառալար. Մ.Մ. N 18, ԵՊԿ, Սևան – 1982, N 88): Այսպիսով, մաժորային ձայնակարգային երանգը «Խորհուրդ մեծ»-երին բնորոշ չէ:

Հաշվի առնելով ձայնակարգային որոշ տարբերությունը, պետք է այդուհանդերձ նշել, որ մի շարք «Խորհուրդ մեծ»-եր կշռույթաինտոնացիոն առումով չափազանց մոտ են իրար և կարող են համարվել միևնույն երգի տարբերակներ:

Առաջին իսկ հայացքից ակնհայտ է, որ ժողովրդական «Խորհուրդ մեծ»-երի ճնշող մեծամասնության մեջ գերակայում է աստիճանական մտածողությունը: Անհրաժեշտ է արձանագրել, որ «Խորհուրդ մեծ»-երում նշանակալից դեր է կատարում նաև կվարտային թռիչքը դեպի վերի հենակետը, որն առկա է նաև Խորենացու շարականում և հանդիսանում է ԴԿ ձայնեղանակի բնորոշ տարրերից մեկը: ԵՊԿ, Թումանյան – 1984, N 35 նմուշում այն դարձել է տերցիային քայլ: Երկու նմուշներում գտնում ենք Ծննդյան երգերի համար ոչ բնորոշ թռիչքներ՝ կվինտայով և մեծ սեքստայով: Մեղեդու ուղղությունը մեծ մասամբ վարընթաց է կամ «հարթ»:

---

[10] Մեր բնութագրման համաձայն, «աստեղային» են կոչվում այն ժողովրդական ավետիսները, որոնց հիմնական բովանդակությունը կապված է Քրիստոսի Ծննդյան ավետող երկնքում հայտնված աստղի և աստվածային մանուկին տեսակցության եկող երեք մոգերի մոտիվների հետ:

[11] «Խորհուրդ մեծ և սքանչելի» շարականի նմուշների և ժողովրդական ավետիսների մեջ առկա Հայ Առաքելական Եկեղեցու երաժշտության ձայնեղանակների տարրերի քննության համար շնորհակալ ենք արվեստագիտության թեկնածու, երաժշտագետ Անահիտ Բաղդասարյանին, որն օգնել է մեզ նաև այլ արժեքավոր մասնագիտական խորհուրդներով:

«Խորհուրդ մեծ»-երին, ինչպես և ժողովրդական ավետիսներին բնորոշ են որոշակի, երգից երգ փոխանցվող կշռույթաինտոնացիոն դարձվածքներ: Սակայն այս անգամ երաժշտական բանաձևերը կապված են ոչ այնքան ժողովրդական, որքան եկեղեցական երաժշտության հետ: Այսպես, նմուշներից մեկը (ԵՊԿ, Աշտարակ – 1974, N 20) սկսվում է «Քրիստոս ծնաւ և յայտնեցաւ» «փանփարային» բանաձևով[12]: Նույն բանաձևով է ավարտ-վում Մ.Մ. N 3 նմուշը:

Առհասարակ Մ.Մ. N 2-ը (վերջանում է ԳՁ-ի ավարտի բանաձևով)[13], ԵՊԿ, Աշտարակ – 1974, N 20-ը, Ախալցխա – 70, N 104-ը (այստեղ կա նաև ԴԿ տիպական ավարտի դարձվածքը), Արթիկ – 1976, N 311-ը, Թումանյան – 1984, N 35-ը (այստեղ ԴԿ սկսվածք-բանաձևն ամբողջ երգի ֆրակտալային օղակն[14] է), ԱԻ, NN 12500, 280-1-ը և 14210-ը (այս վերջինում տիպական ավարտի բանաձևը ստանում է փռյուգիական ձայնակարգային ե-րանգ) կառուցված են ԴԿ բանաձևային ինտոնացիաներով: ԵՊԿ, Էջմիածին – 1985, N 87-ը ավելի շատ հիշեցնում է ԴՁ կամ ԱՁ դարձվածքի ինտոնացիաները, իսկ ԵՊԿ, Սևան – 1984, N 88-ում առկա են ԴԿ-ի տիպական ինտոնացիաները, սակայն՝ մաժորային երանգով:

Այս փաստերը հուշում են, որ «Խորհուրդ մեծ»-երը, ժողովրդական կենցաղավարում ստանալով, միշտ էլ շարունակել են ընկալվել իբրև եկեղեցական երգեր և կատարվել են առանց համապատասխան նորմերը խախտելու:

Որոշ բուն ժողովրդական ավանդական բանաձևեր, փոփոխված տեսքով, նշմարելի են նաև «Խորհուրդ մեծ»-երում: Դրանց թվում են ավետիսներում հաճախ հանդիպող մեր կող-մից պայմանականորեն «Ցայսօր ծնունդ» (Երաժշտական օրինակ 1.) և «Այսօր տոն է» (Երաժշտական օրինակ 2.) անվանված կշռույթաինտոնացիոն բանաձևերը: Ի դեպ, վեր-ջինն առկա է նաև Խորենացու շարականի յուրաքանչյուր տան երրորդ տողի սկզբում:

Մի շարք ցցուն կշռույթաինտոնացիոն դարձվածքներ որոշիչ են դառնում ձևագոյաց-ման համար, իսկ նմուշներից 6-ում հանդես են գալիս որպես հիմնական բանաձև-ֆրակ-տալներ: Որպես օրենք, ֆրակտալի օղակներն ունեն վարընթաց ուղղվածություն:

Ձև. Ինչպես արդեն նշեցինք, «Խորհուրդ մեծ»-երի մի մասին չափազանց բնորոշ է ֆրակտալային կառույցը: Այս առումով առավել հետաքրքիրը Մ.Մ. N 3 նմուշն է, որում

---

[12] Այդ բանաստեղծական-երաժշտական բանաձևը կարելի է գտնել. Ձայնագրեալ երգեցողութիւնք Սրբոյ Պատարագի. Երկրորդ տպագրութիւն, Վաղարշապատ, 1878, էջ 112, Կոմիտաս, Երկերի ժողովածու, հատ. 10, էջ 172, ԵՊԿ, Երևան – 1982, N 10: Պատարագի մեջ բանաձևը կատարում են *«մանկունք բարձր ձայնիւ»* (Ձայ-նագրեալ երգեցողութիւնք..., էջ 112), այսինքն՝ եկեղեցին, հավանաբար, պահպանել է երեխաների՝ ժո-ղովրդական ավետիս անելու ծեսի շրջանակներում կատարման եղանակը: Պետք է նշել, որ Պատարագում բեր-ված մեղեդին փոքր-ինչ տարբերվում է բանավոր ճանապարհներով մեզ հասած մեղեդիներից, որոնք, իրենց հերթին, ավելի մոտ են ներկայումս Ս. Էջմիածնում երգվող բանաձևին:

[13] Այս նմուշը հաստատում է Կոմիտասի նշումը ԴԿ-ի և ԳՁ-ի խառնուրդ հանդիսացող մեղեդիների մասին:

[14] Ֆրակտալը կամ ֆրակտալային օղակը կշռույթային կամ կշռույթաինտոնացիոն փոքրագույն (մոտիվ-մորֆեմից մինչև մի քանի հնչյուններից բաղկացած դարձվածք) կառուցողական մասնիկն է այն երկերում, ո-րոնք կառուցվում են այդ մասնիկի կրկնությամբ և տարբերակումով: Այս մասին մանրամասնորեն. Լ. Սիմո-նեան, Ֆրակտալային մտածողութիւնը հայկական իմպրովիզացիոն երաժշտական ֆոլկլորում, Հայկազեան Հայագիտական Հանդէս, հատ. Ի, Բէյրութ, 2000, էջ 307-328:

երկու ֆրակտալային օղակները (d1 e1 f1 g1 և d1e1d1c1) ոչ միայն կրկնվում են, այլև հանդես են գալիս շրջված, մեծացված, փոքրացված և խեցգետնաքայլ ձևերով: Սևանի նմուշը նույնպես ներկայացված է իրար հետևողականորեն հաջորդող երկու երաժշտական դարձվածների կրկնությամբ և տարբերակումով: Այսպիսի կառույցը, թերևս, նույնպես կարելի է դիտել իբրև երկու օղակներ ունեցող ֆրակտալային ձև:

Սակայն բոլոր նմուշներում չէ, որ առկա է նման ձևական հակասությունը տներից բաղկացած բանաստեղծական տեքստի և ֆրակտալային երաժշտության միջև: Երեք նմուշներ ունեն a b c b1 կառույցը, որը կրկնվում է տնից տուն:

Նույնիսկ եթե կառույցը ֆրակտալային չէ, ժողովրդական «Խորհուրդ մեծ»-երի երաժշտության մեջ գրեթե միշտ հանդիպում ենք որոշակի մորֆեմներ (հաճախ՝ ԴԿ ձայնեղանակի ինտոնացիոն տարրեր), որոնք կայուն են և հանդիսանում են երգի ձևական խարիսխը: Այսպես, վերոհիշյալ ԵՊԿ, Աշտարակ – 1974, N 20-ի ձևական կառույցն ունի հետևյալ տեսքը.

A B C A1 A2

ab cb1 cb2d a1b3 a2b4,

որտեղ A2 ֆրազը եզրափակում է բանաստեղծական տեքստի երկրորդ տան առաջին տողը: Ինչպես տեսնում ենք, b կառույց-դարձվածքը հանդես է գալիս երգի բոլոր ֆրազներում: Այս նույն առանձնահատկությունն ունեն նաև երկու այլ «Խորհուրդ մեծ»-եր:

## ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ «ԽՈՐՀՈՒՐԴ ՄԵԾ»-ԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ ԵՎ ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑՈՒ ՇԱՐԱԿԱՆԸ

Ժողովրդական «Խորհուրդ մեծ»-երը կարելի է բնութագրել որպես քրիստոնեական ժողովրդական երգեր կամ որպես պարականոն եկեղեցական երգեր: Իբրև ժողովրդական երգեր դրանք պատկանում են Ծննդյան ծիսական երգերի ժանրին: Դրանց բնորոշ է անհատական կատարում, առավելապես հիպոդորիական կամ հիպոէոլական ձայնակարգեր՝ եկեղեցական երաժշտության ձայնեղանակային մտածողության զգալի ազդեցությամբ, աղքատ կշռույթային պատկեր, պարայնության բացակայություն, «յորդորակ»-ային կամ հիմնիկ բնույթ, որոշակի ֆրակտալային ձևամտածողություն, վանկային-ծորերգային երգառճ: Բոլոր նմուշները կառուցված են միևնույն վանկաչափական մոդելով:

Ակնառու է, որ ժողովրդական նմուշները տիպաբանորեն բավականին արխաիկ են, ուստի և հարց է ծագում. եթե բոլոր ժողովրդական նմուշների համար մայր օրինակ կամ սկզբնաղբյուր է ծառայել Խորենացու շարականը, ապա ինչո՞ւ է պատմական «զարգացումը» մեզ հայտնի բոլոր դեպքերում ընթացել պարզեցման ուղղությամբ: Այն բացատրությունը, թե, իբր, ժողովրդական երգիչների կամ գյուղական քահանաների համար Խորենացու զարդոլորուն մեղեդին վերարտադրելը կամ հիշելը դժվար է եղել, իմաստ չունի: Կան ժողովրդական ավետիսներ, որոնց մեղեդիները պակաս բարդ և զարդոլորուն չեն, քան «Շարակնոցի» «Խորհուրդ մեծ»-ը, և այդ բանը բոլորովին էլ չի խանգարել ժողովրդին մտապահել և կատարել դրանք: Ավելին, ժողովրդական երգասացները «Խորհուրդ մեծ»-

երի հետ միևնույն «երգաշարի» մեջ համադրում են հենց զարդոլորուն ոճի «աստեղային»
ավետիսները: Ուրեմն հարցի պատասխանը պետք է փնտրել այլ տեղում:

Այս հարցի շուրջ կարող է լինել երեք վարկած.

ա. «Խորհուրդ մեծ և սքանչելի» շարականի բանաստեղծական տեքստով իրարից ան-
կախ ստեղծվել են տարբեր մեղեդիներ.

բ. տվյալ բանաստեղծական տեքստով բոլոր նմուշները (ժողովրդական և եկեղեցա-
կան) մեկ՝ դեռևս անհայտ բնօրինակի տարբերակներ են,

գ. հայտնի նմուշներից մեկը հանդիսանում է բնօրինակ, իսկ մյուսները տարբերակներ
են՝ զարգացման և կորուստների տարբեր աստիճանով:

Գաղտնիք չէ, որ «Շարակնոցի» մեջ մտած մեղեդին նույնպես գրառված է բանավոր
աղբյուրից՝ այնպես, ինչպես այն կատարվել է 19-րդ դարում: Արդյոք կարելի՞ է պնդել, որ
5-րդ դարում ստեղծված շարականը անեղծ ձևով և անփոփոխ հասել է մինչև 19-րդ դար:
Ինչևէ, նույնիսկ Կոմիտասը չի շեշտում, որ «Խորհուրդ մեծ»-ը պատկանում է Խորենացու
հեղինակությանը, այլ նշում է. «վերագրվում է»: Հետևաբար, հազիվ թե մենք բավարար
հիմքեր ունենք պնդելու, որ «Շարակնոցի» մեղեդին հնագույն սկզբնաղբյուրն է, իսկ մնաց-
յալ բոլոր նմուշները հետագիմած աղավաղումներ են: Ամեն դեպքում, այս հարցը պար-
զաբանման կարիք ունի:

Այժմ անդրադառնանք մի այլ չափազանց կարևոր հարցի: Բանն այն է, որ Խորենացու
«Խորհուրդ մեծ»-ը համարվում է հոգևոր (իմա՝ եկեղեցական) ավետիս: Հետևելով պար-
զագույն տրամաբանությանը, եթե ժողովրդական «Խորհուրդ մեծ»-երը Խորենացու շա-
րականի տարբերակներ են, ուստի դրանք էլ պետք է ավետիսներ համարել: Սակայն այդ
դեպքում առաջանում է անհաղթահարելի մի հակասություն. «Խորհուրդ մեծ և սքանչելի»
բանաստեղծական տեքստով ժողովրդական երգերը որևէ առնչություն չունեն բուն ժո-
ղովրդական ավետիսների հետ, բացի Քրիստոսի Ծննդյան թեմատիկայից[15]:

Ժողովրդական ավետիսի կառույցը շատ կուռ է, տաղաչափական և կառուցվածքային
պահանջները՝ գրեթե անխախտ, և դա անկախ այս կամ այն բանաստեղծական տեքստի
բովանդակությունից: Ո՛չ Խորենացու «Խորհուրդ մեծ»-ը, ո՛չ էլ ժողովրդական «Խորհուրդ
մեծ»-երն այդ պահանջներին չեն համապատասխանում: Խորենացու շարականի և դրան
մոտարկող նմուշների բանաստեղծական տեքստերն ունեն տներից կազմված երաժըշ-
տական տեքստեր, հաճախ փրակտալային կառուցվածք: Ի տարբերություն դրանց, ավե-
տիսների բանաստեղծական տեքստերը բաժանվում են խոշոր թեմատիկ բլոկների, իսկ
մեղեդիները կառուցվում են տող - կամ երկատող - միավորների կրկնությամբ:

«Խորհուրդ մեծ»-երի գրեթե անփոփոխ հեղինակային բանաստեղծական տեքստի
տաղաչափական կառույցի հիմքում յոթվանկանի տողն է, հանգավորում կա՛մ չկա, կա՛մ
հանգավորվում են առաջին և չորրորդ, երկրորդ և չորրորդ տողերը, մինչդեռ ավետիսի
տողը ութվանկանի է, իսկ հանգավորումը պարտադիր է, ընդ որում հանգավորվում են
հարևան տողերը՝ երկուական կամ երեքական: Վերջապես, Խորենացու բանաստեղծութ-
յան մեջ «ավետիս» բառը կրկնակ չէ, իր ուղղակի ձևով այն հանդես է գալիս միայն առա-

---

[15] Ի դեպ, կոմիտասյան վերը մեջբերված սահմանումի մեջ գտնում ենք ավետիսի թեմատիկ նյութի համար պարտադիր «հովիվների ավետման» մոտիվը, որն իսպառ բացակայում է ժողովրդական ավետիսներում:

ջին տան մեջ՝ վերջին տողի մեջտեղում, «աետեօք» ձևով՝ չորրորդ տան երրորդ տողի վերջում[16]: Այն չի կրկնվում տողերի վերջերում, ինչպես ավետիսներում է: Նույնիսկ եթե վերանանք ձևական կողմից և դիտարկենք բանաստեղծական տեքստերի ընդհանրությունները, դրանք, ըստ էության, չնչին են:

Վերջապես, ինչպես արդեն նշել ենք, «աստեղային» ժողովրդական ավետիսի կերպով և կառույցով մեկ ավետիս կա նաև Հայ Առաքելական Եկեղեցու Ծննդյան Պատարագում: Այդ ավետիսը, բայց ոչ ամենևին՝ «Խորհուրդ մեծ և սքանչելի» շարականը, կարող է իսկապես դրվել ժողովրդական ավետիսների կողքին և դիտարկվել իբրև միևնույն ժանրի նոր մարմնավորում եկեղեցական միջավայրում:

Այսպիսով, «Խորհուրդ մեծ և սքանչելի» բանաստեղծական տեքստով ժողովրդական երգերը ավետիսներ չեն, այլ Ս. Ծննդյան *քրիստոնեական ժողովրդական երգեր*:

Իբրև ժողովրդի հոգևոր ժառանգության մաս, ժողովրդական «Խորհուրդ մեծ»-երը ներկայացնում են ոչ միայն զուտ գիտական, այլև գեղարվեստական մեծ արժեք: Դրանց գրառումն ու տարածումը կարևոր դեր կարող է խաղալ արդի ժամանակներում ժողովրդի քրիստոնեական-ազգային ավանդների հետ կապը վերականգնելու և ազգային ոգով դաստիարակության համար:

Երաժշտական օրինակ 1.




1. Հարսանեկան երգ, Կոմիտաս, Երկերի ժողովածու, հատ.10, Ե. «Գիտություն», 2000, էջ 61, N37
2. Ավետիս, ԵՊԿ, Աշտարակ - 2000
3. Խորհուրդ մեծ, ԱԻ, N 12500, 280-01

Երաժշտական օրինակ 2.




1. Երգ Ծննդյան, Հայրենի երգեր (կազմ. Ա.Փանոսյան), Ե., «Սովետական գրող», 1971, էջ 61
2. Արդ երամանով սառավածային (հարսանեկան երգ), Կոմիտաս, Երկերի ժողովածու, հատ.10, Ե., «Գիտություն», 2000, էջ 74, N 67
3. Խորհուրդ մեծ և սքանչելի, ԵՊԿ, Արթիկ - 1976, N311

---

[16] Այս վերջին դեպքում կարելի է ենթադրել հնագույն ավետիսների ազդեցությունը:

Խորհուրդ մեծ



Երևանի պետական կոնսերվատորիայի ֆոնդ, Թամամյան, գ. Օձուն, 1984, № 35
Գրառումը Խ.Մարտիրոսյանի

Խորհուրդ մեծ



[illegible], 1912, N [illegible]

*ՀՈՎՀԱՆՆԵՍ ՋԱՏԻԿՅԱՆ*

# ԿԱՐԻՆԻ ՆԱՀԱՆԳԻ ԿԱՐՆՈ ԳԱՎԱՌԱԿԻ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԸ

(19-րդ դարի երկրորդ կես)

Կարնո գավառակը կենտրոնական տեղ է զբաղեցնում նահանգի գավառակների շարքում ոչ միայն իր աշխարհագրական դիրքով, տնտեսական կապերով, այլև մշակութային զարգացման աստիճանով:

Գավառակի սահմանները հյուսիսում հասնում են Թորթումի, արևելքում՝ Բասենի, հարավում Մանանաղի, հարավ-արևելքում Դերջանի, Խաղտիքի, Սպերի գավառակներին:

Գավառակի գյուղերը, որոնք բաժանվում են երկու՝ Իլիճայի և Աշկալայի գյուղախմբերի, հիմնականում տեղավորված են Կարնո շամբի շրջակայքում: Ղևոնդ Ալիշանը հայտնում է, որ «Ի դաշտին Կարնոյ սփռեալ են իբրև 120 գեղօք»[1]: Հ. Էփրիկյանը ներկայացնում է 205 գյուղերի ցուցակ[2], Ա-Դոն, հենվելով Կարինի Առաջնորդարանի տեղեկությունների վրա, ընդունում է 169 գյուղերի գոյությունը[3]: Գ. Սրվանձտյանցը հաշվում է 47 հայաբնակ և խառը բնակչությամբ գյուղեր[4]:

Մեր կատարած հաշվումների արդյունքում ունենում ենք 187 գյուղ, որից 48-ը՝ հայաբնակ: 187 գյուղերում կար 3097 տուն՝ 20188 հոգի հայ բնակչությամբ:

Կարնո գավառակում էին գտնվում երեք նշանավոր վանքեր՝ Ս. Լուսավորչի, Կարմիր և Խաչկավանք, որն անվանվում է նաև Հուշավանք: Վանքի կառուցումը կապվում է բյուզանդական Հերակլ կայսրի հետ: Նահանջելով պարսիկների դեմ անհավասար ճակատամարտից, սպառվում է բանակի սննդամթերքը : Ունևոր մի հայ կին օգնության ձեռք է մեկնում կայսրին, և վերջինս, ի նշան երախտագիտության, հայ կնոջը նվիրում է Քրիստոսի խաչի մասունքներից մեկը: Հենց այդ վայրում էլ, հայ մեծահարուստ կնոջ միջոցներով, կառուցվում է վանքը:

Կարինի գավառի Հինձք գյուղում է գտնվում Կարմիր վանքը: Այն կրել է Ս. Աստվածածին անունը: Ավանդության համաձայն, վանքը կառուցվել է Ս. Ներսեսի հրամանով: Կարմիր վանքն ունի նաև հարուստ պատմական անցյալ: Կարմիր վանքի դպրոցում են սովորել Անանիա Շիրակացին, Գրիգոր Նարեկացին, Գրիգոր Մագիստրոսը, Արիստակես Լաստիվերտցին:

Վանքն առավել բազմամարդ էր լինում Աստվածածնի ուխտին, երբ տեղի էին ունենում նաև ժողովրդական տոնախմբություններ: Կարմիր վանքից արևելք գտնվում է

---

[1] Ղևոնդ Ալիշան, Տեղեկագիր Հայոց Մեծաց, Վենետիկ, 1853, էջ 36:

[2] Հ. Էփրիկյան, Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան, հ. 2, Վենետիկ, 1907, էջ 300-301:

[3] Ա-Դո, Վանի, Բիթլիսի և Էրզրումի վիլայեթները, Երևան, 1912, էջ 173-174:

[4] ԳԱԹ, Թ. Ազատյանի ֆոնդ, գ. 23, թ. 19:

Հռիփսիմյանց կույսերի հովիտը: Հալածվելով Դիոկղետիանոս կայսրի (284-305 թթ.) կողմից, կույսերը ապաստանում են քարայրներով հարուստ այդ հովտում:

Ս. Լուսավորչի վանքն ուներ երեք եկեղեցի-մատուռ: Մեծ մատուռը կոչվում էր Լուսավորչի, երկրորդը Ս. Մարգսի անունով, երրորդը, որ նման էր Խոր Վիրապին, եղել է ուխտատեղի:

Արաբ պատմիչ Իբն ալ Ֆակինը Կարինի եկեղեցիներից մեկի մասին պատմում է հետևյալ ավանդապատումը: Այդ եկեղեցուն կից կար մի փոսն, որտեղից, «ծաղկազարդի գիշերը սպիտակ փոշի է տարածվում, մինչև առավոտ, ապա դադարում է մինչև հաջորդ տարվա նույն օրը: Տեղի կրոնավորները այն բաժանում են ժողովրդին: Դա հատուկ դեղաթափ է, թույների, կարիճների և օձերի խայթվածքի դեմ: Նրանից մի դունգ (0.56 գրամ - ծանոթ. թարգմանչի) ջրի հետ տալիս են խայթվածին խմելու և անմիջապես հանգստանում է: Մի ուրիշ հրաշք էլ այն է, որ թե այդ փոշին վաճառվի կամ փոխարենը որևէ նյութական արժեք վերցվի, ապա խմողը չի օգտվի և իր ցավից չի բուժվի»[5]:

Գավառակի նշանավոր հայաշատ գյուղերից էր ՄՈՒՏՈՒՐԿԱՆ: Գյուղի հարավային կողմում էր գտնվում Ս. Լուսավորչի կամ Մուտուրկայի վանքը: Վանքը կառուցված էր գեղատեսիլ վայրում, Դեվեբոյն լեռան ստորոտում, Սովուք Ջերմուկի մոտ, Գոլգոչա ջրվեժի հարևանությամբ:

Մուտուրկայի եկեղեցին կոչվում էր Ս. Հակոբի անունով: Այն Մ. Միրախորյանն անվանում է «բաւական ճաշակաւոր»[6]: Եկեղեցին ունեցել է 2000 լիրա հասույթ[7]:

Սովուք Ջերմուկ գյուղի եկեղեցին կոչվում էր Ս.Հրեշտակապետ և ուներ 1000 լիրա հասույթ[8]:

Ծխնոց գյուղի Ս. Հովհաննես եկեղեցին կառուցվել է 1830 թ. և ուներ 1000 լիրա հասույթ: Եկեղեցում պահվում էր մագաղաթյա մի Ավետարան[9]:

ԹՈՒԽՄԱՆ գյուղը գտնվում էր Կարին քաղաքից հյուսիս-արևելք: Գյուղի լուսավորչական հայերի եկեղեցին Ս. Ամենափրկիչն էր: Կաթոլիկ հայերը ևս ունեին իրենց եկեղեցին, որը 80-ական թվականներին արդեն ավերված էր:

Գյուղի մոտակայքում էր գտնվում Ս. Գևորգ վանքը, որը միջնադարում հանդիսացել է գրչության կենտրոն: Ս. Ամենափրկիչ եկեղեցին ունեցել է 1000 լիրա հասույթով կալվածքներ[10]:

ՀԻՆՁՔ գյուղը գտնվում էր Կարինից հյուսիս-արևելք: Ինչպես նշեցինք վերևում, գյուղի մոտ էր գտնվում հռչակավոր Կարմիր վանքը: Հինձքի Ս. Խաչ եկեղեցին ուներ 2000 լիրա հասույթ, որը գոյանում էր կալվածքներից ստացված եկամուտներից ու նվիրատվությունից: Եկեղեցին կառուցված էր բլրի լանջին, շրջապատված էր պարսպա-

---

[5] «Լրաբեր հասարակական գիտությունների», 1971, № 3, էջ 68-69, տե՛ս նաև Ա. Ն. Տեր-Ղևոնդյանի հոդվածը:

[6] Մ. Միրախորյան, Նկարագրական ուղևորություն..., Պոլիս, 1884, էջ 146:

[7] ԳԱԹ, Էջ. ֆոնդը, գ. 23, թ. 19:

[8] Նույն տեղը, թ. 29:

[9] Նույն տեղը, թ. 18:

[10] Նույն տեղը, թ. 16:

քարերով: Գերեզմանատանը կար մատուռ, որը ենթադրվում է, որ եղել է Ներսես Մեծի ճգնարանը: Գյուղի կաթոլիկ հայերի եկեղեցին՝ Ս. Աստվածածինը, կառուցվել է 1862 թ.[11]:

Կարմիր վանք (Գըզըլ Քիլիսե) գյուղը գտնվում էր գեղեցիկ զառիթափի վրա: Ս. Խաչ եկեղեցին կառուցվել է 1865 թ. և ուներ 1000 լիրա հասույթ[12]:

Շեփեկ գյուղն ուներ Ս. Մինաս անունով եկեղեցի[13], որն ստանում էր 2000 լիրա հասույթ:

ԴԻՆԱՐԳՈՄ գյուղի Ս. Աստվածածին եկեղեցին կառուցվել էր 1873 թ.: Քարաշեն, գարդանախշերով, զանգակատնով ճարտարապետական կառույց էր: Արխիվային փաստաթղթերից մեկը հավաստում է, թե եկեղեցին կոչվում էր Ս. Մինաս[14]:

Ջիթիոռը Կարնո դաշտի խոշոր հայաշատ գյուղերից էր: Տեղավորված էր շամբից հյուսիս: 1860 թ. կառուցված Ս. Աստվածածին եկեղեցին ուներ 3000 լիրա հասույթով կալվածքներ[15]: Այս եկեղեցին Միրախորյանն անվանում էր «գեղեցկակերտ»[16]:

ԱՐԾԱԹԻ գյուղը գտնվում էր ծաղկավետ լեռան հարավ-արևելյան ստորոտում: Գյուղի Ս. Աստվածածին եկեղեցին զարդաքանդակներով, խաչքարերով հարուստ հոյակերտ կառույց էր և ուներ 3000 լիրա հասույթ[17]: Ս. Նշան եկեղեցին գյուղի երկրորդ աղոթատեղին էր: Գյուղի մոտ էր գտնվում Ս. Լուսավորչի վանքը, որտեղ մեծ տոնախմբություն էր կազմակերպվում հատկապես Լուսավորչին նվիրված տոնին:

ՈՒՄՈՒՏՈՒՄ գյուղը շամբից հյուսիս է: Ուներ Ս. Հակոբ և Ս. Սարգիս անուններով եկեղեցիներ, Ամենափրկիչ անունով մատուռ: Միրախորյանի հաղորդմամբ, Ս.Հակոբ եկեղեցին գետնափոր էր[18], ուներ 2000 լիրա հասույթ և կառուցվել էր 1129 թ.՝ «ի ձեռն Գրիգոր վարդապետի»[19]: Ս. Սարգիս եկեղեցու պատերին կան արձանագրություններ: Գյուղի հին և նոր գերեզմանատները ևս հարուստ էին տապանաքարերով, խաչքարերով, խոյարձաններով[20]:

Գրիչք գյուղի Քրիստոս Թագավորի եկեղեցին կառուցվել է 1275 թ., ուներ 2000 լիրա հասույթ: Եկեղեցու հարևանությամբ գտնվող գերեզմանոցը հայտնի էր իր յոթ նշանավոր խաչքարերով[21]:

ԳԵՂԱՄՍՈՌ գյուղի եկեղեցին ուներ Ս. Սարգիս անունը: Նրա հասույթը կազմում էր 2000 լիրա[22]:

---

[11] ՀՀՊԿՊԱ, ֆ. 476, ց. 1, գ. 787, թ. 29:
[12] ԳԱԹ, Ոչ. տեղը, թ. 16:
[13] Նույն տեղը, թ. 16:
[14] ՀՀՊԿՊԱ, ֆ. 476, ց. 1, գ. 1003, թ. 16:
[15] Նույն տեղը, գ. 261, թ. 39:
[16] Մ. Միրախորյան, Ոչ. գիրքը, էջ 158:
[17] ԳԱԹ, Ոչ. ֆոնդը, գ. 23, թ. 16:
[18] Մ. Միրախորյան, Ոչ. գիրքը, էջ 163:
[19] ԳԱԹ, Ոչ. ֆոնդը, գ. 23, թ. 16:
[20] ԳԱԹ, Ոչ. ֆոնդը, գ. 23, թ. 16:
[21] ՀՀՊԿՊԱ, ֆ. 57, ց. 5, գ. 139, թ. 28:
[22] ԳԱԹ, Ոչ. ֆոնդը, գ. 23, թ.16:

ԴՎՆԻԿ գյուղը գտնվում էր Կարինից հյուսիս: Գյուղի Ս. Աստվածածին եկեղեցում է գործել Հակոբ ծաղկողը, որի 1587 թ. նկարազարդած Ավետարանն այժմ գտնվում է Մաշտոցի անվան Մատենադարանում:

ՊԱՏԻՃԵՆ գյուղի եկեղեցին կոչվում էր Ս. Գևորգ: Այն ուներ 1000 լիրա հասույթ[23]:

ՕՁՆԻ գյուղը գտվում էր բարեբեր հարթավայրում: Գյուղի Ս. Երրորդություն եկեղեցու արձանագրությունները վկայում են, որ եկեղեցին կառուցվել է 858 թ. Հովհաննես Օձնեցի Կաթողիկոսի նախաձեռնությամբ ու օրհնությամբ: Ենթադրվում է, որ գյուղի անունը կապված է Կաթողիկոսի անվան հետ:

ԻԼԻՃԱ գյուղի եկեղեցին Ս. Աստվածածինն էր և ուներ 1000 լիրա հասույթ[24]:

ԲԼՈՒՐ գյուղի եկեղեցին Ս. Գևորգն էր և ուներ 1000 լիրա հասույթ[25]:

ԱՇՈՒՆԻ գյուղի Ս. Մինաս եկեղեցու հասույթը կազմում էր 1000 լիրա[26]: Կարինից հյուսիս-արևմուտք գտնվող Չիֆթլիկ գյուղի Գաբրիել Հրեշտակապետի եկեղեցին կառուցվել է 1838 թ. և ուներ 3000 լիրա հասույթ[27]: Գյուղի մոտակայքում էր գտնվում Ս. Մինաս ուխտատեղին:

ԿԱՆ գյուղի Ս. Փրկիչ կամ Ամենափրկիչ եկեղեցին կառուցվել է 1837 թ.: Չորս քահանաներ ունեցող գործող եկեղեցի էր: Նրա հասույթը կազմում էր 4000 լիրա[28]:

ԿԵՉ գյուղը գտնվում էր Կարինից հյուսիս-արևմուտք: Ս. Մինաս եկեղեցին կառուցվել է 1790 թ. և ունեցել է 2500 լիրա հասույթ[29]: Գյուղում էին գտնվում Ս. Կիպրիանոս և Շեկ Ավետարան կոչվող ուխտատեղիները:

Կարնո գավառակի 30 խոշոր հայաբնակ գյուղերը, խառը բնակչությամբ գյուղերն ունեին իրենց եկեղեցիները: Եկեղեցաշինությունը հատկապես կարևորություն ստացավ դարի երկրորդ կեսին, որովհետև, օգտվելով սուլթանի հովանավորությունից և օժանդակությունից, իրենց անարգել գործունեությունն էին ծավալել միսիոներական ընկերությունները, որոնք խարխլում էին արևմտահայության ազգային-հոգևոր միասնությունը: Ահա այս դժնդակ իրողության դեմ պայքարի միակ հզոր միջոցը դառնում է Հայ Եկեղեցին, որն իր ուսերին առնելով այդ ծանրագույն պարտականությունը՝ անհավասար պայքարում փորձում էր փրկել ժողովրդին՝ հեռու պահելով դեպի օտարացում տանող ճանապարհից:

---

[23] Նույն տեղը:

[24] Նույն տեղը, թ. 16:

[25] Նույն տեղը, թ. 17:

[26] Նույն տեղը:

[27] Հ. Քոսյան, Բարձր Հայք. Ա. Բ, Վիեննա, 1926, էջ 106:

[28] Նույն տեղը, թ. 16:

[29] ԳԱԹ, Նույն տեղը, թ. 16

ՄԱՐԳՈ ՄԽԻԹԱՐՅԱՆ
*Բանասիրական գիտությունների թեկնածու*

# ԽՈՐԵՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՍՏԵՓԱՆԵԻ ԿՅԱՆՔՆ ՈՒ ԼՐԱԳՐԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

XIX դարի երկրորդ կեսի կովկասահայ լուսավորական շարժման ականավոր գործիչ Խորեն եպիսկոպոս Ստեփանեն (Ստեփան Ստեփանյան) Մ. Նալբանդյանի և Ս. Նազարյանի այն հետևորդներից էր, ովքեր Կովկասում իրենց գործունեությունը սկսում են խորապես մտահոգված հայ ժողովրդի ազգային դիմագծի անաղարտության պահպանմամբ: Պաշտոնի բերումով շրջագայելով Ռուսաստանի գրեթե բոլոր թեմերում, նա միևնույն ժամանակ եղել է նաև մանկավարժ ու լրագրող, զբաղվել գրական գործունեությամբ և ճանաչվել որպես ճարտար քարոզիչ:

Խորեն Ստեփանեն ծնվել է 1840 թ. Թիֆլիսում՝ Կոստանդնուպոլսից գաղթած և Վրաստանում բնակություն հաստատած արևմտահայերի ընտանիքում: Սկզբնական կրթությունը ստանալով Ներսիսյան դպրոցում՝ այնուհետև տեղափոխվում է Մոսկվա, որտեղ 1858 թ. ավարտում է Լազարյան ճեմարանի դասարանական բաժինը, իսկ 1862 թ.՝ թեկնածուի աստիճանով Մոսկվայի համալսարանի պատմա-լեզվական ֆակուլտետը:

Ուսումնառության տարիներին Ստեփանեն մասնակցում է այդ շրջանում Մոսկվայում կազմակերպվող ուսանողական ժողովներին, որտեղ հայ երիտասարդները դասախոսություններ էին լսում մայրենի լեզվով, քննարկում իրենց ընկերների գրական փորձերը, վիճաբանում զանազան գիտական զեկուցումների շուրջ: Այդ ժողովներում, համաձայն Քաջբերունու վկայության, Ստեփանեն «կարդում էր յուր ոտանավորները՝ Իշխան Բագրատունի ստորագրությամբ»: «Ուսանող Ստեփանեն,– շարունակում է Քաջբերունին,– ձգտում ուներ հայկաբանություն սովորելու և մանավանդ բանաստեղծական ասպարեզում: Բացի այն, որ կարդում էր ժողովում, Ստեփանեն հայազգի ուսանողներին հրավիրում էր յուր բնակարանը և կարդում Իշխան Բագրատունու բանաստեղծությունները»[1]:

Ստեփանեն և մի շարք հայ ուսանողներ աշխատակցում էին Նազարյանի «Հյուսիսափայլ» ամսագրին[2]:

---

[1] Տե՛ս Հ. Քաջբերունի, Վաթսունական թվականներում [հուշեր] // Հուշեր և հոդվածներ Ստեփանոս Նազարյանի մասին, աշխատասիրությամբ Ռ. Պ. Նանումյանի, Երևան, 1996, էջ 47, 53:

[2] «Ստեփաննոս Ստեփանյանց» ստորագրությամբ Ստեփանեն «Հյուսիսափայլում» տպագրել է «Հալ-Մեհի Կանտիմիր» պատմվածքը (թարգմանություն ֆրանսերենից), 17-րդ դարի ֆրանսիացի գրող Ժան Բրյուերի կենսագրությունը և նրա «Նկարագիրք» պատկերներից երկու ակնարկ («Հյուսիսափայլ», 1858, թիվ 4; 1861, թիվ 4): «Հյուսիսափայլի» էջերում հանդես է եկել նաև իբրև բանաստեղծ («Աղքատ աղջիկ», «Խոստովանություն»), («Հյուսիսափայլ» 1860, թիվ 7, 8): Ստեփանե-բանաստեղծը ստորագրել է նաև «Ստեփաննոս Ստեփանյանց-Ուսումնասեր» և «Իշխան Բագրատունի» գրական կեղծանուններով:

Վերադառնալով Թիֆլիս, 1862-1868 թթ. նա սկսում է պաշտոնավարել տեղի արական գիմնազիայում, Սուրբ Նունեի օրիորդաց ինստիտուտում և ռազմական դպրոցում: 1865 թ. գիմնազիայի վերատեսչի հանձնարարությամբ նա ռուսերեն շարադրում է «Հայոց համառոտ պատմությունը»՝ որպես ձեռնարկ գիմնազիայի հայ աշակերտության համար:

Առաջադիմական հայացքների համար Ստեփանեն 1868 թ. հեռացվում է պետական պաշտոններից, որից հետո նա իր տանը հաստատում է գիշերօթիկ դպրոց («Երկնողական դասեր աշակերտների համար»), այնուհետև՝ 1868 թ. հիմնադրում Մարիամյան օրիորդաց դպրոցը, իսկ 1869 թ. այդ դպրոցի մասնաճյուղը եղող՝ Հավլաբարի առաջին երկսեռ դպրոցը, որոնց տեսչի պարտականությունները կատարում էր մինչև 1871 թ.:

Ստեփանեն որոշում է նաև հրատարակել մի պարբերական: Քանի որ քաղաքական և գործնական նկատառումներով ավելի դյուրին էր ստանալ հրատարակվող որևէ օրգանի խմբագրման իրավունքը, քան ձեռք բերել նոր ամսագրի հիմնադրման թույլտվությունը, ուստի, օգտվելով այն հանգամանքից, որ Մարկոս Աղաբեկյանի «Կռունկ հայոց աշխարհին» ամսագիրը 1863 թ. չէր հրատարակվում, Ստեփանեն համաձայնության է գալիս հրատարակիչ Համբարձում Էնֆիաճյանի հետ՝ այդ ամսագիրը նոր ծրագրով շարունակելու շուրջ: 1864 թ. հուլիսին տպագրված հայտարարությունն արդեն ազդարարում էր, որ «Կռունկը» վերսկսում է իր երկրորդ կյանքը՝ «Մոսկվայի համալսարանի կանդիդատ, պատմաբանական գիտությունների ուսուցիչ Խ. Ստեփանեի խմբագրությամբ» (նա միաժամանակ հրատարակիչ էր, իսկ Էնֆիաճյանը մնում էր միայն սեփականատեր):

Չկարողանալով 1864 թ. վերջերին լույս ընծայել ծրագրված երկու համարները (թիվ 11-12), Ստեփանեն 1865 թ. մարտին հրատարակում է «Հայկական աշխարհի կռունկ» ամսագրի առաջին միացյալ համարը («Օրագիր ուսումնական և գրականական»)[3]: Թեև ձևականորեն ինչ-որ չափով պահպանվում էր ամսագրի նախկին խորագիրը, բայց նոր հրատարակությունը շատ կողմերով զանազանվում էր նախորդից: Ամսագրի համար բնաբան են ընտրվում «Դու կտեսնես հայրենիքի սերը ոչ թե շարժված անարգ շահասիրութենից, բայց բարձր և իբրև հավիտենական»[4] խոսքերը:

Ստեփանեն ծրագրում է ամսագիրը հրատարակել հինգ բաժնից՝ գրականություն, մանկավարժություն, քննադատություն և մատենագիտություն, հասարակական կյանք, մանրալուրեր: Բոլոր այս բաժինները պետք է ծառայեին մեկ հիմնական նպատակի՝ հայ ժողովրդի «առաջգնացության» գործին: Դրա համար ամսագիրը վեր էր հանում բարեկարգ դպրոցներ ստեղծելու, գիտության տարածման, ազգի բարոյական դաստիարակության, ընթերցասիրության հետ կապված բազմազան հարցեր:

Իր լայնածավալ ծրագիրն իրականացնելու նպատակով Ստեփանեն խմբագրական գործունեության առաջին իսկ օրերից կապեր է հաստատում գավառների հետ: Տեղի մի

[3] Այդ ամսատետրակը պարունակում էր 1864 թ. 11-12-րդ և 1865 թ. 1-2-րդ համարները (1-4), ամսագրի առաջին տարեշրջանը հաշվվում էր նոյեմբերից-նոյեմբեր:

[4] Այդ բնաբանն առնված էր պորտուգալացի բանաստեղծ Կամոենսի «Լուսիտանականք» պոեմից: Սկսած 1867 թ., իբրև ամսագրի բնաբան՝ Ստեփանեն ընտրում է լատինական հետևյալ առածը. «Ինչ կարող եմ, կատարում եմ, թող կատարե առավել լավ, ով կարող է»: 1877 թ. այն ստանում է այլ ձևակերպում. «Ինչ կարող եմ, գործում եմ, թող գործե առավել լավ, ով կարող է»:

շարք մտավորականների հանձնարարում է թղթակցություններ ուղարկել բնակչության կրթության աստիճանի, դպրոցների վիճակի, խոսակցական լեզվի, ժողովրդի սովորույթների և կենցաղի, հոգևորականության գործունեության և այլ հարցերի մասին:

Խմբագրի ջանքերը տալիս են ցանկալի արդյունքներ, և «Հայկական աշխարհի կռունկ» ամսագրի առաջին տետրակներն իրենց վրա են հրավիրում հայ հասարակության ուշադրությունը, որովհետև այդ ժամանակ այնքան էլ հարուստ և բազմազան չէր Թիֆլիսի մամուլը: Այդ ժամանակ արդեն «Կովկաս» պաշտոնաթերթը (1846-1847), դադարել էր՝ առանց խորքային հետք թողնելու: Գաբրիել Պատկանյանի՝ մի շարք արժանահայ իրականության մեջ որևէ հետք թողնելու: Գաբրիել Պատկանյանի՝ մի շարք արժանիքներ ունեցող «Արարատ» շաբաթաթերթը (1850-1851) ևս, որը գրական, լուսավորական օրգանի առաջին ճաշակն է տվել հայ ընթերցողներին, դադարել էր՝ լուսավորական իր առաքելությունը հազիվ սկսած: 1858 թ. Թիֆլիսում սկսվում է հրատարակվել «Մեղու Հայաստանի» շաբաթաթերթը, որը խստիվ հակադրվում է «Հյուսիսափայլին»:

«Մեղվի» համեմատությամբ, ազգային-պահպանողական «Կռունկ հայոց աշխարհին» ամսագիրը նվաճում էր հայ մշակութային կյանքում: Այն նոր որակ է հաղորդում կովկասահայ մամուլին և ժամանակի հրապարակախոսության մեջ ստեղծում ուրույն հոսանք: «Կռունկի» դադարեցումը 1863 թ., մեկ տարի անց՝ «Հյուսիսափայլի» լռությունը, զգալիորեն ամայացնում են հայ մտավոր անդաստանը: Այս էր պատճառը, որ ժամանակի կրթված երիտասարդներից մեկի՝ Ստեփանեի թերթ հրատարակելու նախաձեռնությունն ընդունվում է բարյացակամությամբ:

«Հայկական աշխարհի կռունկի» խմբագիրն առաջին իսկ քայլերից ձեռնամուխ է լինում նորարարական այն ծրագրերի իրականացմանը, որոնցով զինված մուտք էր գործել հայ լրագրության ասպարեզ: Ստեփանեն նախ վերափոխում է թերթի խորագիրը, այն համապատասխան դարձնելով աշխարհաբարի կանոններին: Այնուհետև նա ծանուցում է ամսագրում ուղղագրական և կետադրական բարեփոխումներ մտցնելու մասին: 1864-1865 թթ. միացյալ համարում (թիվ 1-4) Ստեփանեն այդ միջոցառումը հիմնավորում է կարամզինյան նշանավոր այն աստվածի տրամաբանությամբ, որում ասվում էր. «Գրել այնպես՝ ինչպես խոսում ենք, և խոսել այնպես՝ ինչպես գրում ենք: Գրել այնպես՝ ինչպես արտասանում ենք, և արտասանել այնպես՝ ինչպես գրում ենք»:

Առաջնորդվելով այս սկզբունքներով, նա իր ամսագրում կատարում է հետևյալ ուղղագրական փոփոխությունները: «Վ» հնչյունն ամենուր գրվում է «Վ», իսկ «Ց» կիսաձայնը չընչելու դեպքում, բառավերջում չի դրվում (օրինակ՝ քահանա): Եվրոպական բառերում «Ո»-երը գրվում էին «Օ»-ով (դոկտոր, Եվրոպա), «ՈՂ»-ով վերջացող բառերը նույնպես գրվում էին «ՕՂ»-ով (գրօղ): Եվրոպական բառերում երբ հնչում էր «Է», գրվում էր «Է»: Այնուհետև մտցվում է կետադրական նոր համակարգ: Թարգմանական գործերի հարազատությունը պահպանելու նպատակով եվրոպական լեզուներից ընդունվում և «Հայկական աշխարհում» սկսում են օգտագործվել «;», «?», «!» նշանները:

«Մեր նորաձևություններին կարող են ընդդիմանալ միայն այնպիսի հնապաշտներ,– գրում է Ստեփանեն,– որոնք չունեն ոչինչ հասկացողություն, թե ինչ է նշանակում ժամանակի պահանջողությունը: Կրկնում ենք, մեր խոսքը և գործը մտադիր ենք կատարել իմաստուն մարդիկների հետ, և միայն»: Այս նորամուծությունները չեն խրախուսվում ժամանա-

կակիցների կողմից, բանավեճերի առիթ են տալիս, ուստի, ելնելով ստեղծված իրադրությունից, Ստեփանեն 1867 թ. հարկադրված հրաժարվում է դրանցից:

«Հայկական աշխարհի» բաժանորդագրության ընթացքից պարզ է դառնում, որ Ստեփանեն չէր կարող իր գործունեությունը ծավալել ըստ իր ցանկության: Բաժանորդների սակավությունը նրան զրկում էր նյութական անհրաժեշտ միջոցներից և, հետևաբար, աշխատակիցներ պահելու հնարավորությունից: Մնում էր խմբագրի նվիրված աշխատանքը:

«Հայկական աշխարհը» լույս էր տեսնում Էնֆիաճյանի տպարանում՝ անփույթ, անխնամ, երբեմն այնքան բազմաքանակ տառասխալներով, որ վրիպակների ցուցակ տպագրելը խմբագիրն ավելորդ էր համարում: 1865 թ. վերջերին նա մի առիթով ընդհարվում է Էնֆիաճյանի հետ և նրան թողնելով ամսագրի հրատարակության իրավունքը՝ որոշում է «Հայկական աշխարհ» խորագրով ինքնուրույն հանդես հրատարակել:

1865 թ. նոյեմբերին Ստեփանեն Կովկասի փոխարքայության գլխավոր վարչության պետին է ներկայացնում «Հայկական աշխարհ» ամսագրի ծրագիրը, խնդրում 1866 թ. հունվարից սեփական ամսագիրն ըստ դրա հրատարակելու թույլտվություն:

Համաձայն նոր ծրագրի՝ «Հայկական աշխարհը» պետք է ունենար հետևյալ բաժինները՝ գրական, պատմական և գիտական հոդվածների, հայոց և այլ լեզուների չուրջ տեսական հոդվածների ու քննարկումների, քաղաքատնտեսական և գյուղատնտեսական հոդվածների (թարգմանական), մանկավարժական ուսումնասիրությունների, հին ձեռագրերից հատվածների, բանաստեղծական և դրամատիկական ստեղծագործությունների, մատենագիտական տեղեկությունների, Թիֆլիսի կյանքին վերաբերող ֆելիետոնների: Ծրագրով նախատեսվում էր ռուսական և արտասահմանյան պարբերականներից արտատպել զանազան հոդվածներ, հայերին վերաբերող նյութեր և այլն: 1866 թ. հունվարին Ստեփանեին հայտնում են, որ փոխարքան նրան թույլատրում է հրատարակել ամսագիրը՝ այն պայմանով սակայն, որ ռուսական և արտասահմանյան թերթերից քաղված նյութերը չշոշափեն ընթացիկ քաղաքական հարցեր և լուրեր: Նրան միաժամանակ թույլատրվում էր ունենալ ձեռքի տպագրական մեքենա և անհրաժեշտ տառեր[5]:

1868 թ. Ստեփանեն ծրագրում է մեծացնել ամսագրի ծավալը և հնարավորության սահմաններում երբեմնապես հրատարակել նաև կես մամուլ ծավալով հավելված: 1869 թ. խմբագրության գործերը փոքր-ինչ կանոնավորվում են, բաժանորդների թիվը հասնում է 191-ի, որն աննախադեպ երևույթ էր ամսագրի պատմության մեջ: Խմբագրական գրեթե բոլոր ծախսերը մարվում են բաժանորդագրության միջոցով, և Ստեփանեն մտածում է 1870 թ. եկամուտը տրամադրել Մարիամյան դպրոցի կարիքներին: 1871 թ. նա ընթերցողներին հաշիվ է ներկայացնում վեց տարում կատարած ծախսերի մասին. այդ գումարը հասնում էր 4.054 ռուբլու՝ այն դեպքում, երբ խմբագրի եկամուտը կազմել էր միայն 3.637 ռուբլի:

Սկսած 1869 թ. իններորդ համարից, ամսագիրը լույս է տեսնում նոր, փոքրիկ տառատեսակով, որն ընդունելություն չի գտնում ընթերցողների կողմից: Ուստի Ստեփանեն հարկադրված էր դրանից հրաժարվել: Հաղթահարելով մեծ դժվարություններ, նա ստեղ-

[5] Տե՛ս Մաշտոցյան Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 200, վավ. 1-3:

ծում է իր տպարանը, բայց թերթի վիճակը չի բարելավվում, և խմբագիրը, ինչպես նախկինում, շարունակում է երկու ամսվա համարները հրատարակել միասին: Այս շրջանում նույնպես, 1870 թ., նա գանգատվում է. «Եթե ընթերցողն իմանար, թե ինչ մարտիրոսական չարչարանքով է առաջ տարվում գործը... պատմել ավելորդ է, որովհետև անհավատալի մի առասպել պիտի համարվի»:

1871 թ. Ստեփանեն որոշում է ընդունել հոգևոր կոչում և ծառայել դպրոցին ու Եկեղեցուն միաժամանակ: Նա համոզված էր, որ այդ պետք է նպաստեր իր ծրագրի իրականացմանը, քանզի ազգի փրկությունը նա խարսխված էր համարում այդ երկու ազդեցիկ հաստատությունների համատեղ գործունեության վրա:

1871 թ. հունիսին ժամանակավորապես դադարեցնելով ամսագրի հրատարակությունն ու մանկավարժական գործունեությունը, Ստեփանեն մեկնում է Էջմիածին, ձեռնադրվում վարդապետ և մանկավարժական աշխատանքի անցնում տեղի վանական ժառանգավորաց և Վաղարշապատի ծխական տարրական դպրոցներում: 1872 թ. նա հրավիրվում է Երևան՝ որպես թեմական, հոգևոր և ծխական դպրոցների կառավարիչ, վերատեսուչ: Ստեփանեն իսկույն կարգավորում է այդ դպրոցների գործերը, հաստատում մանկավարժական ժողով, մշակում դասավանդվելիք առարկաների ծրագրերը, կազմակերպում երգեցիկ խումբ, գեղարվեստական երեկոներ և այլն[6]: Տարեվերջին Ստեփանեն հոգաբարձությունից շնորհակալություն է ստանում և պարգևատրվում Գևորգ IV Կաթողիկոսի կողմից:

Խուսափելով Երևանի անբարենպաստ կլիմայական պայմաններից, Ստեփանեն մեկ տարվա աշխատանքից հետո, 1873 թ., տեղափոխվում է Շուշի՝ Ղարաբաղի թեմական հոգևոր դպրոցի տեսչի և ռուսաց լեզվի ուսուցչի պաշտոնով: Այստեղ ևս դրսևորվում է նրա մանկավարժական տաղանդը: Նա բարեկարգում է տեղի օրիորդաց դպրոցը, հաստատում աշակերտական համազգեստ կրելու կարգը, մշակում դպրոցական ծրագիր: Առանձնահատուկ ուշադրությամբ Ստեփանեն վերակառուցում է մանկավարժական աշխատանքը Շուշիի հոգևոր դպրոցում, որը տասը տարուց ի վեր դատապարտված էր անգործության[7]:

Շուշիի հայ հասարակությունը խանդավառությամբ է ընդունում նոր տեսչի գործունեությունը: Ստեփանեն նաև բազմաստորագիր մի նամակ է ստանում երևանցիներից, որոնք, նկարագրելով իրենց դպրոցի թշվառ վիճակը, նրան կրկին հրավիրում էին Երևան:

1875 թ. հրաժարվելով թեմական դպրոցի վերատեսչի պաշտոնից՝ Ստեփանեն մեկնում է Թիֆլիս: Այստեղ նա կրկին ստանձնում է Մարիամյան ուսումնարանի տեսչության գործը:

Նույն թվականին Բաքվի հայոց մարդասիրական ընկերությունը հատուկ գրությամբ Ստեփանեին հրավիրում է մանկավարժական աշխատանքի (տարեկան 1.000 ռուբլի աշխատավարձով): Երկար բանակցություններից հետո, Ստեփանեն 1877 թ. մեկնում է Բաքու և հաստատվում տեղի երկսեռ դպրոցների վերատեսչի պաշտոնում: Սակայն նրա հակառակորդները շտապում են ամբաստանել Ստեփանեի գործունեությունը, բողոքներ ու-

[6] Տե՛ս Ս. Գասպարյան, նշվ. աշխ., էջ 26:

[7] Նույն տեղում:

ղարկում կաթողիկոսին, նամակներ հրապարակում «Մեղվի» և «Մշակի» էջերում: Այստեղ ևս Ստեփանեն աներևակայական անձանց կողքին ձեռք է բերում բարեկամների մի ստվար խումբ, որը շտապում է բացատրություն տալ կաթողիկոսին: Ստեփանեն, ինչպես գրում են նրանք, «Բաքու քաղաք մտնելուց հետո մեր ուսումնարանները բարեկարգեց: 200 տղաներ և օրիորդներ այսօր խոսում են մաքուր հայերեն լեզվով, աղքատ ծնողներ փառավորվում էին նորա դաստիարակությամբ և փառավորվում են իրենց զավակներով»: Նրանք պահանջում են, որ Ստեփանեն մնա Բաքվում և շարունակի մանկավարժական աշխատանքը[8]:

1878 թ. 100 հոգու մասնակցությամբ նոխ ճաշկերույթ են կազմակերպում ի պատիվ Ստեփանեի, որտեղ նրան նվիրում են ոսկե ականց, ոսկե բաժակ և պնակ:

Ստեփանեն ակտիվ գործունեություն է ծավալում և իբրև Բաքվի մարդասիրական ընկերության անդամ: Նա իր օրինակով, փորձով և առաջարկներով ճիշտ ճանապարհի վրա է դնում ընկերության գործունեությունը, հորդորում մեծ ուշադրություն դարձնել օրիորդաց ուսումնարաններին, որդեգիրներ պահել ուսուցչական ինստիտուտում և Գևորգյան ճեմարանում, քահանաներ պատրաստել այդ որդեգիրներից և այլն: Ստեփանեն խորհուրդ է տալիս ընկերության նպատակասլաց գործունեությամբ նպաստել հայ գրականության և մանկավարժության զարգացմանը: Նա միաժամանակ զգալի գործ է կատարում 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի ժամանակ տուժած հայ ընտանիքներին նյութական օգնություն ցուցաբերելու ուղղությամբ:

Հոգևոր և մանկավարժական գործունեությունը Ստեփանեին չի հեռացնում, սակայն, լրագրային աշխատանքից: Շուշի քաղաքում հաստատվելուց հետո, առաջին իսկ պատեհ առիթով, նա վերսկսում է ընդհատված «Հայկական աշխարհի» հրատարակությունը:

*

* *

1873 թ. ամռանը Ստեփանեն, արդեն վարդապետի հոգևոր կոչումով, դիմում է Կովկասի փոխարքայության գլխավոր վարչության պետին՝ սկսած 1874 թ. «Հայկական աշխարհի» հրատարակության թույլտվությունը ստանալու համար: Հարցի ուսումնասիրության և եզրակացության համար վարչության գրասենյակից Ստեփանեի դիմումն ամսագրի ծրագրի հետ ուղարկվում է Կովկասի գրաքննական կոմիտե: Սեպտեմբերի 18-ին կոմիտեից հայտնում են, թե չեն առարկում ներկայացված ծրագրին: Գրաքննական կոմիտեն միաժամանակ գտնում է, որ Շուշիում հաստատվելիք ամսագրի նյութերն ընդհանուր հիմունքներով պետք է գրաքննության ենթարկվեն Թիֆլիսում (ընդ որում, խոստանում են հնգօրյա ժամկետում ստացված նյութերը ստուգել և ետ ուղարկել): Շատ հետաքրքրական է այն փաստը, որ կոմիտեն հանձնարարում է Սարգիս Ջալալյանին ամսագրում տպագրված նյութերը համեմատել գրաքննության թույլատրած դրանց բնագրերի հետ՝ խմբագրի շեղումները կամ զանցանքները հայտնաբերելու նպատակով, եթե այդպիսիք տեղ գտած լի-

[8] Նույն տեղում, թղթ. 231, վավ. 60, 63:

նեն: Ինչ վերաբերում է հոգևոր բովանդակություն ունեցող հոդվածներին, ապա որոշվում է գրաքննության համար դրանք ուղարկել Էջմիածին՝ կաթողիկոսին[9]: Ինչևէ, Ստեփա-նեին պաշտոնապես թույլատրվում է սկսած 1874 թ. Շուշիում հրատարակել «Հայկական աշխարհը»:

Ստեփանեն ծրագրում էր ամսագիրը հրատարակել Շուշի քաղաքում՝ տեղի հոգևոր սեմինարիայի տպարանում սկսած 1874 թ. հունվարից, ամիսը մեկ անգամ՝ 2-4 մամուլ ծավալով: Հունվարին արդեն նա առաջին համարի նյութերն ուղարկում է գրաքննական կոմիտեին: Հոգևոր բովանդակություն ունեցող հոդվածները կոմիտեն իր հերթին ուղարկում է կաթողիկոսին: Կարճ ժամանակից Ստեփանեն համոզվում է, որ նյութերի այդ «ճանապարհորդությունը» ջատ է խոչընդոտում գործին. մարտի 18 թվակիր նամակով նա խընդրում է կոմիտեին կաթողիկոսի հետ ճշգրտել նյութերը պահելու և վերադարձնելու ժամկետները՝ դրանք ստանալու օրվանից ի վեր: Այս հարցով նա մարտի 30-ին կրկին դիմում է կոմիտեին՝ նշելով, որ մարտի 10-ին Էջմիածին ուղարկված հոդվածները դեռևս չեն ստացվել: Մարտի 23 թվակիր գրությամբ Ստեփանեին պատասխանում են, որ կաթողիկոսի համար կոմիտեն ժամկետներ նշանակել չի կարող:

Անկախ մանկավարժական աշխատանքով ծանրաբեռնված լինելու հանգամանքից, Ստեփանեն այդուհանդերձ անում էր ամեն ինչ՝ ապահովելու համար ամսագրի հրատարակությունն առանց հապաղումների: Եռամյա դադարից հետո «Հայկական աշխարհի» առաջին համարը լույս է տեսնում 1874 թ. ապրիլին: Դատելով առաջին էջի ընծայականի հոգևոր շնչով ոճից, Ստեփանեն գոհ էր իր ստացած հոգևոր աստիճանով և հավաստիացնում էր, թե կծառայի իր կոչմանն արժանավայել ձևով:

«Հայկական աշխարհի» առաջին համարը նվիրված էր Գևորգ Կաթողիկոսին: Ընծայականում խմբագիրը երախտագիտության խոսք էր ուղղում Հայոց Հայրապետին և հայտնում իր ողջ կյանքն ազգին ու Եկեղեցուն նվիրաբերելու պատրաստակամությունը: Այս միտքն առավել ընդգծված ձևով իր արտացոլումն է գտնում ամսագրի առաջին համարի ծրագիր-նախաբանում: Ամսագրի երկրորդ շրջանը որոշակիորեն տարբերվում էր նախորդից: Եթե առաջին շրջանում այն գրական ու մանկավարժական թեքում ուներ և մեծապես կապված էր ժամանակի հայ իրականության հետ, ապա այժմ դառնում էր հայնեցական, «մանկավարժական և կրոնական օրագիր»: Ծրագիրը, բնականաբար, համապատասխանում էր նոր ուղղությանը:

Իր հիմնական խնդիրը համարելով «կրոնական ընթերցասիրություն տարածել հայազն հասարակության մեջ», խմբագիրը միաժամանակ խոստանում էր նպաստել «ազգային դպրոցների առաջադիմությանը և մանուկների կրթությանը»: Համաձայն ամսագրի ծրագրի՝ Ստեփանեն պետք է տպագրեր մանկավարժական հոդվածներ և տեղեկություններ այլ երկրներում մանկավարժական գիտության վիճակի մասին, «մանկավարժական և դպրոցական գրվածների քննություն», աղջիկների և պատանիների համար պիտանի հոդվածներ՝ նվիրված գիտության զանազան ճյուղերին (բնագիտություն, պատմություն, առողջապահություն և այլն): Նախատեսվում էր նաև տպագրել կրոնական բնույթի հոդ-

---

[9] Վրացական պետական պատմական արխիվ, ֆոնդ 480, ց. 1, գործ 5, վավ. 128:

վածներ, տեղեկություններ՝ նվիրված աշխարհաբար լեզվի օրենքների և ոճի քննությանը, ինչպես նաև գյուղատնտեսական բնույթի հոդվածներ (մի բան, որը հետագայում չի իրականացվում): Ամսագրի պարբերականությունը պահպանվում էր նախորդի նման. ենթադրվում էր ամսական լույս ընծայել մեկ համար՝ երկու մամուլ ծավալով, գինը՝ հինգ ռուբլով: Պահպանվում էր և նախկին նշանաբանը՝ «Ինչ կարող եմ, կատարում եմ, թող կատարե առավել լավ նա, ով կարող է»:

Ստեփանեն, այսպիսով, նվիրվում էր երկու սկզբունքի՝ *Եկեղեցուն և դպրոցին*, որոնք համարում էր հայ ժողովրդի մտավոր վերածնության հիմնական լծակները: Հետաքրքրական է, որ նա նշանակություն է տալիս ոչ թե դպրոցների և եկեղեցիների թվին, այլ դրանց զարգացման մակարդակին և բարեկարգ վիճակին: «Եթե մենք կամենում ենք ազգի բարոյական կյանքը կործանման վտանգից ազատել,– գրում է նա,– մեր բոլոր ուժերը կրթությանը տալու ենք»: Այստեղ նա Ստեփանեն վճռականորեն բարձրացնում է հանրօգուտ գործունեության անհրաժեշտությունը և նշավակում մանր վեճերն ու գժտությունները:

Ստեփանեն նախկին ոգևորությամբ շարունակում է աշխատել և մեծ եռանդով հրատարակել իր թերթը մի վայրում, որտեղ չկար «ո՛չ օգնական, ո՛չ տպարան, ո՛չ ցենզոր, ո՛չ գրաշար, ո՛չ թուղթ, ո՛չ մուր»[10]: Նրա անանկուն կամքը, կարծես, մրցության մեջ էր խմբագրի գործունեության համար ստեղծված ծայրահեղ անբարենպաստ պայմանների հետ: Այդուհանդերձ, խմբագիրը ստիպված էր օրինականացնել վաղուց կիրառված անցանկալի պրակտիկան և ամսագիրը հրատարակել երկու ամիսը մեկ անգամ: Քաջատեղյակ նախորդ լրագրողների ճակատագրին՝ Ստեփանեն գրեթե բառացիորեն կրկնում է Նազարյանին. «Հայ անձնվեր աշխատավորի ճանապարհը վարդերով չէ ցանված, այլ փշով և տատասկով»[11] խոսքերը:

Սակայն, ինչպես և Նազարյանը, Ստեփանեն, բողոքելով հանդերձ իր վիճակից, չի տրտնջում կամ անիծում իր ընտրած բնագավառը: Ընդհակառակը, նա հպարտությամբ է անցնում «մտքի և ճշմարտության զինվորության» իր ճանապարհը: «Այո,– գրում է նա 1876 թ. ծանուցման մեջ,– մեր դժվարությունները չափազանց մեծ են, բայց առավել մեծ է մեր սերը դեպի մեր տոհմի հայկական ազգը, ուստի քանի որ մեր շունչը մեր բերանի մեջ է, կշարունակենք մեր գործը չարչարվելով, հավատալով, հուսալով և սիրելով»[12]:

1878 թ. Ստեփանեն հրավիրվում է Էջմիածին՝ 1874 թ. այնտեղ հիմնադրված Գևորգյան ճեմարանում ֆրանսերեն, ընդհանուր և ռուսաց պատմություն դասավանդելու: Այնտեղ նա աշխատում է երկու տարի և միաժամանակ խմբագրում «Արարատ» ամսագիրը:

Որքան հաճախակի էին դառնում Ստեփանեի տեղափոխությունները, այնքան անկանոն էր հրատարակվում «Հայկական աշխարհը»: Սկզբնական շրջանում այն լույս էր ընծայվում Թիֆլիսում (1864-1871), իսկ վերջին տարիներին՝ մե՛րթ Շուշիում (1874), մե՛րթ

[10] «Հայկական աշխարհ», 1874, թիվ 1:

[11] Նույն տեղում, թիվ 10-11:

[12] Նույն տեղում, 1875, թիվ 12:

Գանձակում (1874-1875), մ'րթ կրկին Թիֆլիսում (1876), ապա՝ Բաքվում (1877-1878)[13]:
Վերջին տարիներին ամսագիրը դառնում է սակավարժան, գորշ, գրեթե բոլոր համարնե-
րը հրատարակվում են միացյալ ձևով, երկու կամ երեք ամիսը մեկ անգամ: 1879 թ. Էջմիա-
ծին մեկնելու կապակցությամբ Ստեփանեն դադարեցնում է ամսագրի հրատարակությու-
նը՝ Երևանում լույս ընծայելով այդ թվականի միակ և վերջին համարը:

Գևորգյան ճեմարանի ապագա բարձր դասարաններում մանկավարժություն դասա-
վանդելու համար որոշվում է մասնագետ պատրաստել Եվրոպայում: Այդ նպատակով
Ստեփանեն 1880 թ. գործուղվում է արտասահման: Տասնչորս ամիս նա մանկավարժութ-
յուն է ուսումնասիրում Գերմանիայում, Ավստրիայում, Ֆրանսիայում, Շվեյցարիայում և
Բելգիայում: Սակայն, հակառակ ամենատարրական տրամաբանության, Էջմիածին հրա-
վիրվելու փոխարեն, 1882 թ. նա ուղարկվում է Նոր Նախիջևանի մոտ գտնվող Սուրբ Խաչ
վանք: Նույն թվականին Ստեփանեն տեսչի պաշտոնով տեղափոխվում է Աստրախան,
տեղի թեմի դպրոցների համար 1883 թ. լույս է ընծայում «Համակեդրոնական պրոգրամ-
ներ» ձեռնարկը[14], օրինոդաց դպրոցներ հիմնադրում այդտեղ և Վլադիկավկազում:

1884 թ. հոկտեմբերին Ստեփանեն նշանակվում է Ախալցխայի և Ախալքալաքի առաջ-
նորդական փոխանորդ և հայկական դպրոցների տեսուչ: Սակայն 1885 թ. մարտի 6-ին,
թագավորի հրամանով, փակվում են կովկասահայ 500 դպրոցներ և 900 ուսուցիչներ մնում
են առանց աշխատանքի: Ստեփանեի բազմաթիվ մտահղացումներն ու ծրագրերը մնում
են թղթի վրա: Նա մենանում է Հաղբատի վանքում

1887 թ. Ստեփանեն արդեն քարոզիչ էր Պետերբուրգի և Մոսկվայի հայկական եկեղե-
ցիներում, ինչպես նաև հայ աշակերտության համար պետական դպրոցներում հայոց լեզ-
վի ու կրոնի ուսուցիչ: Այս տարիներին նա կրկին ձեռնամուխ է լինում լրագրական գործու-
նեությանը և 1884 թ. սկսում հրատարակել «Մանկավարժանոց» պարբերականը, որը լույս
է ընծայվել 1884-1887 թթ. Էջմիածնում, Ախալցխայում, Թիֆլիսում և Պետերբուրգում: Թեև
հանդեսի բաժանորդների թիվը հազիվ էր հասնում 40-ի, տարեկան 400 ռուբլի ծախսելով՝
անխոնջ խմբագիրն ապահովում էր դրա հրատարակությունը և «Մանկավարժանոցն» ան-
վճար տարածում հայկական դպրոցներում:

Ստեփանեի կյանքը մայրաքաղաքում ևս լի էր տագնապներով: Զանազան պատրվակ-
ներով հայոց լեզվի և կրոնի դասերը հանվում են դպրոցական ծրագրերից: 1887 թ. սեպ-
տեմբերի 9 թվակիր նամակում պատմելով այդ մասին Մակար Կաթողիկոսին՝ Ստեփա-
նեն դժգոհություն է հայտնում մայրաքաղաքի հայկական եկեղեցիների հոգաբարձու Ա-
բամելիք իշխանից, որը, համաձայն իրեն հասած լուրերի, դիմել էր Ներքին գործերի նա-
խարարությանը՝ աննպատակահարմար գտնելով Ստեփանեին հանձնարարված պաշտո-

---

[13] Այս առթիվ «Մասիս» շաբաթաթերթը դիմել է պատկերավոր համեմատության. «Այս թերթը իրավամբ կրնա կոչվիլ Հայ մամլո թափառական հրեան, վասնզի [18]64-ի վերջերը սկսած է հրատարակվիլ ի Թիֆլիս, [18]74-ի վերջերը՝ ի Շուշի, [18]78-ին՝ ի Բագու, [18]79-ին՝ ի Էջմիածին» (տե՛ս «Մասիս», 1884, թիվ 3731):

[14] Խորեն ծայրագույն վարդապետ Ստեփանե, Համակեդրոնական պրոգրամներ (առաջին փորձ) աշակերտական կանոններով և դաստիարակների հրահանգներով հայկական հոգևոր ծխական և միջնակարգ դպրոցների համար, Թիֆլիս, 1883:

նը: Ներքին գործերի նախարարն իր հերթին կարգադրել էր Լուսավորության նախարարությանը՝ արգելել Ստեփանեի գործունեությունը մայրաքաղաքում[15]:

Այս ամենի հետևանքով Ստեփանեն կանչվում է Էջմիածին: Պետերբուրգի հայերը մի նամակով կաթողիկոսից խնդրում են նրան հետ ուղարկել: Միաժամանակ, ի նշան հարգանքի, նրանք Ստեփանեի համար ուղարկում են արծաթե գավազան: Սակայն կատարվում է անսպասելին. Խորեն Ստեփանեն աքսորվում է Սուրբ Խաչ վանք:

Ստեփանեի աքսորը Սուրբ Խաչ վանք՝ նրան հասարակական գործունեությունից մեկուսացնելու անսքող փորձ էր, տրամաբանական շարունակությունը՝ 1882 թ. նրա անհեթեթ «նշանակման» քաղաքականության: Ինչ վերաբերում է Աբամելիք իշխանի հասցեին նրա արած ակնարկին, ապա թվում է, թե այդ հարցն ավելի բարդ էր, քան կարող էր ենթադրել Ստեփանեն: Այսօր արդեն կասկած չի կարող լինել, որ Ներքին գործերի նախարարությունը, Պետերբուրգի հայոց եկեղեցու հոգաբարձու իշխան Աբամելիքի միջոցով ուսումնական ծրագրերից հանելով կրոնի և հայոց լեզվի դասերը և կաթողիկոսին կարգադրելով աքսորել անցանկալի հոգևորականին, մի կողմից իրականացնում էր ցարական կառավարության ռուսացման քաղաքականությունը, իսկ մյուս կողմից՝ ազատվում եվրոպական կենտրոններում կրթություն ստացած մտավորականից, որի մանկավարժական գործունեության բացառիկ եռանդը չէր համապատասխանում հայ ժողովրդի կրթական գործում Ներքին գործերի նախարարության ունեցած հեռահար նպատակներին:

Ստեփանեն իրեն հատուկ եռանդով բարեկարգում է Սուրբ Խաչ վանքը, կարգավորում դպրոցի գործերը, վանքի նյութական վիճակը, ստեղծում հայագիտական գրադարան, զբաղվում բանասիրական աշխատանքով, թարգմանություններ կատարում Պեստալոցցիից, Տոլստոյից և այլ հեղինակներից[16]: 1889 թ. նա Պետերբուրգում հրատարակում է Մովսես Խորենացու «Հայոց պատմությունն»՝ աշխարհաբար թարգմանությամբ, որին ձեռնամուխ էր եղել դեռևս 1858 թ.[17]:

Հետաքրքրական է Ստեփանեի նամակներից մեկին՝ Ալիշանի գրած ջերմ և սրամիտ, 1889 թ. հոկտեմբերի 2 թվակիր պատասխանը, որտեղ մասնավորապես ասված է. «Բարեսեր և ազգասեր զգացմանցդ խոսք չունիմ. բայց գովաբանությունքդ ինձ համար առավելազանց համարելով, զայն ալ մեր հայրենյաց սիրույն կպաշինեմ, որով ոգևորյալ կգրես, և

[15] Տե՛ս ԳԱԹ, Խ. Ստեփանեի ֆոնդ, վավ. 7:

[16] Հ. Պեստալոցցի, Լինհարդ և Գերտրուդ պատումի համառոտություն, Կոստանդնուպոլիս, 1892; Լև Տոլստոյ, Կրեյցերյան սոնատ, Կոստանդնուպոլիս, 1893: Ս. Սմայլս, Ինչպես պետք է ապրել բախտավոր լինելու համար, Վաղարշապատ, 1894; Մոլիեր, Տարտյուֆ, Բաքու, 1898:

[17] «Մովսես Խորենացու Հայկական պատմություն. աշխարհաբար թարգմանեց և լուսաբանեց Խորեն ծայրագույն վարդապետ Ստեփանե», Ս. Պետերբուրգ, 1889: Տե՛ս նաև գրքի երկրորդ հրատարակությունը (Ս. Պետերբուրգ, 1897): Բնագրին համապատասխանելու առումով Ստեփանեի իրականացրած հրատարակությունը Ստ. Մալխասյանը համարում է Խորենացու գրքի՝ հրապարակի վրա եղած երեք լավագույն թարգմանություններից մեկը (Մալխասյանը մյուս երկուսը համարում է Մխիթարյանների իտալերեն և Էմինի ռուսերեն թարգմանությունները): Տե՛ս Խորենացու «Պատմություն հայոցին» կից նրա ներածությունը (Երևան, 1968, էջ 59): Նշենք, որ Ստեփանեի հրատարակությունն ուշագրավ է նաև իր գիտական ապարատով: Գիրքն ունի ծավալուն առաջաբան (88 էջ), հավելվածների բաժին, իսկ ծանոթագրությունները կազմում են 290 էջ: Գրքի հասույթն, ի դեպ, Ստեփանեն նվիրաբերում է Կիլիկիայի, Վանի և այլ վայրերի նորաբաց հայկական դպրոցներին:

այնու համար հաճո թվի քեզ և այլոց՝ գրողս ալ: Հուսամ. որ դու ալ դարձյալ նման զգացմամբ համարիս ըսելիքս. որ և ես ի վաղուց տաղանդավոր և նշանակելի անձ մի համարեի զԽորեն Ստեփանեն մինչ հառաջ քան զվարդապետանալն գրեր (ոչ հիշեմ՝ յոր) օրագրի և ակն ունեի՝ որ որպես հանճարովն՝ աստիճանով ալ առավել բարձրանա. որո արգել թերևս եղած ըլլա շատ համարձակախոսություն. արդյոք ես ալ հիմա շատ համարձակախոս չե՞մ առ քեզ զայս գրելով. բայց հուսամ որ հաճո ըլլա քեզ իբրև ի ծերունվո և ի սիրողե»[18]:

Հայ մտավորականներից շատերը ուղիներ էին որոնում նրան կրկին մանկավարժական գործունեության ասպարեզ վերադարձնելու համար: Հատկանշական է Կարինի երկսեռ ազգային դպրոցի տեսուչ Գևորգ Չիլինգարյանի օրինակը, որը Խրիմյան Հայրիկի՝ Էջմիածին գնալու նախօրյակին, 1892 թ. դեկտեմբերի 15-ին, մի հանգամանալից նամակով դիմել է Մինաս Չերազին և խնդրել նրան միջնորդել նորընտիր կաթողիկոսի առջև, որպեսզի վերջինս Ստեփանեին Սուրբ Խաչից տեղափոխի Էջմիածին, քանի որ «մենք այս անձի պես մի քանի հատ չունինք. այս ակներև է»[19]:

Այս հարցը նախապատրաստվում է այնպես, որ Կովկաս գալու ճանապարհին Խրիմյան Հայրիկն Օդեսայում հանդիպում է Ստեփանեին և նրան իր հետ տանում Էջմիածին: Այստեղ նա նշանակվում է դիվանապետ, նորահաստատ ուսումնական հանձնաժողովի նախագահ և Գևորգյան ճեմարանի ուսուցիչ: 1894 թ. Ստեփանեն ձեռնադրվում է եպիսկոպոս, իսկ 1895 թ. նշանակվում Աստրախանի թեմի առաջնորդական փոխանորդ: Վեց ամսվա ընթացքում նա դպրոցներ է հիմնադրում թեմի մի շարք քաղաքներում, դրամական նվիրատվություններ անում հօգուտ չքավոր վարժարանների և այլն: Սակայն այդ եռանդագին գործունեությունը ընդհատվում է: Խրիմյան Հայրիկին չի հաջողվում նրան հաստատել տալ Աստրախանի առաջնորդի պաշտոնում:

1895 թ. սեպտեմբերի 15 թվակիր մի նամակում կաթողիկոսը դառնությամբ պատմում է Ստեփանեին, թե Ներքին գործերի նախարարությունն ինչպես է ընդդիմացել իրեն. «Ես թեպետ արդար փաստեր հառաջ բերելով կամեցա պաշտպանել Ձեր հավատարիմ ծառայություն և միանգամայն Ձեր պատկառանքն առ օրենս տերության, պատասխան ընդունեցի, թե Դուք անծանոթ եք նորա մասին և մեր դիվանատան մեջ կան այնպիսի գանգատներ, որ նա կարող չէ առաջնորդ լինել այնպիսի ընդարձակ վիճակին»[20]: Ուստի Խրիմյանը նույն նամակում ստիպված գրում էր. «Այժմ պիտի վերադառնաք Դուք դարձյալ Ս. Խաչ վանքն՝ այն սքանչելի մենարան, ուր մարդոց ոխութենեն ազատ լինելով, Ձեզ բարեկամ կլինեն միայն անխոսուն անտառները»:

Այսպիսով, 1895 թ. վերջերին Ստեփանեն կրկին մեկնում է Սուրբ Խաչ: Այս երկրորդ աքսորի լուրը, որն իր արձագանքն է գտնում հայ մամուլի էջերում, առավել մեծ ցավով է ընդունվում նրա բոլոր բարեկամների կողմից: Հնագետ Ծովյանը (Խաչատուր Հովհաննիսյան) իր Ղրիմյան ճանապարհորդությունների ընթացքում, 1897 թ., այցելում է Ստեփանեին և հուզվում՝ տեսնելով նրա հուսահատ վիճակը: Անկեղծ զրույցի պահին Ստեփանեն բորբոքվում է, խոստովանում, որ չի հաշտվում իր դրության հետ. «Անգործությու-

[18] ԳԱԹ, Խ. Ստեփանեի ֆոնդ, վավ. 29:

[19] Տե՛ս ԳԱԹ, Խ. Ստեփանեի ֆոնդ, վավ. 404:

[20] ԳԱԹ, Խ. Ստեփանեի ֆոնդ, վավ. 139:

նը ջլատում է իմ բոլոր մտավոր, հոգեկան և ֆիզիկական ուժերս, ես տկարանում եմ, ես հիվանդ եմ այստեղ»: «Արձագանքի» էջերում նկարագրելով այս հանդիպումը՝ Շովրյանը հայ մտավորականների ուշադրությունը հրավիրում է անարդար այդ փաստի վրա[21]:

Հանուն նրա շահերի պաշտպանության հանդես է գալիս նաև Հովհաննես Այվազովսկին, որը 1896 թ. օգոստոսին գրում է Խրիմյանին, թե ժամանակն է, որ Ստեփանեի հարցը կարգավորվի, իսկ 1898 թ. կաթողիկոսին խորհուրդ է տալիս աքսորականին նշանակել մի որևէ պաշտոնում, որպեսզի նա կարողանա շահել կառավարության վստահությունը և իրավունք ստանա մեկնելու Ամերիկա[22]: Այս առթիվ նշենք, ի դեպ, որ 1898 թ. բոլոր ամերիկահայերը, առանց դավանանքի խտրության, սպասում էին Ստեփանեին: Խրիմյանը բազմաթիվ նամակներ էր ստանում, բայց չէր վճռում դիմել վերջին քայլին. նրան թվում էր, որ եթե Ստեփանեն նշանակվի ամերիկահայ գաղութի առաջնորդ, ցարական կառավարությունը նրանից կպահանջի հրաժարվել ռուսական հպատակությունից: Ուստի, կաթողիկոսը մտորում էր: Նա, իր խոհերը բաժանելով Ստեփանեի հետ, նրան խորհուրդ էր տալիս ևս մի փոքր սպասել, ապա բուժվելու պատրվակով գնալ Եվրոպա և այնտեղից անցնել Ամերիկա: Ի վերջո, 1900 թ. աշնանը Խրիմյանի կարգադրությամբ Ստեփանեն թողնում է Սուրբ Խաչ վանքը:

Էջմիածին չհասած՝ 1900 թ. նոյեմբերի 14-ին Ստեփանեն վախճանվում է Թիֆլիսում, եղբոր՝ պաշտոնաթող գնդապետ Գասպար Ստեփանեի տանը և այնտեղ էլ թաղվում: Նշանակալից է այն փաստը, որ ունեցած բոլոր խնայողությունները նա կտակել էր ազգի զավակների լուսավորության նպատակին[23]:

Ամփոփենք. Խորեն Ստեփանեն իր ազգանվեր բեղուն գործունեությամբ խոր հետք է թողել հայ իրականությունն ալեկոծած լուսավորական շարժման քառուղիներում, մասնավորապես երիտասարդ սերնդի կրթության և դաստիարակության ասպարեզում, նշանակալից ավանդ ունի հայ լրագրության զարգացման գործում, քանզի նրա «Հայկական աշխարհն» իր գոյությամբ ու գործունեությամբ ուղի է հարթել հայ լրագրության նոր վերելքի համար: Իրավացի էր Լեոն, որը նշում էր. «Այդ տխուր ու տարտամ ժամանակներում մեր կյանքը լճացած կլիներ, խավարը նորից պատած կլիներ մեր մտքերը, եթե գոյություն չունենար Ստեփանեի «Հայկական աշխարհը»: Բայց նա կար, փոքրիկ ու նիհար տետրակներ էին դուրս գալիս մամուլի տակից, որոնց մեջ պլպլում էին կյանքի, առաջադեմ մտքերի պայծառ, տաքացնող կայծերը»[24]:

---

[21] Տե՛ս «Արձագանք», 1897, թիվ 36:

[22] ԳԱԹ, Խ. Ստեփանեի ֆոնդ, վավ. 55, 58:

[23] Մաշտոցյան Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 236, վավ. 121:

[24] Լեո, Խորեն եպիսկոպոս Ստեփանե // «Մշակ», 1900, թիվ 219:

*ՌԻՄԱ ԱՐՏԱՎԱԶԴԻ ՄԻՐՈՒՄՅԱՆ*

# ԿՐՈՆԻ ԵՎ ԵԿԵՂԵՑՈՒ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՊԵՏԱԻՐԱՎԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ ԸՍՏ XIX ԴԱՐԻ ՀԱՅ ՄՏԱԾՈՂՆԵՐԻ

(մեթոդաբանական տեսանկյուններ)

19-րդ դարի կեսերից արևելահայ և արևմտահայ միջավայրերում ձևավորված թե՛ պահպանողական և թե՛ լուսավորչական անվանվող հասարակական-քաղաքական շարժումները ունեին իրենց համապատասխան պատմափիլիսոփայական հայեցակարգերը:

Նրանցից առաջինը՝ լուսավորչական աշխարհըմբռնումով պայմանավորված և դարաշրջանի մտայնությունը արտահայտող պատմափիլիսոփայական հայեցակարգը խարսխված էր երկու փոխկապակցված գաղափարների վրա. ա/ հասարակական առաջընթացի գաղափարի՝ քրիստոնեական աշխարհայացքից սկիզբ առած և եվրոպական մշակույթի մեջ գերիշխող պատմության միագիծ ընկալման, բ/ ռացիոնալականության գաղափարի, որը ենթադրում էր պատմության ի սկզբանե տրված «չափականությունը»՝ զարգացման որոշակի վեկտոր, որն ընկալվում էր որպես բանականորեն կազմակերպված սոցիալական կյանք[1]:

Երկրորդը՝ քրիստոնեական աշխարհըմբռնումով պայմանավորված և ազգի մշակութային ավանդույթի ողջ կշիռն արտահայտող պատմափիլիսոփայական հայեցակարգը հիմնված է հետևյալ երկու փոխկապակցված գաղափարների վրա. ա/ հոգևոր առաջադիմության գաղափարի՝ երկու չափումների (իրական սոցիալական և բացարձակ՝ տրանսցենդենտ) մեջ մարդու կենսագործունեության և նրա պատմական գոյության ընկալման, բ/ հավատի և գիտելիքի (կրոնի և գիտության) ծագումնաբանական կապի մասին գաղափարի, ինչը ենթադրում է մարդու (պատմության) գոյության սոցիալական-գործնական չափումի համեմատ հոգևոր-արժեքաբանական չափումի գերիշխանությունը:

Այնուհանդերձ, նշված հայեցակարգերի (որոնք արդեն այդ ժամանակաշրջանում սահմանվել են որպես «լուսավորական» և «պահպանողական») մեջ պատմության նպատակն ընկալվում էր որպես մարդու (ազգի) ազատության դրսևորում, իսկ դրան հասնելու գլխավոր միջոցը՝ ազգային լուսավորությունը: Այդ ընդհանուր բանաձևի մեջ, սակայն, առկա են տարբեր շեշտադրումներ: Այսպես, «լուսավորականների» համար «ազատություն» գաղափարի նվիրական իմաստը քաղաքական բնույթ է կրում. քաղաքական ազատությունը անհրաժեշտաբար ենթադրում է բարոյական ազատության առկայությունը: Մինչդեռ «պահպանողականները» այն ընկալում են որպես բարոյական խորհուրդ ունեցող գաղա-

---

[1] Տե՛ս Ռիմա Միրումյան. Ստ. Նազարյանի պատմափիլիսոփայության ուսումնասիրման մեթոդաբանական սկզբունքների մասին:- Հայ իմաստասիրությունը հոգևոր մշակույթի համակարգում: Պրակ. 4, Ե., 2000, էջ 107:

փար. բարոյական ազատությունը պատմության հեռանկարում հանգեցնում է քաղաքական ազատության անհրաժեշտության և նրա իրականացման հնարավորության գիտակցմանը: Մյուս կողմից, ազգային լուսավորությունը «լուսավորականների» կողմից դիտվում է որպես գիտության, հետևաբար նաև սոցիալական առաջադիմության նախապայմանի՝ բանականության, որի արդյունքում նաև բարոյականության զարգացման գլխավոր միջոց: Հակառակ դրան, «պահպանողականները» ցանկացած սոցիալական-մշակութային երևույթի, այդ թվում նաև գիտելիքի մեջ, բարոյական սկիզբն են արժեքավորում: Իսկ դա հնարավոր է միայն հոգևոր դաստիարակության միջոցով[3]:

«Լուսավորական» և «պահպանողական» պատմափիլիսոփայական հայեցակարգերի տարբերությունը պայմանավորված է լուսավորիչների և պահպանողականների կողմից որդեգրած աշխարհայացքային դիրքորոշումների տարբերությամբ: Լուսավորիչներն առաջնորդվում էին նոր ժամանակի եվրոպական առաջադեմ սոցիալական և քաղաքական գաղափարներով և փորձում պատվաստել դրանք ազգային-մշակութային ավանդույթների վրա: Պահպանողականները, ընդհակառակը, ձգտում էին զարգացնել ազգային-մշակութային ավանդույթները սոցիալական նոր պայմանների, ինչպես նաև ազգային ոգու և ազգային գերակայությունների համեմատ: Այդ հանգամանքը բացահայտվում է խնդրո առարկա՝ հայ ժողովրդի կյանքում քրիստոնեական կրոնի և Հայ Եկեղեցու ունեցած նշանակության «լուսավորականների» և «պահպանողականների» ըմբռնման մեջ:

Հատկանշական է այն հանգամանքը, որ դարաշրջանի ողջ ընթացքում հայ մամուլի («Արարատ», «Մեղու Հայաստանի», «Մասյաց աղավնի», «Ծաղիկ», «Փորձ», «Մուրճ», «Մշակ», «Բյուրակն» և այլ) էջերում ծավալված բանավեճի մասնակիցները հաստատել են քրիստոնեության բացառիկ բարոյական նշանակությունը: Քրիստոնեությունը նրանք համարել են ամենավսեմ կրոնը, քանզի, մյուս կրոնների համեմատ, այն գերազանցապես հոգևոր է: Քրիստոնեական գաղափարների վեհությամբ է բացատրվում նրա մշակութային և քաղաքակրթական մեծ առաքելությունը: Քրիստոնեությունը հաստատել է սոցիալական, ընտանեկան և քաղաքական գաղափարների որոշակի համակարգ, որի հիմքում ընկած է բացարձակ արժեք ունեցող բարոյական սկիզբը:

Ե. Տեմիրճիպաշյանի բանաձևի մեջ ուրվագծված «քրիստոնեականը-ազգայինը» խնդրի մեկնաբանումը տրվել է պահպանողականների կողմից: Հաստատելով կրոնի գաղափարախոսական էությունը, այսինքն, ընկալելով այն որպես ազգը (հասարակությունը) ամրացնող սկիզբ, Եղիշե Դուրյանը պնդում է, որ չնայած քրիստոնեական գաղափարների ունիվերսալականությանը, յուրաքանչյուր ազգի մեջ դրանք անհրաժեշտաբար ազգերին ներհատուկ ձևի մեջ են արտահայտվում. «Կրօնն հին ազգաց համար գլխաւոր տարրն էր ազգային միութեան, եւ երբ քրիստոնէութիւնն առ հասարակ կուգար քարոզուիլ ամէն ազգի եւ ժողովրդոց, տիեզերական միութեան գաղափարն կը տարրանար մարդաբանական տեսութեամբ խորապէս իրարմէ տարբեր ձեւերով կազմուած ցանկերու մէջ»[4]: Համա-

[3] XX դ. բազմաթիվ սոցիալական արհավիրքներն ակնհայտ են դարձրել բանականության մեծազորության հանդեպ լուսավորիչների հավատի սնորականությունը, ինչպես նաև բարոյականության հանդեպ պահպանողականների հավատի ստույգությունը: Մեր դարաշրջանը հերթական անգամ բացահայտել է այն իրողությունը, որ բարոյական չափանիշներին անհամապատասխան գիտելիքը չի կարող խթանել մարդու ազատության ձեռքբերմանը:

[4] Ե. Դուրեան, Հայոց Եկեղեցի:- «Երկրագունդ», 1888, № 10, էջ 453:

նման ձևով հիմնավորում է և Օրմանյանը: Բնորոշելով «Եկեղեցի» հասկացությունը, նա գրում է. «... այդ հաւաքական կամ ժողովական միութիւնը Եկեղեցի անունով նշանակու-ցաւ որ է ժողով կամ ժողովուրդ, զի ոչ միայն վարդապետութեան, այլեւ պաշտամունքի եւ կենցաղի, եւ իշխանութեան կենսական տարրերով միաւորուած ու կապուած է»: Միաժամանակ նա նշում է, որ «Յիսուսն է Եկեղեցու հիմնադիրը, ոչ միայն այն ընդհանուր Եկեղեցւոյ, այլեւ իւրաքանչիւր մասնաւոր եկեղեցւոյ գլուխը, եւ յատկապէս այն եկեղեցիներու, որոնք առաքելական են եւ անմիջական կերպով Քրիստոսի Առաքեալներէն մէկին կամ միւսին ձեռքով հիմնուած եւ սկզբնաւորուած են»[5]:

Հավանաբար, քրիստոնեության նման ըմբռնումն է հիմք ծառայել հետևյալ բանաձևի ձևակերպմանը՝ Հայաստանում քրիստոնեության հաստատումը նպատակ ուներ նաև պահպանելու ազգային ինքնատիպությունը, ազգային անհատականությունը, հայ ազգայնությունը: Ըստմին, այդ տեսակետին հարում էին նաև լուսավորիչները: Նշված բանաձևի հայ մտածողների մեկնաբանումների մեջ մեզ հետաքրքրող կտրվածքով կարևոր է երեք հանգամանքների առանձնացումը:

1. Քրիստոնեություն ընդունած երկրների համեմատ Հայաստանում ավելի արագ իրականացվեց հայ հեթանոսական և քրիստոնեական ավանդույթների համադրումը (Ստ. Պալասանյան): Ստ. Պալասանյանը ոչ մի հետևություն չի անում իր իսկ ներկայացրած փաստից: Այն, սակայն, վկայում է, որ Հայաստանում քրիստոնեությունը ձեռք է բերել «ազգային նկարագիր»: Հակառակ պարագայում անըմբռնելի կլիներ այն իրողությունը, որ պատմության համար բավական կարճ ժամանակամիջոցում և սոցիալական-քաղաքական անբարենպաստ պայմաններում հայի հանճարը ստեղծեց հարուստ ազգային-քրիստոնեական մշակույթ:

2. Քրիստոնեության հաստատումը Հայաստանում, հիրավի, խթանեց ազգային հոգևոր մշակույթին և ազգային լուսավորությանը (կրթությանը և դաստիարակությանը): Գրերի գյուտը, Աստվածաշնչի թարգմանությունը, եկեղեցական գրականության ստեղծումը հայ հոգևոր մշակույթի մի ամբողջ դարագլուխ կազմեց: Վերջինս անգամ լուսավորիչները (Ստ. Նազարյան, Ստ. Պալասանյան) «Հայկական ոսկեդար» անվանեցին:

3. Նորաստեղծ հոգևոր մշակույթը հզոր պատնեշը դարձավ Պարսկաստանի և Հռոմի քաղաքական և մշակութային ազդեցության դեմ: Այդ հանգամանքը բազմիցս ընդգծվել է XIX դ. հայ մտածողների կողմից: Ավարայրի ճակատամարտը նրանք անվանել են կրոնական-ազգային և հայ ժողովրդի պատմության ամենափառավոր և ամենանշանավոր իրադարձություններից մեկը, քանզի այն սրբագործված էր Հայ Եկեղեցու կողմից և նպատակ ուներ պահպանելու ազգը և քրիստոնեական գաղափարը: «Երբ 451-ի պատերազմին մէջ Հայք իրենց Ազգին եւ Եկեղեցւոյ գոյութեան նուիրական դատին համար մինակ մնացին եւ միայնակ կռուեցան, ինքնապաշտպանութեան դժուարաքիրտն փորձերն նէրքին զօրաւորագոյն կեդրոնացման մը յեղափոխութիւնն յառաջ բերին, ոչ եւս աստուածաբանական կռիւն էր կենսական խնդիրն զոր յարուցանել սովոր էր միշտ յունական նրբախոհ միտքն. այլ ազգային եւ զուտ քրիստոնէական նպատակի մը շուրջ կը հառէին ամէն հայնեցի աչեր»[6]:

[5] Մ. Օրմանեան. Ազգապատում. Կ. Պոլիս, 1912, հատոր Ա, էջ 18, 19:

[6] Ե. Դուրեան. Հայոց Եկեղեցին, էջ 445:

Ընդգծվել է նաև այն իրողությունը, որ պետականության անկման շրջանում Հայ Եկեղեցին է փոխարինել հայոց պետականությանը. «... կաթողիկոսները կենտրոնացրին իրանց մէջ հայ ազգի գերագոյն իշխանութիւնը. ազգը սովորեցաւ նայել Եկեղեցու գլխի վրայ ոչ միայն իբրեւ այնպիսի անձի վրայ, որին պատկանում է լոկ եկեղեցական բարձր իրաւասութիւնը, այլ իբրեւ իւր ընդհանրական վեհապետի վրայ: Էջմիածինը դարձաւ մի բարոյական կենտրոն ցիրուցան եղած հայութեան համար: Այս միեւնոյն պատճառով Եկեղեցին հայ ժողովրդի հասկացութեամբ, ազգային սեպհականութիւն է եւ կաթողիկոսը ընդհանուր ազգից ընտրուելով՝ լոկ այդ սեպհականութեան հաւատարիմ պահապանն է...»[7]:

Բնականաբար, այդ իրողությունը հաստատող մտածողները պետք է բարձր գնահատեին քրիստոնեության և Հայ Եկեղեցու դերը հայ ժողովրդի պատմական ճակատագիրը կանխորոշելու և տնօրինելու առումով: Հայ Եկեղեցին նրանք անվանել են «ամուր կապակցութիւն հայրենական աշխարհի հետ», «կրօնական կենտրոնը հայութեան» (Ստ. Նազարյան): «... մեր եկեղեցին իբրև հարազատ ազգային մեր միութեան միակ փափագն է ու մէկ հատիկ պատուարն մեր ազգութեան»[8],- գրել է լուսավորիչ-մտածող Ռ. Պերպերյանը:

Այդ իրողությունը, սակայն, լուսավորիչ-մտածողները չէին ընդունում ազգի ներկայի և ապագայի վերաբերմամբ: Անհանդուրժողականության այսպիսի մթնոլորտում առաջացավ մինչև օրս ազգային կեցության համար հրատապ «Հայութեան միութեան» խնդիրը: Վերջինիս շուրջ ծավալված բանավեճը պտտվում էր իշխանության համակարգից դուրս կրոնի և Եկեղեցու դերի և խղճի ազատության անհրաժեշտության և հնարավորության հիմնահարցերի շուրջ:

Գործնականում լուսավորիչները նպատակ էին հետապնդում զրկել Հայ Եկեղեցին ազգի իրավաքաղաքական և սոցիալական կյանքի կարգավորման, ազգային մշակույթի և ազգային լուսավորության զարգացման մենաշնորհից: Ազգի գոյության և առաջադիմության համար նրանք առաջին հերթին անհրաժեշտ են համարում աշխարհիկ կառավարության, մշակույթի և լուսավորության առկայությունը: Միաժամանակ Եկեղեցուն նրանք հատկացնում են ազգի հոգևոր-բարոյական դաստիարակչի դերակատարությունը: Լուսավորիչների պնդմամբ, ազգային կեցության աշխարհիկ և հոգևոր դաշտերի առանձնացումը (աշխարհիկ դաշտի գերիշխանության պայմանով) ժամանակի հրամայականն է: Դրա հետ մեկտեղ հաշվի առնելով այն փաստը, որ քննարկվող դարաշրջանում հայության մի որոշ հատվածը տարբեր դավանանք ուներ, նրանք գտնում էին, որ ազգի իրական միասնությունը հնարավոր է ձեռք բերել զուտ քաղաքական կառույցների միջոցով: Արևմտահայ լուսավորիչների դիրքորոշման արտահայտությունն է հենց իրենց կողմից (Ն. Ռուսինյան, Գ. Օտյան) մշակված Ազգային Սահմանադրությունը:

Իրենց որդեգրած դիրքորոշումը լուսավորիչները մեկնաբանում են՝ ելնելով տարբեր սկզբունքներից: Այսպես, Ստ. Նազարյանի համոզմամբ, նոր ժամանակի մարդու գիտակցությունն առաջ է բերում քաղաքական անկախության և դավանանքի ընտրության կարևորության խնդիրը: Այդ իսկ պատճառով ազգային հանրույթի ներքին կապը միայն

---

[7] Ստ. Պալասանեան, Հայոց մտաւոր շարժողութիւնը Ե դարում: - «Փորձ», 1877/78, № 3, էջ 25-26:

[8] Ռ. Պերպերեան, Մարդիք և իրք, Կ. Պոլիս, 1885, էջ 95:

կրոնով և Եկեղեցիով չի կարող ապահովվել: Ազգը և կրոնը դիտվում են որպես տարբեր խնդիրներ՝ «այլ է ազգայնութեան հանդէսը և այլ է կրօնի հանդէսը»:

Այս հարցի հետ սերտորեն կապվում է ազգի առջև կանգնած հրատապ խնդիրը՝ հանդիսանո՞ւմ է արդյոք կրոնական պատկանելությունը ազգային պատկանելության չափանիշ: Ազգի ինքնությունը դավանանքով չի որոշվում: Ազգը, ազգասիրությունը, ազգակցությունը կախված չէ կրոնի փոփոխությունից: «... Եկեղեցին ժողովուրդովն է Եկեղեցի և ժողովուրդը կորչելով, կարող չէ պահպանվել Եկեղեցին»[9]:

Քրիստոնեության էությունը, իբրև ամենագաղափարային և անձնութական կրոնի, Ռ. Պերպերյանը համարում է անփոփոխ, թեև կարող են փոխվել նրա ձևերն ու տարազը, ուստի նա տարբերություն չի դնում քրիստոնեական հավատի ձևերի մեջ, քանզի նրանց առաջացումը պայմանավորում է մտքերի զանազանություններով: Նա էական չի համարում անգամ տեղը, որտեղ մարդը հաղորդակցվում է Աստծո հետ. «Բնութիւնն ինքնին տաճարն է, անհամեմատ կերպով առաւել վեհահայր, քան ձեռագործ եկեղեցիները, եւ երկրին ամէն կետերէն կրնայ հոգին դէպ ուղիղ բարձրանալ առ Աստուած, բայց անուրանալի է, որ մեծ է ազդեցութիւնն զգացման մը հաւաքական արտայայտութեան»[10]:

Խղճի ազատության գաղափարը նա քննարկում է որպես անհատների ներդաշնակ զարգացման և կենսագործունեության համար անհրաժեշտ պայմանի՝ ազատության գաղափարի մեկ կողմը:

Ստ. Պալասանյանի համար անհանդուրժելի է այն հանգամանքը, որ դարեր շարունակ «հայութեան միակ նեցուկը, նորա պահպանութեան միակ խարիսխը Եկեղեցին էր համարվում»[11]: Արդի պայմաններում ազգը պետք է ապավինի ավելի հաստատուն միջոցի՝ գիտությանը և կրթությանը: Բանն այն է, որ, ըստ Ստ. Պալասանյանի, անփոփոխ իդեալը, ինչպիսին է հենց կրոնական իդեալը, չի կարող լինել գիտության, հետևաբար նաև ազգի սոցիալական զարգացման նեցուկը: Մինչդեռ գիտության և կրթության միջոցով հնարավոր է զարգացնել ազգային ինքնագիտակցությունը՝ ազգային պետականության ստեղծման կարևորագույն միջոցը:

Նրա կարծիքով, կրոնը ազգը բնորոշող հատկանիշ չէ, քանզի նրա տարածման սահմանները ոչ միշտ են տեղավորվում ազգային սահմանների մեջ: Միաժամանակ նա գտնում է, որ պատկանելով մեկ ազգին, ազգերը միմյանցից բաժանելու առումով կրոնը ավելի հզոր միջոց է, քան նրանց ծագումը կամ քաղաքական կյանքի առանձնահատկությունը: Այդ դեպքում կրոնը ամենաէական միջոցն է ազգապահպանման գործում: Այնուամենայնիվ, բոլոր հայերին, անկախ դավանական տարբերություններից, նա համարում է մեկ մարմնի՝ ազգի անդամներ[12]:

---

[9] Ստ. Նազարեան, Նոր տարու մտածութիւնք: - «Հյուսիսափայլ», 1860, № 1, էջ 13:

[10] Ռ. Պերպերեան, Դաստիարակի մը խօսքերը. Վիեննա, 1901, էջ 159: Ռ. Պերպերյանի դիրքորոշմանը հարում է նաև Գր. Արծրունին, ըստ որի՝ կրոնը համոզմունք է և նրա փոփոխությունը չի ենթադրում ազգի փոփոխությունը (տե՛ս Գր. Արծրունի, Կրօնը և ազգութիւնը, «Մշակ», 1873, № 94):

[11] Ստ. Պալասանեան, Ազգային պատմութեան նշանակութիւնը.- Ստ. Պալասանեան. Ազգային կրթութիւն. Կազմեց, առաջաբանը գրեց և ծանոթագրեց Ռիմա Միրումյանը, Ե., 1991, էջ 87:

[12] Տե՛ս Ստ. Պալասանեան, XIX դարի նշանաբանը.- «Փորձ», 1877/78, № 1, էջ 149, 153: Նշված տեսակետը պաշտպանում է նաև Ն. Տաղավարյանը (տե՛ս Ն. Տաղավարեան. Ազգի պահպանութեան պայմանները:- «Բանասէր», 1906, № 2, էջ 19-34):

Լուսավորիչների վերոշարադրյալ տեսակետները բնորոշ են դարաշրջանի լուսավորական գաղափարախոսությանն առհասարակ: Վերջինիս սահմաններում, սակայն, կրոնի և Եկեղեցու վերաբերյալ ձևակերպվել են է՛լ ավելի ռադիկալ տեսակետներ (Մ. Նալբանդյան, Րաֆֆի, Գ. Կոստանդյան): Դարաշրջանի գաղափարային մթնոլորտի տեսանկյունից ուշագրավ է հատկապես Գ. Կոստանդյանի դիրքորոշումը, ըստ որի XIX դ. հատկանիշը «իր գիտական և քրիտիկական ոգին է... ահեղ ուժ մը, որ ամէն ինչ առած կը տանի դէպի հանրային և աննախորդ քաղաքակրթութեան մը սահմանները»[13]: Մարդկության մտավոր զարգացման պատմությունը նա բաժանում է հետևյալ շրջանների՝ «բնազդային», «հավատական», «տրամաբանական», «գիտական» և գտնում, որ գիտական շրջանը, որը սկսվել է XVI դ. և շարունակվում է XIX դ., պետք է կրոնի տեղը բռնի: Ինչպես ժամանակին կրոնը փոխարինում էր գիտությանը, այնպես էլ գիտությունը պետք է դիտվի որպես դարաշրջանի կրոնը:

XIX դ., այնուամենայնիվ, աթեիզմի դարի չվերածվեց: Լուսավորիչներից շատերը կանգնած էին դուալիստական և հոգեպաշտական փիլիսոփայության դիրքերի վրա և անգամ բարոյական խնդիրներ քննարկելիս հանգում էին Աստծո գոյության գաղափարին: Ավելին, նրանք անդրադառնում են նաև կրոնական բարոյականությանը: Օրինակ, փիլիսոփայության իր դասագրքում Ն. Ռուսինյանը «Գործնական-բարոյական» բաժնում առանձնացնում է «կրոնական-բարոյական» խնդիրները, որոնք բնութագրվում են որպես «Աստծոյ ճանաչումը, ուսկից կը բխին բնականապէս մարդուն պարտքերը առ Աստուած»: Իսկ «ճանաչումն Աստուծոյ» նա անվանում է «բնական աստուածաբանութիւն», որի խնդիրն է «Աստուծոյ ճանաչումը բանի լոյսերովը»[14]:

Այս ըմբռնմամբ է պայմանավորված այն հանգամանքը, որ ազգային լուսավորության խնդրում լուսավորիչները առանձնակի տեղ են հատկացնում մարդու դաստիարակության հիմնական կողմին՝ հոգու դաստիարակությանը, և առավելությունն այդ գործում հատկացնում են կրոնին: Այս համատեքստում լուսավորիչները առաջ են քաշում Հայոց Եկեղեցու բարեկարգության և հայ հոգևորականության կերպարի կատարելագործման խնդիրը: Վերջինս հարկ է դիտարկել որպես հայ հասարակության մեջ բողոքականության քարոզչության հետևանք: Բնավ պատահական չի թվում այն հանգամանքը, որ արևելահայ հասարակության կրոնական ազատախոհության պարագլուխն էր հենց Ստ. Նազարյանը, որն ուսանել է բողոքականության ոգով տոգորված Դորպատի (պատմական Տարտու) համալսարանում: Մինչդեռ արևմտահայ հասարակությանն այդ խնդիրը ներկայացրել է 1866 թ. Երուսաղեմի միաբան Հակոբ Վ. Չիլինկիրյանը:

Նշված հարցի վերաբերյալ Ստ. Նազարյանի տեսակետն ընդհանուր առմամբ հանգում է հետևյալին: Քրիստոնեական կրոնի մեջ ամփոփված է միջտնջենական բովանդակությունը և ձևը, որը համեմատ է մարդկային ոգու անընդհատ զարգացմանը: Ընդսմին անփոփոխ բովանդակությունն արտահայտվում է ձևերի հավերժական հոսքի մեջ[15]: Դրանից բխեցվում է, որ «լոկ ծէս ու արարողութիւնք բաւական չէին քրիստոնէի փրկութ-

---

[13] Գ. Կոստանդյան, Մեթոդի վրա. Ե., 1961, էջ 59:

[14] Ն. Ռուսինեան, Դասագիրք փիլիսոփայութեան, Կ. Պոլիս, 1879, էջ 174:

[15] Ստ. Նազարեան, Ազգային մտածութիւնք: - «Հյուսիսափայլ», 1863, № 2, էջ 135:

եան համար... այլ թէ «Հոգին է որ կէցուցանէ», Հոգի է Աստուած, եւ երկրպագուացն նորա հոգով եւ ճշմարտութեամբ պարտ է երկիր պագանել»[16]:

Քրիստոնեությունը մտածողն ընկալում է որպես գործունեություն. աստվածահաճո վարքագիծ, իմացական և բարոյական կատարելություն, ուստի և գտնում է, որ Հայ Եկեղեցին պետք է ընդունի իմացական առաջնայնությունը, քանզի վերջինիս մեջ միայն այն կարող է ամրապնդվել և հաստատվել: Բարոյականությունը (որը հենց Եկեղեցու ոլորտն է) պետք է միշտ հարաբերակցություն սահմանի իմացական զարգացման յուրաքանչյուր աստիճանի հետ:

Լուսավորիչների ներկայացրած կողմնորոշումները թերի են մի քանի առումներով: Նախ, ազգի պատմական գոյությունը հիմնված է ազգային-մշակութային ավանդույթի ձևավորման, զարգացման և պահպանման վրա: Հայ ազգի մշակութային ավանդույթի խորառանցքը կազմում է ազգային ձևի մեջ քրիստոնեական կրոնը: Այդ ավանդույթի ոտնակման փորձն անգամ, այսինքն՝ ազգի սոցիալական կեցության համապատասխան ոլորտների համար կրոնի և Եկեղեցու կարևորության մերժումը հանգեցնում է դարերի ընթացքում ազգային ոգու ընդերքում կուտակված հոգևոր փորձի ջնջմանը: Մինչդեռ հոգևոր դատարկության մեջ անհնարին է դառնում որևէ արժեհամակարգի ստեղծումը: Ազգը (հասարակությունը) անցյալի մեջ սերտաճած համակարգ է, ուստի անցյալի մերժումը հղի է ազգի հոգևոր փորձի, հետևաբար՝ նաև ազգային զգացման թուլացմամբ: Արդյունքում «հայրենիք», «ազգային հպարտություն», «ազգի պատիվ», «ազգասիրություն» հասկացությունները կորցնում են իրենց կենսատու խորհուրդը:

Երկրորդ. ազգային գաղափարախոսությունը (որի ձևակերպողներն ու կրողներն էին իրենց համարում լուսավորիչները) պետք է դիտել որպես ամբողջական երևույթ, որի մեջ միայն պայմանականորեն է հնարավոր առանձնացնել իրավա-քաղաքական, կրոնա-բարոյական, սոցիալական-տնտեսական կողմերը (անգամ ոչ ձևերը)՝ ազգի կենսագործունեության համապատասխան ոլորտների համեմատ: Ուստի կրոնական գաղափարախոսությունն ըստ էության ազգային գաղափարախոսության դրսևորման կողմերից մեկն է: Ազգային պետականության առկայության դեպքում Եկեղեցին իրականացնում է այդ գործընթացը՝ որոշակի փոխհարաբերության մեջ մտնելով իրավա-քաղաքական կառույցների հետ: Մինչդեռ ազգային պետականության չգոյության պայմաններում Հայ Առաքելական Եկեղեցին հանդես է եկել որպես ազգային գաղափարախոսության ձևակերպող ու կրող մի հաստատություն: Այդ իսկ պատճառով լուսավորիչների կողմից Հայ Եկեղեցու առաքելության թերագնահատումն ազգին զրկում էր ազգային գաղափարից (որի միջոցով է միայն ապահովվում ազգի պատմության ամբողջականացումը և գոյության իմաստավորումը, հետևաբար՝ նաև զարգացման հիմքը) և կառավարման իրական կենտրոնից:

Երրորդ. Լուսավորիչների որդեգրած ազատախոհությունը ժամանակին խախտել է ազգի բարոյական միասնությունը, ինչը մեր օրերում հարուստ պտուղներ է տալիս բարոյականության հարաբերականության և ժխտողականության տեսքով:

Վերոհիշյալը հստակ գիտակցվել և կանխատեսվել է պահպանողականների կողմից, որոնց շարքում էին ինչպես Հայ Եկեղեցու անվանի գործիչներ (Մ. Օրմանյան, Գ. Այվա-

---

16 Ստ. Նազարեան. Հրապարակական նամակ առ պատուելի հայոց ազգը:- «Հյուսիսափայլ», № 7, էջ 237-238:

զովսկի), այնպես էլ կրոնական մտածողություն ունեցող աշխարհիկ մարդիկ (Հ. Տերոյենց, Մ. Մսերյան): Նրանք իրենց առջև դրել են դարաշրջանի հայ հանրույթի համար կենսական նշանակություն ունեցող և միաժամանակ միակ իրագործելի մի նպատակ՝ ապահովել ազգի հոգևոր-բարոյական միասնության և անկախության գաղափարը: Այդ գաղափարի վրա էր խարսխված պահպանողականների ազգային հայեցակարգը, որն իր մեջ ներառել էր լուսավորիչների մտորումների գլխավոր առարկան՝ «գոյություն և առաջադիմություն ազգի» սկզբունքը: Վերջինս, սակայն, պահպանողականները քննարկում են՝ ելնելով բոլորովին այլ մեկնակետից:

Ի տարբերություն լուսավորիչների, որոնց հայացքներում դրսևորվում է հետևյալ միտումը՝ ներկայացնել ազգը պահպանող և զարգացնող գործոնները, պահպանողականները հաստատում են, որ ազգի պահպանման և զարգացման խնդիրն ածանցյալ է ազգի գոյության խնդրից: Այլ կերպ ասած, եթե լուսավորիչների համոզմամբ մի ժողովրդի մեջ որոշ հատկությունների առկայության դեպքում է հնարավոր խոսել ազգի ձևավորման մասին, ապա պահպանողականների պնդմամբ խնդիրը գոյություն ունեցող ազգի բնութագրման և առկա կեցության պայմանների համեմատ նրա զարգացման հնարավորությունների որոնման մեջ է. «Գոյութիւն՝ ամենայն իրաց առաջին սկիզբն ու առաջին պայմանն է, ամենայն կատարելութեանց պատճառ եւ ամենայն հանգամանաց գլխաւորութիւն, այն աստիճան որ նոյն ինքն Աստուածային մէկ վայելչութիւնն ուրիշ կերպով մը չկրցաւ ամփոփել իւր անհուն ստորոգելեաց փափակութիւնը, բայց եթէ կոչելով զինքն «Ով են»[17]:

Այս տեսանկյունից նրանք ընդդիմախոսում են եվրոպական գիտական ավանդույթների հիման վրա դաստիարակված հայ լուսավորիչներին, համաձայն որոնց ազգի ձևավորումը պայմանավորում է քաղաքական կառույցի (պետության) առկայությունը, և գտնում, որ նման մոտեցումը բնութագրական և օրինաչափ է եվրոպական ժողովուրդներին, որոնք հիշյալ ժամանակաշրջանում արդեն ստեղծել էին ազգային պետություններ: Մինչդեռ «արեւելքի մէջ ազգութիւնն ու դաւանանքը սովորաբար բոլորովին իրարու հետ կը դրուին» և «մարդու ազգութիւնը պահպանողը, կամ ազգութեան առաջին և գլխաւոր նշանը դաւանանքն է», ուստի հայ ազգությունը որոշող հատկանիշը «ազգային սեփական Եկեղեցւոյն դաւանանքը անխառն» պահպանելն է:

Պահպանողականները հանդես են գալիս քրիստոնեության էության անփոփոխության վերաբերյալ Ստ. Նազարյանի վերոգրյալ տեսակետի դեմ. «Հայն ալ անտարակոյս մասն է քրիստոնէական մէկ ազգին: Բայց մեր փնտրածը այդ կրօնական ազգութիւնը չէ, հապա ազգային կրօնը կամ դաւանութիւնն է՝ իբրեւ գլխաւոր եւ որոշող նշան հայուն ի յունաց եւ յասորւոց, յիտալացւոց եւ յանգլիացւոց, եւ այլ ամենայնի ազգաց աշխարհի... յայտնի է, որ մեր ազգը քաղաքական օրէնքներով ու սովորութեամբք չզանազանի այժմ ուրիշ ազգերէն, բայց որովհետեւ եկեղեցական սեփական օրէնքներ ու սովորութիւններ սա յինքն արարողութիւն ունի»[18]:

Ազգի գլխավոր հատկանիշը, այսպիսով, համարվում է կրոնական դավանանքի ազգային յուրահատկությունը: Ուստի և «հայ ազգ» և «Հայ Եկեղեցի» հասկացությունները

[17] Մ. Օրմանեան, Հայ ազգութիւն, Կ. Պոլիս, 1879, էջ 9:

[18] Գ. Այվազեան, Ազգութիւն և ազգային դաւանանք:- «Մասյաց աղավնի», 1862, № 2, էջ 15: Տե՛ս նաև «Ազգութիւն և հաւատ»:- «Մասյաց աղավնի», 1856, № 4, էջ 82-83:

նրանք օգտագործում են որպես նույնական. «Հայ Եկեղեցւոյ դուրս Հայ ազգութիւն չկայ. Հայ Եկեղեցի չկա Հայ ազգութիւնից դուրս... Հայ ազգութիւն և Հայ կրօն բաղկացրել են մի գոյութիւն...»[19]:

Քննարկվող խնդիրն իր տրամաբանական ավարտին է հասնում Հ. Տերոյենցի ազգային հայեցակարգի մեջ: Մտածողի կարծիքով, ազգությունը պահող գլխավոր կապը կրոնն է. «Կրօնք ըսելով հաւատքը առ արտաքս յայտնող նշանները կը հասկնամք»: Հավատը նա համարում է անփոփոխելի, քանզի նրա էությունը Աստծո ճանաչումն է, որչափ և ինչպես Աստված կկամի ճանաչվել գերբնական հայտնությամբ: Հավատի էության հետ սերտորեն կապվում է Աստծուն պաշտելը, այսինքն՝ «անոր յարգութիւն մատուցանել արտաքին կերպով. անանկ յարգութիւն մը՝ որ մարդոց չտրուի, որպէս զի զԱստուած մարդոցմէն գերազանց առաքելութիւն ունեցող էակ մը ըլլալուն խոստովանութիւն մը եղած ըլլայ, որ զԱստուած ճանչնալու, այսինքն՝ հաւատքին նշանն է»[20]:

Ելնելով ազգերի ավանդույթների տարբերություններից, Հ. Տերոյենցը հաստատում է, որ աստվածապաշտության ձևերը նույնպես պետք է տարբեր լինեն: Ազգերին տարբերող այդ առանձնահատկությունը նա համարում է ազգության կապը: Ազգային կապ լինելու համար, սակայն, արարողությունները պետք է միավորվեն դավանանքի, այսինքն՝ հավատի մեջ: «Հաւատքը մէկ է, արարողութիւնները զատ են, եւ քանի որ հաւատոյ միութիւնը մէկ մը մնայ՝ կրօնական արարողութիւնները ազգայնութեան կապ կ՚ըլլան, վասն զի իւրաքանչիւր ազգ իրենց մէջ անով կը կապակցին, և ամենքը իրարու հետ անոր նշանակած հաւատքով կը միանան»[21]:

Ասվածից հետևում է, որ աստվածապաշտության արտաքին արարողությունը մերժող բողոքականությունը «ազգայնութիւնն ալ ջնջելու կը դիմէ»: Համանման կարծիք պաշտպանում է նաև Գ. Այվազովսկին: Աստվածապաշտության մեջ նա կարևորություն է տալիս ոչ միայն ներքին համոզմանը, այլև արտաքին արարողությանը: Վերջինս նա համարում է ազգի գլխավոր հատկանիշն ու պահպանության հիմքը. «... հաւատոյ ձեւն ու արարողութիւններն են, որ Հայոց ազգութիւնը ամբողջ ալ չըլլայ նէ գոնէ անփոփոխ պահեր են մինչեւ հիմա»[22]:

Մտածողների նշված դրույթների մեջ արտահայտվում է քրիստոնեական ոգու ճշմարիտ ընկալումը: Ակնհայտ է, որ մարդկանց իսկական միությունը հնարավոր է միայն հոգևոր հենքի վրա: Այն ենթադրում է ընդհանուր պատմական ճակատագրով, մտահայեցողությամբ, լեզվով, ավանդույթներով, հավատով, աղոթքով պայմանավորված հոգևոր ընդհանրություն, ինչը հենց ազգային կապն է ստեղծում: Այս տեսանկյունից ազգային զգացումը բնութագրելի է որպես քրիստոնեության բարձրագույն իմաստի դրսևորում:

Քրիստոնեության մեջ քարոզվող մարդկանց հոգևոր միասնությունը յուրաքանչյուր ազգ իրագործում է սեփական պատմության և մշակույթի կերտման միջոցով: «Ազգ» և «կրոն», «ազգայինը» և «քրիստոնեականը» պահպանողականները դիտարկում են որպես կենսական մի ամբողջություն, որը հնարավոր դարձրեց քրիստոնեության ազգային (հայ-

[19] Ս. Գնունի, Հայ ազգ և Հայ Եկեղեցի:- «Արարատ», 1880, № Ժ, էջ 442:

[20] Հ. Տերոյենց, Ազգայնութեան վրայ ընդհանուր տեսութիւն:- «Երևակ», 1864, № 33, էջ 257, 258:

[21] Հ. Տերոյենց, Ազգայնութեան վրայ ընդհանուր տեսութիւն, № 34, էջ 266:

[22] Գ. Այվազեան, Ազգութիւն և հաւատ: -«Մասյաց աղավնի», 1856, № 4, էջ 85: Տե՛ս նաև «Կրօնական վեճեր», № 137-143:

կական) տարատեսակության ձևավորումը և հայ ազգության պահպանումը՝ ազգային մշակույթի ստեղծման և զարգացման միջոցով:

Վերոշարադրյալի լույսի ներքո ըմբռնելի է դառնում պահպանողականների այն պնդումը, որ ազգային քաղաքականությունը պետք է ուղղված լինի կրոնի պահպանմանը: Այդ պահանջը հստակ ձևակերպել է Ս. Գնունին. «...քո ազգասիրութիւնը հաւասար է իմ կրօնասիրութեան, այն տարբերութեամբ միայն, որ իմ կրօնասիրութեամբ պահպանւում է ազգի միութիւն, իսկ քո այդ կերպ ազգասիրութեան ընթացքը բոլորովին վնասում է... Ուստի մեր ազգի շահը պահանջում է պաշտպանել մեր կրօնն իբրեւ կապ միութեան ազգի...»[23]:

Հ. Տերոյենցի համոզմամբ, առանց ազգի հոգևոր բնույթին ներհատուկ ավանդույթների ազգը «նախնի անկրթութեան» մեջ է մտնում: Ելնելով դրանից, նա գտնում է, որ հայ ազգը պետք է հավատարիմ մնա մինչև XIX դ. պահպանված ազգային ավանդույթներին, համաձայն որոնց աշխարհի տարբեր երկրներում բնակվող հայերին միավորում էր Հայ Առաքելական Եկեղեցին:

Ազգի քաղաքական անկախությունը նա դիտում է որպես մի իդեալ, որին կարելի է հասնել մշակութային ինքնության պահպանման շնորհիվ: Դրա համար անհրաժեշտ է համարվում ազգային միասնությանն ու համաձայնությանը հասնելը, ինչն, իր հերթին, ենթադրում է հետևյալ պայմանների առկայություն. ա/ աշխարհականների և եկեղեցականների համագործակցություն ի շահ ազգի, բ/ ապստամբությունների, դասակարգային դժգոհությունների և դասակարգային պայքարի մերժում: Գնահատելով հայ ժողովրդավարականների քաղաքական գործունեությունը Ռուսաստանում, Լեհաստանում և Իտալիայում ծավալված ազատագրական շարժման տեսանկյունից, Գ. Այվազովսկին գտնում է, որ «այս ամենայն սպառնալից փոթորիկները մեր ազգին համար չեն, երանի թէ իրօք այնպէս պատահի, ...մեծամեծ նաւերուն շարժունքէն փոքրիկ նաւերն ալ չալէկոծին»[24]:

Ազգի միության և անվտանգության գաղափարական հենքի վրա են պահպանողականները քննարկում լուսավորիչների կողմից փառաբանվող խղճի ազատության սկզբունքը: Վերջինս նրանք համարում են ազգը պառակտող գաղափար, ուստի և դատապարտում են ազգային միության նոր կենտրոնների ստեղծումը (ինչպիսին էր, օրինակ, Վ. Չիլինկիրյանի «Լուսավորչական» կենտրոնը, 1868 թ.): Նրանց կարծիքով, կրոնն է հաստատում ազգային հասարակությունը, ուստի ազգի միության սկզբունքը հակառակ է խղճի ազատությանը. «Միթէ սիրոյ միատրութեան եւ միութեան հաւատքը չէ, զոր Աւետարանն կը սորւեցնէ ամէն քրիստոնէի, որն կ'ըլլայ իր դաւանութեան ձեռք»[25]:

Օսմանյան կառավարության որոշմամբ ստեղծված հայ Կաթոլիկ (1830 թ.) և Բողոքական (1847 թ.) համայնքները պահպանողականները անվանում են հայ հասարակության անջատված մասեր և գտնում, որ ազգի նման բաժանումը ներքնապես տկարացնում է նրան: Այնուամենայնիվ, հաշվի առնելով ստեղծված իրավիճակը, պահպանողականները առաջարկում են ստեղծել համահայկական կենտրոն. «Մաս մը տեղական, մաս մը ուսում-

---

[23] Ս. Գնունի, Հայ ազգ և կրօն, Ի Վաղարշապատ, 1880, էջ 8,10:

[24] Գ. Այվազովսկի, Անցյալ 1861, առաջիկա 1862 տարին մեր ազգի համար: - «Մասյաց աղավնի», 1862, № 1, էջ 4:

[25] Մ. Օրմանեան, Միութիւն Հայութեան. Կ. Պոլիս, 1879, էջ 15:

նական, մաս մը վարչական եւ մէկ մասն ալ եկեղեցական. բաղադրեալ կեդրոն մը ձեւացնենք հայութեան համար, եւ այդ բաղադրեալ կեդրոնին ազդեցութիւնը մենք. հայքս անհատաբար յարգենք, այնպէս որ ամենայն ինչ՝ որ Հայ է, եւ ամենայն ոք՝ որ Հայ է, այդ կեդրոնին հետ յարաբերութիւն մը ունենայ»[26]:

Լուսավորիչների խղճի ազատության բանաձևի հիմքում ընկած է այն ըմբռնումը, որ մարդը ազատ էակ է: Այդ նախադրյալից լուսավորիչները բխեցնում են հետևյալը՝ մարդու ազատության աղբյուրը խղճի ազատությունն է, որի համաձայն մարդն իրավունք ունի վայելել խորհելու, աղոթելու և ուսանելու ազատությունը: Խղճի ազատությունը, ըստ էության, հիմնվում է մարդու ներքին (ազատ) կամքի վրա, ուստի համարվում է նրա նվիրական իրավունքը: Այդ իրավունքը ձեռք բերելու գլխավոր ճանապարհը բանականության զարգացումն է:

Գ. Չիլինկիրյանի խմբագրած «Ծաղիկ» հանդեսի խմբագրականն ուղղված է պահպանողականների և հատկապես Հ. Տերոյենցի այն դիրքորոշման դեմ, ըստ որի գիտելիքն ինքնին մարդուն բարոյական չի դարձնում: Ելնելով մտավոր և բարոյական առաջադիմության գաղափարից, Հ. Տերոյենցը գտնում է, որ բարոյականության կատարելագործումը «իմաստութեան ալ դուռ կը բանայ, որով մտաւորական ու բարոյական յառաջադիմութիւնը մէկէն կը յաջողի»[27]:

Նա հանդես է գալիս «նորագույն բարոյագետների»՝ լուսավորիչների դեմ, որոնք մարդուն առաքինի և բարի դարձնելու համար կարևորությունը տալիս են ոչ թե հավատին, այլ «քաղաքացիական կրթությանը»: Այս համատեքստում նա քննարկում է խղճի ազատության գաղափարը: Խիղճը նա անվանում է այն ներքին զգացումը, որով մարդը կողմնորոշվում է իր գործողությունների մեջ: Խիղճն այս իմաստով ազատ է արտաքին պատկերացումներից և ըմբռնումներից: Մարդկային արարքների շարժառիթը և արգելակը սակայն միայն խիղճը չէ: Այս գործընթացի մեջ մեծ կշիռ ունի նաև մարդու կիրքը. «Խիղճը մարդկային գործոց կանոնն է նէ՝ կիրքը զօրացած ատենը նոյն իսկ խղճին կանոնը կ'ըլլայ: Եւ կիրքը ամէն ատեն կարգաւորեալ ընթացք մը չունենալով՝ խղճին ալ իր թելադրած անկարգ ընթացքի մէջ կը ձգէ»[28]: Դրան համապատասխան գործելը կամ չգործելը անիրավացիորեն անվանվում է խղճի ազատություն /անհրաժեշտ և անբռնաբարելի/: Սակայն մեղք գործողը մեղքի ծառա է դառնում, ասում է Հ. Տերոյենցը: Անհավատությունը և արատավոր հավատը նա նույնպես մեղք է համարում:

Խղճի ազատության գաղափարը պահպանողականները մեկնաբանում են նաև «հավատ–կրոնափոխություն» հարաբերակցության տեսանկյունից: Հավատը երկնային ճշմարտության նկատմամբ մարդու ներքին համոզումը համարելով, Պ. Շահվեքիլյանը կարծում է, որ մարդը ազատորեն կարող է փոխել իր այդ համոզումը: Մինչդեռ կրոնը սոցիալական ինստիտուտ է, կամ արտաքին ձևերի և տարրերի ամբողջությունն է այն ներքին համոզման, որը մի որևէ ժողովուրդ ընդունել է որպես ճշմարտություն: Ծեսերի, արարողությունների, կանոնների և ուսմունքների ամբողջությունը նա համարում է դրական կրոն և գտնում, որ կրոնափոխությունը ոչ այլ ինչ է, եթե ոչ «հաւատքի մը, ներքին համո-

---

[26] Մ. Օրմանեան, Միութիւն Հայութեան. էջ 27:

[27] Հ. Տերոյենց. Տղայ կրթելու վրայ: Ի. Կ. Պոլիս, 1858, էջ 3:

[28] Հ. Տերոյենց. Խղճի ազատություն: – «Երևակ», 1864, № 11, էջ 85:

զումի մը դրական ձեւը փոխել եւ ուրիշ ընդունել: Թողուլ իր Եկեղեցին եւ ուրիշ մը յաճախել[29]»:

Պահպանողականները ընդգծում են նաև այն միտքը, որ միայն ազգային ավանդույթների զարգացման ճանապարհին /այդ թվում նաև կրոնական–եկեղեցական/ է հնարավոր քաղաքական ազատության ձեռքբերումը: Հիրավի, սոցիալական ինստիտուտների՝ Իրավունքի և Պետության ձևավորումը հնարավոր է այն դեպքում, երբ կենսաշունչ է ժողովրդի իրավագիտակցությունը՝ պայմանավորված նրա ստեղծագործական ներունակությամբ և սոցիալական կյանքի ավանդույթներով: Ե՛վ առաջինը, և՛ երկրորդն իրենց արտահայտությունն են գտել Հայ Եկեղեցու կառուցվածքի և գործունեության մեջ:

Այս կապակցությամբ հարկ է նշել նաև, որ պահպանողականները չեն մերժում ազգի առաջադիմության համար գիտության և լուսավորության անհրաժեշտությունը: Ասվածը հիմնավորելու համար բերենք Գ. Այվազովսկու հետևյալ դատողությունը. «Այո, կրթութիւն, դաստիարակութիւն, ուսում, լեզուք, գեղարուեստք, ամենն ալ եւրոպական ոճով, եւրոպական կանոններով, եւրոպական յառաջադիմութեամբ, եւրոպական լուսաւորութեամբ, բայց եւ ազգային հոգով, ազգային աստուածապաշտութեան զգուշաւոր պահպանութեամբ»[30]:

Այսպիսով, հայ-ազգային-պահպանողական փորձի պատմական ընդհանրացման տեսանկյունից անընդունելի է թվում արևմտյան ազատախոհների /գլխավորապես անգլիական և ամերիկյան/ կողմից «հումանիզմ» գաղափարի մասնատումը: Պատճառն այն է, որ մասնատման արդյունքում առաջացած «հումանիզմ»-ի տարատեսակությունները /«կրոնական հումանիզմ», «ռացիոնալական հումանիզմ», «էթիկական հումանիզմ» և այլն/ զրկված են այդ գաղափարի մեջ նախկինում ներդրված հոգևոր /բացարձակ/ արժեքից: Դա հանգեցնում է մարդու ընկալման նատուրալիզացիային, ինչը, իր հերթին, նպաստում է սոցիալական կյանքի ընկալման պարզեցմանը: Այդ սահմաններում չեն ընդունվում բացարձակ աշխարհայացքներ, սկզբունքներ, իդեալներ: Դրանց փոխարեն հարաբերականության սկզբունքի հիման վրա ձևակերպվում են անհատական գոյության սկզբունքները[31]: Մարդկայինի, ազգայինի և մշակութայինի համահարթման միտում ունեցող այդ դիրքորոշման չեզոքացումը հնարավոր է միայն ազգային–կրոնական վերածննդի ճանապարհին, մի հանգամանք, որը նախորդ դարում ջերմեռանդորեն պաշտպանում էին հայ պահպանողականները:

---

[29] Գ. Հայրապետ Տահվեզիյեանց. Հայութիւն եւ կրօնափոխութիւն: – «Ծաղիկ», 1864, № 95, էջ. 262-263:

[30] Գ. Այվազեան. Արեւելեան վարժարանի բարեկարգութեան հիմունքները. – «Մասյաց աղավնի», 1855, էջ 254-258:

[31] Տե՛ս Мильдон В.И. Миллениумы русский и западный: образы эсхатологии: - Вопросы философии, 2000, № 7, էջ 7:

*ԱՐՄԵՆ ՀԱԿՈԲՅԱՆ*

# ԹԱԹԱԽՈՍ ՀԱՅԵՐԻ ԼԵԶՎԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՇՈՒՐՋ

(18-րդ դ. - 20-րդ դ. սկիզբ)

Էթնիկ լեզուն, ինչպես հայտնի է, էթնիկ ինքնության ձևավորման կարևորագույն միջոցն է: Այս իմաստով էթնիկ լեզվի վերաբերյալ ինքնապատկերացումները, որպես կանոն, պայմանավորում են որևէ խմբի էթնիկ ինքնությունը: Հայտնի են, սակայն, խմբեր, որոնք, պատմական հանգամանքների բերումով ենթարկվելով ձուլման գործընթացների, կրելով մշակութային փոփոխություններ, կորցնելով մայրենի լեզուն, պահպանել են էթնիկ ինքնագիտակցությունը: Այդպիսի խմբերից են թաթախոս հայերը, որոնց պատմական աշխարհագրությունն ընդգրկում է Դերբենդից Ապշերոն ընկած տարածքը:

Խմբի ձևավորման, ինքնության վերաբերյալ արտահայտվել են հակասական կարծիքներ, գործածվել իրարամերժ կամ խնդրահարույց տերմիններ (թաթ քրիստոնյաներ կամ թաթ լուսավորչականներ, հայ-թաթեր, թաթ հայեր...): Պատմական, ազգաբանական վերլուծությունը ցույց է տալիս, որ խումբը ձևավորվել է դեռևս 5-6-րդ դդ. արևելյան ու հս.-արևելյան Այսրկովկասում առկա հայկական էթնիկական հիմքի վրա, որը, շարունակականորեն գոյատևելով բազմադարյան իրանական ազդեցության գերակայության պայմաններում, բարդ էթնոդավանական ու աշխարհագրական միջավայրում, ենթարկվել է ձուլման գործընթացների, կորցրել մայրենի լեզուն, դարձել իրանալեզու, սակայն պահպանել է հայկական ինքնագիտակցությունը, դավանական պատկանելությունը և մշակութային շատ տարրեր[1]:

Ռեգիոնում տեղի ունեցած քաղաքական, դավանական փոփոխություններն իրենց ազդեցությունն են թողել խմբի պատմական ուղու և տարաբաշխվածության վրա: Փաստերը վկայում են միգրացիոն տարբեր տեղաշարժերի ու բռնի մահմեդականացման մասին: Հայտնի է, որ թաթախոս հայերի զգալի մասը 18-րդ դ. վերջին (1796 թ.) Արևելյան Այսրկովկաս արշաված ռուսական զորքերի հետ միասին հեռանում է նախկին բնակության տարածքներից՝ Դերբենտ, Մուշկուր, Ղուբա, և հաստատվում հիմնականում Հյուսիսային Կովկասում՝ Ղզլարում և շրջակայքում, Սբ. Խաչում, Եղեսիայում և այլուր:

19-20-րդ դ. սկզբին Այսրկովկասում թաթախոս հայերը մնացել էին հիմնականում Մադրասա, Քիլվար, Խաչմաս գյուղերում: Խաչմասը գոյատևեց մինչև 1918 թ., իսկ 1988-1990-ական թթ. Ադրբեջանում սկսված հակահայկական հալածանքների հետևանքով բռնագաղթի ենթարկվեցին Այսրկովկասում մնացած այս խմբի բեկորները՝ Մադրասա և Քիլվար գյուղերի բնակիչները[2]:

---

[1] Հակոբյան Ա., Հայ-թաթերի ձևավորման միջավայրի և ձևավորման շուրջ, Երիտասարդ արևելագետների հանրապետական XXIII գիտական նստաշրջան, զեկուցումների թեզեր, Երևան, 2002, էջ 23-26:

[2] Հակոբյան Ա., Հայ-թաթերի տեղահանությունների և պատմական ճակատագրի որոշ դրվագներ մինչև 20-րդ դ. 80-ական թթ., Երիտասարդ գիտնականների հոդվածների ժողովածու (հումանիտար գիտ.), ԵՊՀ, 2000, № 1, էջ 12-15:

Ինչպես ցույց են տալիս փաստերը, 19-րդ դ. վերջին - 20-րդ դ. սկզբին խմբի մոտ որպես կենցաղային և հասարակական շփման լեզու տարածված էր թաթերենը:

Լեզվական մշակույթի խնդիրները, այսինքն՝ նրանց միջավայրում տարածված լեզուները, երկլեզվության, եռալեզվության (կամ բազմալեզվության) դրսևորումները, տարածված լեզուների (թաթերեն, թուրքերեն, հայերեն...) օգտագործման ոլորտները և այլն, ուշագրավ նյութ են տալիս խմբի կողմնորոշումները հասկանալու համար:

Համարվում էր, որ թաթախոս հայերի մասին տեղեկությունները ի հայտ են գալիս 19-րդ դ. երկրորդ կեսից սկսած[3], մինչդեռ 18-րդ դ. վերջին - 19-րդ դ. առաջին կեսին արդեն որոշակի հայտնի էր այս խմբի գոյության մասին:

Դեռևս 18-րդ դ. վերջին հանդիպում է տեղեկություն խմբի թաթախոս լինելու մասին (տեղեկությունների տակ նկատի ունենք միայն ուղղակի փաստերը նրանց թաթախոս լինելու մասին, այլ ոչ՝ բնակավայրերի անվանումները, որոնք հանդիպում են ավելի վաղ հիշատակություններում):

Ուշագրավ է 18-րդ դ. վերջի եվրոպացի ճանապարհորդ Յ. Պոտոցկու տեղեկությունը: 1797 թ. նա հայտնում է, որ Մուշկուրի հայերը խոսում են թաթերեն: Ինչպես նշում է հեղինակը, թաթերեն են խոսում նաև Շիրվանի երկրագործ հրեաները, որոնք, սակայն, իրենց միջև մի այլ լեզու են գործածում: Հետաքրքրական է, որ Յ. Պոտոցկին իր տեղեկությունները, ինչպես ինքն է ասում, վերցրել է հայից, որի թելադրությամբ ինքը կազմել է թաթերեն լեզվի բառարան[4]:

Այսրկովկասում ռուսական տիրույթներին նվիրված մի աշխատության մեջ անդրադարձ կա այն մասին, որ Շիրվանում թաթարների և հայերի փոքր մասը խոսում է թաթարերենից և հայերենից տարբերվող յուրահատուկ լեզվով, որը ըստ տեղացիների՝ «աղավաղված պարսկերեն» է[5]:

19-րդ դ. առաջին կեսին հրատարակված մեկ այլ աշխատության մեջ նույնպես տեղեկություն կա այն մասին, որ Ղուբայի հրեաները և հայերը խոսում են թաթերեն[6]:

Քանի որ հիշյալ շրջատարածքում «թաթարերենը» ծառայում էր որպես ազգամիջյան հաղորդակցության հիմնական լեզու, որպես այդպիսին այն պետք է դիտել նաև տվյալ պարագայում, և ակնհայտ է, որ վերը հիշատակված դեպքերում թաթերենը հայերի և հրեաների սեփական գործածության լեզուն էր:

19-րդ դ. երկրորդ կեսից սկսած հայ և օտար աղբյուրներում այս խմբի մասին տեղեկությունները համեմատաբար ավելի բազմազան ու հանգամանալից են դառնում:

Ուշագրավ տեղեկություններ են հայտնվում պարբերական մամուլում: Հայկական մամուլում այս խմբի մասին առաջին հիշատակություն է համարվում «Արարատ» ամսագրում (1871 թ. մարտ) Դանիել արքեպս. Շահնազարյանի՝ Շամախու թեմի նկարագրությանը նվիրված հոդվածաշարում Մադրասա գյուղի բնակիչների մասին տեղեկությունը[7]: Նա

---

[3] Ղալթախչյան Ս., Երկլեզվության հարցի շուրջ, Սովետական մանկավարժ, 1970, № 5, էջ 82:

[4] Potocki J., Voyage dans les steppes d' Astrakhan et du Caucase. Paris, 1829, t. 1, p.104 -105.

[5] Обозрение российских владений Закавказом, т. 3, СПб, 1836, стр. 79.

[6] Некоторые замечаные на книгу Обозрение российских владений Закавказом, СПб, 1840, стр. 83.

[7] Ղալթախչյան Ս., Հայերենի տարրերը հայ-թաթերեն բարբառում, ԼՀԳ, 1970, № 3, էջ 72:

գրում է, որ «բնակիչք ընդհանրապէս խօսում են երկու լեզուաւ միմեանց հետ Հայերէն եւ Թաթերէն»[8]:

Այդ նույն տարում տեղեկություն է տրվում նաև «Մեղու Հայաստանի» լրագրում: Այն վերաբերում է Քիլվար, Խաչմաս, Ղարաջալու գյուղերին: Նշվում է, որ այդ գյուղերի բնակիչները հայերեն չգիտեն, այլ՝ «թաթարերէն (Պարսից աղաւաղեալ լեզու) եւ թուրքերէն գիտեն» և որ իրար հետ «թաթարերէն կը խօսին, իսկ մնացելոց հետ թուրքերէն»: Հետաքրքրական է, որ նշվում է նաև, թե այդ բնակչությունը գաղթել է Անիից[9]:

Հեղինակը մասնավորեցնում է, որ նրանք միայն մի երկու հայերեն բառ գիտեն՝ «բարի լոյս, բարի օր, բարի իրիկուն, օրհնեա՛ Տէր, ժամ, եկեղեցի, խաչ, տէրտէր, Աւետարան», և հաղորդում, որ «շատ անգամ պատահած է ինձ հետ, որ կուգան համարձակ «բարի լոյս» կամ «բարի օր» կ՚ասեն, բայց երբ «Աստծոյ բարին» ասելուց յետ կ՚սկսեն մեր լեզուաւ խօսիլ հետները, նոքա իսկոյն թուրքի լեզուաւ կ՚յայտնեն թէ Հայերէն չգիտեն... Քահանան տեսնելիս «օրհնեա Տէր» կը պոռան ու յետոյ «քեֆն ինչայ դըր տէրտէր, բուրվառը կեօթըր, գեղախ ժամա, Աւետարան օխիաք» կ՚ասեն»:

Կովկասագետ Ն. Զեյդլիցը Բաքվի նահանգի ազգագրությանը նվիրված իր աշխատության մեջ նույնպես նշում է, որ Քիլվարի բնակիչները խոսում են միմյանց հետ թաթերեն[10]:

Չնայած Ս. Ղալթախչյանը գրում է, որ Քիլվարի դպրոցը բացվել է 1893 թ.[11], սակայն այն իրականում բացվել էր ավելի վաղ:

1875 թ. Գևորգ Դ Կաթողիկոսին է դիմում ղուբայաբնակ Միրզաջան Հովհաննիսյանը: Նա, նկարագրելով Քիլվար գյուղի անմխիթար վիճակը, նշում է այնտեղ դպրոց բացելու անհրաժեշտության մասին և հայցում Վեհափառի օժանդակությունը: Նամակագիրը տեղեկացնում է, որ Ղուբայի հայկական այս միակ գյուղի 70 տուն բնակիչները հայերեն չգիտեն. «...բնակիչքն հայք են կոչւում, բայց ո՛չ հայերէն խօսալն, ո՛չ կարդալն և ո՛չ ուսումն ասած բառն չեն իմանալ», այլ՝ «մէկ մէկու հետ» խոսում են «հինուց սովորած թաթի լեզուով», և ինքը, լինելով Քիլվարում, ականատես է եղել «նրանց աղքատ և խեղճ ման-

---

[8] Դանիել արքեպս. Շահնազարյան, Այցելութիւն եկեղեցեաց գիտօրէից վիճակին Հայոց Շամախւոյ, Արարատ, 1871, մարտ, էջ 352:

[9] Մեղու Հայաստանի, 1871, հոկտեմբեր 16, N 38 (Այս խմբի մասին աղբյուրներում հիշատակվում է նաև «թրքախոս» կամ «թաթարախոս» տերմինը (Նկատի ունենք այն տեղեկությունները, որոնք վավերացնում են բացառապես այս խմբի «թրքախոս» լինելը): Թեև նման հիշատակությունները հերքվում կամ ճշգրտվում են ավելի իրազեկ աղբյուրների միջոցով, այնուամենայնիվ, մեր կարծիքով, նման հիշատակությունները պայմանավորված են հետևյալ հանգամանքներով. նախ՝ հեղինակների անծանոթությունը լեզվական իրողություններին, որի արդյունքում նրանց համար անծանոթ լեզուն դառնում է «թուրքերեն»: Օրինակ՝ վերը նշված հիշատակության մեջ «պարսից աղաւաղեալ լեզուն» նշվում է որպես «թաթարերէն», մինչդեռ պիտի լիներ թաթերեն: Երկրորդ՝ հեղինակները կամ նրանց ներկայությամբ ուրիշները այս խմբի հետ շփվել են «թուրքերեն», և դա հիմք է տվել կարծելու, թե նրանք «թրքախօս» են: Թեև հնարավոր է նաև թրքախոս տարրի առկայությունն այս խմբում, այնուամենայնիվ, վերը նշված տեսանկյունից, մեր կարծիքով, պետք է դիտարկել նմանատիպ փաստերը):

[10] Зейдлиц Н., Этнографический очерк Бакинской губернии, Кавказский календарь на 1872, Тифлис, 1871, стр. 59.

[11] Ղալթախչյան Ս., Երկլեզվության հարցի շուրջ, Սովետական մանկավարժ, 1970, № 5, էջ 83:

կանց ուսման և լեզուի կարօտ» դրությանը: Նկարագրելով Քիլվարը՝ հեղինակը հաղորդում է, որ գյուղի եկեղեցին «Սբ. Գրիգորիսի ժամանակիցն է շինուած», իսկ Քիլվարը շրջապատված է «տաճկաց» գյուղերով, ուր կան հայկական գերեզմաններ, և այդ «գիւղօրայքն էլ, որտեղ այժմ տաճիկներ են բնակւում, հայոց գիւղօրայք է եղած հին տարիներումն»[12]:

«Մեղու Հայաստանի» թերթի և արխիվային վավերագրերի վկայությամբ, 1875 թ. սեպտեմբերին Քիլվարում բացվում է ծխական հոգևոր դպրոց[13]: Նախաձեռնողները Միրզաջան Հովհաննիսյանն ու Ղուբայի գործակալ Հովսեփ քահանա Աշուղյանն էին: Հենց սկզբից դպրոցին, նախաձեռնողների դիմումով, աջակցություն է ցուցաբերում Բաքվի Հայոց Մարդասիրական Ընկերությունը: Դպրոցի բացման կապակցությամբ գործակալ քահանայի՝ Շամախու թեմի կոնսիստորիային ուղղված զեկուցագիրը բավականին հետաքրքիր տեղեկություններ է պարունակում: Նկարագրվում է, որ Քիլվարի «զՀայս բոլորովին զուրկ ի հայկական բարբառոյ ինքեանք ի բարբարոսական կենցաղս, և զմանկունս նոցանց դատարկապորտ թափառուն ի շուկայս»: Նշվում է, որ աշակերտները 12 են, բայց «հետզհետէ յաւելուլ»: Հետաքրքրական է, որ հենց սկզբից ուսուցչին օգնական է նշանակվում գյուղի տիրացուն, որպեսզի «ուսուցչի զասացեալսն թաթական բարբառիւք թարգմանիցէ մինչև հայկական բարբառոյ յընտելանալն նոցանց»:

Շամախու թեմի կոնսիստորիան հանձնարարում է թեմական դպրոցների տեսչին Քիլվարի դպրոցի համար կազմակերպել հոգաբարձուների խորհուրդ և դպրոցական գործը՝ համաձայն ծխական դպրոցների կանոնադրության[14]: 1875 թ. հոկտեմբերին քիլվարցիներից հոգաբարձուների խորհուրդ է ընտրվում դպրոցի տնտեսական և ուսումնական խնդիրները հոգալու համար[15]: 1875 թ. հոկտեմբերին Քիլվար այցելած թեմական տեսուչը հետաքրքիր տեղեկություններ է հաղորդում: Նկարագրում է, որ «շրջապատեալ գիւղօրէիւք տաճկաց, վարին ընդ միմիանս ի լեզու և ի տարազ կենցաղվարութեան տաճկաց»: Տեսուչը հայտնում է, որ «բացի և աստանոր զմի Հոգևոր ծխական դպրոց յեկամուտ նմին նշանակելով զհանգանակեալ ի ձեռն Աշուղեանց Յովսէփ քահանայի և պ. Միրզաջանի Յովհաննիսեանց զնուիրադրամսն և զտարեկան հարիւր յիսուն րուբլի տուրս Մարդասիրական ընկերութեան Բագուայ»[16]: Ըստ էության տեսչի այցելության ժամանակ պաշտոնականացվել է Քիլվարի դպրոցի գոյությունը, որն արդեն գործում էր:

Քիլվարցիների վերաբերմունքը դպրոցի նկատմամբ նախապես հակասական էր: Ինչպես տեղեկացնում է «Մեղու Հայաստանի» լրագիրը, «Սկզբում Քիլվարցիք և աւելի ծերունիք հակառակել են իրենց երեխայոց տալու. կարծելով թէ դպրոցը բացւում է նրա համար, որ իրանց որդիքն երբևիցէ «սալտաթ» գնան. բայց այժմ ընդհակառակը մեծ համակրութիւն են ցոյց տալիս և զմայլւում են իրանց որդւոցը այբբենարաններ ձեռներին տես-

[12] Հայաստանի Հանրապետության Պետական կենտրոնական պատմական արխիվ (ՀՀ ՊԿՊԱ) ֆ. 56, ց. 15, գ. 58, թ. 5-7:

[13] Մեղու Հայաստանի, 1876, № 32: ՀՀ ՊԿՊԱ ֆ. 56, ց. 15, գ. 21, թ. 13-14:

[14] ՀՀ ՊԿՊԱ ֆ. 56, ց. 15, գ. 21, թ. 13-14:

[15] ՀՀ ՊԿՊԱ ֆ. 56, ց. 15, գ. 21, թ. 15:

[16] ՀՀ ՊԿՊԱ ֆ. 56, ց. 15, գ. 21, թ. 24:

նելիս»: Հեղինակը նաև հաղորդում է. «...զմայլեցրեց այն որ հարսեր ու աղջիկներ առա-
ւօտները և երեկոները ձայն ձայնի տուած, կժեր ուսների վրայ դրած, միասին «Հայրենիք
սրբազան». «Ննջեցէ՛ք լերինք Արարատեան» երգելով գնում էին ջուր բերելու աղբիւր-
ները ... թէև երգերի մի բառն անգամ չէին հասկանում»[17]:

Դպրոցի բացումից ընդամենը մեկ տարի անց, ավարտական քննությունների ժամա-
նակ, նշվում է, որ ներկա գտնվող քիլվարցիները հիացել էին, ծիծաղում էին, որ իրենք
հայերեն չգիտեն, բայց իրենց երեխաները կարողանում են խոսել, կարդալ, գրել և՝ «...այն
մտքի չեն թէ՝ «երեխայոցը սալտաթ տանելոյ համար են ուսուցանում»»[18]:

Քիլվարի դպրոցն այնքան էլ կանոնավոր չի գործել: Ըստ տեղեկագրի, այն 1875-1885
թթ. և 1888-1889 թթ. աջակցություն էր ստանում Բաքվի Հայոց Մարդասիրական Ընկե-
րությունից[19]: 1885-1888 թթ. դպրոցը չի գործում[20]: 1888 թ. «Մշակը» տեղեկացնում է Քիլ-
վարում, Խաչմասում կանոնավոր դպրոց հիմնելու անհրաժեշտության մասին, որը,
ինչպես նշվում է, կարող էր մայրենի լեզուն տարածել իր լեզուն կորցրած «թրքախոս»
ժողովրդի մեջ[21]:

Բաքվի Հայոց Մարդասիրական Ընկերության ներկայացուցիչը, որը 1889 թ. տեսչա-
կան այցով լինում է Քիլվարի, Խաչմասի դպրոցներում, Քիլվարի դպրոցի մասին հայտ-
նում է, որ աշակերտները կարդացածը (հայերեն - Ա. Հ.) թարգմանում էին թաթերեն և
կրկին վերածում հայերենի: Աշակերտներից միայն երկուսը, որոնք սովորել էին ավելի
քան 2 տարի, կարդում էին վարժ, պատմում կարդացածը, և ուսուցիչը ստիպված էր բա-
ցատրել ամեն մի բառ, նախադասություն՝ «տեղական պայմանների համաձայն»: Տեսչա-
կան ստուգումը բացահայտում է, որ «Աշակերտների անկանոն յաճախելուց կամ միաժա-
մանակ դպրոց չմտնելուց՝ ուսուցիչը ստիպուած է եղել ըստ չափ ու զարգացման բաժանել
աշակերտաց չորս խմբերի»: Այդ ժամանակ թե՛ Քիլվարի, թե՛ Խաչմասի դպրոցները
դեռևս պաշտոնապես բացված չէին համարվում[22]:

Մեկ այլ վավերագրի համաձայն՝ Խաչմաս, Քիլվար, Մեյսարի գյուղերում «...չէր յա-
ջողուել կանոնաւոր դպրոցներ բանալ...», և ենթադրվում է, որ Քիլվարի դպրոցը կրկին
վերաբացվում է 1893 թ. «...յաջողուեցաւ բանալ Քիլվարում կանոնաւոր դպրոց»[23]: Ըստ
էության դպրոցը կանոնավոր չի գործել նաև հետագայում. այսպես՝ 1909 թ. Շամախու
թեմի տեղեկագրում չի նշվում Քիլվարում դպրոցի մասին[24], 1913 թ. մեկ այլ տեղեկագրում
նշվում է, որ հայկական դպրոցը, 2 տարի գոյություն ունենալուց հետո, փակվել է նյու-
թական պայմանների պատճառով, և այժմ բացվել է պետական դպրոց: Նշվում է նաև, որ
նախատեսվում է նորից դպրոց բացել 1914-1915 թթ.[25]:

---

[17] Մեղու Հայաստանի, 1876, № 14:

[18] Մեղու Հայաստանի, 1876, № 32:

[19] ՀՀ ՊԿՊԱ ֆ. 27, ց. 1, գ. 35, թ. 201:

[20] Մուրճ, 1891, № 5, էջ 685:

[21] Մշակ, 1888, № 13:

[22] ՀՀ ՊԿՊԱ ֆ. 27, ց. 1, գ. 35, թ. 160-161:

[23] ՀՀ ՊԿՊԱ ֆ. 27, ց. 1, գ. 49, թ. 247,252:

[24] ՀՀ ՊԿՊԱ ֆ. 57, ց. 2, գ. 1835, թ. 13-14:

[25] ՀՀ ՊԿՊԱ ֆ. 27, ց. 1, գ. 215, թ. 3-7, 24:

Ավելացնենք նաև, որ դպրոցը գոյատևում էր Բաքվի Հայոց Մարդասիրական Ընկերության և քիլվարցիների տրամադրած միջոցներով:

Այնուամենայնիվ, չնայած ներդրած ջանքերին ու միջոցներին, հայոց լեզվի ու հայախոսության տարածումը Քիլվարում սպասված արդյունքներ չէին տալիս:

Մակար եպս. Բարխուդարյանը, 19-րդ դ. վերջին այցելելով Քիլվար, գրում է, որ բնակիչները «...խօսում են ըստ աւութեան իւրեանց Լփնաց բարբառով ( թաթերեն - Ա. Հ.) և հայտնում, որ «ստիպուած էի տաճկերէն լեզուաւ խօսել, որպէսզի հասկանային»[26]:

1912 թ. Քիլվար այցելած հայ հոգևորականը, թաթերեն չիմանալով, ևս քարոզել է «թուրքերեն», որպեսզի հասկանալի լինի բնակիչներին[27]:

Վերը բերված փաստերի հիման վրա կարող ենք եզրակացնել, որ 19-րդ դ. վերջին - 20-րդ դ. սկզբին Քիլվարում հիմնականում տարածված էր թաթերեն-թուրքերեն[28] երկլեզվությունը: Թաթերենը գործածվում էր կենցաղում, ներգյուղական միջավայրում, հնարավոր է, որ այն հաղորդակցության լեզու էր նաև թաթախոս մյուս խմբերի ( թաթ մահմեդականներ, լեռնային հրեաներ, թաթախոս հայեր) հետ ևս, իսկ թուրքերենը գործածվում էր որպես ազգամիջյան հաղորդակցության լեզու:

«Մեղու Հայաստանի» լրագիրը 1871 թ. գրում է, որ շուշեցի Պողոս Ալեքսանյանցի աջակցությամբ Խաչմասի քահանան փորձում է հայոց լեզվի ուսուցման գործը կազմակերպել Խաչմասում: Նա հայտնում է, որ «...ուսուցանում է մինչև որ այս մասին Հոգևոր կառավարութենից տնօրէնութիւն կը լինի»[29]:

1875 թ. Շամախու թեմի դպրոցների տեսուչը Խաչմաս այցելելով վավերացնում է. «զՀայազգի մանկունս նրանց ո՛չ միայն զուրկ իսպառ ի մտաւոր և ի քարոյական դաստիարակութենէ՝ այլև ի մայրենի Հայկական բարբառոյ իւրեանց»: Այդ նույն թվականին տեղի բնակչության հետ միասին նրանք բացում են ծխական դպրոց[30]:

Մեկ այլ փաստաթղթում տեսուչը վկայում է, որ տեղի բնակչությունը «...ի գործ ածեն զտաճկացն բարբառ և կեան ըստ տարազու կենցաղվարութեան նոցա...», և նրանցից շատերը չգիտեն և «զխաչակնքել ի դէմս իւրեանց»: Տեսուչը բացում է, «... աղդանոր և զմի Հոգևոր ծխական դպրոց...»՝ շուշեցի Պ. Ալեքսանյանցի կտակած միջոցների և խաչմասցիների նվիրատվությունների օգնությամբ[31]: 1885-1888 թթ. դպրոցը չի գործում[32]: Այն վերաբացվում է 1888 թ., թեև, ինչպես արդեն ասվեց, պաշտոնապես բացված չէր համարվում[33]: 1889 թ. Բաքվի Հայոց Մարդասիրական Ընկերության ներկայացուցիչը տեսչական այցով լինում է նաև Խաչմասի դպրոցում: Նրա այցելության ժամանակ աշակերտ-

[26] Մակար եպիսկոպոս Բարխուտարեանց, Աղուանից երկիր և դրացիք, Թիֆլիս, 1893, էջ 140-141:

[27] Миллер Б., Таты, их расселения и говоры, Баку, 1929, стр.16.

[28] «Թուրքերեն» անվան տակ նկատի ունենք 19-րդ դ. հայերի կողմից ներկայիս Ադրբեջանի տարածքում բնակվող թյուրքական էթնոցեղային կազմավորումների լեզվին տրվող անունը, որը համանիշ է նույն խմբի համար ռուսերենում կիրառվող «թաթարերեն» տերմինին, և այն այժմ կոչվում է ադրբեջաներեն:

[29] Մեղու Հայաստանի, 1871, № 38:

[30] ՀՀ ՊԿՊԱ ֆ. 56, ց. 15, գ. 21, թ. 16:

[31] ՀՀ ՊԿՊԱ ֆ. 56, ց. 15, գ. 21, թ. 23:

[32] Մուրճ, 1891, № 5, էջ 685:

[33] ՀՀ ՊԿՊԱ ֆ. 27, ց. 1, գ. 35, թ. 161:

ների թիվը 7-ն էր, իսկ ձմռանը հասնում է 13: Վերջինս դժգոհում է ուսուցման կազմակերպումից՝ տեղեկացնելով, որ աշակերտներն իրենց մտքերը չէին կարողանում արտահայտել, դժվարությամբ էին պատմում, հարցերին պատասխանում և այլն: Այդ իսկ պատճառով՝ «...երեխայքը ուսանում են 2-3 տարի և խօսում են թաթերէն թէ՛ տանը և թէ՛ դպրոցում»[34]:

Մակար եպս. Բարխուդարյանը, 19-րդ դ. վերջին այցելելով Խաչմաս, գրում է, որ ուսումնարանը չի գործում: Նա հավաստում է նաև, որ «տաճկերէն է խօսում ժողովուրդը», այդ իսկ պատճառով «մի քանի քարոզներ խօսեցի տաճկերէն լեզուաւ և մխիթարեցի»[35]:

19-րդ դ. վերջին Խաչմասում է լինում նաև Մեսրոպ արքեպս. Սմբատյանցը և նկարագրում «թաթախոս» ժողովրդի անմխիթար վիճակը[36]:

1913 թ. մի տեղեկության համաձայն՝ Խաչմասի բնակիչները հայերեն չգիտեն. «Խաչմասեցին չի հասկանում, չի գրում և չի կարդում հայ լեզուով» և որ «բոլորն էլ խօսում են անխտիր թիւրքերէն»[37]:

Ըստ էության 19-րդ դ. վերջին - 20-րդ դ. սկզբին Խաչմասում ևս տիրապետող էր թաթերեն-թյուրքերեն երկլեզվությունը:

Ինչպես արդեն ասվեց, Դանիել արքեպս. Շահնազարյանը Շամախու թեմի նկարագրությանը նվիրված հոդվածաշարում Մադրասա գյուղի բնակիչների մասին հայտնում է, որ մադրասացիները միմյանց հետ խոսում են «Հայերէն եւ Թաթերէն»[38]:

Դեռևս 1870 թ. Մադրասա գյուղում բացվել էր եկեղեցական-ծխական արական միդասյան դպրոց[39]: Մադրասա գյուղի 1875 թ. մի նկարագրության մեջ ասվում է, որ «...բնակիչքը (փոքրից սկսած մինչև մեծը արական լինի թե իգական) թողած իրանց մայրենի Հայ լեզուն խօսում են՝ ինչպէս այստեղ ասւում է ֆարսի: Հազուագիւտ չէ այստեղ հայերէն բոլորովին խօսել չիմացող մինչև անգամ 60, 70, և 80 տարեկան ծերը»[40]:

Հետագայում Մադրասայի դպրոցը ընդարձակեց իր գործունեությունը (դարձավ երկդասյա, այնուհետև նաև միդասյա օրիորդաց և այլն)[41]:

Հետաքրքրական տեղեկություններ է հաղորդում «Մշակը». «Բնակիչները մայրենի լեզուով չեն խօսում, այլ մի տեսակ «թիւրք-պարսի» անուանեալ բարբառով: ... Կան այնպիսի ծերացած և միանգամայն զառամեալ մարդիկ, որոնք մի ամենահասարակ խօսք անգամ չեն կարող արտայայտել հայերէն լեզուով: ... Կան և այնպիսի անձիքն, որոնք իրանց անձնական գործերի և հաշիվների պատճառով առիթ են ունեցել յաճախ գտնուել զանազան հայաբնակ գիւղերում և քաղաքներում, որով նրանք բաւականին լաւ տեղեակ են հա-

---

[34] ՀՀ ՊԿՊԱ ֆ. 27, ց. 1, գ. 35, թ. 161:

[35] Մակար եպս. Բարխուտարեանց, Աղուանից երկիր և դրացիք, Թիֆլիս, 1893, էջ 133:

[36] Մեսրոպ արքեպս. Սմբատեանց, Նկարագիր Սուրբ Ստեփաննոսի վանաց Սաղիանի եւ միւս վանօրէից եւ ուխտատեղաց ևս եւ քաղաքացն եւ գիւղօրէից որք ի Շամախւոյ թեմի, Տփխիս, 1896, էջ 543-546:

[37] ՀՀ ՊԿՊԱ ֆ. 227, ց. 1, գ. 214, թ. 9:

[38] Դանիէլ արքեպս. Շահնազարեան, Այցելութիւն եկեղեցեաց գիւղօրէից վիճակին Հայոց Շամախւոյ, Արարատ, 1871, մարտ, էջ 352:

[39] Կարապետյան Ս., Մատրասա գյուղը և նրա հուշարձանները, ՊԲՀ, 1989, № 2, էջ 232:

[40] Մշակ, 1875, № 28:

[41] Կարապետյան Ս., Մատրասա գյուղը և նրա հուշարձանները, ՊԲՀ, 1989, № 2, էջ 232:

յոց լեզուին, սակայն նրանք ևս իրանց գիւղում եղած ժամանակ չեն կամենում գործածել իրանց հարազատ մայրենի լեզուն՝ կարծես իրանց արժանապատուութիւնից ցածր համարելով»: Նշվում է նաև, որ քահանաները հայերեն չեն խոսում անգամ եկեղեցում, երեխաները, որոնք գալիս են դպրոց, սկզբում «ամենահասարակ խօսքը անգամ չեն հասկանում հայերէն», իսկ հիմա կարդում և պատմում են[42]:

Այդ տարիների մեկ այլ նկարագրությունից տեղեկանում ենք, որ Մադրասայի բնակչությունը «երկու բառ անգամ չէ կարող արտայայտել իր մայրենի բարբառով (հայերէն)» և նրանց «թուրքերէնի և պարսկերէնի խառնուրդ» լեզուն ոչ ոք չի հասկանում: Քիլվարցիների մասին տեղեկություն է պահպանվել, որ նրանք այլ վայրերի հայ բնակիչների հետ խոսում են թուրքերեն, սակայն այս սովորությունը այստեղ «ընդհանրացած չէ», և «Մատրասայի ժողովուրդը այդ շնորհքից էլ զրկված»՝ իրենց լեզվից բացի այլ լեզու չգիտեն՝ սակավ բացառությամբ:

Հնարավոր է, որ մադրասացիների մոտ թուրքերենն այդքան լայն տարածում չուներ, ինչպես՝ քիլվարցիների, խաչմասցիների մոտ, սակայն այդ ժամանակշրջանում այն ազգամիջյան հաղորդակցության լեզու էր, և բնակչության ակտիվ հատվածը հավանաբար այն պիտի իմանար: Նկարագրության մեջ նաև տարակուսանք է արտահայտվում, որ թեև Մադրասան շրջապատված է հայկական գյուղերով, մոտ է Շամախի քաղաքին, սակայն նրանց մոտ հայոց լեզուն տարածված չէ: Հեղինակը զարմանում է, որ «չեն ձգտում ընտելանալ իրենց հարազատ հայերէն լեզուին», և անգամ քահանաները եկեղեցում հայոց լեզու չեն օգտագործում:

«Ես ինքս շատ անգամ ականատես եմ եղած,- նշում է նա,- որ մի որևէ մատրասեցի, որը երկար տարիներ ապրած լինելով հեռաւոր երկիրներում, և հետևաբար բաւականին լաւ վարժուած լինելով հայերէն լեզուի մէջ, իր հայրենի գիւղը վերադառնալուց յետոյ, երբ ճանապարհին պատահելով իր համագիւղացի եղբօրը, ողջունել է նրան «բարիաջողում» կամ «բարև ձեզ» բառերով, վերջինս փոխանակ նրան փոխադարձաբար ողջունելու, սկսել է ծաղրել հետևեալ խօսքերով՝ «Հայա ի նա դանիշ, փիեար խչտանայ զըհունրա հեշտայ, շհարջի կեալաջի մստան».- «Դեռ սրան նայեցէք, իրա հայրական լեզուն թողած, քաղաքացու պէս (կամի ասել հայերէն) է խօսում»: Հույս է հայտնվում նաև, որ դպրոցը կօգնի հայոց լեզվի տարածմանը[43]:

20-րդ դարասկզբի մի նկարագրության մեջ հաղորդվում է, որ մադրասացիները դեռևս խոսում են «փարսերէնախառն թաթի լեզուով», իսկ օտար գյուղացիների հետ՝ «մաքուր և բաւական կոկ հայերէն են խօսում, իսկ միմեանց հետ թաթերէն»: Նշվում է նաև, որ նորեկ աշակերտները «կարգին հայերէն չեն հասկանում»: Կան նաև մի քանի ընտանիքներ, որտեղ թաթերեն չեն գործածում[44]:

Հայ-թաթերեն բարբառն ուսումնասիրող Ա. Ղալթախչյանը, 1950-ական թթ. այցելելով Մադրասա, գրում է. «…բնակիչները պատմում են, թե ինչպես տասնյակ տարիներ առաջ իրենք դժվարացել են հայերեն արտահայտվել, որ նույնիսկ եղել են մարդիկ, որոնք հայե-

42 Մշակ, 1878, № 67:

43 Մշակ, 1880, № 196:

44 Մշակ, 1905, №19:

րեն թուրքովին չեն կարողացել խոսել, և եթե անհրաժեշտություն է եղել բացատրվել հայ գյուղերի հայ բնակիչների հետ, դիմել են աղբբեջաներենին, իսկ երբ հայը ադրբեջաներեն չի իմացել, այդ դեպքում ստիպված են եղել բացատրվել ձեռքերի շարժումներով և միմիկայով: Գյուղի ծեր մարդիկ ասում են, որ իրենց պապերն առհասարակ հայերեն չէին խոսում, բայց հաճախում էին հայկական եկեղեցի և պաշտում էին Գրիգոր Լուսավորչի կրոնը[45]:

Մեր կողմից գրառված որոշ դաշտային նյութեր ցույց են տալիս, որ մինչև 1940-50-ական թթ. «փարս» լեզուն բավական տարածված է եղել գյուղում: Բանասացները, որոնք ավագ ու միջին սերնդից էին, հայտնում էին, որ իրենց ծնողները խոսում էին «փարսերեն», և իրենք լսելով են սովորել: Այսօրվա բանասացները հիշում են, որ իրենց մեծերի մեջ կային մարդիկ, որոնք ընդհանրապես հայերեն չգիտեին:

Վերը նշված տեղեկությունները որոշ ճշգրտումներ ու լրացումներ են մտցնում մադրասացիների լեզվական մշակույթի վերաբերյալ աղբյուրներում տեղ գտած որոշ նկարագրություններում: Ըստ էության 19-րդ դ. վերջին - 20-րդ դ. սկզբին Մադրասայում տիրապետող է եղել թաթերեն լեզուն:

Ինչպես ցույց են տալիս աղբյուրները, 19-րդ դ. վերջին - 20-րդ դ. սկզբին Քիլվարում, Խաչմասում, Մադրասայում թե՛ ընտանեկան կենցաղում, թե՛ ներգյուղական միջավայրում տարածված է եղել և գործածվել թաթերեն լեզուն: Հնարավոր է, որ այն հաղորդակցության լեզու էր նաև իրար միջև և թաթախոս մյուս խմբերի՝ թաթ մահմեդականների և լեռնային հրեաների հետ:

Այդ շրջատարածքում թուրքերենը ազգամիջյան հաղորդակցության լեզու էր և նույն կիրառումը ուներ նաև թաթախոս հայերի պարագայում: Այն որպես այդպիսին ծառայում էր նաև հայ բնակչության հետ հաղորդակցվելիս. այս հանգամանքը հատկապես բնորոշ է քիլվարցիներին, խաչմասցիներին, հայերեն չիմացող մադրասացիները ևս դիմում էին այդ լեզվին:

Չնայած ընդհանրություններին՝ Քիլվարում, Խաչմասում, Մադրասայում լեզվական մշակույթի դրսևորումները որոշ առանձնահատկություններ ունեին: Թեև այդ գյուղերում բացվեցին ծխական հայկական դպրոցներ, այնուամենայնիվ դրանց դերը, ազդեցությունը հայոց լեզվի տարածման գործում էական չէր, և քիլվարցիները, խաչմասցիները 19-րդ դ. վերջին - 20-րդ դ. սկզբին հայերեն գրել չգիտեին (կարող ենք ասել, որ նույնիսկ չէին հասկանում): Դա պայմանավորված էր, ըստ երևույթին, հետևյալ հանգամանքներով. նախ՝ Քիլվարը, Խաչմասը գտնվում էին հայկական միջավայրից մեկուսացված պայմաններում և շրջապատված թաթախոս, թրքախոս բնակչությամբ, երկրորդ՝ դպրոց հաճախող երեխաներն իրենց ընտանիքներում, միջավայրում լսում էին թաթերեն լեզուն, և դա ինքնին բերում էր ուսուցանվող լեզվի պասիվացմանը կամ անարդյունավետ էր դարձնում այն: Միջավայրի առանձնահատկություններով պայմանավորված ուսուցման բարդությունները ևս նպաստում էին լեզվի յուրացման դժվարություններին:

[45] Ղալթախչյան Ս., Համառոտակի Մադրասայի հայ-թաթերենի մասին., ՀՍՍՌ ԳԱ Տեղեկագիր (հաս. գիտ.), 1957, № 4, էջ 86:

Այս խնդիրը ժամանակին հայտնի էր: Օրինակ՝ եդեսիացի ուսուցիչ Արտ. Ստամբոլցյանը 20-րդ դ. սկզբին «Մշակի» էջերում հանդես գալով «Օտարախոս հայ ծխական դպրոցները» հոդվածաշարով, գրում է, որ նման խմբերում (որպես օրինակ բերվում են չերքեզահայերը, եդեսիացիները և այլն) գործող դպրոցների արդյունավետ գործունեության համար պահանջվում են այլ կազմակերպական, մանկավարժական հնարավորություններ ու պայմաններ՝ հաշվի առնելով յուրահատուկ միջավայրը[46]:

Զնայած վերոհիշյալ հանգամանքները վերաբերում են նաև Մադրասային, այնուամենայնիվ այստեղ դեր էին խաղում նաև այլ գործոններ. նախ՝ այն շրջապատված էր հայկական բնակավայրերով, երկրորդ՝ բնակչությունը կամ նրա մի հատվածը համեմատաբար շարժունակ էր. նրանց մի մասը արհեստավորներ էին, զբաղվում էին առևտրով և այլն: Այս հանգամանքը նպաստում էր ինչպես թուրքերենի տարածմանը, այնպես էլ ակտիվ հայերենին: Այս հանգամանքները որոշ չափով նպաստում էին հայոց լեզվի որոշակի գործառույթների կիրառմանը, մասնավորապես հարևան հայկական բնակչության հետ շփվելիս որպես հաղորդակցության միջոց ծառայելու: Եվ, ինչպես նշվում է աղբյուրներում, մադրասացիները այլ վայրերի հայ բնակչության հետ շփվելիս գործածում էին հայերեն, իսկ չիմացողները՝ թուրքերեն: Կարծում ենք, հայերենի որոշակի իմացություն նախ և առաջ հենց շարժունակ շերտի մոտ պետք է դիտել:

Անդրադառնալով 19-րդ դ. վերջին հիմնված Մադրասայի հայկական դպրոցին՝ Ս. Ղալթախչյանը հայտնում է նրա մեծ ազդեցության մասին[47]: Դպրոցի դերն ու ազդեցությունը, կարծում ենք, պետք է դիտարկել վերը նշված պայմանների համատեքստում ու 19-րդ դ. վերջին - 20-րդ դ. սկզբին տեղեկությունները այն մասին, որ մադրասացիները իրենց կենցաղում, միջավայրում գործածում են հիմնականում թաթերեն լեզուն, վկայում են, որ դպրոցի մեծ ազդեցության մասին կարծիքը չափազանցված է:

Թաթախոս հայերի լեզվամշակութային հետաքրքիր դրսևորումներից է «փարսերեն» գրառված Տերունական աղոթքը, որը Շամախու թեմի նկարագրությանը նվիրված իր աշխատության մեջ ներկայացնում է Մեսրոպ արքեպս. Սմբատյանցը[48]: Բացի այդ, ուշագրավ է, որ 1717-1720 թթ. Շամախիում գրիչ և թարգմանիչ Հաքիմ Ցաղուպ Բարբիջանի կողմից հայատառ պարսկերեն «Աւետարան» է գրվում, որն այժմ պահվում է Մատենադարանում[49]: Կարծում ենք, որ այն թերևս ուղղված էր և կոչված ծառայելու նաև թաթախոս հայերի հոգևոր պահանջմունքների բավարարմանը:

Աղբյուրները հետաքրքիր տեղեկություններ են պարունակում նաև Հյուսիսային Կովկասում հաստատված թաթախոս հայերի մասին:

---

[46] Ստամբոլցեան Արտ., Օտարախօս հայ ծխական դպրոցները, Մշակ, 1910, № 64-67, 171:

[47] Ղալթախչյան Ս., Համառոտակի Մադրասայի հայ-թաթերենի մասին., ՀՍՍՌ ԳԱ Տեղեկագիր (հաս. գիտ.), 1957, № 4, էջ 87:

[48] Սմբատեանց Մ., Նկարագիր Սուրբ Ստեփաննոսի վանաց Սաղիանի եւ միւս վանօրէից եւ ուխտատեղաց եւս եւ քաղաքացն եւ գիւղօրէից որք ի Շամախւոյ թեմի, Տփխիս 1896, էջ 547:

[49] Կարապետյան Ս., Բուն Աղվանքի հայկական վիմագրերը, Երևան, 1997, էջ 57: Ցուցակ ձեռագրաց, Երևան, 1970, հտ. Բ, ձեռ. № 8492:

Ազգագրագետ Ն. Վոլկովան իր Հյուսիսային Կովկասում հայերի տարածմանը և տա-րաբնակեցմանը նվիրված հոդվածում, անդրադառնալով նրանց լեզվական խնդիր-ների (երկլեզվություն և այլն), չի նկատել 18-րդ դ. վերջից Հյուսիսային Կովկասում հաս-տատված այս խմբի լեզվական մշակույթի դրսևորումները[50], մինչդեռ այս խումբը Հյուսի-սային-արևելյան Այսրկովկասից իր հետ բերեց և 19-րդ դ. վերջին - 20-րդ դ. սկզբին շարու-նակում էր կրել իր ինքնատիպ լեզվական մշակույթը:

Ս. Ջալալյանցը, 19-րդ դ. կեսերին այցելելով Սբ. Խաչ (Մաճառ), նշում է, որ 600 տուն՝ «գաղթեալք ի Դարբանդ» և «չգիտեն խօսիլ զհայերէն»: Նրա ջանքերով սկսվում է հայերե-նի ուսուցումը[51]: Տեղեկությունները վկայում են, որ Սբ. Խաչում 1872 թ. բացվում է արա-կան դպրոց , իսկ 1892 թ.՝ իգական[52]:

19-րդ դ. վերջին «Նոր-դար» գրում է, որ Սբ. Խաչում կան ընտանիքներ, որտեղ դեռևս գործածական է թաթերեն լեզուն. «...Թէպէտև մեծամասնութիւնը բարբառում է մայրենի լեզուով, բայց մի քանի ընտանիքներում դեռևս գործածական է թաթի լեզուն, որը խառ-նուրդ է պարսկերէնի և հրէական բարբառի»[53]:

Առավել հանգամանալի տեղեկություններ է պարունակում Աստրախանի թեմի առաջ-նորդի զեկուցագիրը՝ ուղղված Ամենայն Հայոց Կաթողիկոսին (1912 թ.): Նշվում է, որ Սբ. Խաչ քաղաքում «...748 տուն հայ կայ, որոնք համարեա բոլորն էլ գիտեն հայերէն, թեև ա-զատ խօսում են նաև թաթերէն և թրքերէն: Սրանք գաղթել են Ղուբայի գաւառից»[54]: Փաս-տերը, ըստ էության, ցույց են տալիս Սբ. Խաչում հաստատված թաթախոս հայերի շրջա-նում եռալեզվության դրսևորումների առկայության մասին:

Հյուսիսային Կովկասում թաթախոս հայերի խոշոր բնակավայր էր նաև Եդեսիա ավա-նը: Ս. Ջալալյանցի այցելության ժամանակ ( 19-րդ դ. կեսեր) Եդեսիան ուներ 300 տուն բնակիչ ( Ս. Ջալալյանցը հիշատակում է բնակավայրի 3 անվանումները՝ « Կօսայամ, Ղօ-րա, Նոր Եդեսիա») : Ինչպես նշում է Ս. Ջալալյանցը, «Չիք ուսումնարան աստ և չգիտեն խօսիլ հայերէն, սովորական բարբառ նոցա է պարսկերէն, զոր ուսեալ են ի Դարբանդ» և ունեն մի եկեղեցի[55]: 1866 թ. «Ժողովրդեան նուիրատուութեամբ» Եդեսիայում հայկական ծխական դպրոց բացվեց[56]: «Արարատ» ամսագիրը 19-րդ դ. վերջին գրում է, որ Եդեսիայի բնակչությունը, որ գաղթել է Ղուբայի ու Դերբենտի նահանգներից, «...կէս մասը միայն կարողանում է պարզ հայերէն խօսել, իսկ մնացեալը չգիտէ»: Նշվում է, որ հայերեն չիմա-ցողները համարյա բոլորը տարիքով մարդիկ են և կանայք, իսկ երիտասարդներից շատե-րը խոսում են պարզ հայերեն: Բացված դպրոցը, որտեղ ուսանում են 50 աշակերտ, փոքր է և չի բավարարում պահանջներին, քանի որ 500 տուն ունեցող Եդեսիան ամենաքիչը 100-

[50] Волкова Н., О расселении армян на Северном Кавказе до начала XX в., Պատմա-բանասիրական հանդես, 1966, № 3. стр. 257-270.

[51] Սարգիս արքեպս. Ջալալեանց, Ճանապարհորդութիւն ի մեծն Հայաստան, հտ. 2, Թիֆլիս, 1858, էջ 451-452:

[52] ՀՀ ՊԿՊԱ ֆ. 52, ց. 2, գ. 678, թ. 8-9:

[53] Նոր-դար, օրաթերթ, 1884, № 172:

[54] ՀՀ ՊԿՊԱ ֆ. 57, ց. 2, գ. 1905, թ. 15-16:

[55] Սարգիս արքեպս. Ջալալեանց, Ճանապարհորդութիւն ի մեծն Հայաստան, Թիֆլիս, 1858, հտ. 2, էջ 450:

[56] Նոր-դար, օրաթերթ, 1884, № 45:

150 աշակերտ կարող է տրամադրել, մինչդեռ ուսանելու ցանկություն ունեցող եղեսիացիների մեծ մասը դուրս է մնում դպրոցից: Այդ տարիներին նախաձեռնվում է նոր դպրոցի կառուցման աշխատանքները[57]:

19-րդ դ. վերջին «Նոր-Դարը» գրում է, որ եղեսիացիները «...խօսում են պարսկերէն, թաթերէն և կէս մասն էլ համարեա հայերէն»[58]:

Ըստ մեկ այլ տեղեկության՝ «...բնակիչների 1/3 մասից աւելի (գլխաւորապէս կանանց դասակարգից) հայերէն իմացողներ թէև կան, սակայն խօսողներ շատ քիչ, բացի մի 3-4 տնից, բարբառը թուրքերէն է:

Պատահմամբ տեսնում եմ երկու հայերէն իմացողներ թուրքերէն խօսելիս, հարցնում եմ՝ ինձ յայտնի է, որ դուք երկուսդ էլ հայերէն գիտէք, ի՞նչն է պատճառը, որ թուրքերէն էք խօսում: Պատասխանում են -«Մեր պապերից մնացած լեզուն ամօթ չէ՞ մոռանալ, կամ լսողը ի՞նչ կասի, թէ «տեսէք, տեսէք, հպարտացել են, կարծես մի երևելի մարդիկ են կամ ուսումնարանի մոնթ են, հայերէն են խօսում»[59]:

Այդ տարիների այլ տեղեկություններ վկայում են, որ եղեսիացիները «...խօսում են պարսկերէն լեզուով, բայց շնորհիւ ուսումնարանի այժմ նոր երիտասարդութիւնը համարեա բոլորն էլ խօսում են պարզ հայերէն»[60]: Ըստ մեկ այլ հաղորդման՝ «Եղիսացիք, առհասարակ, խօսում են փարսերէն, մինչև իսկ՝ նրանց երեք քահանաները իրենց ժողովրդի հետ նոյն լեզուով են խօսում»[61]:

Աստրախանի թեմի առաջնորդի՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսին 1912 թ. ուղղված զեկուցագրում նկարագրվում է, որ Եղեսիայի ժողովուրդը, որ գաղթել է Ղուբայից, «թաթախօս» և մասամբ «թրքախօս» է: Եղեսիայում կան օրիորդաց և արական ծխական դպրոցներ, որոնք ուշադրության կարիք ունեն[62]:

Եղեսիան այժմ էլ թաթախոս հայերի խոշոր բնակավայր է, որտեղ դեռևս ( 1980-ական թթ.) շատ ընտանիքներում խոսում են «պարսկերեն ենթաբարբառով»[63]:

18-րդ դ. վերջին թաթախոս հայերի այլ հատվածների հետ միասին Հյուսիսային Կովկասում հաստատվեցին նաև Մուշկուրի Ղարաչալու գյուղի բնակիչները: Նրանք Ղզլարի մերձակայքում Ղարաչալու անունով գյուղ հիմնեցին: Հետագայում նրանց մի մասը հաստատվեց Սբ. Խաչում: Ղզլարի մերձակայքում հիմնված Ղարաչալուում դեռևս 1885 թ. նախատեսվում էր ծխական դպրոց բացել[64]: Մի քանի տարի անց կարծիք է հայտնվում, որ եթե հնարավոր չէ կանոնավոր դպրոց բացել, գոնե միջոց գտնվեր, որ տեղական քահանան ուսուցաներ երեխաներին[65]:

---

[57] Արարատ, 1884,- թիվ ԺԲ, էջ 563-564:

[58] Նոր-դար, օրաթերթ, 1890, № 110:

[59] Նոր-դար, օրաթերթ, 1891, № 69:

[60] Մշակ, 1896, № 119:

[61] Նոր-դար, օրաթերթ, 1899, № 166:

[62] ՀՀ ՊԿՊԱ ֆ. 57, ց. 2, գ. 1905, թ. 9:

[63] Դիվան հայ վիմագրության, պրակ VIII, Ռուսաստանի դաշնություն, կազմեց՝ Գ. Գրիգորյան, Երևան, 1999, էջ 161:

[64] Մեղու Հայաստանի, 1884, № 89:

[65] Նոր-դար, օրաթերթ, 1888, № 66:

Բ. Միլլերը հայտնում է, որ ղարաջալցիներն իրենց թաթերեն լեզուն կորցրել էին և անցել թուրքերենին դեռևս իրենց հայրենիքում եղած ժամանակ[66]: Փաստերը, սակայն, ցույց են տալիս, որ Բ. Միլլերի այս տեղեկությունը հավաստի չէ: 19-րդ դ. վերջին, ինչպես արդեն ասվեց, «Մեղու Հայաստանը» գրում է, որ Ղարաջալուի (Մուշկուր - Ա. Հ.) բնակիչները (4 ընտանիքներ), քիլվարցիները, խաչմասցիները հայերեն չգիտեն, այլ՝ «թաթարերէն (Պարսից աղաւաղեալ լեզու) եւ թուրքերէն գիտեն»: Լրագիրը տեղեկացնում է, որ իրար հետ «թաթարերէն կը խօսին, իսկ մնացեալոց հետ թուրքերէն»[67]:

1912 թ. Ամենայն Հայոց Կաթողիկոսին ուղղված Աստրախանի թեմի առաջնորդի զեկուցագրում Ղարաջալուն (Ղզլարի մերձակայքում) հիշատակվում է որպես «թաթախօս հայ գիւղ»: Հաղորդվում է, որ թեև ունեցել է ծխական դպրոց, սակայն վերջին տարիներին փակված է եղել և միայն 1910 թ. է վերաբացվել: Նշվում է, որ հաշվի առնելով այս «թաթախօս գիւղի» համար դպրոցի առանձնահատուկ կարևորությունը, անհրաժեշտ է ապահովել նրա գոյությունը[68]: Թերևս չի բացառվում, որ այստեղ էլ, ինչպես Եղեսիայում, Սբ. Խաչում, թուրքերենը նույնպես տարածված լինեի, այնուամենայնիվ 19-րդ դ. վերջին - 20-րդ դ. սկզբին, ինչպես ցույց են տալիս աղբյուրները, թաթախոս հայերի այս հատվածի մոտ տարածված էր և գործածվում էր թաթերեն լեզուն:

Այսպիսով, 19-րդ դ. վերջին - 20-րդ դ. սկզբին, գտնվելով տարբեր էթնիկ, մշակութային միջավայրերում (Այսրկովկաս, Հյուսիսային Կովկաս), մասնակի տարբերություններ ունենալով հանդերձ, թաթախոս հայերը հանդես էին գալիս ինքնատիպ լեզվամշակութային նկարագրով, որն իր մեջ ներառում էր երկլեզվության, բազմալեզվության տարբեր դրսևորումներ, և չնայած դժվարություններին՝ բացված հայկական դպրոցները առաջին քայլերն էին կատարում լեզվամշակութային փոփոխություններ կրած հայ ժողովրդի այս հատվածի մոտ մայրենի լեզուն վերահաստատելու ուղղությամբ:

---

[66] Миллер Б., Таты, их расселения и говоры, Баку, 1929, стр. 15.

[67] Մեղու Հայաստանի, 1871, հոկտեմբեր 16, № 38:

[68] ՀՀ ՊԿՊԱ ֆ. 57, ց. 2, գ. 1905, թ. 7:

*ՎԱԶԳԱՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ*

# ԱՍՏՎԱԾԱՇՆՉՅԱՆ ԹԵՄԱՆԵՐԸ ԼԵՎՈՆ ՇԱՆԹԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Համաշխարհային մշակույթի զարգացման ընթացքի վրա անչափելիորեն մեծ է Աստվածաշնչի թողած ազդեցությունը:

Այսօր դժվար է պատկերացնել գրականությունն առանց այն գլուխգործոցների, որոնք ստեղծվել են Սուրբ Գրքի մոտիվներով՝ Դանթեի «Աստվածային կատակերգությունը», Տասսոյի «Ազատագրված Երուսաղեմը», Բայրոնի «Կայենը»: Աստվածաշնչյան թեմաները կարևոր տեղ են գրավում Պուշկինի, Լերմոնտովի, Տոլստոյի, Դոստոևսկու ստեղծագործություններում:

Սուրբ Գրքի կերպարները, թեմաները, թևավոր արտահայտությունները նորովի իմաստավորում են ստացել և մեր գրականության, մասնավորապես՝ Օտյանի, Շանթի, Զարենցի, Շիրազի, Սևակի, Դավթյանի երկերում:

Այս շարքում առանձնակիորեն տարբերվում է Շանթը. նրա ստեղծագործության և Սուրբ Գրքի առնչությունները չեն սահմանափակվում այս կամ այն կերպարի, պատմության կամ աստվածաշնչյան որևէ արտահայտության իմաստավորմամբ: Շանթի՝ ներքին հակասություններով լեցուն իրականության հանդեպ ունեցած վերաբերմունքը ոչ միայն արվեստագետի, գեղագետի ընկալումների արդյունք է, այլև համընդհանուր երևույթների ուսումնասիրությունից ծնված եզրահանգման արտահայտություն:

Ի տարբերություն մեր արվեստագետներից շատերի՝ Շանթն աստվածաշնչյան իմաստությունների մեջ խորամուխ էր եղել դեռևս պատանեկության տարիներին՝ Էջմիածնի Գևորգյան Ճեմարանում: Այս հանգամանքն իր անխուսափելի ազդեցությունն է գործել գրողի հոգեբանության և գեղարվեստական մտածողության ձևավորման ընթացքի վրա: Հետագայում՝ գերմանական համալսարաններում համակողմանի կրթություն ստանալուց հետո էլ նրա ներաշխարհում ու գեղարվեստական մտածողության ծիրում մշտապես վառ են մնացել ճեմարանական տպավորությունները: Գրողն իր հերոսներին կերպավորելիս հաճախ է դիմել «քրիստոնեական հավատի ու գաղափարախոսության, ինչպես և աստվածաշնչյան թեմաների, արտահայտությունների, ասույթների, ոճերի, որոնք հաճախ դարձել են միջավայրի ու մթնոլորտի պատկերման, հերոսների գործողությունների, բնավորության, վարքագծի մտածողության ու հոգեբանության բացահայտման միջոց»[1]:

Այնուամենայնիվ, հարկ է նկատել, որ գրողի աշխարհայացքի վերջնական ձևավորման վրա վճռական ազդեցություն ունեցավ Արևմուտքը: Եվրոպայում, մարդկային ծագումնաբանության ոլորտում, կատարվեցին նոր ուսումնասիրություններ՝ մարդիկ ոգևորված էին «էվոլյուցիոն զարգացման» համընդհանուր առաջընթացի ոգով: Շանթը հանա-

[1] Տե՛ս Ս. Մուրադյան, Աստվածաշնչյան վերարծարծումներ և հոգևոր կյանքի պատկերումներ Շանթի ստեղծագործության մեջ (Քրիստոնեությունը և հայ գրականությունը, Ե., 2001, էջ 108):

խում էր Հեկկելի դասախոսություններին, որը հայտնի էր իր՝ դարվինիզմի հետագա զարգացմանն ուղղված տեսական դրույթների պաշտպանությամբ: Եվրոպան դեռևս 19-րդ դարի կեսերին բնափիլիսոփայական հայացքների ազդեցությամբ որդեգրել էր Աստվածաշնչի մեկնաբանության նոր ձև: Ֆրիդրիխ Շլեյերմախերի շնորհիվ Աստվածաշնչի ուսումնասիրությունը, որպես առանձին առարկա, հետազոտվում էր գերմանական համալսարաններում: Ավգուստ Վիլհեմ Մեյերը հաստատեց, որ մեկնությունը պետք է ազատ լինի որևէ դավանանքից, Դեվիդ Ֆրեդերիկ Շտրաուսը հրաշքն ու հարությունը համարեց առասպել. «Ի վերջո քրիստոնեությունն սկսվեց դիտարկվել իբրև լոկ պատմական կրոն և ոչ թե հավիտենականություն առաջնորդող ճանապարհ»[2]:

Ծանթի ստացած համակողմանի կրթությունը, որ հիմնված էր եվրոպական գեղագիտական փորձի ու բնափիլիսոփայական ձեռքբերումների վրա, իրենց արտահայտությունը գտան ինչպես գեղարվեստական երկերի ու տեսական աշխատությունների, այնպես էլ մանկավարժական գործունեության մեջ: Նա սաներին ուղղորդում էր դեպի պատմությունը, աշխարհագրությունը, բնախոսությունը, բնապատմությունը և հետևողականորեն զարգացնում էր այն միտքը, որ օրգանական աշխարհը տևական էվոլյուցիայի արդյունք է՝ պարզ ձևերից հաջորդել են բարդերը: Ծանթը բնագիտական տեսանկյունով է վերլուծում և հասարակության կառուցվածքն ու զարգացումը: Մուշեղ Իշխանի վկայությամբ, Ծանթը նույնիսկ «հոգեկան երևույթները բացատրելու համար յուրացուցած էր հարցերուն կենսաբանական մեկնությունը»[3]:

Պատմա-քննադատական մեթոդը, որ խզեց իր կապը Եկեղեցու ավանդական աստվածաշնչյան մեկնաբանության հետ, նախընտրելի դարձավ գրողի համար: Ծանթը ևս քրիստոնեությանը մոտենում է որպես պատմական երևույթի: Գրողը քրիստոնեական կրոնի առանձնահատկություններն ու գերազանցությունն ամփոփում է երկու հիմնական սկզբունքների մեջ, այն բնույթով հանրային է («դավանանքով խտիր չկա ո՛չ ազգի, ո՛չ դիրքի, ո՛չ վիճակի և ո՛չ սեռի. բոլոր մարդիկ եղբայր են իրար») և մյուսը՝ սրա հետ կապված, անհատական («զուրկ ու խոնարհ դիրքով մարդոց, որոնք միայն արհամարհանք էին տեսած, թևեր կուտա»):

Այս յուրահատկությունների հետ միասին՝ Ծանթը կարևորում է քրիստոնեության պատմական բնույթը: Այն կարող էր ի հայտ գալ միայն քաղաքակրթության, մարդու զարգացման համեմատաբար բարձր աստիճանում: «Քրիստոնեության բարձր արժեքը հոն է, որ մարդկութենեն ավելի բարձր հոգեբանական զարգացում կպահանջե և շատ ավելի բարձր տեսակի ընկերական կյանք ու կազմակերպություն: Նախապատմական մարդու հին ու արմատացած ու նեղ եսականության դեմ այլասիրությունը դնել կքարոզե»[4]:

Սա կարևոր դիտարկում է, որ առնչվում է գրողի արարած գեղարվեստական աշխարհի, ինչպես նաև տեսական աշխատությունների ներքին ուղղվածությանը:

---

[2] «Էջմիածին», 2000, Ժ 61:

[3] Մուշեղ Իշխան, Երկեր, Երևան, 1990, էջ 380:

[4] Տե՛ս Լևոն Ծանթ, Գրիգոր Նարեկացի, «Ակոս», Ը տարի, Բեյրութ, 1952, թիվ 2-3:

Լևոն Շանթի առաջադրած խնդիրները, որոնք բնույթով համընդհանուր են, իրենց լուծումը կարող են ստանալ միայն ապագայում: Այս ելակետային սկզբունքով է պայմանավորված գեղագետ փիլիսոփայի արարած գեղարվեստական աշխարհի ինքնատիպությունը՝ երևույթները տեսնել զարգացման ընթացքի մեջ:

Ինչպես որ մշտատև փոփոխություն է տեղի ունենում բնության մեջ, նույնպիսի տեղաշարժեր են կատարվում և մարդկային հոգու անսահմանության ծիրում՝ իրականացած իդեալները փոխարինվում են նորերով: Ամբողջության մեջ Շանթի դրամաները մարդկային՝ արդեն անցյալ դարձած գաղափարների և նոր իդեալների միջև եղած հակասությունների պայքարի ցուցադրում է:

Մարդկային հոգու պատմությունը Շանթի համար դառնում է համընդհանուր՝ տևական ժամանակի սիմվոլ, հետևապես և գրողի դրամաները մեծ չափով ներքին ազդակ են ստանում մարդկության փորձի պատմությունից: Ուստի և պատահական չեն անցյալին դիմելու թատերագրի փորձերը:

Պատմությունն իր ամենատարբեր դարաշրջաններով, պատմական դեմքերով գրողի համար դառնում են սիմվոլներ, որոնք վերջավորի և անվերջի, եզակիի և ընդհանուրի, երկրայինի և երկնայինի՝ միմյանցից տարբեր, հակադրամիասնությամբ պայմանավորված ոլորտների ամբողջություն են: Բայց ամենից առաջ մարդկության պատմությունը Շանթի համար մարդկային ոգու, նրա կատարելագործման պատմություն է, և այստեղ առավել քան ակնհայտ են նրա ստեղծագործության և Աստվածաշնչի միջև եղած առնչությունները: Առաջին հայացքից այդ ընդհանրությունները կարող են միայն վերաբերվել այն առատ քաղաքերումներին, որոնք առկա են «Հին աստվածներում», բայց դրանք միայն միջոցներ են ասելիքն ամբողջացնելու, միջավայր և որոշակի հոգեբանական մթնոլորտ ստեղծելու համար:

Շանթը պատկանում է այն արվեստագետների թվին, որոնք ամբողջության մեջ հակված են սկզբնաղբյուրի փիլիսոփայությունը խորացնելուն, նրա ներքնիմաստը բացահայտելուն, քան ասելիքը սեփական հղացումների հունով ծավալելուն: Բայց սրա հետ և սրա կողքին Շանթն առաջադրում է երևույթների ընկալման ի՛ր կերպը, որն, անշուշտ, տարբերվում է Աստվածաշնչի ավանդական ընկալումներից:

Զուտ ժամանակային առումով Հին և Նոր Կտակարաններում հանդես եկող կերպարները, դեպքերն ու իրադարձությունները հաջորդում են միմյանց, ավելին՝ Շանթի համոզմամբ և ի հակադրություն Աստվածաշնչի ավանդական մեկնության («Աստված մեկ է»), տարբեր է Հին և Նոր Կտակարաններում Աստծո՝ որպես գերբնական ուժի բնույթը: «...Հրեական միապետական ու խստապարանոց ու վրեժխնդիր Եհովան, որ Հին Կտակարանին հետ մտավ քրիստոնեության գիրկը», իրենով պայմանավորում է և «Հին աստվածներում» ձևավորված «մարդկության մանկության» ժամանակին հաջորդած ընթացքը, երբ քրիստոնեությունը մաքառում էր հեթանոսության դեմ, և աստվածային պատվիրանները առավել խիստ էին:

Կույրը, որ մշտապես հետևում է Աբեղային և գիտե, թե ինչ է կատարվում նրա հոգում, հիշեցնում է Տիրոջ պատվիրանները և թե «Մի՛ եղիցին քեզ այլ աստուածք բաց յինէն»: Ըստ Շանթի, Հին Կտակարանում Աստված դաժան է ու վրեժխնդիր, պահպանում է

նրանց, ովքեր հավատացել են իրեն, և կպատժի անհավատների չորրորդ սերնդին ան-
գամ. «Զի ես եմ տէր Աստուած քո, Աստուած նախանձոտ, որ հատուցանեմ զմեղս յերիս և ի չորիս»:

Փոթորիկի հատվածում թատերագիրն այնպես է աստվածաշնչյան սաղմոսը ներհյուսել գործողության ընթացքին, որ առաջին հայացքից դժվար է ենթադրել, որ այն մեջբերում է: Իրադրության արտաքին կողմը մշտապես լծորդվում է խոսքի ենթիմաստին: Աբեղան ծովի ալիքներից փրկել է Սեդային: Սա երևույթի արտաքին կողմն է, իսկ իրականում նա հայտնվել է մեղքի ծովի մեջ, անխուսափելի կործանումից փրկվելու նյքը ողջման սաղմոսով Աստծուն դիմելն է. «Կեցո՛ զիս, Աստուա՛ծ, զի հասին ջուրք յանձն իմ, ընկլայ ես ի խորս անդնդոց, ուր ոչ գոյ ինձ հանգիստ: Եկի ես ի խորս ծովու և շրջանք ընկղմեցին զիս» (Սաղմ. ԿԸ 1-3):

Իշխանի և դստեր՝ Սեդայի այցելությունը խաթարում է ողջ միաբանության անդորրը. վանականները սարսափում են չար ուժի իշխանությունից, նրանք համոզված են, որ իրենք անապատ են եկել փորձության ենթարկվելու, ինչպես մի ժամանակ՝ Հիսուս Քրիստոս: Առավել ծանր է Աբեղայի ներաշխարհում ծն[...]ած փոթորիկը: Վանահոր մահից հետո նա պետք է գլխավորեր միաբանությունը: Ա[...] հանգամանքը պարտականության լրացուցիչ բեռ է դնում նրա ուսերին: Նա երերացել է [...]առա[...]ին իսկ փորձությունից հետո, հետևապես շրջապատից ավելի լավ է զգում սեփական բա[...]ական ընկրկման խորությունը. «Որքա՜ն բարձր ես դուն, հա՛յր, որքա՜ն, որքա՜ն բարձր»: Հանկարծ մի պահի հոգևոր բարձունքից գահավիժող Աբեղան թույլ է տվել, որ բնությունը խուժի ինքնամաքառմամբ կրթված իր հոգին և ամեն ինչ ավերակ դարձնի: Վանահայրը կարող է Հովհաննու Հայտնության տողերի հետևողությամբ ասել՝ «Ամուր պահիր պսակդ» (Հմմտ. Հայտ. Գ 11): Պսակը իշխանություն է...

Աբեղան կորցրել է իշխանությունը սեփական զգացմունքների վրա, նա անզոր է: Վանահայրը գիտե, թե ինչպիսին էր մարդ արարածը ճանապարհի սկզբում, հարկ է պահել այն, ինչ ձեռք է բերվել մաքառմամբ: Վանահայրը չի կարող տանել հոգեպես ընկճված ու թույլ Աբեղային, նա իր հետնորդի մեջ փափագում է տեսնել երեկվա հոգեպես ամուր, հպարտ հոգևորականին:

Թատերագիրը Աբեղայի կերպարը դարձնում է մարդկության պատմության, նրա աբարած արժեքները վերագնահատելու միջոց: Մարդկությունը հասել է մի սահմանագծի, որից այն կողմ ստեղծված արժեքներն այսօր որևէ իմաստ, նշանակություն չունեն: Արժեզրկողի դերում հանդես է գալիս Ունայնություն-Ժամանակը:

Ժողովողի բոլոր 12 ենթագլուխներում խոսվում են մարդկային ձգտումների, ցանկությունների, բարու և չարի, երջանկության, ի վերջո՝ կյանքի ունայնության մասին: Ամեն ինչ անկայուն է, հարափոփոխ, մարդու մղվող ջանքերն անօգուտ են, հետևապես արդյո՞ք կյանքը որևէ իմաստ ունի իր մեջ. Ժողովողի Իմաստունը կասկածի է ենթարկում ամեն ինչ, այդ թվում և՝ հանդերձյալ կյանքը. «Այն ամենը, ինչ քո ձեռքից կգա անելու, արա՛ քո կարողության չափով, որովհետև գերեզմանի մեջ, ուր պիտի գնաս, ո՛չ գործ կա, ո՛չ խորհուրդ, ո՛չ գիտություն և ո՛չ էլ իմաստություն» (Ժողովող Թ 10):

Շանթի Ունայնություն-Ճգնավորը ելք չի առաջադրում, ելք չի առաջադրում և Ժողովողի Իմաստունը, նրա վերաբերմունքն անցյալի հանդեպ միայն ենթադրելի է դարձնում այն ճանապարհը, որով պետք է քայլի մարդկությունը. այն, ինչին հասել է մարդը, յուրօրինակ նախապատրաստություն է մեծ, վեհ, աստվածային ճշմարտությունը ճանաչելուց, իր նպատակին մոտենալուց առաջ: Մարդկությունը հասել է մի սահմանագծի, որից այն կողմ սկսվում է մի նոր ժամանակ, անցյալ են դարձել հին աստվածները, նրանք ելք չեն կարող առաջադրել մարդկությանը:

Դրամատուրգը համոզված է, որ անհատն իր կամքի շնորհիվ հասնում է այնկողմնային ազատությանը, որն ինքնակատարելագործման նախապայմանն է: Հիշենք Առաքյալի պատվիրանը՝ «Մի՛ կորցրեք ձեր ազատությունը», «Եվ վերստին ծառայության լծի տակ մի՛ մտեք» (Գաղատ. Ե 1):

Շանթի դրամատուրգիան իր ներքին ազդակներով կապված էր ոչ միայն ժամանակի գրականությանը, մշակույթին, այլև այն մեծ չափով ներքին ազդակ էր ստանում անցյալից, մարդկության փորձի պատմությունից, և այս իմաստով պատահական չէր պատմությանը դիմելու թատերագրի մղումները: Իր ստեղծագործությունների նյութը վերցնելով անցյալից՝ գրողն առաջադրում էր ոչ միայն արդիական խնդիրներ, այլև իմաստավորում էր մարդկության ապրած պատմամշակութային կենսափորձը. հետևապես և արդիական երևույթների իմաստավորումը համազուգակցում էր անցյալի իմաստավորմանը:

Ժամանակի տևական ծիրում մարդկությունը փորձեց բացահայտել իր հոգու տիեզերքից դուրս գտնվող աշխարհը: Նրան հետաքրքրում էր այն, ինչը գոյություն ուներ մարդկային «ես»-ի շրջագծից դուրս, իսկ երբ խոսքը մարդու մասին էր, ապա կարևորվում էին նրա արտաքին բարեմասնությունները, ուժը:

Անտիկ աշխարհը լավագույնս մարմնավորված է հունական և հռոմեական մշակույթի մեջ:

Կյանքը, կենսախնդությունը, մարմինը փառաբանող աստվածներն իրենց վարքագծով և դիցապատմական փիլիսոփայությամբ հունական մշակույթի մեջ մարմնի պաշտամունքը դարձրին գերակա խնդիր:

Հռոմեացու համար առաջնայինն ուժն էր, նրանց պետությունն ուժի խորհրդանիշ էր, Հռոմը տիեզերական մայրաքաղաք դարձնելու գաղափարն առաջնային էր հռոմեացու համար: Հունա-հռոմեական աշխարհը տապալվեց: Անցյալ դարձան գեղեցկությունն ու ուժը փառաբանող աստվածները: Նրանք այլևս չէին կարող ելք առաջադրել մարդկությանը: Արդեն զարգացման որոշակի ճանապարհ անցած մարդն սկսեց որոնել հոգու կատարելություն և բարոյական ուժ, ինչն առաջադրում էր քրիստոնեությունը. «Եղեք կատարյալ, ինչպես Ձեր երկնավոր Հայրը կատարյալ է»: Սա նոր գաղափար էր, որին հասնելու համար երկար ճանապարհ պետք էր անցնել: Եթե «Հին աստվածներում» հակադրվում էին մարմինը և հոգին, ապա «Կայսրը» դրամայում Շանթն առաջադրում էր ուժի թեման. նրա հերոսները բյուզանդական կայսրության փառքը բազմապատկել են բազում պատերազմներով, արյունահեղությամբ:

Օհան Գուրգենը դառնում է աշխարհի ամենահզոր պետության առաջնորդ: Նա կյանքում հասնում է այն ամենին, ինչի մասին մահկանացուները չեն կարող երազել անգամ,

սակայն ... Շանթի իդեալ հերոսները (Հաննա. Գուրգեն) ձգտում են հոգու կայսրության գահերի. ինքնակատարելագործման ճանապարհը շարունակվում է: Պատահական չէ. որ Նիկեֆորի Սուրբը հիշեցնում է կայսրին՝ «Նիկեֆոր կա՛յսր. եթե դուն ձեռք բարձրացնես ընկերոջ վրա. որ հասցուց քեզի այսքան բարձրերը. եթե դուն ձեռք բարձրացնես ընկերոջդ վրա. որ կապեց ոտքիդ այդ կարմիր կոշիկները. գիտցի՛ր. չէ՛ս մնար ինքդ այդ բարձրության....»[5]:

Ոտով վեր բարձրանալու գաղափարը ելք չի առաջադրում մարդկությանը. և դրա լավագույն օրինակը բյուզանդական տերության կործանումն էր: Ակնհայտ է. որ աստվածավախ Սուրբը «ովքեր սուր են վերցնում, սրով կընկնեն» (Մատթ. ԻԶ 52) եզրահանգումն իր գեղարվեստական լուծումն է գտել «Կայսրում»:

«Շղթայվածը» Շանթի սիմվոլիստական դրամատուրգիայի վերջին երկն է. որն իրականում շարունակում է նախորդ երկու դրամաներում առաջադրված գաղափարները: Այս երկի գեղարվեստական արժեքն առանձնապես չի կարևորվել[6]: Թատերագիրը դրամային միահյուսել է Արտավազդի առասպելը: Մարդն առաջընթացի մեկ օղակն է և ոչ վերջինը. «Մարդը մի բան է. որ պետք է հաղթահարվի»[7]: Այս միտումն առկա է և «Շղթայված»-ում Նաղաշի խորհրդածություններում. «Ո՛չ, դուք դեռ մարդ չեք, դուք դեռ այն մարդը չեք. որ Աստված ստեղծել կուզե, դուք դեռ մարդու մեկ նախնական նմուշն եք միայն: Աստծու առաջին փորձերը անասունեն մարդը ստեղծելու» /564/:

Կատարյալ մարդուն հասնելու մղումները մշտական են, դրանք հիմքում առնչվում են ազատության խնդրին: Այստեղ է, որ թատերագիրը հայտնաբերում է Արտավազդին՝ իբրև ազատության գաղափարի: Այսուհանդերձ, վերջնական առումով հարցադրումները ոչ թե սոցիալական, այլ էթիկական բնույթ ունեն: Նաղաշը գալիս է այն եզրահանգման, որ մարդը պիտի հաղթահարի իր մեջ եղած բռնակալին: Շղթայվածը մարդն է՝ սեփական արատներով ծանրաբեռ: Նույնը պատգամում է և Աստվածաշունչը:

Մարդու կատարելագործման, ինքնակերտման գաղափարը, որ դրված է Շանթի դրամաների հիմքում, մեծ չափով ազդակ էր ստանում Սուրբ Գրքից՝ մարդկության փորձի պատմությունից: Շանթը հիմնականում միտված է սկզբնաղբյուրի հոգևոր ենթիմաստի բացահայտմանն ու խորացմանը: Աստվածաշունչը գրողի ստեղծագործական աշխարհի կարևորագույն բաղադրիչներից է:

---

[5] Լ. Շանթ. Երկեր. Ե., 1989, էջ 429, այսուհետև էջերը կտրվեն մեջբերման վերջում:

[6] Ս. Հակոբյան, Գեղարվեստական մոլորություն, Արեգ, 1922, հունիս, էջ 358-367, Հակոբ Օշական, Համապատկեր արևմտահայ գրականության, հ. 8, Անթիլիաս, 1980, էջ 328:

[7] Ф. Ницше, Сочинения 2-х томах, Т. 2, М., 1990, с. 8:

*ԳՈՒՐԳԵՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ*
*Բանասիրական գիտությունների թեկնածու*

# ԳԵՎՈՐԳՅԱՆ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆԻ ՍԱՆԵՐԻ ՇԱՐԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԱՎԱՐՏԱՃԱՌԵՐԸ

(19-րդ դարի վերջերից մինչև 20-րդ դարի սկզբները)

Գևորգյան Հոգևոր Ճեմարանում հատուկ ուշադրություն է դարձվել սաների ընթացիկ շարադրություններին և ավարտաճառերին, որոնցով ուսուցիչները նպատակամղել են նրանց ինքնուրույն աշխատանքի՝ միաժամանակ որոշելով ձեռք բերած գիտելիքների և առհասարակ պատրաստվածության աստիճանը: Պատահական չէ, որ ճեմարանի ուսուցչական ժողովները և մանկավարժական խորհուրդը հաճախակի են անդրադարձել սաների այս գործերին:

Դեռևս 1892 թ. նոյեմբերի 5-ին ուսուցչական ժողովի քննարկած առաջին հարցը վերաբերել է ավարտող ուսանողների քննական աշխատանքներին՝ ավարտաճառերին: Այդ ժողովի արձանագրությունում գրված է. «Սովորութիւն գոյ ի Ճեմարանիս տալոց աշակերտացն ի գլուխ ճեմարանական տարւոյն ի սկզբան անդ ուսմանց նիւթ շարադրութեան՝ առնել ի մանկավարժութենէ, ի հայոց մատենագրութենէ, յընդհանուր մատենագրութենէ, յընդհանուր պատմութենէ և ի կրօնական ուսմանց. յայսմ սովորութենէ խոտորեալ գտեալ է միայն ամս անցեալ»[1]:

Ժողովի որոշման մեջ նշված է, որ շարադրություններ հանձնարարելն անհրաժեշտություն է, թեմաները պետք է վերցնել հայոց, ռուսաց և ընդհանուր պատմություններից, ինչպես նաև բնագիտությունից: Մանկավարժական խորհուրդը, իբրև սկզբունք, ընդունում է (11 հոկտեմբերի 1909 թ.), որ շարադրություն է գրվելու Գ լսարանում ավանդված առարկաներից մեկից, ըստ որում՝ թեման ընտրվում է ուսուցչի և ուսանողի փոխադարձ համաձայնությամբ[2]:

Մինչ այդ էլ եղել է համապատասխան կարգ. յուրաքանչյուր ուսուցիչ պարտավոր էր նախօրոք ուսուցչական ժողովին ներկայացնել իր մասնագիտությունից շարադրության թեմաներ՝ ամեն մի աշակերտի համար առանձին-առանձին: Ուսուցչական ժողովն ընտրել է այդ թեմաներից մի քանիսը և հաստատել[3]: Այնուհետև ուսանողներն իրենց հայեցողությամբ ընտրել են հաստատված թեմաներից որևէ մեկը: Սաներից յուրաքանչյուրը պետք է մինչև ամսվա վերջը, քննություններից առաջ, ուսուցչական ժողովի քննարկմանը ներկայացներ իր գրավոր աշխատանքը: 1909 թ. դեկտեմբերի 23-ին որոշվել է, որ Գ լսարանի ավարտական շարադրությունը կարդալու են երկու ուսուցիչ՝ առարկան դասավան-

[1] Տե՛ս ՀՍՍՀ պետական կենտրոնական պատմական արխիվ. Գևորգյան Ճեմարանի ֆոնդ, թ. 312:

[2] Նույն տեղը, թղթ. 2, վավ. 245:

[3] Նույն տեղը, վավ. 45:

դողը և ընթերական[4]: Իսկ 1910 թ. դեկտեմբերի 11-ի նիստում որոշում է ընդունվում Ճեմարանի ուսանողների հաջողված շարադրությունները հրատարակելու մասին[5]:

Երբ հանգամանալից ծանոթանում ենք սաների ընթացիկ աշխատանքների և ավարտաճառերի բովանդակությանը և ընդգրկած հարցերին, պարզվում է, որ դրանք ունեցել են կրթա-դաստիարակչական կարևոր նշանակություն՝ բնութագրելով ու մի տեսակ հանրագումարի բերելով Ճեմարանում կատարված աշխատանքը: Ահա թե ինչու շարադրությունները միշտ գտնվել են ուսուցիչների ուշադրության կենտրոնում, որոնք բարեխղճորեն ստուգել են, գնահատել, լուսանցքներում արել համապատասխան դիտողություններ:

Ուսանողական այդ գրավոր աշխատանքները բազմազան են իրենց թեմաներով և շոշափած հարցերով, որոնք վկայում են Ճեմարանում տարիներ շարունակ ավանդված բազմակողմանի գիտելիքների մասին: Հատկապես ուշադրություն է դարձված հայագիտական հարցերին, որոնք միաժամանակ հայ գրականության պատմության և առհասարակ հայագիտության համար ունեին էական նշանակություն. դրանք լուծում պահանջող խնդիրներ են, որոնց ուղղությամբ առ այսօր էլ մասնագետները տանում են քրտնաջան աշխատանք:

Շարադրություններ են գրվել հայոց հին և միջին դարերի ականավոր մատենագիրների մասին, վերլուծվել ու գնահատվել են նրանց գրական գլուխգործոցները, իսկ երբեմն էլ՝ անդրադարձել տվյալ երկի էական կողմերից մեկին: Ահավասիկ 11-րդ դարի նշանավոր մատենագիր Արիստակես Լաստիվերտցու Պատմության վերաբերյալ գրվել են ընթացիկ և ավարտական բազմաթիվ աշխատանքներ[6]: Դրանց մի մասը նկարագրական բնույթի է, վերապատմված է այս գործի բովանդակությունը, իսկ մի քանիսում կան սուր և դիպուկ դիտողություններ, համարձակ և հետաքրքիր մտքեր, որպիսիք անգամ չկան համապատասխան տպագիր աշխատություններում: Այդպիսին է, օրինակ, Սմբատ Տեր-Ավետիսյանցի աշխատանքը՝ գրված 1896 թ.[7]: Այն տպագրել է Ն. Քարամյանը. նրա ղեկավարությամբ Լաստիվերտցու երկի մասին գրվել են նս մի շարք շարադրություններ:

Ս. Տեր-Ավետիսյանցը կազմել է համապատասխան ծրագիր, կարդացել անհրաժեշտ գրականություն, ձեռքի տակ ունեցել Լաստիվերտցու Պատմության 1864 թ. ֆրանսերեն թարգմանությունը, տպագիր և ձեռագիր բնագրերը, որոնց միջև համեմատություններ է անցկացրել: Խոսել է Պատմության լեզվի և ոճի առանձին հարցերի մասին, անդրադարձել մատենագրի կրած ազդեցության հարցին: Չնայած առանձին ոչ ճիշտ մեկնաբանություններին ու մտքերին, աշխատանքը թողնում է դրական տպավորություն:

Հայոց հին և միջին դարերի գրականության վերաբերյալ եղած շարադրությունները հաճախ մեծածավալ են: Օրինակ՝ 1916 թ. Անդրանիկ Օլչունճյանը 251 էջերում շարադրել է «Հովհ. Երզնկացու (1240-1325) կենսագրությունն ու գրական-քաղաքական գործունեությունը»[8]:

---

[4] Նույն տեղը, թղթ. 28, վավ. 48:

[5] Նույն տեղը, վավ. 74:

[6] Նույն տեղը, թղթ. 40, վավ. 11, 36, 41, թղթ. 41, վավ. 38, թղթ. 42, վավ. 25, թղթ. 43, վավ. 12, 34, 35, թղթ. 44, վավ. 27, թղթ. 45, վավ. 18, 32, 51, թղթ. 46, վավ. 40, 87:

[7] Նույն տեղը, թղթ. 43, վավ. 12:

[8] Թղթ. 41, վավ. 29:

Որոշ գործեր նվիրված են հայ նոր գրականության այնպիսի դեմքերի, ինչպիսիք են՝ Խ. Աբովյանը, Ալ. Շիրվանզադեն, Պ. Պռոշյանը և ուրիշներ: Այսպես, 1907 թ. Գևորգ Գևորգյանի ավարտական շարադրության թեման է եղել՝ «Ազգագրությունը Պերճ Պռոշյանի գլխավոր երկերում»[9]: Շարադրության վերջում գրված է՝ «Գովելի», Մ. Աբեղյան, Հ. Հովհաննիսյան:

Տարբեր աշխատանքներ են գրվել նաև համաշխարհային և ռուս գրականության թեմաներով, փորձեր են արվել վեր հանել հայ և համաշխարհային գրականության միջև եղած առնչությունները: Օրինակ՝ 1892 թ. դեկտեմբերի 15-ին ուսուցիչ Լ. Մանվելյանը մանկավարժական խորհրդի հաստատմանն է ներկայացրել ընդհանուր գրականությունից «Շեքսպիրի նախորդները», «Անգլիական հասարակությունը և գրականությունը Կարլոս Բ-ի ժամանակ» թեմաները: Տարբեր ժամանակներում շարադրություններ են գրվել Գոգոլի, Տուրգենևի, Նեկրասովի երկերի վերաբերյալ, զուգահեռ տարվել ռուսական և հայկական բանաստեղծությունների ունեցած ընդհանրությունների միջև[10]:

1910 թ. Ե. Ամատունին ավարտական շարադրություն է գրել «19-րդ դարի գրական ուղղությունները և նրանց արձագանքները ռուսահայոց մեջ» թեմայով, որն այսօրվա ըմբռնմամբ «գերազանց» («գովելի») գնահատականի է արժանացել Մ. Աբեղյանի կողմից: Ի դեպ, մեծավաստակ հայագետը բազմաթիվ շարադրությունների տակ դրել է իր ստորագրությունը՝ ըստ այնմ ստուգելով, շտկելով և գնահատելով դրանք:

Այնուամենայնիվ, առաջին հերթին ուշադրության կիզակետում եղել են հայոց մատենագրության և մայրենի գրականության առանցքային խնդիրները: Զարմանալիորեն ամբողջովին լեզվական բնույթի շարադրություններ չեն գրվել, մինչդեռ Ճեմարանում կարևոր է եղել հին հայերենի ուսումնասիրությունը. լեզվական առանձին դիտողություններ արվել են մատենագրական երկերը վերլուծելիս ու գնահատելիս:

Ուսումնական շարադրություններում արծարծվել են հայոց անցյալի պատմության էական կողմերը, որոնց հաճախ տրվել է ինքնուրույն և ուշագրավ գնահատություն: Ճիշտ է, շարադրություններ են գրվել նաև ընդհանուր պատմությունից, սակայն դրանց թիվը շատ չէ: Առանձնակի ուշադրություն է դարձված Հայաստանի միջնադարյան շրջանի պատմությանը, հատկապես Բագրատունյաց հարստության ժամանակաշրջանին («Բագրատունյաց անկումը», «Հայաստանի վիճակը Բագրատունյաց անկումից հետո», «Հայոց Եկեղեցին Բագրատունյաց թագավորության ժամանակ», «Սելջուկյան թուրքերը Բագրատունյաց թագավորության ժամանակ (1020-1224)»[11]:

Միջին դարերում հայ ժողովրդի տարբեր հատվածների գաղթը և որոշ գաղթավայրերի պատմությունը ևս գրավել է Ճեմարանի ուսանողների ուշադրությունը: Այսպես, օրինակ, 1904 թ. Միհրան Թերլեմեզյանը գրել է «Իտալիայի հայ գաղթականությունը և նրանց կյանքն ու գործունեությունը» ավարտաճառը, «Գովելի»,- ահա Մ. Աբեղյանի գնահատականը: Մի այլ շարադրություն գրված է Լեհահայ գաղութի մասին[12]: Ափսոս, սկզբից պակաս է, հայտնի չէ նաև հեղինակը: Տետրի շապիկի վրա մեկ ուրիշի կողմից գրված է «1894

[9] Թղթ. 41, վավ. 19:

[10] Թղթ. 40, վավ. 17:

[11] Վավ. 14, թղթ. 43: Հեղինակը Վահան Տեր-Խաչատրյանցն է, գրված է 1905 թ.: Համարձակ և խելացի շարադրանք է:

[12] Թղթ. 47, վավ. 16:

թ... սեպտեմբերի 30», որը ճիշտ չէ. քանի որ շարադրության համար օգտագործված աղբյուրներում կան դրանից մոտավորապես երկու տասնամյակ ուշ լույս տեսած գրքերի անվանումներ: Այս ուշագրավ և հետաքրքիր շարադրությունում խոսվում է Լեհահայ գաղութի կազմավորման մասին: Զարգացված է այն միտքը, որ սույն գաղութը կազմավորվել է տարբեր ժամանակներում, իսկ հայերը այստեղ են եկել ոչ թե ուղղակիորեն բուն Հայաստանից, այլ զանազան երկրներում ապաստանելուց հետո:

Հոգևոր Ճեմարանում պատշաճ ձևով ուսումնասիրվել են կրոնագիտություն և աստվածաբանություն, սակայն այս թեմաներով գրված գործերը ևս ավելի շատ վերաբերում են Հայոց Եկեղեցուն ու վարդապետությանը, հայ ժողովրդի անցյալի պատմությանն ու գրականությանը, ինչպես. օրինակ՝ «Շնորհալին, նորա դարը և նորա ժամանակ հուզած կրոնական խնդիրները» (թղթ. 26, վավ. 246), «Ներսես Լամբրոնացու մեկնաբանական գրվածքները» (թղթ. 40, վավ. 26), «Հայոց վարդապետները» (թղթ. 42, վավ. 12), «Միության խնդիրը ԺԲ դարում Հայոց և Հունաց Եկեղեցիների միջև» (թղթ. 40, վավ. 25) և այլն:

Աստվածաբանությունից գրված շարադրություններն ունեն նաև ընդհանուր բարոյագիտական արժեք: Աստվածաբանության ուսուցիչ Արշակ Տեր-Միքելյանը 1892 թ. դեկտեմբերի 15-ին Ճեմարանի մանկավարժական խորհրդին շարադրությունների համար ահա ինչպիսի թեմաներ է ներկայացրել հաստատելու.

ա) Բարու և չարի էությունն ըստ փիլիսոփայական տեսության և ըստ Հայաստանյայց Եկեղեցու,

բ) Մարդու բարոյական համոզմունքի և աշխարհայեցողության ներգործությունը նորա գործունեության վրա,

գ) Ի՞նչ սկզբունքների վրա պետք է հաստատված լինի կրթությունը, և ի՞նչ միջոցներ կտա նորան բարոյականությունը,

դ) Ի՞նչ նշանակություն են ունեցել Հայոց Եկեղեցու հատուկ սկզբունքներն և դավանանքը հայոց եկեղեցականաց և ազգի համար[13]:

Կրոնագիտությունից և աստվածաբանությունից հանձնարարված շարադրությունների հիմնական, առանցքային թեմաները հիմնականում կրկնվել են, միաժամանակ տարիների ընթացքում հետզհետե ավելացվել նորերը: Պատմա-փիլիսոփայական և հոգեբանական խնդիրներ շոշափող թեմաները ևս արժանացել են պատշաճ ուշադրության: Այս բնույթի շարադրություններ հատկապես գրվել են անցյալ դարի սկզբին: Այսպես, 1907 թ. Առաքել Առաքելյանը (հետագայում՝ դոկտոր-պրոֆեսոր, գիտության վաստակավոր գործիչ) ընդամենը յոթ էջի վրա խտացած ձևով գրել է «Շոպենհաուերի, Նիցշեի և Ռուսսոյի պատմական հայացքները» իր ավարտաճառը[14]: Նույն թվականին՝ հետագայում անվանի հայագետ Թադեոս Ավդալբեգյանը ներկայացրել է «Թե ինչ հոգեկան երևույթներ Վիլհելմ Վունդը բացատրում է ֆիզիոլոգիական երևույթներով» փայլուն ավարտաճառը[15]: 1910 թ. Համազասպ Ասլանյանը պաշտպանում է «Մանկան հոգեբանությունը»[16], 1914 թ. Բաղդասար Աստվածատրյանը՝ «Հոգեկան հոգնածություն»[17] ավարտաճառերը:

---

[13] Թղթ. 26, վավ. 246:

[14] Թղթ. 40, վավ. 14:

[15] Թղթ. 40, վավ. 15:

[16] Թղթ. 40, վավ. 20:

[17] Թղթ. 40, վավ. 13:

Առանձնակի ուշադրության է արժանի Սարգիս Թոփճյանի «Գրիգոր Մագիստրոսի փիլիսոփայական աշխարհայացքը» ավարտական աշխատանքը[18], որը, փաստորեն, գիտահետազոտական բնույթի գործ է: Այն ունի ներածություն և հինգ ենթավերնագրեր՝ «Գրիգոր Մագիստրոսի աղբյուրները», «Մագիստրոսը որպես էնցիկլոպեդիստ, գիտությունների բաժանումը և այդ բաժանման տրամաբանական հիմքը», «Աստծո էությունը և ատրիբուտները», «Եկեղեցական դոգմաների ըմբռնումը», «Տիեզերաբանություն և էթիքա»:

Դարասկզբին գրված առանձին աշխատանքներում քննված են նաև հողային և առհասարակ տնտեսական խնդիրներ (Ա. Բաքալյան, «Հողային հարցը Էջմիածնի գավառում[19]», Գ. Ասիրյան, «ԺԳ դարի հայերի տնտեսական վիճակի ուրվագծեր»[20] և այլն): Արվեստի այս կամ այն ճյուղերին ճեմարանի սաների տեղյակ լինելու մասին են խոսում երաժշտությանը, պարարվեստին, ճարտարապետությանը նվիրված շարադրությունները. այսպես՝ «Ծարականների եղանակների տաղաչափությունը», «Պարի տեղը գեղարվեստի մեջ, նրա զարգացումը, դերն ու նշանակությունը», «Հայոց եկեղեցական երաժշտությունը Է-ԺԴ դարերում», «Հայկական ճարտարապետություն» և այլն:

Այս աշխատանքների լեզուն արևելահայերեն է, ոճական առումով մեծ մասամբ գրված են անխաթար. անհրաժեշտության դեպքում մեջբերումներ են կատարված գրաբար բնագրերից: Քանի որ քննված թեմաները հիմնականում վերաբերել են գրաբար երկերին, իսկ կատարումն էլ բարձրորակ է, ուստի պարզ է դառնում, որ ճեմարանում հին հայերենի ուսումնասիրությունը տարիներ շարունակ դրված է եղել հաստատուն հիմքերի վրա: Ուսանողները ոչ միայն կարողացել են հմտորեն օգտվել հայկական և հայերեն թարգմանված հնագույն աղբյուրներից, այլև որոշ դեպքերում դիմել են օտարալեզու գրականությանը:

Միշտ չէ, որ նյութը հաղթահարվել է. կան մակերեսային, ոչ ինքնուրույն շարադրություններ, սակայն դրանք չեն բնորոշ:

Հասկանալի է, ուսանողը կրել է դասախոսի և ղեկավարի ազդեցությունը, հետևաբար այս աշխատանքները ճեմարանում դասավանդողների գիտամանկավարժական գործունեության փաստական կողմը բացահայտող և լրացնող նյութեր են: Դրանք ուսումնասիրողին շատ ու շատ հարցեր կարող են առաջադրել, օրինակ՝ որտե՞ղ են ճեմարանավարտ, հետագայում նշանավոր գիտնականների, գրողների, պետական-հասարակական գործիչների գրած գործերը, որոնք անհրաժեշտ են մեր ճանաչված այդ մտավորականների աշխարհայացքի ձևավորման ընթացքը և այլ կարևոր խնդիրներ լավ ըմբռնելու համար: Մասնավորապես՝ որտե՞ղ են մեծ երգահան Կոմիտաս Վարդապետի ճեմարանական ուսումնառության շրջանին գրված, ինչպես նաև հաջորդող տարիներին ղեկավարած աշխատանքները:

---

[18] Թղթ. 41, վավ. 41:

[19] Թղթ. 40, վավ. 48:

[20] Թղթ. 40, վավ. 55:

## ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄ

# ՎԱԶԳԵՆ ՎԵՀԱՓԱՌԻ «ՏԽՈՒՐ ԽՈՍՔ»-Ը



Իմ մտապատկերում միշտ թարմ ու անջնջելի կմնա վերջին հանդիպումը Վազգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի հետ: Երջանկահիշատակ Հայրապետին այցելեցի 1994 թ. օգոստոսի 16-ին Երևանի իր առանձնատանը: Պառկած էր և այլևս ոչ ոքի չէր ընդունում: Սպասավորին շատ խնդրեցի, որ ինձ թույլատրվի մի պահ ներս մտնել և միայն համբուրել Վեհի Աջը:

Ծերունազարդ Հայրապետը համաձայնվել էր...

Աջը համբուրելուց հետո ասացի.

- Վեհափառ Տեր, Խորեն Ա Մուրադբեկյան Կաթողիկոսին նվիրված հատորն ավարտել եմ, խնդրում եմ Ձեր գիրը փվեք, որպեսզի փպարան ուղարկեմ:

Անսպասելի և հուզիչ էր պատասխանը.

- Ես արդեն մեկնում եմ այս աշխարհից, այլևս ուշ է, ոչինչ անել չեմ կարող: Գրքի համար գրածս Վեհարանում՝ գրասեղանի վրա է: Լույսը հանգցրու և կարող ես գնալ:

Ինչպիսի՜ հզոր հավատք, իմաստություն և խաղաղություն կար նրա դեմքին ու խոսքերում: Ծնկի եկա, խոնարհվեցի և նորից Սուրբ Աջը համբուրելով՝ արտասվելով դուրս եկա:

Երկու օր անց, օգոստոսի 18-ին, առավոտյան ժամը 17.15-ին, վախճանվեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Վազգեն Ա Հայրապետը:

Վերջերս երջանիկ պատահականությամբ Ս. Էջմիածնի դիվանատան արխիվային փաստաթղթերի շարքում գտա Վազգեն Ա Վեհափառ Հայրապետի «Տխուր խոսք»-ը՝ գրված Խորեն Ա Մուրադբեկյան Կաթողիկոսի գործունեությանը վերաբերող փաստաթղթերի ժողովածուի համար: Այլևս մասունք դարձած այդ փաստաթուղթը ներկայացնում եմ «Էջմիածին» ամսագրի խմբագրությանը՝ հրապարակման նպատակով:

*ՍԱՆԴՐՈ ԲԵՀԲՈՒԴՅԱՆ*

# ՄԵՐ ՏԽՈՒՐ ԽՕՍՔԸ

Հայաստանում, սովետական կարգերի հաստատումից յետոյ, մանաւանդ ստալինեան դաժան տարիները չխնայեցին նաև մեր ազգային Մայր Եկեղեցին ու նրա բազմադարեան կեդրոն Մայր Աթոռ Ս. Էջմիածինը:

Ընկերվարական, «հումանիստական» գաղափարներով սկզբնաւորուած համայնավար գաղափարախօսութիւնը՝ ստալինեան իշխանութեան լծի տակ վերածուեց մի բռնակալ վարչակարգի, որ իրողութեան մէջ ժխտումը եղաւ 19-րդ դարու հումանիստական ընկերվարական իղէալների:

Սովետական ընկերվարութիւնը նոյնքան հեռու եղաւ արևմտեան ընկերվարական գաղափարախօսութիւնից, ինչքան հեռու եղած էր միջնադարեան եկեղեցական ինկվիզիցիան՝ Քրիստոսի Աւետարանից: Ստալինի մէջ ձեռք ձեռքի էին տուել Կարլ Մարքսը և Ճենգիզ Խանը:

Այդ տարիներին, դժոխային պայմանների զոհ գնաց նաև մեր Առաքելական Մայր Եկեղեցին և մեր ողջ հոգևորականութիւնը Հայաստանում և Սովետական Միութեան տարածքում: Փակուեցին Հայաստանի մեր վանքերն ու եկեղեցիները, շատերը ուղղակի քանդուեցին: Հալածուեցին, աքսորուեցին, բանտարկուեցին ու նահատակուեցին մեր Եկեղեցու հոգևոր գրեթէ բոլոր սպասաւորները: Ողբերգական պայմանների մէջ Ս. Էջմիածնում իր աչքերը փակեց Ամենայն Հայոց Կաթողիկոս Խորէն Ա Մուրադբեկեան երջանկայիշատակ Հայրապետը, ոչ բնական մահով:

Անարդար պիտի լինէր մոռացութեան տալ այդ դաժան ժամանակներում Հայ Առաքելական Եկեղեցու կրած փառապանքներն ու աւերումները: Ահա թէ ինչու մենք պարտք ենք համարում հրապարակել ցարդ գաղտնի մնացած արխիւային փաստաթղթերից մի կարևոր մաս, որ մեր ձեռքի տակ ունեցանք, փաստաթղթեր, որոնք վկայում են 1922-1938 տարիներին Հայ Եկեղեցու դէմ սանձազերծուած հալածանքներն ու բռնութիւնները:

Սոյն հրապարակութիւնը նուիրում ենք Խորէն Մուրադբէկեան նահատակ Հայրապետի սրբացեալ յիշատակին՝ նրա ծննդեան 120-ամեակի առթիւ:

Տխուր սրտով գրի ենք առնում այս տողերը և աղօթում, որ ներկայ և յետագայ հայ սերունդները սուրբ պահեն յիշատակը աւելի քան հազար և հինգ հարիւր հոգևորականների՝ եպիսկոպոսներ, վարդապետներ ու քահանայ հայրեր, որոնք զոհուեցին Վարդանանց հաւատքով «յանուն Յիսուսի և յանուն հայրենեաց»:

Լոյս և խունկ և օրհնութիւն նրանց բոլորի անմոռաց յիշատակին:

**ՎԱԶԳԷՆ Ա**
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

# ՄԿՐՏՉՅԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՆՈՐ ՏԱՐԻՆ

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարանում, Նորին Սրբություն Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի նախագահությամբ, սեպտեմբերի 10-ին տեղի ունեցավ 2002-2003 թթ. ուսումնական տարվա բացման հանդիսավոր արարողությունը:

Նոր ուսումնական տարին Գևորգյան Հոգևոր Ճեմարանը սկսում է ՀՀ Կառավարության որոշմամբ կրթօջախին տրված բարձրագույն ուսումնական հաստատության կարգավիճակով:

Մկսվող ուսումնական այս տարում Գևորգյան Հոգևոր Ճեմարանն ունի 124 ուսանողներ, որոնցից 31-ը՝ առաջին լսարանում:

Հանդիսությունն սկսվեց «Էջ Միածինն ի Հօրէ» շարականի երգեցողությամբ, որի օրհնաբանող հնչյունների ներքո հանդիսասրահ բերվեց Հայրապետական սրբատառ կոնդակը՝ շնորհված Ճեմարանի պատմության մեջ նոր էջ բացող կարևոր այդ իրադարձության առիթով: Ինչպես նշված է Հայրապետական կոնդակում, Կառավարության հրամանագիրը «Հայոց Պետության արժանի գնահատականն է ժողովրդի հոգևոր կրթության, գիտության ու մշակույթի ասպարեզներում Գևորգյան Հոգևոր Ճեմարանի բերած անփոխարինելի ավանդի ու վաստակի, մեր ժամանակներում օրավուր նորոգվող ու ընդարձակվող գործունեության և ներկա գիտա-կրթական ու հոգևոր ներուժի», որով նոր էջ է բացվում Գևորգյան Հոգևոր Ճեմարանի պատմութեան մեջ (Նորին Սրբության սրբատառ կոնդակը տե՛ս «Էջմիածին», Ը, 2002, էջ 31):

Հայրապետական սրբատառ կոնդակը հաստատում է կրթօջախի՝ «Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարան» պաշտոնական անվանումը, որով ուսումնական հաստատությունը ծանոթ է ու սիրված իր հարյուր քսանութ տարիների պատմության ընթացքում:

Սրբատառ կոնդակի ընթերցումից հետո երախտագիտության խոսք ասաց Ճեմարանի տեսուչ Տ. Եղիշե ավ. քհն. Սարգսյանը.

*«Վեհափառ Տեր.*

*Հանդիսավոր, հուզիչ ու հիշարժան այս պահին թույլ տվեք Գևորգյան Հոգևոր Ճեմարանի տեսչական ու դասախոսական կազմի, ուսանողության և Ճեմարանի բոլոր շրջանավարտների անունից մեր հավատարմության և անսահման սիրո խոսքը ուղղել Ձերդ Սրբությանը և բերել մեր երախտագիտությունը Հայոց Ճնորհազարդ 132-րդ Սրբազնա-*



Տ. ՓԱՌԵՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՎԵՏԻՔՅԱՆՆ ԸՆԹԵՐՑՈՒՄ Է ԳԵՎՈՐԳՅԱՆ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆԻ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿ ՍՏԱՆԱԼՈՒ ԱՌԻԹՈՎ ՏՐՎԱԾ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՍՐԲԱՏԱՌ ԿՈՆԴԱԿԸ

*գույն Հայրապետին, ում հոգածությունն ու խնամքը Ճեմարանի հանդեպ մենք զգում ենք ամեն օր:*

*Վեհափառ Տեր, մենք խնդագին հոգով ունկնդրեցինք Ձերդ Սրբության Հայրապետական սրբատառ գիրը, որը ոչ միայն ծանուցում է Ճեմարանի՝ բարձրագույն հաստատության կարգավիճակ ստանալու մասին, այլև հանրագումարի բերելով ներկայացնում հաստատությանս անցած փառավոր ճանապարհը: Հայրապետական այս կոնդակով այսօրվա և գալիք ճեմարանականներին պատգամում եք, որ միշտ նախանձախնդիր կերպով և աչքի լույսի պես պահեն վարկն ու հեղինակությունը Մայր Աթոռիս ուսումնական հաստատության, որի արմատները հասնում են մինչև Սահակ-Մեսրոպյան ժամանակները:*

*Թույլ տվեք ասելու նաև, որ, իբրև պատասխանատու այս հաստատության, մեզ քաջ հայտնի է Ձերդ Սրբության սպասելիքները հոգևոր մեր կրթօջախից: Այս սաներն են, որ գիտելիքներ ամբարած Ճեմարանում, հավատքով ամուր, եկեղեցասիրությամբ ու հայրենասիրությամբ լեցուն՝ իբրև նվիրյալ սպասավորներ Առաքելական մեր Ս. Եկեղեցու, պիտի ծառայեն մեր ժողովրդին: Պիտի ձգտենք ապրել ու գործել այս տեսլականով՝ արդարացնելու Վեհափառությանդ և մեր հավատացյալ ժողովրդի հույսերն ու ակնկալիքները:*

*Վեհափառ Տեր, խոնարհ աջահամբույրով և վերստին մեր շնորհակալության մատուցմամբ թույլ տվեք ասել. այսօր և ամեն օր մենք բոլորս պիտի աղոթենք մեր Ս. Եկեղեցու, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի, Հայոց Հանրապետության համար, հայոց ազգընտիր Գարեգին Բ Վեհափառ Հայրապետի արևշատության և գործոց հաջողության համար՝ ի փառս և ի շինություն մեր Ս. Եկեղեցու»:*

Այնուհետև ճեմարանականներին ու դասախոսական կազմին շնորհավորանքի ու օրհնության խոսք ուղղեց Նորին Սրբություն Գարեգին Բ Վեհափառ Հայրապետը.

*«Արժանապատիվ Տեր Հայր՝ տեսուչ Գևորգյան Հոգևոր Ճեմարանի, սիրելի Գերաշնորհ և Հոգեշնորհ Հայրեր, մեծարգո դասախոսներ Գևորգյան Հոգևոր Ճեմարանի, սիրելի հյուրեր և ուսանողներ:*

*Առանձնակի ուրախությամբ ու մեծ լավատեսությամբ է համակված հոգիս: Ինչպես հանդիսավորապես ծանուցվեց այսօր այս դահլիճում, Գևորգյան Հոգևոր Ճեմարանը այսուհետ գործում է իբրև բարձրագույն ուսումնական հոգևոր հաստատություն: Նոր կարգավիճակը, որ շնորհվել է կրթօջախին որպես գնահատական այն վաստակի, որը բերել է Ճեմարանը մեր ժողովրդի կյանքում, ուրախության ու լավատեսության առիթ տալով, առավել պարտավորեցնող է նաև: Նույնն է Գևորգյան Հոգևոր Ճեմարանի առաքելությունը, ավելացել է պատասխանատվությունը:*

*Ինչպես կոնդակում ենք ասել, «Որդիներս, ժառանգորդներս պարտավոր ենք մեր հայրերի նույն ընթացքն ունենալ, մեր հայրերի ուղենշած ճանապարհով ընթանալ»: Այս իմաստով, դյուրին է մեզ համար, որովհետև ճանապարհը մենք չէ, որ հարթելու ենք, այլ պիտի քայլենք արդեն ուղենշված ճանապարհով, որ գծել են մեզ համար մեր հայրերը: Այդ ճանապարհը բացված է մեր առջև նրանց անդուլ աշխատանքով, նրանց հավատքով ու նվիրումով, նրանց սիրո, հանձնառության,*

*զոհողության հոգիով, հաճախ նաև նրանց արյամբ ու կյանքով: Եվ Մեր աղոթքն է, որպեսզի Տերը արժանացնի մեզ շնորհին՝ մեր հայրերի արժանավոր զավակները կոչվելու:*

*Գիտենք, որ այսօր բազմաթիվ մարտահրավերների առջև է Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցին, Մայր Աթոռ Ս. Էջմիածինը: Անցնող հարյուրամյակի ընթացքում խաթարվեց ազգային-հոգևոր մեր կյանքը, քայքայվեց համայնքային կառույցը Հայ Եկեղեցու, հարկադրաբար փորձեցին արմատախիլ անել հավատը մեր ժողովրդի հոգուց, բայց, փառք և գոհություն Աստծուն, հայ ժողովուրդը պահեց իր հավատը և հավատով վերահաստատեց ազգային պետականությունը, հաստատեց այն բոլոր ազատությունները, որոնց պայմաններում գործում է նաև Հայ Առաքելական Եկեղեցին:*

*Այո, այսօր մենք ազատորեն գործելու հնարավորությունն ունենք և պիտի ջանանք արագորեն լրացնել պակասը, շտկել խաթարումները, որպեսզի Քրիստոսի Ավետարանի ոգով, հոգևոր-բարոյական արժեքներով, մեր սրբություններով նորոգվի մեր կյանքը, լցվի երջանկությամբ ու անխոտոր ընթանա դեպի Աստված: Եվ ինչպես կարող ենք հաջողել, երբ մեր հոգում ամբարած չունենք հավատի լույսը, չունենք նվիրումն ու տեսիլքը, չունենք համոզումն ու սերը:*

*Մեծ է կարիքը մշակների, ահա թե ինչու այսօր լավատեսությամբ է Մեր հայացքը ուղղված դեպի ձեզ՝ սիրելի ուսանողներ, որ այս հարկից ներս մանկավարժների առաջնորդությամբ պիտի հերկեք ձեր հոգին, բարի պտուղներ անենք այնտեղ, պիտի գաք լրացնելու շարքերը մեր Եկեղեցու սպասավորների, լրացնելու պակասը հոգևոր ծառայության սուրբ ու նվիրական առաքելության:*

*Ճեմարանին բարձրագույն հոգևոր հաստատության կարգավիճակ շնորհելու առիթով շնորհավորում ենք տեսչությանը, դասախոսներին և սանուց: Հայրապետական Մեր սերն ու օրհնությունն ենք բերում բոլորին:*

*Աղոթքս է, որ Տիրոջ Աստվածային Սուրբ Հոգու շնորհները առատորեն հեղվեն ամենքիս վրա, և մենք կարողանանք, որպես արժանավոր մշակներ, որպես մշակներ առանց ամոթ, իրականացնել մեր առաքելությունը:*

*Թող Տերն օրհնի մեզ, թող Տերն օրհնի ուսումնական այս նոր տարին, պարգևի ձեզ ուժ, կարողություն և խանդ ու եռանդ՝ նվիրվելու ուսման գործին ու ձեր կոչմանը:*

*Տերն օգնական մեզ բոլորիս»:*

Բացման հանդիսությունն ավարտվեց Տերունական աղոթքով և «Պահպանիչ»-ով:

*ՍԵՎԱՆԻ ՎԱԶԳԵՆՅԱՆ ՀՈԳԵՎՈՐ ԴՊՐԱՆՈՑ*

# ՁԵՌԱՄԲ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԲԱՑՎԵՑ ՍԵՎԱՆԻ ՎԱԶԳԵՆՅԱՆ ՀՈԳԵՎՈՐ ԴՊՐԱՆՈՑԻ ԿԱՑԱՐԱՆԱՅԻՆ ՆՈՐ ՄԱՍՆԱՇԵՆՔԸ

Սեպտեմբերի 7-ին, ձեռամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, բացվեց Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրանոցի կացարանային նոր մասնաշենքը: Բացման արարողությանը ներկա էին բարձրաստիճան հոգևորականներ, ազգային բարերարներ տեր և տիկին Գառնիկ և Անահիտ Ցակուբյանները, տիկին Լուիզ Սիմոն-Մանուկյանը, տեր և տիկին Նազար և Արտեմիս Նազարյանները, Գեղարքունիքի մարզպետ Վահագն Հակոբյանը, Սևանի քաղաքապետ Աշոտ Ալեքսանյանը և բազմաթիվ հյուրեր:

Համալիրի շինարարությունն սկսվել էր դեռևս 1996 թ.: Ս. Հակոբ մատուռի նախագծի հեղինակը Բաղդասար Արզումանյանն է, իսկ չորս հարկանի ննջարանային մասնաշենքի նախագծողը՝ Օլեգ Շոկրինը: Համալիրի ներքին հարդարումը կավարտվի 2003 թ.:

Նորակառույց շենքի ժապավենը կտրելուց հետո, կատարվեց Տնօրինեքի արարողություն՝ հանդիսապետությամբ Վեհափառ Հայրապետի: Այնուհետև Վազգենյան Հոգևոր Դպրանոցի տեսուչ Հոգեշնորհ Տ. Բագրատ վրդ. Գալստանյանը հանգամանալից ներկայացրեց շենքի կառուցման պատմությունը՝ հույս հայտնելով, որ ճեմարանականների կենցաղի պայմանների բարելավումն առավել ևս պիտի խթանի ուսանողների հոգևոր և մտավոր գիտելիքների ամբարմանը:

Այնուհետև գեղարվեստական հայտագրով հանդես եկան Վազգենյան Հոգևոր Դպրանոցի սաները: Շենքի կառուցման բարերար Գառնիկ Ցակուբյանն իր խորին շնորհակալությունը հայտնեց Վեհափառ Հայրապետին՝ նշելով, որ ամեն ինչ պիտի անի հայրենիքի զորացման և Հայաստանյայց Եկեղեցու շենացման համար:

Վեհափառ Հայրապետն իր խոսքն ուղղեց ներկաներին՝ անդրադարձ կատարելով Դպրանոցի ստեղծման պատմությանը՝ երախտագիտությամբ հիշելով նախորդ երկու Հայրապետներին, ինչպես նաև ՀԲԸՄ-ին, որ սիրով ստանձնեցին Դպրանոցի հոգածությունը՝ որպես արդյունք նշելով, որ Դպրանոցն ավարտած 50 հոգևորականներ իրենց հովվական ծառայությունն են մատուցում Հայ Եկեղեցու անդաստանում:

Ի գնահատություն տեր և տիկին Ցակուբյանների՝ Հայ Եկեղեցուն մատուցած ծառայությունների, Վեհափառ Հայրապետը նրանց պարգևատրեց 1700-ամյակի շքանշանով:

Վերջում Ս. Հակոբ մատուռում կատարվեց հոգեհանգիստ՝ Ցակուբյանների գերդաստանի և համայն հայոց ննջեցյալների համար:

# ՄԿՍՎԵՑ ՎԱԶԳԵՆՅԱՆ ՀՈԳԵՎՈՐ ԴՊՐԱՆՈՑԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՆՈՐ ՏԱՐԻՆ

Սեպտեմբերի 14-ին տեղի ունեցավ Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրանոցի 13-րդ ուսումնական տարվա վերամուտի հանդիսությունը, որին ներկա էին բարձրաստիճան հոգևորականներ, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբաններ, դասախոսներ և բազմաթիվ հյուրեր:

Հանդիսությունն սկսվեց միասնական «Հայր մեր»-ով, որից հետո Դպրանոցի սաները կատարեցին Հայաստանի Հանրապետության և Վազգենյան Հոգևոր Դպրանոցի օրհներգերը:

Ողջույնի խոսքով ներկաներին դիմեց Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրանոցի տեսուչ Հոգեշնորհ Տ. Բագրատ վրդ. Գալստանյանը: Բոլորին շնորհավորելով վերամուտի առթիվ, Հայր Սուրբը խորհրդածեց մարդու կյանքում անհրաժեշտ և կենսական երեք՝ նյութեղեն, մտավոր ու հոգևոր սեղանների մասին. «Այս երեք սեղաններից փական ճաշակումով միայն արժեք կստանա մարդը, մարդը կմարդանա, և հատկապես հոգևոր ծառայության նվիրվելուն պատրաստակամ անձը, հետևաբար պարապ չենք թողնելու այս երեքից միաժամանակ ճաշակելու քաղցրությունը»,- նշեց տեսուչ Հայր Սուրբը:

Դպրանոցի սաները հանդես եկան գեղարվեստական հայտագրով՝ կատարելով շարականներ և Կոմիտաս Վարդապետի մշակմամբ ժողովրդական երգեր: Ուսանողության անունից ներկաներին ողջունեց Ե լսարանի սան Հովհաննես Գրիգորյանը:

Ընդունված ավանդույթով տեսուչ Հայր Սուրբը նորավարտ վազգենյանցիներին նվիրեց Ս. Գրիգոր Նարեկացու «Մատեան ողբերգութեան» աղոթագիրքը՝ որպես մշտական ուղեկից իրենց հոգևոր կյանքի: Նոր շրջանավարտների անունից սրտի խոսք ասաց նաև Հովհաննես Ասատրյանը:

Հանդիսության վերջում ներկաներին իր օրհնության խոսքն ուղղեց Գերաշնորհ Տ. Փառեն եպս. Ավետիքյանը: Հանդիսությունն ավարտվեց միասնական Տերունական աղոթքով և Սրբազան Հոր «Պահպանիչ»-ով:

*ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ*
*ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*



ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՀԱՆԴԻՍԱՊԵՏՈՒԹՅԱՄԲ ՏԵՐ ԵՎ ՏԻԿԻՆ ԳԱՌՆԻԿ ԵՎ ԱՆԱՀԻՏ ՅԱԿՈՒԲՅԱՆՆԵՐԸ ԿՏՐՈՒՄ ԵՆ ՎԱԶԳԵՆՅԱՆ ՀՈԳԵՎՈՐ ԴՊՐԱՆՈՑԻ ԿԱՑԱՐԱՆԱՅԻՆ ՆՈՐ ՄԱՍՆԱՇԵՆՔԻ ԲԱՑՄԱՆ ԺԱՊԱՎԵՆԸ



ՀԱՆԴԻՍՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԵՎ ՎԱԶԳԵՆՅԱՆ ԴՊՐԱՆՈՑԻ ՍԱՆԵՐԻ ՀԵՏ ԴՊՐԱՆՈՑԻ ԱՌՋԵՎ

# ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ՝ ՆՎԻՐՎԱԾ ԱՆԻԻ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑՈՒ ՕԾՄԱՆ 1000-ԱՄՅԱԿԻՆ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի նախագահությամբ Վեհարանի հանդիսությունների դահլիճում սեպտեմբերի 22-ին տեղի ունեցած հանդիսությամբ սկսվեց «Անիի 1000-ամյա փառքը» ընդհանուր խորագիրը կրող և Անիի Կաթողիկե եկեղեցու օծման 1000-ամյակին նվիրված միջոցառումների շարքը, որը կազմակերպվել է Ամենայն Հայոց Հայրապետի բարձր հովանավորությամբ և Օշականի Ս. Մեսրոպ Մաշտոց դպրատան նախաձեռնությամբ:

Անիի Մայր եկեղեցու օծման 1000-ամյակը լրացավ անցյալ տարի՝ 2001 թ., սակայն այդ ժամանակ չնշվեց այդ հոբելյանը, քանի որ ողջ 2001 թ. նվիրված էր Հայաստանում քրիստոնեության պետականորեն ընդունման 1700-ամյակին: Ուստի Անիի Մայր տաճարի օծման 1000-ամյակին նվիրված տոնախմբությունն ըստ ամենայնի կատարելու նպատակով այն հարմար նկատվեց նշել այս տարի:

Անիի Մայր տաճարի հիմնօրինեքը կատարվել է 989 թ., Սմբատ Բ թագավորի օրոք: Սակայն Հայոց Սմբատ արքային վիճակված չէր Բագրատունյաց մայրաքաղաքում Անիում վեր խոյացող Մայր տաճարը կառուցված և ամբողջական տեսնել: Նրա մահից հետո եկեղեցու կառուցումը ամենայն նախանձախնդրությամբ շարունակում է Գագիկ Ա Շահնշահի կինը՝ Կատրամիդե թագուհին: Շնորհիվ Տրդատ ճարտարապետի՝ եկեղեցին ստանում է փառավոր տեսք և իրավամբ համարվում հայկական ճարտարապետության գլուխգործոցներից մեկը: 1001 թ. մեծ հանդիսավորությամբ կատարվում է Մայր եկեղեցու օծումը՝ ձեռամբ ժամանակի Հայոց Հայրապետ Սարգիս Ա Սևանցու:

Այսօր մեզ 1001 տարի է բաժանում այդ երանելի օրվանից: Սակայն, ցավոք սրտի, եթե այն ժամանակ Մայր տաճարն իբրև հայկական ոգու խորհրդանիշ գտնվում էր Բագրատունյաց անկախ Հայաստանում, ապա այսօր այն գտնվում է սահմանի այն կողմում, ուր չկա հայ մարդու աղոթքը և կիսավեր ու անխնամ վիճակում է, իբրև արտահայտություն, իբրև պատկեր Արևմտյան Հայաստանի, սակայն միևնույն ժամանակ հպարտ՝ չնայած տեսած բազում արհավիրքներին:

Կազմակերպված գիտաժողովի նպատակն է, ինչպես բացման խոսքում նշեց Տ. Արշակ վրդ. Խաչատրյանը, վերստին անդրադառնալու մեր փառապանծ պատմությանը, հպարտանալու շուրջ 1000 տարի առաջ կառուցված Մայր տաճարով, ինչպես նաև բերելու խոնարհություն, հարգանք և սեր հանդեպ այդ նվիրական կառույցը:

Գիտաժողովի հանդիսավոր բացման ընթացքում կարդացվեցին բանախոսություններ, որոնք նպատակ ունեին ներկայացնելու թե՛ Մայր եկեղեցին և թե՛ ընդհանրապես պատմական Անի մայրաքաղաքը:

Հանդիսության սկզբում ելույթ ունեցավ Երևանի պետական համալսարանի Աստվածաբանական ֆակուլտետի դեկան Տ. Շահե արքեպս. Աճեմյանը: Շահե Սրբազանն իր խոսքում ուրվագծեց Անիի Մայր տաճարի շինության պատմությունը: Ապա նշեց, որ

գիտաժողովը գալիս է բացելու մեր պատմության էջե-
Մայր տաճարի օծմանը նվիրված գիտաժողովը գալիս է բացելու մեր պատմության էջե-
րը և մեր սրտերի մեջ վերակենդանացնելու Անիի փառքը: Անիի Մայր եկեղեցու գեղեց-
կությունն ու փառքը ներկայացնելիս, Սրբազան Հայրը վկայակոչեց տաճարին ուղղված
Մովսես Անեցու ձոնը:
Շահե Սրբազանը խոսեց նաև Սարգիս Ա Սևանցի Կաթողիկոսի նախաձեռնությամբ
կառուցված Սրբոց Հռիփսիմյանց եկեղեցու մասին, որը կից էր Մայր եկեղեցուն: Սար-
գիս Կաթողիկոսն այնտեղ ամփոփել է Ս. Հռիփսիմյանց մասունքները: Գերաշնորհ
Սրբազանն այդ փաստը նմանեցրեց Ամենայն Հայոց Հայրապետի Նեապոլից բերած Ս.
Գրիգոր Լուսավորչի մասունքների՝ Երևանի նորակառույց Ս. Գրիգոր Լուսավորիչ եկե-
ղեցում ամփոփման հետ:
Այնուհետև բանախոսությամբ հանդես եկավ Տ. Մեսրոպ արքեպս. Աշճյանը: Գերա-
շնորհ Սրբազանը գեղեցիկ նկարագրությամբ հանգամանալից ներկայացրեց Մայր տա-
ճարի կառուցման պատմությունն ու օծման հանդիսությունը: Այնուհետև համեմատութ-
յուն անցկացրեց Հայաստանում քրիստոնեության 1700-ամյակի առիթով կառուցված
Երևանի Մայր եկեղեցու օծման արարողության և 1000 տարի առաջ օծված Անիի Մայր
տաճարի միջև՝ այդ երկու դեպքերը դիտելով որպես նշանակալի իրադարձություններ
Հայոց կյանքում:
Սրբազան Հայրը, կարևորելով կազմակերպված գիտաժողովը, ասաց, որ մեկ հա-
զարամյակ անց Անիի Մայր տաճարի օծման հոբելյանը նշելով՝ «փառավորում ենք հա-
յոց եկեղեցական երկու հազար տարվա պատմությունը, Հայ Եկեղեցու ծառայության
կյանքը և հայի՝ Աստծուն մոտենալու կերպը, իր ճարտարապետությամբ, շարականով և
Մայր տաճարով»:
Այնուհետև ելույթ ունեցավ Հայաստանում ՅՈՒՆԵՍԿՕ-ի գործերով քարտուղար
Համբարձում Մինասյանը՝ ներկայացնելով Անիի, ինչպես նաև այժմ Թուրքիայում գտվող
հայկական ճարտարապետական կառույցների անխնամ և անապահով վիճակը, այնու-
հետև հույս հայտնեց, որ վերջիվերջո Անիի Մայր տաճարը և Աղթամարի Ս. Խաչ եկեղե-
ցին պետք է տեղ գրավեն ՅՈՒՆԵՍԿՕ-ի գրանցամատյանում:
Բանախոսություններով հանդես եկան նաև ֆրանսահայ մտավորական Կլոդ Արմեն
Մութաֆյանը՝ «Անին Անիից հետո» բանախոսությամբ, և վաստակաշատ ճարտարա-
պետ Վարազդատ Հարությունյանը՝ ներկայացնելով Անիի Մայր եկեղեցու կառուցող
Տրդատ ճարտարապետի գործունեությունը:
Հանդիսության վերջում ներկաներին Հայրապետական օրհնության իր խոսքն ուղ-
ղեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Վեհափառ Հայրապետը.

*Սիրելիներ.*

*Առ Աստված գոհության աղոթքով ողջունում ենք Անիի Մայր եկեղեցու 1000-ամյակին նվիրված տոնական հանդիսությունների շարքը բացող այս գիտաժողովի հրավիրումը՝ իբրև արտահայտություն այն նվիրումի ու սիրո, որ ունի մեր ժողովուրդը մեր սրբությունների ու արժեքների հանդեպ: Մեր Տեր Հիսուս Քրիստոսի Սուրբ Ծննդյան հազարամյակի առիթով կառուցված Անիի Մայր եկեղեցու 1000-*

*ամյակի տոնախմբությունը հավատի նորոգման ու հավատով զորացման մի նոր առիթ է մեզ համար Հայաստանում քրիստոնեության պետական կրոն հռչակման 1700-ամյակի տոնակատարություններից հետո:*

*Մեր գնահատանքն ենք բերում ձեզ ամենքիդ, որ նախանձախնդրորեն արձագանքել եք Մեր հրավերին և եկել եք ձեր մասնակցությունը բերելու այս հանդիսությանը: Այս առիթով մասնավոր գնահատանքի Մեր խոսքն ենք ուղղում Գերաշնորհ Տ. Մեսրոպ արքեպիսկոպոս Աշճյանին՝ այն մեծ ջանքերի ու խանդավառության համար, որով ձեռնարկում է հայոց պատմության նշանակալի այդ ժամանակաշրջանին, հոգևոր ու մշակութային մեր կյանքի մեծ հոբելյանին վերաբերող միջոցառումները:*

*Մեր գնահատանքն ենք բերում նաև բոլոր բանախոսներին, ովքեր այսօր այստեղ, իսկ վաղը և հաջորդող օրերին՝ մյուս միջոցառումներին պիտի ներկայացնեն Անիի Մայր եկեղեցու հետ կապված իրենց ուսումնասիրությունները, իրենց մտածումներն ու արժեվորումները պիտի մատուցեն ինչպես մեր ժողովուրդին, այնպես և միջազգային հանրությանը՝ ջանքեր ներդնելով, որպեսզի անհրաժեշտ ուշադրություն բևեռվի համաշխարհային մշակույթի գանձարանը հարստացնող ճարտարապետական հոյակերտ այս կոթողի վրա՝ հասնելու համար նրա ամբողջական վերակառուցմանն ու պահպանությանը:*

*Սիրելինե՛ր, այսօր մենք երախտիքի մեր տուրքն ենք բերում շնորհալի ու մեծագործ մեր նախնիներին, ովքեր կերտեցին գովքի արժանի փառքերը հայոց: Մտովի վերադարձել ենք մեր պատմության հեռավոր ժամանակները, երբ Բագրատունի նախարարական տան առաջնորդությամբ Հայաստանում վերականգնվեց պետականությունը, զորացավ՝ ապահովելով ժողովրդի խաղաղ կյանքը և խրախուսելով մշակույթի զարգացումը:*

*«Միջնադարյան խավար» կոչված դարերից իմացության պայծառ լույսն է ճառագում Անիի տասնյակ եկեղեցիներից, Անիի վարդապետանոցից, Անին կառուցող հավատավոր հոգիների լույսն ու ջերմությունը, որ հավերժ քանդակվել են քաղաքի քարերին:*

*Այսօր միավորենք մեր աղոթքը 1000-ամյակ առաջ Անիի Սուրբ Աստվածածին Մայր եկեղեցում հնչած մեր նախնյաց աղոթքներին և հայցենք Տիրոջից, որ Իր հանապազ խնամքի ներքո խաղաղ պահպանի աշխարհը համայն և հայոց Հայրենիքը ու օրհնի հայրենաշինության բոլոր ջանքերը մեր ժողովրդի:*

*Եւ թող Տէր Աստուծոյ եղիցի ընդ մեզ եւ ընդ ամենեսեան այսօր եւ միշտ. ամէն:*

Հանդիսությունն ավարտվեց «Հայր մեր»-ով և Վեհափառ Հայրապետի «Պահպանիչ»-ով:

ԳԵՎՈՐԳ ՄՐԿ. ՄԱԿԱՐՅԱՆ

# ՆՈՐ ԽԱՂԱՀՐԱՊԱՐԱԿ ԵՎ ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ԼՍԱՐԱՆ ՆՈՐՔԻ ՀԱՅՈՐԴՅԱՑ ՏԱՆԸ

Սեպտեմբերի 26-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի և Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության Նորքի հայորդյաց տանը, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի նախագահությամբ, տեղի ունեցավ նորաստեղծ համակարգչային լսարանի և բացօթյա ընդարձակ խաղահրապարակի հանդիսավոր բացումը:

«Ջինիշյան» հիշատակի հիմնադրամի հովանավորությամբ կառուցված խաղահրապարակում մանուկների խաղի ու հանգստի համար ստեղծված են բոլոր անհրաժեշտ պայմանները: Հատելով խաղահրապարակի մուտքը երիզող ժապավենը Նորին Սրբությունը և նրան ուղեկցող շքախումբն առաջնորդվեց դեպի Հայորդյաց տան մասնաշենք: Այստեղ ամբողջովին վերանորոգված երկրորդ հարկի երեք սենյակներում ամերիկահայ Սեմ Սիմոնյանի հովանավորությամբ տեղադրված է 30 նորագույն համակարգիչ: Նորաստեղծ համակարգչային լսարաններում երկու հերթափոխով կկազմակերպվեն համակարգչային ուսուցման դասընթացներ ոչ միայն երեխաների, այլև նրանց ծնողների համար:

Հայորդյաց տան հանդիսությանը ներկա էին նաև Հայ Առաքելական Եկեղեցու ԱՄՆ Արևելյան թեմի առաջնորդ Տ. Խաժակ արքեպս. Պարսամյանը, Կանադայի թեմի առաջնորդ Տ. Հովնան արքեպս. Տերտերյանը, Տ. Փառեն եպս. Ավետիքյանը, Գեղարքունյաց թեմի առաջնորդ Դերենիկ վրդ. Դավթյանը, Նորքի թաղապետը, ամերիկահայ բարերարներ և այլոք:

Բացման արարողությունից հետո Վեհափառ Հայրապետը և մյուս հյուրերը ներկա գտնվեցին հայորդյաց տների երեխաների համերգային ծրագրին:

*ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ*
*ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*




ՆՈՐՔԻ ՀԱՅՈՐԴՅԱՑ ՏԱՆ ՆՈՐԱԲԱՑ ՋԻՆԻՇՅԱՆ ԽԱՂԱՀՐԱՊԱՐԱԿԸ.
ՀԱՅՈՐԴՅԱՑ ՏՆԵՐԻ ՀՈԳԵՎՈՐ ՏԵՍՈՒՉ Տ. ԽԱԴ ՔԱՀԱՆԱ ՂԱԶԱՐՅԱՆԸ
ՈՂՋՈՒՆՈՒՄ Է ԽԱՂԱՀՐԱՊԱՐԱԿԻ ԲԱՑՄԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻՆ



ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ.
ԱՇԽԱՐՀԻՑ ՀՐԱԺԱՐՄԱՆ ԵՎ ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿՈՉՎԵԼՈՒ ՊԱՀԸ

# «ԵՍ ԴՆԵՄ ՁԵՌՍ Ի ՎԵՐԱՅ ՄՈՑԱ, ԵՒ ԴՈՒՔ ԱՄԵՆԵՔԵԱՆ ԱՂՕԹՍ ԱՐԱՐԷՔ»

Սույն թվականի սեպտեմբերի 1-ին՝ Տիրամոր գոտու գյուտի տոնին, Սուրբ Էջմիածնի Մայր Տաճարում, օրհնությամբ Արմավիրի թեմի բարեջան առաջնորդ Գերաշնորհ Տ. Սիոն եպս. Ադամյանի, հընթացս Սուրբ Պատարագի, քահանայական ծառայության կոչվեցին Մայր Աթոռիս ութ միաբան սարկավագներ, որոնցից վեցը՝ ամուսնացյալ, երկուսը՝ կուսակրոն քահանաներ:

Ըստ Հայոց Մայր Եկեղեցու ավանդական հաստատված կանոնի, ձեռնադրության կարգն սկսվեց նախորդ օրվա երեկոյան ժամերգության ավարտին, քանի որ եկեղեցական օրն սկսվում է նախորդ օրվա երեկոյան ժամերգությունից հետո: Մայր Աթոռի միաբանների հետ ընծայացուները Տաճարի դռան առջևից, «Նայեա ի մեզ» շարականի երգեցողության ներքո, ծնկաչոք մոտեցան Իջման Ս. Սեղանի առջև գահին բազմած եպիսկոպոսին, ով խորհրդանշում էր մեր Տիրոջ ներկայությունը: Խարտավիյակությունը, ում պաշտոնը վկայություն տալն էր, սպանձնել էր Հոգեշնորհ Տ. Թորգոմ աբեղա Տոնիկյանը, որը հավատացյալների անունից ձեռնադրող եպիսկոպոսին ասաց. «Խնդրէ ի քէն Մայրս մեր Սուրբ Եկեղեցի, զի ձեռնադրեսցես սարկաւագունս զոր ընծայեն քեզ յաստիճան քահանայութեան» (Մաշտոց Ձեռնադրութեան, Վաղարշապատ. 1876 թ., էջ 26):

Ձեռնադրող Սրբազան Հայրն օրհնեց նրանց՝ Ամենակալ Աստծո շնորհը փոխանցելով, որպեսզի կարողությունն ունենան «բառնալ սիրով զլուծն Քրիստոսի եւ երթալ կամաւ զհետ Կենարարին»: Ձեռնադրվողները հնազանդության ուխտ կնքեցին ապրել առաքելավանդ և հայրապետավանդ կանոնների համաձայն:

Հաջորդ օրը, հընթացս Ս. Պատարագի, 8 ուխտյալները սաղմոսների փոխասացության ներքո ծնկաչոք բարձրացան Ավագ Ս. Խորան: Դառնալով դեպի հավատացյալ ժողովուրդը՝ ընծայացուները բարձրացրին իրենց ձեռքերը՝ ի նշան աշխարհիկ կյանքից հրաժարման: Մեծ հանդիսավորությամբ Ս. Խորան բերվեց Սրբալույս Մյուռոնը, և ձեռնադրող Սրբազան Հայրը մեկ առ մեկ օծեց ընծայացուների ճակատները, աջ և ձախ ձեռքերի ափերը՝ նոր անուններով կոչելով նրանց. Բաբկեն սրկ. Բոզիկյանը վերակոչվեց Տ. Տրդատ քահանա, Արմեն սրկ. Եզեկյանը՝ Տ. Պետրոս քահանա, Հովհաննես սրկ. Խաչատրյանը՝ Տ. Նահապետ քահանա, Արամայիս սրկ. Մուրադյանը՝ Տ. Պսակ աբեղա, Լևոն սրկ. Պանֆյորովը՝ Տ. Նշան քահանա, Գևորգ սրկ. Սարգսյանը՝ Տ. Գաբրիել աբեղա, Գևորգ սրկ. Մակարյանը՝ Տ. Ադամ քահանա, և Արթուր սրկ. Կարապետյանը՝ Տ. Աստղիկ քահանա: Սիոն Սրբազանը նորաօծ քահանաներին փոխանցեց նաև Հաղորդության սկիհը՝ նրանց տալով պատարագելու և Տիրոջ մարմինն ու արյունը ժողովրդին բաշխելու իշխանությունը:

Այնուհետև Սիոն եպս. Ադամյանը Սրբալույս Մյուռոնով կատարեց օծումը քահանայության կոչված սարկավագների, և նորաօծ քահանաներն իրենց անդրանիկ օրհնությունը փվեցին հավաքված ժողովրդին: Հընթացս Ս. Պատարագի, ձեռնադրության ժամանակ, Սիոն Սրբազանը, իր քարոզում շնորհավորեց նորաօծ քահանաներին և անդրադարձավ քահանայության կոչմանն ու հոգևոր խորհրդին:

# Տ. ՄԻՔԱՅԵԼ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՋԱՊԱՀՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ

*«Օրինակ լինիջիր հաւատացելոց. բանիւ,*
*գնացիւք, սիրով, հաւատովք, սրբութեամբ»:*
*«Օրինակ եղիր հավատացյալներին խոսքով,*
*վարմունքով, սիրով, հավատով, մաքրությամբ»:*
*(Ա ՏԻՄ. Դ 12)*

«Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն»:

Սիրելի հավատավոր որդիք մեր Ս. Եկեղեցու.

Այսօր, այս սրբազան պահին, մեր հոգին ու միտքը հրճվում է այն զգացումից, որ մեր՝ անարժանիս ձեռքով անդրանիկ ձեռնադրությունը տեղի ունեցավ, որով քահանայական օծմանը արժանացան ութ սարկավագներ:

Այսօր, երբ մեր Եկեղեցու ու ժողովրդի առջև բազում խնդիրներ են ծառացել, հոգևորականի համար գլխավորը հավատքը, իմացությունը, բարոյականը և մաքուր ու անբասիր վարքն է: Հոգևորականն այսօր առավել պիտի քաջատեղյակ լինի Ս. Գրքին՝ Աստվածաշնչին, ինչպես նաև ժամանակակից գիտություններին, որովհետև նրա ծառայության ասպարեզն է՝ խրատել, ուսուցանել, բարության կոչել, չարից հեռու պահել մարդկանց: Այլապես քահանայի բանիմաց չլինելը աղետալի կլինի ոչ միայն իր, այլ նաև իրեն վստահված հոտի ու համայնքի համար:

Քահանան Ամենակալ Տիրոջ պատգամաբերն է: Ուստի պատգամաբերի վարք պիտի ունենա: Աստծո ծառա ու սպասավոր անվանվելը մեծ պատիվ է, որքա՜ն ավելի բարձր պատիվ է՝ Ամենակալ Տիրոջ պատգամաբեր կոչվելը, որ ոչ միայն սպասավորություն է պարփակում իր մեջ, այլև միջնորդության պաշտոն, որովհետև քահանան Աստծո և մարդկանց միջև միջնորդ է: Քահանան աստվածատեսակ անձ է, եթե միայն Աստծուն է հատուկ մեղքեր քավելը, նույնն անում է նաև քահանան՝ Սուրբ կարգի զորությամբ՝ Աստծո խոսքի համաձայն (Հովհ. Ի 23):

Ձեռնադրությամբ քահանան ոչ միայն նոր կյանքի, նոր ծառայության է լծվում, այլև իրեն տրվում է հոգևոր իշխանության աստիճան, որով նա դառնում է մատակարար Եկեղեցու Սուրբ Խորհուրդների, իրավունք ստանում միջնամուխ լինել իրեն վստահված հոտի կենսական խնդիրներին: Ոչ միայն իր, այլ նաև Աստծո կողմից կոչված քահանան, որ գիտի իր պաշտոնի բոլոր կողմերը, հավատացյալների համար ամենից մեծ բարերարն է այս աշխարհում:

Քահանան է, որ, Ս. Ավազանի մկրտությամբ, լույս կյանքի է առաջնորդում քրիստոնյային, քահանան է մխիթարում նրան փառապանքների մեջ, քահանան քրիստոնյայի ամուսնական միությունն է վավերացնում իր օրհնությամբ, քահանան հանդարտեցնում է խռոված սրտերն ու շփոթված մտքերը, քահանան զորացնում է հավատացյալին բարոյական կյանքի մեջ և Ավետարանի պատվիրաններով կրթում է իրեն վստահված հոտին:

Ինչպես Ազգիս Վեհափառ հայրապետն է ասել՝ «Ժողովուրդը պետք ունի սպասավորի, սակայն այնպիսի սպասավորի, որը գիտի դարման անել նրա կարիքներին, նրա ցավերին, նրա փառապանքներին: Ժողովուրդը պետք ունի սպասավորի, որը գիտե առաջնորդ լինել անհուսության և անորոշությունների մեջ՝ դուրս բերելով լուսավոր ճանապարհներ, հույսի ճանապարհի վրա կանգնեցնելով մեր ժողովրդի զավակաց»:

Սիրելի նորաօծ եղբայրներ, քանի որ արժանի դարձաք ձեր անձերը երկնային գործին նվիրելու, թույլ մի տվեք, որ ինչ-ինչ պատճառներով արատավորվի ձեր պաշտոնը՝ ըստ Պետրոս առաքյալի խրատի (Կորնթ. Ջ 3), այլ արիաբար և հոժարակամ, առանց ծուլության, անթերի ու մաքուր հոգով, սուրբ սրտով, անարատ հավատքով կատարեցեք ձեր պարտականությունները:

Սիրելի նորաօծ հոգևոր եղբայրներ, քաջ գիտակցեք, որ քահանայության ձեր կոչումը մարդկանցից չէ, ոչ էլ մարդու միջոցով է, այլ Նրանից է, որ քահանա կոչվեց ըստ կարգի Մելքիսեդեկի, որ է մեր Տեր Հիսուս Քրիստոս:

Սիրելի նորաօծ հոգևոր եղբայրներ, պատրաստ եղեք՝ անվերապահ հնազանդությամբ կատարելու ձեր հոգևոր ծառայությունը, որտեղ և լինեք, աններկյուղ ու անտրտունջ, պայծառացնելու մեր Ս. Եկեղեցին, մեր ժողովրդին, որին ծառայելու ծանր բեռը և պատիվը մեզ ի վերուստ է տրվում:

Հիշենք Վեհափառ Հայրապետի՝ հոգևորականներին ուղղված հետևյալ պատգամին. «Եկեղեցու այժմյան առաջնահերթ խնդիրը հոգևոր զգացումը վայելելու կերպով հայ ընտանիքից ներս տարածելն է, Եկեղեցական տոնացույցը ժողովրդական կյանքի հետ համախառնելը, որպեսզի Եկեղեցու օրհնությունն ամեն պահի իր զավակաց հետ լինի»:

Շնորհազարդ Վեհափառ Տեր, շնորհավորում ենք Ձեզ, քանզի Ձերդ Սրբության ամենօրյա հոգածությունն է հոգևոր նոր սերնդի պատրաստությունը:

Մեր շնորհավորանքներն ու շնորհակալությունները մեր նորաօծ եղբայրների ծնողներին, որ իրենց զավակներին հասցրել են ընծայումի ազգի մշտավառ զոհասեղանին, մեր զույգ Ճեմարանների դասախոսներին, որոնք իրենց անմնացորդ նվիրումով պատրաստել են հունձեր՝ ժողովրդի ծոցում ամփոփվելու և այնտեղ բազմահատ հասկեր դառնալու համար:

Շնորհավորում ենք և Մայր Աթոռի միաբանությանը, որի մշտական հոգածության ներքո դաստիարակվել և ներշնչվել է ներկա սերունդը:

Սիրելի նորաօծ եղբայրներ, քահանայություն անարատ, ընտիր, սեփական, ահա հիմքը, ահա կնիքը այդ պաշտոնի: Հայ Եկեղեցու փառքն ու բարեկարգությունն է այսպիսի քահանայությունը, որին կարող ենք վստահել:

***Խաղաղութիւն, սէր, շնորհ եւ ողորմութիւն Տեառն մերոյ եւ Փրկչի Յիսուսի Քրիստոսի եղիցի ընդ ձեզ եւ ընդ ամենեսեան. ամէն:***

Նույն օրը, երեկոյան ժամերգության ընթացքում, կատարվեց նորաօծ երկու կուսակրոն քահանաների՝ Տ. Պսակի և Տ. Գաբրիելի վեղարի տվչության և աբեղայի օրհնության կարգը:

*ԱՐԻՍՏԱԿԵՍ ՄՐԿ. ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ*



## Տ. ՊՍԱԿ ԱԲԵՂԱ ՄՈՒՐԱԴՅԱՆ
(ավազանի անունը՝ Արամայիս)

Ծնվել է 1976 թ. մայիսի 6-ին Էջմիածին քաղաքում:

1983-1993 թթ. սովորել և ավարտել է քաղաքի Ռաֆայել Պատկանյանի անվան № 9 միջնակարգ դպրոցը:

1994-1999 թթ. սովորել է Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրանոցում:

1999-2000 թթ. ուսումնառությունը շարունակել և ավարտել է Գևորգյան Հոգևոր Ճեմարանում:

2000 թ. մարտի 2-ին, Ս. Վարդանանց տոնին, ձեռամբ Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Նավասարդ եպս. Կճոյանի, ձեռնադրվել է սարկավագ:

2000-2001 թթ. աշխատել է Վեհարանում որպես գործավար քարտուղար, ապա՝ «Էջմիածին» ամսագրի խմբագրությունում:

2000-2001 թթ. Հայաստանի Ամերիկյան համալսարանում հետևել է «Բիզնես մենեջմենթ» ծրագրին:

2000-2001 թթ. կոչվել է հոգևոր սպասավորության ՀՀ ՊՆ Մայրաքաղաքային գնդում որպես հոգևոր սպասավոր:

2002 թ. օգոստոսի 26-ին պաշտպանել է ավարտաճառ՝ «Կրոնի ծագումը և միաստվածության գաղափարը ըստ համեմատական կրոնագիտության» թեմայով՝ ստանալով «լավ» գնահատական:

2002 թ. սեպտեմբերի 1-ին, Ս. Աստվածածնի գոտու գյուտի տոնի օրը, ձեռամբ Գերաշնորհ Տ. Միոն եպս. Ադամյանի, ձեռնադրվել է կուսակրոն քահանա:



## Տ. ԳԱԲՐԻԵԼ ԱԲԵՂԱ ՍԱՐԳՍՅԱՆ
(ավազանի անունը՝ Գևորգ)

Ծնվել է 1976 թ. Էջմիածնի շրջանի Ոսկեհատ գյուղում:

1983-1993 թթ. սովորել և ավարտել է փեղի միջնակարգ դպրոցը:

1994-1999 թթ. սովորել է Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրանոցում:

1999 թ. փոխադրվել է Ս. Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարան՝ այն ավարտելով 2000 թ.:

Նույն թվականի հուլիսի 16-ին, ձեռամբ Գերաշնորհ Տ. Մեսրոպ արքեպս. Գրիգորյանի, ձեռնադրվել է սարկավագ:

2000 թ. աշխատանքի է անցել «Էջմիածին» ամսագրի խմբագրությունում, ապա՝ հոգևոր ծառայության Ս. Գեղարդ վանքում:

2001-2002 թթ. որպես հոգևոր սպասավոր ծառայել է ՀՀ զինված ուժերում:

2002 թ. օգոստոսի 26-ին պաշտպանել է ավարտաճառ՝ «Վանական Վարդապետը և նրա «Հարցմունք զանազան և պատասխանիք բարառնաբար»» թեմայով:

2002 թ. սեպտեմբերի 1-ին, Ս. Աստվածածնի գոտու գյուտի տոնի օրը, ձեռամբ Գերաշնորհ Տ. Սիոն եպս. Ադամյանի, ձեռնադրվել է կուսակրոն քահանա:



## Տ. ՆԱՀԱՊԵՏ ՔԱՀԱՆԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ
(ավազանի անունը՝ Հովհաննես)

Ծնվել է 1979 թ. մարտի 11-ին քաղաքամայր Երևանում:

1984-1994 թթ. սովորել է Երևանի № 172 միջնակարգ դպրոցում:

1994-2000 թթ. սովորել է Գևորգյան Հոգևոր ճեմարանում:

2000 թ. մարտի 2-ին, ձեռամբ Գերաշնորհ Տ. Նավասարդ եպս. Կճոյանի, ստացել է սարկավագական աստիճան:

2000-2001 թթ. աշխատել է Վեհարանում՝ որպես գործավար-քարտուղար. միաժամանակ Հայաստանի Ամերիկյան համալսարանում հետևելով Բիզնես-մենենջմենթի դասընթացին:

2001 թ. նոյեմբերի 6-ին պաշտպանել է ավարտաճառ՝ «Հայ-Բյուզանդական եկեղեցական կապերը IX-XI դդ.» թեմայով:

2001 թ. ծառայության է անցել Վազգեն Սարգսյանի անվան մոտոհրաձգային գնդում՝ որպես հոգևոր սպասավոր:

2002 թ. սեպտեմբերի 1-ին, Ս. Աստվածածնի գոտու գյուտի տոնի օրը, ձեռամբ Գերաշնորհ Տ. Սիոն եպս. Ադամյանի, ձեռնադրվել է ամուսնացյալ քահանա:



## Տ. ՆՇԱՆ ՔԱՀԱՆԱ ՊԱՆԱՖՅՈՐՈՎ
(ավազանի անունը՝ Լևոն)

Ծնվել է 1977 թ. քաղաքամայր Երևանում:

1984-1994 թթ. սովորել է նախ Երևանի № 89, ապա՝ № 68 միջնակարգ դպրոցներում:

1995-2000 թթ. սովորել է Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրանոցում, ապա՝ Գևորգյան Հոգևոր Ճեմարանում՝ ավարտելով այն 2001 թ.:

2000 թ. մարտի 2-ին, ձեռամբ Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Գերաշնորհ Տ. Նավասարդ եպս. Կճոյանի, ձեռնադրվել է սարկավագ:

2001 թ. հուլիսից նոյեմբեր ամիսներին ծառայել է Գուգարաց թեմում՝ վարելով թեմի Քրիստոնեական դաստիարակության կենտրոնի վարիչ-տնօրենի պաշտոնը:

Նույն թվականի նոյեմբեր ամսից ծառայության է անցնել Մայր Աթոռի վարչակազմակերպական գրասենյակում՝ որպես գործավար-քարտուղար:

2002 թ. մայիսի 11-ին պաշտպանել է ավարտաճառ՝ «4-րդ 5-րդ դարերի Եկեղեցու Հայրերի վախճանաբանական հայացքները» թեմայով:

2002 թ. սեպտեմբերի 1-ին, Ս. Աստվածածնի գոտու գյուտի տոնի օրը, ձեռամբ Գերաշնորհ Տ. Սիոն եպս. Ադամյանի, ձեռնադրվել է ամուսնացյալ քահանա:



## Տ. ԱՄՌՂԻԿ ՔԱՀԱՆԱ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
(ավազանի անունը՝ Արթուր)

Ծնվել է 1978 թ. քաղաքամայր Երևանում:

1985-1995 թթ. սովորել է Ղազարոս Աղայանի անվան № 63 միջնակարգ դպրոցում:

1986-1988 թթ. սովորել է Սուխումիի (Աբխազիա) Հովհաննես Թումանյանի անվան հայկական միջնակարգ դպրոցում:

1995 թվականին ընդունվել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գևորգյան Հոգևոր ճեմարան և 2000 թ. դեկտեմբերի 25-ին՝ Ս. Ստեփաննոս Նախավկայի տոնին, ձեռամբ Գերաշնորհ Տ. Նաթան եպս. Հովհաննիսյանի, Մայր Տաճարում ձեռնադրվել է սարկավագ:

2001 թվականին, ավարտելով Գևորգյան Հոգևոր Ճեմարանը, ծառայության է նշանակվել Վեհարանում, նախ՝ որպես դիվանապետի քարտուղար, ապա՝ Վեհափառ Հայրապետի գործավար-քարտուղար:

2002 թվականի հունիսի 12-ին պաշտպանել է «Ընդհանուր ակնարկ տոնական ընթացակարգի հետ կապված բարեպաշտական արարողությունների և սովորույթների մասին» ավարտաճառը՝ արժանանալով «քաջալավ» գնահատականի:

Նույն թվականի սեպտեմբերի 1-ին, Ս. Աստվածածնի գոտու գյուտի տոնի օրը, ձեռամբ Գերաշնորհ Տ. Սիոն եպս. Ադամյանի, ձեռնադրվել է ամուսնացյալ քահանա:



## Տ. ԱԴԱՄ ՔԱՀԱՆԱ ՄԱԿԱՐՅԱՆ
(ավազանի անունը՝ Գևորգ)

Ծնվել է 1976 թ. քաղաքամայր Երևանում:

1982-1992 թթ. սովորել է № 194 միջնակարգ դպրոցում:

1992-1994 թթ. սովորել է Երևանի գործավար-ռեֆերենտների ուսումնարանում:

1995 թվականին ընդունվել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գևորգյան Հոգևոր ճեմարան և 2000 թ. դեկտեմբերի 25-ին՝ Ս. Ստեփաննոս Նախավկայի տոնին, ձեռամբ Գերաշնորհ Տ. Նաթան եպս. Հովհաննիսյանի, Մայր Տաճարում ձեռնադրվել է սարկավագ:

2001 թվականին, ավարտելով Գևորգյան Հոգևոր Ճեմարանը, ծառայության է նշանակվել Մայր Աթոռի Տեղեկատվական համակարգում որպես մամլո գործավար:

2002 թվականի ապրիլի 11-ին պաշտպանել է «Գրաբարի անցյալ դերբայի իմաստային առումներն ըստ Ղևոնդի «Պատմության»» թեմայով ավարտաճառը՝ արժանանալով «քաջալավ» գնահատականի:

Նույն թվականի սեպտեմբերի 1-ին, Ս. Աստվածածնի գոտու գյուտի տոնի օրը, ձեռամբ Գերաշնորհ Տ. Սիոն եպիսկոպոս Ադամյանի, ձեռնադրվել է ամուսնացյալ քահանա:



## Տ. ՏՐԴԱՏ ՔԱՀԱՆԱ ԲՈՋԻԿՅԱՆ
(ավազանի անունը՝ Բաբկեն)

Ծնվել է 1977 թ. Գավառ քաղաքում:

1983-1994 թթ. սովորել է տեղի № 1 միջնակարգ դպրոցում:

1994 թվականին ընդունվել է Մաանի Վազգենյան Հոգևոր Դպրանոց:

1999 թ. փոխադրվել է Գևորգյան Հոգևոր Ճեմարան՝ այն ավարտելով 2000 թ.:

1998 թ. դեկտեմբերի 25-ին՝ Ս. Ստեփաննոս Նախավկայի տոնին, ձեռամբ Գերաշնորհ Տ. Առաքել եպս. Քարամյանի, Երևանի Սուրբ Սարգիս եկեղեցում ձեռնադրվել է սարկավագ:

2000 թվականին, ավարտելով Գևորգյան Հոգևոր Ճեմարանը, ծառայության է նշանակվել Վեհարանում՝ որպես գործավար-քարտուղար:

2001 թ. հուլիսի 15-ից մինչև դեկտեմբերի 1-ը ծառայության է անցել Մայր Աթոռի Սոցիալական ծառայության բաժնում՝ որպես գործավար-քարտուղար:

2000-2001 թթ. հետևել է Հայաստանի Ամերիկյան համալսարանում կազմակերպված մենեջմենթի դասընթացներին:

2001 թվականի սեպտեմբերից մինչև դեկտեմբեր սովորել է Շվեյցարիայի Բոսսեի Էկումենիկ ինստիտուտում:

2002 թվականի փետրվարի 1-ից հոգևոր ծառայության է անցել Արմավիրի մոտոհրաձգային ուսումնական բրիգադում:

2002 թվականի հուլիսի 10-ին պաշտպանել է «Մխիթար Սասնեցու աստվածաբանական ճառերը» թեմայով ավարտաճառը՝ արժանանալով «քաջալավ» գնահատականի:

Նույն թվականի սեպտեմբերի 1-ին՝ Ս. Աստվածածնի գոտու գյուտի տոնի օրը, ձեռամբ Գերաշնորհ Տ. Սիոն եպս. Ադամյանի, ձեռնադրվել է ամուսնացյալ քահանա:



## Տ. ՊԵՏՐՈՍ ՔԱՀԱՆԱ ԵԶԵԿՅԱՆ
(ավազանի անունը՝ Արմեն)

Ծնվել է 1977 թ. հունվարի 21-ին քաղաքամայր Երևանում:

1983-1986 թթ. սովորել է Երևանի № 106, այնուհետև 1986-1993 թթ. սովորել և ավարտել է № 186 դպրոցը:

1994-2000 թթ. սովորել է Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրանոցում:

1998 թ. դեկտեմբերի 25-ին, Ս. Ստեփաննոս Նախավկայի տոնին, ձեռամբ Կոտայքի թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Առաքել եպս. Քարամյանի, ձեռնադրվել է սարկավագ:

1999-2000 թթ. սովորել և ավարտել է Գևորգյան Հոգևոր Ճեմարանը:

2000 թ. հուլիսի 3-ից մինչև 2000 թ. նոյեմբերի 28-ը աշխատել է ՔԴՔԿ- ում՝ որպես կրոնի ուսուցիչների պատրաստման բաժնի պատասխանատու:

2000-2001 թթ. հետևել է Հայաստանի Ամերիկյան համալսարանի բիզնես-մենեջմենթի դասընթացներին:

2000 թ. նոյեմբերի 29-ից մինչև 2002 թ. ծառայության է անցել Գևորգյան Հոգևոր Ճեմարանում՝ իբրև վերակացու:

2001 թ. նոյեմբերի 6-ին պաշտպանել է ավարտաճառ՝ «Եփրեմ Խուրի Ասորին հայ մատենագրության մեջ» թեմայով:

2002 թ. սեպտեմբերի 1-ին, Ս. Աստվածածնի գոտու գյուտի տոնի օրը, ձեռամբ Գերաշնորհ Տ. Սիոն եպս. Ադամյանի, ձեռնադրվել է ամուսնացյալ քահանա:

# ՆՈՐ ՀՈՒՇԱԿՈԹՈՂԻ ԲԱՑՈՒՄ

Ճանաչված քանդակագործ, ԽՍՀՄ Գեղարվեստի ակադեմիայի իսկական անդամ, ԽՍՀՄ ժողովրդական նկարիչ և ՀԽՍՀ արվեստի վաստակավոր գործիչ Արա Սարգսյանի (1902-1969 թթ.) հեղինակած բազմաթիվ մոնումենտալ արձաններն ու փոքրածավալ կիսանդրիները զարդարում են ոչ միայն մեր գեղատեսիլ մայրաքաղաքի հրապարակներն ու պուրակները, փողոցներն ու շենքերը, այլև դրանք լայնորեն ներկայացված են հանրապետության մյուս բնակավայրերում, ինչպես նաև պատկերասրահներում ու թանգարաններում:

Սակայն միաժամանակ պետք է նշել, որ մեծանուն արվեստագետի ոչ բոլոր գործերն են, որ բաց երկնքի տակ գտել են իրենց տեղը: Ա. Սարգսյանի շատ քանդակներ դեռևս սպասում են հովանավորների, որպեսզի ձուլվեն ու տեղադրվեն իրենց արժանի վայրերում: Դրանցից մեկն էլ նրա «Սահակ Պարթև և Մեսրոպ Մաշտոց» քանդակն է, որը հայ ժամանակակից արձանագործության փայլուն նվաճումներից է:



Հուշակոթողի բացման հանդիսության ընթացքում

Եվ ահա, Երևանի պետական համալսարանի կենտրոնական մասնաշենքի հրապարակում, սեպտեմբերի 3-ին, մեծ հանդիսավորությամբ տեղի ունեցավ Ա. Սարգսյանի հեղինակած հիշյալ հուշակոթողի բացումը:

Հանդիսությունը վերածվեց մեծ փոնախմբության, որին մասնակցում էին հարյուրավոր ուսանողներ, պրոֆեսորադասախոսական կազմի և մայրաքաղաքի հասարակայնության ներկայացուցիչներ և հյուրեր: Ներկա էին նաև Երևանի քաղաքապետ Ռ. Նազարյանը, մայրաքաղաքի գլխավոր ճարտարապետ Ն. Սարգսյանը, այլ պաշտոնատար անձինք և քանդակագործի հարազատներն ու բարեկամները:

Երևանի քաղաքապետը հավաքված լրագրողներին ասաց, որ բացվող հուշարձանախումբը մայրաքաղաքին նոր շուք կհաղորդի և համահունչ կլինի համալսարանի հրապարակում տեղադրված մեր մյուս մեծերի հուշարձաններին:

ԵՊՀ ռեկտոր, ակադեմիկոս Ռ. Մարտիրոսյանն իր բացման խոսքում նշեց, որ փառանդավոր քանդակագործ Ա. Սարգսյանի հանրահայտ «Սահակ Պարթև և Մեսրոպ Մաշտոց» հուշարձանի բացումը մեր մայր կրթօջախի առջև պատմական կարևոր նշա-

նակություն ունի ոչ միայն ուսանողության ու պրոֆեսորադասախոսական կազմի համար, այլև այն արժանի նվեր է մեր ողջ կրթական համակարգին: Արա Սարգսյանի այս մտահղացման մարմնավորումը, շարունակեց ռեկտորը, ունի ավելի քան կեսդարյա պատմություն: Տարիներ շարունակ փարբեր պատճառներով ձգձգվել է այս գեղեցիկ քանդակի տեղադրությունը: Այդ մասին ժամանակին ակնարկել է նաև հեղինակը և խնդրել, որ այն դրվի մայրաքաղաքի արժանավայել փեղերից մեկում: Եվ այսօր, կես



Հուշակոթողի օրհնության ժամանակ

դար անց, կատարվում է նրա իղձը, նրա ստեղծագործությունների գլուխգործոցը դրվում է մեր մայր բուհի հրապարակում, իրեն արժանավայել վայրում: Թվում է, թե մեր առաջին մեծ ուսուցչապետերի այս հուշարձանը ստեղծված է հենց այստեղ կանգնեցվելու համար: Այն մարմնավորում է հայոց Ոսկեդարի և մեր օրերի միջև եղած կապը:

Համալսարանի ռեկտորը նշեց, որ այս քանդակը տեղադրվեց շնորհիվ քանդակագործի որդու Արմեն Սարգսյանի: Նա իր միջոցներով ձուլել է տվել և հետամուտ եղել, որ այն տեղադրվի իրոք արժանավայել տեղում: Քանդակի վրա մեծ աշխատանք է կատարել նաև Ա. Սարգսյանի աշակերտ, քանդակագործ Աշոտ Անդրիասյանը: Հուշարձանը նախագծել է ճարտարապետ Ռոմեն Ջուլհակյանը, իսկ պատվանդանի հետ կապված աշխատանքները իրականացրել է վարպետ Վարդան Ամրոյանը՝ իր որդիների հետ:

Այնուհետև հուշարձանի վրայից դանդաղորեն ցած սահեց ճերմակ պաստառը, և հավաքվածների հայացքի առաջ 3,5 մ բարձրություն ունեցող գեղեցիկ պատվանդանից վեր հառնեց շուրջ 2,5 մետրանոց բրոնզաձույլ վեհաշուք կոթողը՝ Սահակ Պարթևի ու Մեսրոպ Մաշտոցի լուսավոր կերպարներով: Գիրքը, որ նրանց ձեռքին է, քանդակագործի մտահղացմամբ խորհրդանշում է գրականության ու մշակույթի ունեցած դերը մեր ժողովրդի կյանքում: Գիրքը, որ իր բացված էջերին կրում է հայոց Այբուբենը, փաստորեն կապակցում է քանդակի երկու կերպարներին:

Այնուհետև շարականների հոգեզմայլ հնչյունների ուղեկցությամբ Սուրբ Մյուռոնով օծվեց հուշարձանը: Օծումը կատարեց Աստվածաբանական ֆակուլտետի դեկան, պրոֆ. Շահե արքեպիսկոպոս Աճեմյանը: Սրբազան Հայրն իր խոսքում ասաց. «Այսօր մենք հուշարձանի բացումը կատարեցինք Սրբալույս Մյուռոնի օծմամբ: Հայ ժողովուրդը և Հայաստանյայց Եկեղեցին ունեցած են երեք մեծ Սուրբեր: Առաջինն է Սուրբ Գրիգոր Լուսավորիչը, որ քրիստոնեացուց հայությունը, երկրորդ և երրորդն են Սուրբ Սա-

հակ և Սուրբ Մեսրոպ, որոնք քրիստոնեությունը հայացուցին, փրկին զայն մեզ և մեր հոգիին մեջ բացին գեղեցիկ այն լեզուն, որ կկոչվի Հայկազյան լեզու»:

Երևանի Գեղարվեստի ակադեմիայի ռեկտոր, պրոֆ. Ա. Իսաբեկյանն իր ելույթում նշեց, որ Արա Սարգսյանը մեր ժողովրդի հիանալի քանդակագործներից և Գեղարվեստի ակադեմիայի հիմնադիրներից մեկն էր, ում աշակերտած սաները դարձել են հայտնի արվեստագետներ ու նաև մանկավարժներ: Այս տարի մենք նշելու ենք անվանի քանդակագործի ծննդյան 100-ամյակը, և այսօրվա հանդիսությունը ևս մի փունջ է նրա վառ հիշատակին:

Պատմության ֆակուլտետի դեկան, պրոֆ. Բ. Հարությունյանը նույնպես նշեց, որ տեղի ունեցող իրադարձությունը կարևոր նշանակություն ունի Հայաստանի մշակութային կյանքում և թե բնավ էլ պատահական չէ, որ այս հուշարձանը կանգնեցվել է մեր համալսարանի գլխավոր մասնաշենքի առջև, որովհետև թե՛ մեր մեծերը և թե՛ 1919-ին հիմնադրված համալսարանը լույս են բերում:

Բանասիրական ֆակուլտետի մագիստրատուրայի 1-ին կուրսի ուսանող, անվանական կրթաթոշակառու Գևորգ Էմին-Տերյանն իր ելույթում նշեց, որ ուսանողների համար չափազանց պարտավորեցնող է մեր երկու մեծերի ոգեղեն ներկայությունը համալսարանի մոտ: Դա մեզ միշտ կհուշի, թե ով ենք մենք, որտեղից ենք գալիս և ուր ենք գնում:

Քանդակագործ Աշոտ Անդրիասյանն իր ելույթում ասաց. «Այսօր մեզ համար հուզիչ օր է, քանի որ իրականացավ մեր մեծ ուսուցչի երազանքը, ուսուցիչ, որի սաներն են եղել արվեստագետներ Սարգիս Մուրադյանը, Ղուկաս Չուբարյանը, Արա Շիրազը, Սարգիս Բաղդասարյանը, Խաչատուր Իսկանդարյանը, Արշամ Շահինյանը, Յուրի Պետրոսյանը և շատ ուրիշներ, որոնցից շատերն այսօր ներկա են այստեղ»:

Երախտագիտության խոսք ասաց քանդակագործի ծոռնուհի Աստղիկ Ալթունյանը (Երևանի պետական բժշկական համալսարանի դեղագիտության ֆակուլտետի 5-րդ կուրսի ուսանողուհի): Այս հանդիսությունը մեծ խորհուրդ ունի, ասաց նա, քանի որ այն տեղի է ունենում իմ ականավոր պապի ծննդյան 100-ամյակի տարում և այստեղ՝ Երևանի պետական համալսարանում: Ես իմ երախտագիտությունն եմ հայտնում հուշարձանի տեղադրման բոլոր կազմակերպիչներին, ճարտարապետ Ռուբեն Ջուլհակյանին, վարպետ Վարդան Ամիրյանին, բոլոր շինարարներին և մասնակիցներին:

Վերջում, որպես երախտիքի փունջ, համալսարանի ռեկտորը ծաղկեպսակ դրեց նորաբաց հուշարձանի պատվանդանին: Ծաղկեպսակներ դրվեցին նաև Երևանի քաղաքապետարանի և ուսանողության կողմից, և մինչ ուշ երեկո մարդկանց նորանոր խմբեր էին գալիս բացված հուշակոթողը տեսնելու:

*ՎԱՀԱՆ ՄԱՂԱԼՅԱՆ*

# ԲԱՑՎԵՑ ՄԱՆԿԱՏԱՆԸ ԿԻՑ ՀԱՆՐԱԿԱՑԱՐԱՆ

Սեպտեմբերի 24-ին Գավառի մանկատան երեխաների համար բացվեց հանրակացարան, ուր 18 տարին լրացած տղաներն ու աղջիկները կկարողանան մեծ կյանք մտնելուց առաջ օթևան ունենալ:

Գեղեցիկ ու հարմարավետ սենյակներից բաղկացած փոքրիկ օջախում տնօրինների կարգ կատարեց Գեղարքունյաց թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Դերենիկ վրդ. Դավթյանը:

Բարեսիրական այս նախաձեռնությունը հանձն են առել ու բարեխղճորեն իրականացրել CASP-ի անդամները:

CASP-ը Հայաստանի երեխաների հովանավորման ծրագիր է, որի իրականացման համար իրենց ուժերն ի մի են բերել Հայաստանյայց Եկեղեցու ԱՄՆ-ի Արևելյան թեմի Տիկնանց միության անդամները՝ Ջուլի Աշըգյանի գլխավորությամբ:

Հանրակացարանի բացման հանդիսավոր արարողության ժամանակ մանկատան սաները երախտագիտության խոսքեր ուղղեցին հոգևորականաց դասին, բարերարներին և մանկատան տնօրինությանը:

Հանդիսությանը ներկա էին Գավառի բնակիչներ, հյուրեր ԱՄՆ-ից, ինչպես նաև ՀՀ Սոցիալական ապահովության փոխնախարար Կարինե Հակոբյանը: Նա շնորհակալություն հայտնեց Հայ Առաքելական Եկեղեցու ներկայացուցիչներին և բարերարներին՝ կարևորելով ու բարձր գնահատելով նման ձեռնարկումները:

*ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ*
*ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*

*ԼՈՒՐԵՐ ԳՈՒԳԱՐԱՑ ԹԵՄԻՑ*

# ՈՒԽՏԱԳՆԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱԽԹԱԼԱՅԻ Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ՎԱՆՔ ԵՎ ՂՈՒՐՍԱԼՈՒԻ Ս. ԳԵՎՈՐԳ ԵԿԵՂԵՑԻ

Սեպտեմբերի 21-ին՝ հին տոմարով Ս. Աստվածածնի ծննդյան տոնին, Ախթալայի վանքի ուխտագնացության օրն է: Առաջին ուխտավորներն այստեղ սկսում են գալ դեռևս նախորդ օրվա երեկոյան: Նրանց հիմնական մասը վրացահայեր ու նախկին ախթալացիներ են: Իսկ հաջորդ՝ բուն ուխտի օրը վանքի բակը լցվում է ուխտավորներով: Դեպ այստեղ կատարվող ուխտագնացության ավանդների վերականգնման գործում իրենց մեծ ավանդն ունեն Ախթալայի քաղաքապետ Սուրեն Թամազյանն ու մի շարք մտավորականներ՝ աջակցությամբ Գուգարաց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Սեպուհ եպիսկոպոս Չուլջյանի:

Ախթալայի վանքը գտնվում է Ալավերդի քաղաքում, կղզիաձև բարձունքի վրա, որի երեք կողմը խոր ձորեր են, և կարելի է բարձրանալ միայն հյուսիսային կողմից: Լալվարի անտառապատ լանջը, որը հարուստ է պղնձով և այլ թանկարժեք մետաղներով, զարդարված է նաև այս հոյակապ, գեղասքանչ, ճարտարվեստ ու աննման վանքով, որը կոչում են Մարիամ-Անայի վանք, ժողովրդական անվանմամբ՝ Մեյրամանի:

Ախթալայի հանքավայրում դեռևս 5-րդ դարից եղել է մի եկեղեցի, որի մոտ հետագայում ավելացել են կից կառույցներ: 7-րդ դարում, Խաչափայտի գերեդարձության արշավանքի ժամանակ, Հերակլ կայսրն այնտեղ մի քանի նորոգություններ է կատարում: Ինչպես վկայում է Կիրակոս Գանձակեցին, այստեղ է թաղվել Իվանե Զաքարյանը:

Այս վանքում է պահվելիս եղել Իվանեի՝ Վասակ իշխանից ստացած Սուրբ Նշանը, որն էլ 1216 թ. վերադարձվում է Նորավանքին: Վարդան Բարձրբերդցին և Կիրակոս Գանձակեցին մի տեղ ևս հիշատակում են Ախթալայի մասին, 1250 թ. Իվանեի որդի Ավագի մահվան առիթով, որը թաղվում է իր հոր կողքին նույն վանքում:

Ախթալա հին գյուղաքաղաքն այժմյան քաղաքից փոքր-ինչ հեռու է գտնվում Լալվարի փեշին, ավերակ վիճակում, որի մատույցներում ու մանավանդ վանքի շրջակայքում կան խոնարհված և կանգուն եկեղեցիներ ու մատուռներ, խաչքարեր՝ հայերեն արձանագրություններով (ենթադրելի է՝ ավելի վաղ թվագրությամբ): Կան նաև վրացական իշխանության շրջանից շինություններ, որոնք կրում են նաև վրացերեն արձանագրություններ:

Մինչ մեր օրերը վանքի գլխով շատ փոթորիկներ են անցել: Չկան հիշատակություններ, թե երբ է կործանվել եկեղեցու գմբեթը: Միայն պարզ է, որ 20-րդ դարի սկզբին այն արդեն խոնարհված էր: Մինչ խորհրդայնացումն այնտեղ ծառայել են հայազգի բազմաթիվ վարդապետներ ու քահանաներ՝ մեկընդմեջ փոխարինելով իրար:

Գուգարաց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Սեպուհ եպս. Չուլջյանի օրհնությամբ և Քրիստոնեական դաստիարակության կենտրոնի նախաձեռնությամբ սեպտեմբերի 28-ին՝ Ս. Գևորգ զորավարի տոնին, նաև ուխտագնացություն կազմակերպվեց դեպի

Ղուրսալուի Ս. Գևորգ եկեղեցի: Իրենց աղոթքն առ Աստված հղելու և սրբի բարեխոսությունը հայցելու էին եկել Գուգարաց թեմի Եկեղեցասեր երիտասարդաց միության 50 անդամներ, ՔԴԿ-ի ուսուցիչներ: Ս. Գևորգ եկեղեցում ուխտավորներին միացան գյուղապետը, դպրոցի տնօրենը, դպրոցականներ, հավատացյալներ, որոնք միասնաբար աղոթակից եղան Տ. Վահան քհն. Ազարյանի մատուցած Ս. Պատարագին:

*ՆՈՒՆԵ ԲԱԼՑԱՆ*
ՔԴԿ ուսուցչուհի

# ԵԿԵՂԵՑԱՍԵՐ ԵՐԻՏԱՍԱՐԴԱՑ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԸ ՊԱՏԿԵՐԱՍՐԱՀՈՒՄ

Թեմակալ առաջնորդի օրհնությամբ և ԵԵՄ-ի հոգևոր հովիվ Տ. Վահան քհն. Ազարյանի նախաձեռնությամբ միության մի խումբ անդամներ Վանաձորի Կառլոս Աբովյանի անվան պատկերասրահում հանդիպում ունեցան համաքաղաքացի գեղանկարիչներ Փափագ Ալոյանի և Գևորգ Առաքելյանի հետ: Ծանոթանալով Վանաձորի նկարիչների «Աշնանային ցուցահանդես»-ին՝ երիտասարդները նրանց ուղղեցին իրենց հարցերը՝ բացահայտելու արդի արվեստագետի ներաշխարհը, հասկանալու նրա աշխարհընկալումն ու գունային արտահայտչաձևերը, պարզելու կրոնի ու եկեղեցու դերը արդի արվեստագետի ստեղծագործական աշխարհում: Չէ՞ որ գեղանկարչությունը չի ընդունում իրականի կրկնությունը, այլ այն բխկվում է նկարչի երևակայությամբ:

Սկսված քննարկման հարց ու պատասխանը շատ արագ վերածվեց մտերմիկ զրույցի: Երիտասարդները ծանոթացան Լոռու մարզում ապրող և ստեղծագործող նկարիչների աշխատանքներին, դրանց ոճական ուղղություններին և առանձնահատկություններին: Հանդիպման վերջում նկարիչները երիտասարդներին խորհորեցին պահպանել ու գնահատել ամենաթանկը յուրաքանչյուր հայի կյանքում, այն է՝ հավատը, լեզուն, մշակույթը:

Ցանկալի և կարևոր համարելով այս հանդիպումը՝ և՛ նկարիչները, և՛ երիտասարդները միջոցառմանը մասնակից հոգևորականների նախաձեռնությամբ որոշեցին նման հանդիպումները դարձնել պարբերական:

*ԼՈՒՍԻՆԵ ԲԱԼՑԱՆ*
Գուգարաց թեմի ԵԵՄ անդամ

# ՆԱՐԵԿԱՑՈՒ «ՄԱՏՅԱՆ»-Ի ԳՐՈՒԹՅԱՆ 1000-ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ԳԻՏԱԺՈՂՈՎ ՎԵՆԵՏԻԿԻ ՄԽԻԹԱՐՅԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Սեպտեմբերի 3-8-ը Սուրբ Ղազար կղզում կայացավ «Յիշատակս Կենարարին միշտ ճենճերիմ» խորագիրը կրող և «Մատեան ողբերգութեան» երկի շարադրման հազարամյակին նվիրված հոբելյանական գիտաժողով:

Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանձնարարությամբ, հանուն Մայր Աթոռ Ս. Էջմիածնի, գիտաժողովին իր մասնակցությունն էր բերել Մայր Աթոռի միաբան, Գուգարաց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Սեպուհ եպս. Չուլջյանը:

Մասնակիցների թվում էին Եկեղեցիների Միության Վատիկանի գրասենյակի նախագահ Ծիրանավոր Վալտեր Քասբերի քարտուղար Մոնսինյոր Յոհան Պոննին և Հիսուսյան միաբանության անդամ և Քահանայապետական Արևելագիտական համալսարանի տնօրեն Հ. Հեկտոր Վալլ Վիլլարփելը:



Գիտաժողովի մասնակիցները Ս. Ղազարի միաբանությունում

Դասախոսական կազմի մեջ էր Հիսուսյան միաբանության անդամ Հ. Սահակ Քեշիշյանը, որին պարտական ենք «Մատյան»-ի և վերջերս լույս տեսած Ներսես Լամբրոնացու «Մեկնություն Պատարագի» երկի ֆրանսերեն թարգմանությունների համար:

Դասախոսություններով հանդես եկան պրոֆեսոր Գաբրիելլա Ուլուհոջյանը, Բոլոնիայի համալսարանի հայագիտական ամբիոնի վարիչ Հ. Իննոչենցո Կարկանոն և Վենետիկի համալսարանի հայագիտական ամբիոնի վարիչ Հ. Լևոն Զեքիյանը, Մխիթարյան հայրերից՝ Հ. Հովսեփ վրդ. Պեհեսնիլյանը, Հ. Վրթանես վրդ. Ուլուհոջյանը, Հ. Վահան Օհանյանը, Հ. Ներսես Սաքայանը և Հ. Սերոբ Չամուրլյանը:

Սուրբ Ղազար էր ժամանել նաև իփալացի և հայ հոգևորականների ու աշխարհականների մի մեծ խումբ. Մխիթարյան միաբանության հայրեր, հայ և օտարազգի նարեկագետներ:

Այս առիթով Սուրբ Ղազարի Մատենադարանի մեջ կազմակերպվել էր 3 մեծերի՝ Նարեկացու, Շնորհալու և Լամբրոնացու ստեղծագործությունները պարունակող 30 ձեռագրերի ցուցահանդես:

Դասախոսություններին զուգընթաց ներկաները մասնակցեցին ժամերգություններին, ծանոթացան հայ մանրանկարչությանը և Սուրբ Ղազարի վանական համալիրին, Մխիթարյան միաբանության վանական կյանքին:

Մաեստրո Պերճ Ժամկոչյանի երգեհոնային համերգի ընթացքում գիտաժողովի մասնակիցները վայելեցին Յոհան Սեբաստիան Բախի, Անտոնիո Վիվալդիի, Սեզար Ֆրանքի և Ջեֆրի Պրոտիի ստեղծագործությունները:

Գիտաժողովի փակման օրը՝ սեպտեմբերի 8-ին, Մխիթարյան միաբանության Ընդհանրական աբբահայր Հոգեշնորհ Հ. Եղիա Ծ. վրդ. Քիլաղպյանի կողմից Ս. Ղազար կղզում մատուցվեց հանդիսավոր աբբայական Ս. Պատարագ, որին ներկա էին ոչ միայն հրավիրյալները, այլև հարյուրավոր հայ և օտար հավատացյալներ:

*ՍԵՊՈՒՀ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՉՈՒԼՋՅԱՆ*
*Գուգարաց թեմի առաջնորդ*

# ՄԻՋԵԿԵՂԵՑԱԿԱՆ

## ԵԵԿ-Ի ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԾԻՍԱԿԱՆ ՎԵՐՋԻՆ ԺՈՂՈՎԸ

Սույն թվականի սեպտեմբերի 20-25-ը Նորվեգիայի Թրոնդհեյմ քաղաքում տեղի ունեցավ Եվրոպայի Եկեղեցիների Կոնֆերանսի (ԵԵԿ) 12-րդ Ասամբլեայի նախապատրաստական ծիսական հանձնաժողովի վերջին հանդիպումը, որին մասնակցեց Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի պատասխանատու Գերաշնորհ Տ. Եզնիկ եպս. Պետրոսյանը:

Հանդիպման վայր էր ընտրված Նորվեգիայի Թրոնդհեյմ քաղաքը, քանի որ այստեղ պիտի տեղի ունենա ԵԵԿ-ի 12-րդ Ասամբլեան 2003 թ. հունիսի 25-ից հուլիսի 2-ը:

Այս հանդիպման ժամանակ վերջնականապես ճշտվեցին ԵԵԿ-ի 12-րդ Ասամբլեայի ընթացքում տեղի ունենալիք ծիսական արարողությունները և նրանց բովանդակությունը:

Ծրագրված երեք Ս. Պատարագներից մեկը պետք է լինի հայկական: Հայկական Ս. Պատարագից բացի առավոտյան միջկոնֆեսիոնալ արարողություններից մեկի ընթացքում կատարվելու են «Առաւօտ լուսոյ» և «Քրիստոս ի մէջ մեր յայտնեցաւ» շարականներն ու ընթերցվելու է «Ջքէն գոհանամք» աղոթքը: Արարողության ընթացքում քարոզի փոխարեն Եզնիկ Սրբազանը պետք է ներկայացնի մի խոսք հայկական խաչի և խաչքարի առանձնահատկությունների ու խորհրդի մասին:

Ժողովն ավարտվելու է Նիդարոս գետում Ջրօրհնեքի արարողությամբ. նախ Եվրոպայի ավելի քան 50 երկրներից բերված ջուրը (որը բացման արարողության ժամանակ լցվելու է մի մեծ արծաթյա կաթսայի մեջ) լցվելու է գետը՝ «Ձայն Տեառն ի վերայ ջուրց» սաղմոսի ուղեկցությամբ, ապա Օրթոդոքս Եկեղեցիների ներկայացուցիչները կատարելու են արարողության՝ Ս. Խաչը ջուրը գցելու մասը, իսկ Հայ Եկեղեցու պատվիրակությունն ավարտելու է Ջրօրհնեքի արարողությունը՝ «Առաքելոյ աղաւնոյ» շարականի երգեցողությամբ, Ս. Մյուռոնի հեղմամբ և «Պահպանիչ»-ով:

# ԲՈԶԵԻ 10-ՐԴ ԷԿՈՒՄԵՆԻԿ ԳԻՏԱԺՈՂՈՎԸ

2002 թ. սեպտեմբերի 15-ից 21-ը Իտալիայի Բոզեի վանքում տեղի ունեցավ 10-րդ Միջազգային Էկումենիկ Գիտաժողովը, որին իրենց մասնակցությունն էին բերել տարբեր Եկեղեցիների հրավիրյալ ներկայացուցիչներ և պատվիրակություններ՝ թվով շուրջ 100 մասնակիցներ: Գիտաժողովը կազմակերպվել էր Բոզեի վանքի կողմից, որը գտնըվում է Տուրինի շրջակայքում: Տուրինը պատմական հին քաղաք է և հայտնի է Տիրոջ Սուրբ Պատանք-վարշամակով: Այժմ 70 միաբան եղբայրներ և քույրեր ունեցող այս վանքը հիմնադրվել և գործում է շուրջ 35 տարի: Հիմնադիրը վանահայր Էնցո Բիանքին է: Վանքում մեծ տեղ է տրվում պատկերագրությանն ու հրատարակչական գործունեությանը, որոնցից էլ հիմնականում առաջանում է վանքի հասույթը:

Սեպտեմբերի 15-ից 17-ը գիտաժողովի նյութն էր՝ «Սիմեոն Նոր Աստվածաբանը և Կ. Պոլսի վանականությունը»: Սեպտեմբերի 18-ը, ըստ գիտաժողովի ծրագրի, նշանակված էր որպես մշակութային օր, և գիտաժողովի բոլոր մասնակիցները մեկնեցին ուխտի՝ տեսնելու Տուրինյան հայտնի Տիրոջ Սուրբ Պատանք-վարշամակը:

Սեպտեմբերի 19-ից 21-ի գիտաժողովը նվիրված էր Ռուս Ուղղափառ Եկեղեցուն, ի մասնավորի՝ «Օպտին անապատի Սուրբ Հայրերին»:

Գիտաժողովում բացման խոսքով հանդես եկավ Բոզեի վանահայր Հայր Էնցո Բիանքին, որը ողջունեց և շնորհակալություն հայտնեց բոլոր ներկայացուցիչներին՝ իր երախտագիտության խոսքն ուղղելով Եկեղեցու պետերին, ովքեր զույգ գիտաժողովները ողջունելու և օրհնելու համար իրենց ներկայացուցիչների միջոցով գրավոր խոսք էին ուղարկել:

Ամենայն Հայոց Գարեգին Բ Վեհափառ Հայրապետի տնօրինությամբ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայ Առաքելական Ս. Եկեղեցին Էկումենիկ այդ գիտաժողովում ներկայացրեց և Վեհափառի ողջույնի և օրհնության խոսքը փոխանցեց Հոգեշնորհ Տ. Արտակ վրդ. Տիգրանյանը: Հայերենով ընթերցված Վեհափառի խոսքը միաժամանակ թարգմանվում էր իտալերեն, ֆրանսերեն և անգլերեն լեզուներով:

Այնուհետև սկսվեցին նախօրոք ծրագրված դասախոսություններն ու երկխոսությունները անդամ Եկեղեցիների ներկայացուցիչների միջև: Առաջարկ եղավ երկրորդ անգամ ընթերցել Վեհափառ Հայրապետի խոսքը, և սեպտեմբերի 19-ից 21-ի գիտաժողովի ընթացքում այն վերստին ընթերցվեց և կրկին անգամ ընդունվեց մեծ խանդավառությամբ:

Գիտաժողովում ներկայացված էին մեր Եկեղեցու Հայրերի և հատկապես Ս. Եղիշեի, Ս. Գրիգոր Նարեկացու, Ներսես Լամբրոնացու գործերի թարգմանությունները՝ հրատարակված առանձին գրքերով:

Բոզեի վանահայրը պատրաստակամություն հայտնեց իրենց միջոցներով թարգմանել և հրատարակել մի շարք այլ հայ հեղինակների աշխատություններ ևս՝ կարևորելով Հայ Առաքելական Ս. Եկեղեցու պատմական դերը և այսօրվա գործունեությունը:

***ԳԱՅԱՆԵ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ***
*Միջեկեղեցական հարաբերությունների բաժին*

# ԵՌԱՆԴԱՇԱՏ ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆԸ

*«Ոչ եկի պաշտօն առնել, այլ պաշտել»:*
*(Մատթ. Ի 28)*

Հոգևոր այս հանձնառությունը որպես կենսակերպ որդեգրած Գերաշնորհ Տ. Նավասարդ եպիսկոպոս Կճոյանն այսօր 45 տարեկան է: Ուժերի ծաղկման, խոհականության և խոկումի իր տարիները նա նվիրաբերել է Քրիստոսի Ավետարանին և Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու սպասավորության սրբազան առաքելությանը:



Նավասարդ Սրբազանը եղել է երջանկահիշատակ Վազգեն Առաջինի գավազանակիր-քարտուղարը և միաժամանակ Մայր Տաճարի եկեղեցական արվեստի բաժնի վարիչը:

1989 թ. Վազգեն Վեհափառի բարձր տնօրինությամբ Հայր Նավասարդը նշանակվում է Օշականի Սուրբ Մեսրոպ Մաշտոց եկեղեցու վանահայր: Երիտասարդ հոգևորականը կարճ ժամանակում առավել է բարեզարդում Մաշտոցյան սրբավայրը:

Նույն թվականին պաշտպանում է «Սուրբ Գրիգոր Տաթևացու քրիստոսաբանական հայացքները» թեմայով վարդապետական թեզը:

1996 թ. Գարեգին Առաջին հոգելույս Հայրապետի աջակցությամբ և օժանդակությամբ հիմնում է «Սուրբ Մեսրոպ Մաշտոց» դպրատունը, որը դառնում է հայ մտավորականության «հոգեմտավոր մեղվանոցը»:

1997 թ. Գարեգին Առաջին Հայրապետը, իր բնորոշմամբ, «երիտասարդ և աշխույժ, հավատքով առլեցուն, ծառայության կամքով զսպանակված» վարդապետին ձեռնադրում և օծում է եպիսկոպոս:

Վեհափառ Հայրապետը նորաօծ եպիսկոպոսին ուղղված իր շնորհավորական խոսքում ասում է. «Ցանկանում եմ, որ դու լինես լուսարարը հոգևոր լույսին, որ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից տարածվում է մեր ամբողջ ժողովրդի վրա»:

Այսօր արդեն Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ եռանդալից և ավյունաշատ Կաթողիկոսի բարձր հովվապետությամբ Արարատյան Հայրապետական թեմի 45-ամյա առաջնորդական փոխանորդը մասնակցում է մեր համընդհանուր հոգևոր տան՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի բարեշինությանն ու բարեկերտմանը:

2000 թ. Սրբազան Հայրն ընտրվում է «Բնության և հասարակության մասին գիտությունների միջազգային ակադեմիայի» իսկական անդամ, ապա՝ փոխնախագահ: Նա նաև

Ռուսաստանի բնական գիտությունների ակադեմիայի իսկական անդամ է: 2001 թ. Նավասարդ Սրբազանն արժանանում է Եվրոպական համալսարանի պատվավոր դոկտորի կոչման: Նույն թվականին Իտալիայի էկոնոմիայի և սոցիոլոգիայի միջազգային ակադեմիան Սրբազան Հորը շնորհում է ակադեմիկոսի կոչում և Մալթական ասպետների «Ոսկե Հերկուլես» միջազգային բարձրագույն պարգևը:

2002 թվականը ևս արդյունավորությամբ է իր դռները բացում Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Գերաշնորհ Տ. Նավասարդ եպիսկոպոս Կճոյանի առջև: Մարտ ամսին մեր հանրապետության բարձրագույն գիտական հաստատությունը՝ Գիտությունների ազգային ակադեմիան, նրան շնորհում է այդ կաճառի պատվավոր դոկտորի կոչում: Հետագա ամիսներն արտասահմանյան երկրներից, մասնավորաբար ԱՄՆ-ից և Անգլիայից, հաջորդաբար հավելում են նորանոր պարգևներ ու տիտղոսներ՝ «Խաղաղության միջազգային մրցանակ» (ԱՄՆ), «21-րդ դարի աշխարհի 2000 ականավոր մտավորական» (Անգլիա), «Տարվա մարդ» (ԱՄՆ), «Միջազգային կենսագրական կենտրոնի փոխտնօրեն» (Անգլիա), ԱՄՆ-ի Միացյալ մշակութային հիմնադրամի գլխավոր քարտուղար, Քեմբրիջի համալսարանի «Պատվավոր անդամի» անվանական մեդալ ու ժապավեն և այլն:

Սրբազան Հայրը լի է վճռականությամբ և Մայր Եկեղեցու ու հարազատ պետության ամրապնդման ու զորացման համար առավելագույնն իրականացնելու մտավոր ներուժով և կամքով:

Ի սրտե շնորհավորում ենք Սրբազան Հորը և մաղթում հոգևոր արդյունաշատ ծառայության նորանոր փարիներ:

*ՀԱՅԿԱՆՈՒՇ ՄԵՍՐՈՊՅԱՆ*



# ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

## ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԻՍԻ-ԼԵ-ՄՈՒԼԻՆՈ ՔԱՂԱՔԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ ԱՆԴՐԵ ՍԱՆՏԻՆԻԻՆ

Սեպտեմբերի 1-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Ֆրանսիայի Իսի-լե-Մուլինոյի քաղաքապետ Անդրե Սանտինիին: Անդրե Սանտինիի գլխավորած պատվիրակությանն ուղեկցում էր նույն քաղաքի հայոց հոգևոր հովիվ Հոգեշնորհ Տ. Մյուռոն ծ. վրդ. Գըվըզյանը:

Վեհափառ Հայրապետը բարի գալուստ մաղթեց մեծարգո հյուրին հայոց հոգևոր կենտրոն Մայր Աթոռ Ս. Էջմիածին: Նորին Սրբությունն իր գոհունակությունը և շնորհակալությունը հայտնեց Ֆրանսիայի ժողովրդին և Ֆրանսիայի պետությանը հայ ժողովրդի հանդեպ ցուցաբերած եղբայրական սիրո համար: «Թող Աստված պահի ու պահպանի Ձեզ, օրհնի Ձեր բոլոր մտածումներն ու գործերը, որոնք ուղղված են Ֆրանսիայի ժողովրդի բարօրությանը և Ձեր երկրի շինությանն ու զորացմանը»,- մաղթեց Հայոց Հայրապետը:

Իսի-լե-Մուլինո քաղաքի քաղաքապետ Անդրե Սանտինին իր հերթին խորին շնորհակալություն հայտնեց Վեհափառ Հայրապետին ջերմ ընդունելության համար՝ խոսելով իրենց ապագա ծրագրերի մասին՝ կապված Էջմիածին քույր քաղաքի դպրոցների և ընդհանրապես Հայաստանում բարձր տեխնոլոգիաների զարգացման գործում իրենց ցուցաբերելիք նպաստի մասին:

## ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐԻՆ

Սեպտեմբերի 6-ին Վեհափառ Հայրապետն ընդունեց ՀՀ Քաղաքացիական ծառայության խորհրդի անդամներին՝ գլխավորությամբ խորհրդի նախագահ տիար Մանվել

Թադալյանի: Վերջինս, շնորհակալություն հայտնելով ընդունելության համար, Հայոց Հայրապետին ծանոթացրեց խորհրդի անդամների հետ՝ ներկայացնելով իրենց նպատակներն ու գործունեության ոլորտները:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը, բարձր գնահատելով նորաստեղծ այս խորհրդի գործունեությունն ու պատասխանատու դերը կառավարման համակարգում, բարի երթ մաղթեց նրանց: «Ձեր գործը, Ձեր աշխատանքը պատվախնդրությամբ և անաչառությամբ կատարե՛ք, հայրենիքի շահերի գերագույն գիտակցությամբ առաջնորդվե՛ք, որպեսզի միշտ օրհնության արժանանաք»,- ասաց Վեհափառ Հայրապետը:

## ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՎՈԼՈՇԻՆԻՆ

Սեպտեմբերի 18-ին Վեհափառ Հայրապետն ընդունեց ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինի աշխատակազմի ղեկավար Ալեքսանդր Վոլոշինին:

Հանդիպման ընթացքում խոսվեց հայ-ռուսական բարեկամական հարաբերությունների շուրջ:

Նորին Սրբությունը նշեց, որ հայոց հոգևոր կենտրոն Մայր Աթոռ Ս. Էջմիածինը և Հայոց Կաթողիկոսները մշտապես եղել են այդ բարեկամության ջատագովները, իսկ հայ ժողովրդի պատմության դժվարին պահերին հաճախ ստանձնել են նաև առաջնորդող դերակատարություն այդ բարեկամության ամրապնդման գործում: Վեհափառ Հայրապետը միաժամանակ իր ուրախությունը հայտնեց, որ երկու ժողովուրդների դարավոր բարեկամությունն այսօր արդեն օրավուր զարգանում է պետական մակարդակով:

## ԳԱՐԵԳԻՆ ԵՐԿՐՈՐԴ ՎԵՀԱՓԱՌՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՍԱՄՑԽԵ - ՋԱՎԱԽԵԹԻԻ ԼԻԱԶՈՐ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԻՆ

Սեպտեմբերի 25-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Սամցխե-Ջավախեթիում Վրաստանի նախագահ Էդուարդ Շևարդնաձեի լիազոր ներկայացուցիչ Թեյմուրազ Մոսիաշվիլուն:

Հանդիպման ընթացքում Վեհափառ Հայրապետը և Թ. Մոսիաշվիլին քննարկեցին տարածաշրջանային խնդիրներին, ինչպես նաև երկու ազգերի միջև բարեկամության և համագործակցության զարգացմանն առնչվող հարցեր:

# ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՍԱՐԱՏՈՎԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏԻՆ

Սեպտեմբերի 27-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Սարատովի երկրամասի նահանգապետ Դմիտրի Այացկովին:

Հանդիպման ընթացքում խոսվեց երկու ուղղափառ ժողովուրդների բարեկամության ու օրավուր սերտացող կապերի մասին: Պրն Այացկովը Նորին Սրբությանը վստահեցրեց, որ հայաշատ Սարատովում հայերն ապրում են ապահով՝ կարողանալով պահպանել իրենց լեզուն, հավատքը, մշակույթն ու ազգային ավանդույթները:

Նահանգապետը Վեհափառ Հայրապետին պատմեց նաև երկրամասի հոգևոր կյանքի մասին՝ շեշտելով հայ բնակչության բարեպաշտ մասնակցությունը այդ կյանքին:

*ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ*
*ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*



# ՀԱՆԳԻՍՏ ՎԻՐԱՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ԳԵՎՈՐԳ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՍԵՐԱՅԴԱՐՅԱՆԻ

(1938-2002 թթ.)

Սույն թվականի սեպտեմբերի 11-ին ի Տեր հանգյավ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբաններից Վիրահայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Գևորգ արքեպիսկոպոս Սերայդարյանը: Սրբազան Հոր անժամանակ վախճանը խորին ցավ պատճառեց մեր հավատավոր ժողովրդին: Այդ փխուր առիթով, Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանձնարարությամբ, Վրաստանի մայրաքաղաք Թբիլիսի մեկնեց Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Գերաշնորհ Տ. Նավասարդ եպիսկոպոս Կճոյանը կատարելու հոգեհանգստյան և թաղման արարողությունը:

Սրբազան Հոր հետ Հայրապետական տնօրինությամբ Վրաստան մեկնեց Արագածոտնի թեմի առաջնորդական փոխանորդ Հոգեշնորհ Տ. Վազգեն վարդապետ Միրզախանյանը, որը հայրապետական տնօրինությամբ նշանակվել է Վիրահայոց թեմի առաջնորդ:

Նույն օրը Նավասարդ Սրբազանը և Հայր Վազգենը հանդիպում ունեցան Համայն Վրաստանի Կաթողիկոս-Պատրիարք Իլիա Երկրորդի հետ: Սրբազան Հայրը Վրաց Եկեղեցու հովվապետին հանձնեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Կաթողիկոսի եղբայրական ողջույնի նամակը, որում նշված էր նաև Վիրահայոց թեմի նոր առաջնորդի նշանակման մասին: Իլիա Երկրորդը սիրով արձագանքեց Վեհափառ Հայրապետի նամակին:

Ուրբաթ օրը տեղի ունեցավ հոգեհանգստյան կարգ, որին ներկա էին հայ և վրացի պաշտոնատարներ, հոգևորականներ, մտավորականներ, Վիրահայոց թեմի ներկայացուցիչներ:

Հավաքվածների ներկայությամբ ցավակցական խոսք ասաց սգո արարողության հանդիսադիր Գերաշնորհ Տ. Նավասարդ եպիսկոպոս Կճոյանը.

- *«Սգակիր հայրենակիցներ.*

*Հանձնարարությամբ ազգիս Վեհափառ Հայրապետ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդի, ժամանել ենք եղբայրական Վրաստանի մայրաքաղաք հինավուրց Թբիլիսի՝ խոնարհաբար փոխանցելու բոլորիդ Հայոց Հայրապետի վշտակցությունը, խոր ափսոսանքն ու առ Բարձրյալն աղոթքները մեր սիրելի Գևորգ Սրբազանի վաղաժամ մահվան տխուր առիթով: Փոխանցում ենք նաև Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու հոգևոր ողջ դասի ցավակցությունն ու աղոթաձայն մրմունջները:*

*Այսօր մեզ ի մի է բերել դառնագին իրողությունը՝ մահը: Մենք եկել ենք մեր խորին հարգանքի տուրքը մատուցելու Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու զինվորագրյալ սպասավորին, ազնվամիտ ու ծառայասեր հոգևորականին, որի կյանքը անսակարկ նվիրումի ու խոնարհության արտահայտություն եղավ: Ընդմիշտ բաժանվում ենք մի մարդուց, որն իր անձի մեջ կրեց իր երկրի պատմության մի դրվագը, իր ժողովրդի հավերժության խորհրդի հյուլեն:*

*Կարպիս անունով մանկանացու այրն այս ծնվեց 1938 թվականին հայատրոփ ու հայասիրտ մի գաղթավայրում՝ Բուխարեստում: Հայրենիքից հեռու հայորդին իր մեջ կրեց իր հայրենիքը, որի հանդեպ տածած սերը նրան դեպի հայրենի ափ հանեց: Այնուհետև կյանքի ճանապարհը նրան Սուրբ Էջմիածին բերեց, որտեղ ստացավ իր հոգևոր մկրտությունը: Ապա անցավ օրինապահ ու բարեպաշտ, գրասեր, պարտաճանաչ և պատասխանատվության բարձր զգացումով օժտված մարդու և հոգևորականի բոլոր աստիճանները: Ժամանակի Կաթողիկոսը՝ Երանաշնորհ Վազգեն Ա Հայրապետը, նկատեց նրա ազնվածին հատկությունները և ըստ արժանվույն գնահատեց նրան: Գևորգ Զ Չորեքչյան Կաթողիկոսի անունը կրող աբեղան եպիսկոպոսական ձեռնադրությամբ արժանացավ նաև հոգելույս Հայրապետի կաթողիկոսական մատանին կրելու բարձր պատվին:*

*Ազնվահոգի Գևորգ Սրբազանը նախ ծառայեց Մայր Աթոռի ֆինանսական բաժնում, ապա՝ Մայր Տաճարին առընթեր եկեղեցական արվեստի թանգարանում, այնուհետև՝ որպես Հայրապետի գավազանակիր: Էջմիածնի Հոգևոր Ճեմարանում ուսանած բազմաթիվ սաներ՝ նրա եկեղեցագիտական, տոմարագիտական, ծիսագիտական, շարականագիտական իմացությամբ կրթված ճեմարանականներ, այսօր կարոտով են վերհիշում նրա ուսանելի և հետաքրքիր դասերը, ունկնդրին խաղաղություն ու երանություն հաղորդող նրա հանդարտ ու բարեհունչ ձայնը:*

*Սակայն Գևորգ Սրբազանի կյանքի ամենաբովանդակալից մասը՝ 30 տարվա հովվական և առաջնորդական ծառայությունը, նա հոժարակամ ընծայաբերեց ձեզ՝ վիրահայերիդ և ձեր ավագ սերնդին՝ աղոթելով ձեզ համար, հայցելով Երկնային Տիրոջից զորեղացում հայաշունչ ու քրիստոսանվեր ձեր հոգիներին:*

*Պատմական հնամենի այս Աթոռը 30 տարի նշանավորվեց նրա հովվությամբ: Եվ մի քանի օրից պիտի միասին տոնախմբեինք այդ հոբելյանը, սակայն Բարձրյալն Աստծո կամոք նա կնշի այդ նշանակալից տարեդարձը, արդեն տարեկից դարձած, երկնային արքայության մեջ, որտեղից Սրբազանն իր քաղցր աչքը մշտապես կպահի ի վերա վիրահայոց:*

*Ինձ՝ տարիների հեռվում այս սրբանվեր վայրում առաջին քայլերը կատարող սարկավագիս համար առավել դառնաքախիծ է այս պահը: Ես զգում եմ այն սիրելի հոգևորականի մտերմիկ ժպիտի ճառագայթումը, որով առաջին անգամ դիմավորեց ինձ այստեղ՝ Սուրբ Գևորգ եկեղեցու գավթում: Ես շոշափելիորեն տեսնում եմ նրա հանդարտ ընթացքը, զգում նրա հարազատ ներկայությունը, և ինձ թվում է, թե դա ընդամենը երեկ էր:*

*Այստեղ այս պահի իշխանը մահն է, որից սակայն չպիտի երկնչենք մենք, քանզի ապրում ենք հարուցյալ Փրկչի հավատքով, որի մի զորեղ արտահայտությունն էր մեր հանգուցյալ Սրբազանի կյանքը, որ մատուցվեց ազգի գոյասեղանին՝ ի պայծառություն Մայր Աթոռի և ի մխիթարություն հավատացյալ վիրահայոց:*

*Այս ասպնջական հողում՝ եղբայրական Վրաստանի քաղաքամայր Թբիլիսիում, հայավկա այս սրբավայրում, նա կգտնի իր վերջին հանգիստը մեր ժողովրդի լուսապայծառ զավակների հարևանությամբ, Սայաթ-Նովայի հոգու սյուքի տակ՝ որպես մեր եղբայր ժողովուրդների՝ հայերի և վրացիների անխախտ բարեկամության մի վկայություն, և թող Աստված շեն ու պայծառ պահի ի Քրիստոս զինվորագրյալ երկու եղբայր ժողովուրդների անդավաճան միասնությունը: Խաղաղություն՝ հյուրընկալ այս Տանը, բարգավաճում, բարօրություն և անսայթաք ընթացք՝ հայ և վրաց եղբայր ժողովուրդներին:*

*Թող ողորմածն Աստված քաղցրությամբ ընդունի Մայր Աթոռի հավատարիմ զավակ Գևորգ արքեպիսկոպոս Սերայդարյանի հոգին երկնային փառաց անդաստաններում:*

*Աղոթք, խունկ և բյուր օրհնություններ նորոգ հանգուցյալի հիշատակին:*

***«Յիշատակն արդարոյն օրհնութեամբ եղիցի: Ամէն»:***

Շաբաթ օրը տեղի ունեցավ թաղման կարգը և մատուցվեց Սուրբ Պատարագ: Ներկա էին Իլիա Երկրորդը, քույր Եկեղեցիների ներկայացուցիչներ, Հայաստանում և Վրաստանում Վատիկանի արտակարգ և լիազոր դեսպան մոնսինյոր Կլաուդիո Գուջերոտին, Վրաստանի Կաթոլիկ Եկեղեցու առաջնորդ եպիսկոպոս, մոնսինյոր Ջուզեպպե Պազոտոնին, վրացական Մկրտչական-Ավետարանական Եկեղեցու առաջնորդ Մալխազ եպիսկոպոս Սոնղուլաշվիլին, Վրաստանում Լյութերական Եկեղեցու ներկայացուցիչ պաստոր Ազիկովը, Վրաստանի խորհրդարանի անդամներ, պաշտոնական այլ անձինք և բազմաթիվ հավատացյալներ:

Հոգեհացի արարողությունից հետո Իլիա Երկրորդն ընդունեց Հայ Եկեղեցու սգակիր ներկայացուցիչներին, հայտնեց իր ցավակցությունները և վրաց եղբայր ժողովրդի վշտակցությունը: Վրաց Եկեղեցու պետը Գևորգ Սրբազանի վախճանման առիթով ցավակցական գիր փոխանցեց Հայոց Հայրապետին:

Հոգեհանգստի Ս. Պատարագի կարդացվեցին Վեհափառ Հայրապետի, Իլիա Երկրորդի և Վրաստանի Հանրապետության նախագահ Էդուարդ Շևարդնաձեի ցավակցական գրերը:

*ՀԱՅԿԱՆՈՒՇ ՄԵՍՐՈՊՅԱՆ*

# ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

***Սեպտեմբերի 1-ին, կիրակի.- Գ. կիր. զկնի Վերափոխման: Տօն Գիւտի Գօտւոյ Սրբուհւոյ Աստուածածնի:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Սիոն եպս. Ադամյանը: Հընթացս Ս. Պատարագի փեղի ունեցավ քահանայական ձեռնադրություն: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Սրբազան Հայրը «Օրինակ լինիջիր հաւատացելոց բանիւք, գնացիւք, սիրով, հաւատովք, սրբութեամբ» (Ա Տիմ. Դ 12) բնաբանով քարոզ խոսեց (տե՛ս էջ 106):

Հավարտ Ս. Պատարագի, Վեհափառ Հայրապետի հանդիսապետությամբ, կատարվեց Հոգեհանգստյան կարգ:

***Սեպտեմբերի 8-ին, կիրակի.- Դ. կիր. զկնի Վերափոխման: Տօն Ծննդեան Սրբուհւոյ Կուսին Մարիամու յԱննայէ:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Թադեոս վրդ. Զիրեկյանցը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը «Ամենեքին որդիք Աստուծոյ էք՝ հաւատովք ի Յիսուս Քրիստոս» (Գաղ. Գ 26) բնաբանով քարոզ խոսեց:

Հավարտ Ս. Պատարագի, Վեհափառ Հայրապետի հանդիսապետությամբ, կատարվեց Հոգեհանգստյան կարգ:

***Սեպտեմբերի 15-ին, կիրակի.- ԽԱՉՎԵՐԱՑ:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Պարգև արքեպս. Մարտիրոսյանը: «Հայր մեր»-ից առաջ Սրբազան Հայրը «Խաչ քո եղիցի մեզ պարիսպ» (Ժամագիրք) բնաբանով քարոզ խոսեց (տե՛ս էջ 14):

Ս. Պատարագից հետո, Վեհափառ Հայրապետի բարձր նախագահությամբ, կատարվեց Հոգեհանգիստ՝ նորոգ հանգուցյալ Տ. Գևորգ արքեպս. Սիրայդարյանի հոգու խաղաղության համար:

***Սեպտեմբերի 16-ին, երկուշաբթի.- Տօն է Խաչի: Յիշատակ մեռելոց:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Գնել աբղ. Սողոմոնյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

Հավարտ Ս. Պատարագի կատարվեց Հոգեհանգիստ՝ վասն համօրեն ննջեցելոց:

***Սեպտեմբերի 22-ին, կիրակի.- Բ. կիր. զկնի Ս. Խաչի:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Արշակ վրդ. Խաչատրյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը «Եւ եղիցի յաւուր յայնմիկ, հանգուսցէ զքեզ Տէր ի ցաւոց եւ ի սրտմտութենէ քումմէ» (Եսայի ԺԴ 3) բնաբանով քարոզ խոսեց (տե՛ս էջ 18):

***Սեպտեմբերի 29-ին, կիրակի.- Գ. կիր. զկնի Սրբոց խաչի: Տօն է Վարագայ Սրբոյ խաչի:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Սասուն ծ. վրդ. Զմրուխտյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը «Այլ ինձ քաւ լիցի պարծել, բայց միայն ի խաչն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի» (Գաղ. Զ 14) բնաբանով քարոզ խոսեց (տե՛ս էջ 16):

Հավարտ Ս. Պատարագի, Վեհափառ Հայրապետի հանդիսապետությամբ, կատարվեց Հոգեհանգստյան կարգ:

# "ЭЧМИАДЗИН" ОФИЦИАЛЬНЫЙ ЖУРНАЛ ЭЧМИАДЗИНСКОГО КАТОЛИКОСАТА

(Сентябрь 2002)

## ПАТРИАРШИЕ ЭНЦИКЛИКИ И БЛАГОСЛОВЕНИЯ

1. Энциклика Его Святейшества Гарегина II, Католикоса всех армян, г-ну Эдику Барсегяну по случаю его награждения орденом «Св. Григория Просветителя», 4 сентября 2002 г, № 110 (с. 3-4).
2. Благословение и поздравления Его Святейшества Гарегина II, Католикоса всех армян, членам Генерального собрания ВАБС, 11 сентября 2002 г., № 295 (с. 5-6).
3. Патриаршие награды (пожалование в течение сентября 2002 г. энциклик, благословений, ордена «Св. Нерсеса Шнорали» и чести старшинства ряду духовных и светских лиц, оказавших неоценимые услуги Армянской церкви) – (с. 7).

## ОФИЦИАЛЬНАЯ ИНФОРМАЦИЯ

4. Празднование 11-ой годовщины независимости Армении в Первопрестольном св. Эчмиадзине, 21 сентября 2002 г. (с. 8).
5. Поздравления Его Святейшества Гарегина II, Католикоса всех армян, по случаю 11-ой годовщины независимости Армении, 21 сентября 2002 г. (с. 8).
6. Его Святейшество Папа Иоанн-Павел II, Глава Римской католической церкви, выразил свою поддержку Его Святейшеству Гарегину II, Католикосу всех армян, по поводу проблем, связанных с поместем «Парон Тер», 4 сентября 2002 г. (с. 9).
7. Благодарственная молитва в Ереванском соборе Св. Григория Просвятителя. Награждение г-жи Луиз Симон-Манукян и г-на и г-жи Назарянов юбилейными орденами 1700-летия, 9 сентября 2002 г. (с. 10).
8. Поминальная служба в Первопрестольном св. Эчмиадзине о жертвах террористического акта 11 сентября, 10 сентября 2002 г. (с. 11).
9. Поминальная служба у могилы приснопамятного Католикоса Вазгена I, 20 сентября 2002 г. (с. 12).
10. Заседание Верховного Духовного совета в Первопрестольном св. Эчмиадзине, 25 сентября 2002 г. (с. 13).

## ПРОПОВЕДИ

11. Проповедь Его Преосвященства архиепископа Паргева Мартиросяна в Кафедральном соборе Первопрестольного св. Эчмиадзина на праздник Святого Креста, 15 сентября 2002 г. (с. 14-15).

12. Проповедь верховного архимандрита Сасуна Змрухтяна в Кафедральном соборе Первопрестольного св. Эчмиадзина на праздник Варагского Креста, 29 сентября 2002 г. (с. 16-17).
13. Проповедь архимандрита Аршака Хачатряна в Кафедральном соборе Первопрестольного св. Эчмиадзина, 22 сентября 2002 г. (с. 18-20).

## АРМЕНОВЕДЧЕСКИЕ ИССЛЕДОВАНИЯ

14. **ЕГИШЕ БАЗОЯН** – История одной скульптуры на стене Кафедрального собора св.Эчмиадзина, (научное исследование) – (с. 21-31).

### Музыкологическое исследование

15. **ЛИЛИТ СИМОНЯН** – Народные вариации Рождественского гимна «Великое и чудесное таинство» (научное исследование) – (с. 32-41).

16. **ОГАНЕС ЗАТИКЯН** – Церкви района Карни Каринской провинции (научное исследование) – (с. 42-45).
17. **МАРГО МХИТАРЯН** – Жизнь и журналистская деятельность епископа Хорена Степане (научное исследование) – (с. 46-57).
18. **РИММА А. МИРУМЯН** – Значение религии и церкви в организации государственной и правовой жизни армянского народа согласно армянским мыслителям XIX века (научное исследование – (с. 58-69).
19. **АРСЕН АКОПЯН** – О лингвистической культуре татских армян (научное исследование) – (с. 70-82).
20. **ВАЧАГАН ГРИГОРЯН** – Библейские темы в произведениях Левона Шанта (научное исследование) – (с. 83-88).
21. **ГУРГЕН МАНУКЯН** - Сочинения и дипломные работы студентов Геворкянской Духовной семинарии (научное исследование) – (с. 89-93).

### Публикации

22. **САНДРО БЕЙБУТЯН** – «Грустное слово» Католикоса Вазгена (о предислови «Грустное слово» приснопамятного Католикоса Вазгена I, посвященном памяти Католикоса мученика Хорена I Мурадбекяна) - (научное исследование) – (с. 94).
23. **КАТОЛИКОС ВСЕХ АРМЯН ВАЗГЕН I** – Наше грустное слово (по случаю подготовки книги, посвященной светлой памяти Католикоса Хорена I Мурадбекяна) – (с. 95).

## В СВЯТОМ ПЕРВОПРЕСТОЛЕ И В ЕПАРХИЯХ

24. Начало учебного года в Геворкянской Духовной семинарии, 10 сентября 2002 г. (с. 96-98).

### В Севанской Вазгенянской Духовной семинарии

25. Открытие нового жилого корпуса Севанской Духовной семинарии Католикосом всех армян, 7 сентября 2002 г. (с. 99).

26. Начало учебного года в Севанской Духовной семинарии Вазгенян, 14 сентября 2002 г. (с. 100).
27. **ДЬЯКОН ГЕВОРК МАКАРЯН** – Празднество, посвященное тысячелетию освящения Кафедрального собора г. Ани, в Резиденции Католикоса, 22 сентября 2002 г. (с. 101-103).
28. Новая игровая площадка и компьютерная комната в Дворце Айордац в Норке (церемонию открытия совершил Его Святейшество Гарегин II, Католикос всех армян), 26 сентября 2002 г. (с. 104).
29. **ДЬЯКОН АРИСТАКЕС НАВАСАРДЯН** – Рукоположение и освящение в священники в Кафедральном соборе Первопрестольного Св. Эчмиадзина, 1 сентября 2002 г. (помещены биографии Иеромонахов. Псака Мурадяна и Габриэла Саргсяна, священников Наапета Хачатряна, Ншана Панфёрова, Асогика Карапетяна, Адама Макаряна, Трдата Бозикяна и Петроса Езекяна) – (с. 105-115).
30. **ВАГАН МАГАЛЯН** – Открытие нового мемориального памятника на площади нового корпуса Ереванского государственного университета (памятник освятил декан Богословского факультета Его Преосвященство архиепископ Шаге Аджемян), 3 сентября 2002 г. (с. 116-118).
31. Открытие общежития при детдоме в Гаваре (освящение дома совершил архимандрит Дереник Даятян, местоблюститель главы Гегаркуникской епархии, 24 сентября 2002 г. (с. 119).

## Вести из Гугаркской епархии

32. **НУНЕ БАЛЬЯН** – Паломничество в монастырь Св. Богоматери Ахталы и в церковь св. Геворка Гурсалу, 21 сентября 2002 г. (с. 120-121).
33. **ЛУСИНЕ БАЛЬЯН** – Члены Союза набожной молодёжи в Картинной галерее им. Карлоса Абовяна (с. 121).

34. **ЕПИСКОП СЕПУХ ЧУЛДЖЯН** – Симпозиум, посвященный тысячелетию «Книги скорбных песнопений» Григора Нарекаци, в Конгрегации Мхитаристов в Венеции, 3-8 сентября 2002 г. (с. 122-123).

## МЕЖЦЕРКОВНАЯ ИНФОРМАЦИЯ

35. **ГАЯНЭ АЛЕКСАНЯН** –
Последнее подготовительное ритуальное заседание КЕЦ в г. Трондхейме (Норвегия) 20-25 сентября 2002 г. (с. 124).
X Вселенский симпозиум в г. Бозене (Италия), 20-25 сентября 2002 г. (с.125).

36. **АЙКАНУШ МЕСРОПЯН** – Активный церковный деятель (к 45-летию Его Преосвященства епископа Навасарда Кчояна, Виссария Араратской патриаршей епархии) – (с. 126-127).

## АУДИЕНЦИИ В ПЕРВОПРЕСТОЛЬНОМ СВ. ЭЧМИАДЗИНЕ

37. Аудиенция у Его Святейшества Гарегина II мэра г. Исси-ле-Мулино (Франция) г-на Андре Сантини, 1 сентября 2002 г. (с. 128).
38. Аудиенция у Его Святейшества Гарегина II членов Совета гражданской службы, 6 сентября 2002 г. (с. 128-129).
39. Аудиенция у Его Святейшества Гарегина II главы Администрации Президента РФ г-на Александра Волошина, 18 сентября 2002 г. (с. 129).
40. Аудиенция у Его Святейшества Гарегина II Полномочного представителя Самцхе-Джавахетии г-на Теймураза Мосиашвили, 25 сентября 2002 г. (с. 129).
41. Аудиенция у Его Святейшества Гарегина II Губернатора Саратовской области г-на Дмитрия Аяцкого, 27 сентября 2002 г. (с. 130).
42. **АЙКАНУШ МЕСРОПЯН –** Скончался Глава армянской епархии Грузии Его Преосвященство архиепископ Геворк Серайдарян, 11 сентября 2002 г. (с. 131-133).
43. Краткие церковные новости. Информация о святой Службе, проповедях и других церемониях в Кафедральном соборе и Первопрестольном Св. Эчмиадзине в течение сентября 2002 г. (с. 134-135).

# "ETCHMIADZIN" OFFICIAL MONTHLY REVIEW OF THE HOLY ETCHMIADZIN

**(September 2002)**

## PONTIFICAL ENCYCLICALS AND LETTERS OF BLESSING

1. The Encyclical of His Holiness, Karekin II, Catholicos of All Armenians, to Mr. Edik Barseghian, on honoring him with the Insignia of "St. Gregory the Illuminator", September 4, 2002, no. 110 (p.3-4).
2. The Message of Blessing and Appreciation of His Holiness, Karekin II, Catholicos of All Armenians, to the members of the AGBU General Session, September 11, 2002, no. 295 (p.5-6).
3. Pontifical Awards (Encyclicals, Letters of blessing, Insignia of "St. Nerses the Graceful", Honor of Seniority granted by His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, to clergymen and laymen, who have been of great service to the Armenian Apostolic Church during September 2002) – (p.7).

## OFFICIAL NEWS

4. The celebration of the 11th Anniversary of Independence of Armenia at the Mother See of Holy Etchmiadzin, September 21, 2002 (p.8).
5. The Congratulatory Message of His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, on the occasion of the Independence Day, September 21, 2002 (p.8).
6. His Holiness, John-Paul II, the Pope of the Roman Catholic Church, expresses solidarity to the Catholicos of All Armenians, regarding the problems of "Baron Der" property of Jerusalem, September 4, 2002 (p.9).
7. Thanksgiving Worship at the Cathedral of St. Gregory the Illuminator of Yerevan. The ceremony of honoring Mrs. Louise Manoogian Simone and Mr. and Mrs. Nazarian with the Jubilee Orders of the 1700th Anniversary, September 9, 2002 (p.10).
8. Requiem Service at the Mother See of Holy Etchmiadzin for the souls of September 11th victims, September 10, 2002 (p.11).
9. Requiem Service offered on the tomb of His Holiness, Vazken I, of Blessed Memory, September 21, 2002, (p.12).
10. Session of the Supreme Spiritual Council at the Mother See of Holy Etchmiadzin, September 25, 2002, (p.13).

## SERMONS

11. Sermon delivered by His Eminence, Archbishop Pargev Martirossian in the Cathedral of Holy Etchmiadzin, on the Feast of Exaltation of the Holy Cross, September 15, 2002 (p.14-15).
12. Sermon delivered by Very Rev. Fr. Sasoon Zmroukhtian in the Cathedral of Holy

Etchmiadzin, on the Feast of the Holy Cross of Varag, September 29, 2002 (p.16-17).
13. Sermon delivered by Very Rev. Fr. Arshak Khatchatrian in the Cathedral of Holy Etchmiadzin, September 22, 2002 (p.18-20).

## ARMENIAN STUDIES

14. **YEGHISHE BAZOYAN** – The history of a sculpture on the wall of Cathedral of Holy Etchmiadzin (research) – (p.21-31).

## MUSICOLOGICAL STUDY

15. **LILIT SIMONIAN** – The folk variations of the Holy Christmas Hymn "Great and Marvelous Mystery" (research) – (p.32-41).
16. **HOVHANNES ZATIKIAN** – The churches of the Karno Region of the Province of Karin (research) – (p.42-45).
17. **MARGO MEKHITARIAN** – The life and the journalistic activity of Bishop Khoren Stepane (research) – (p.46-57).
18. **RIMA A. MIROUMIAN** – The significance of Religion and Church in the formation of Armenian state and juridical life, according to the Armenian scholars in 19th century (research) – (p.58-69).
19. **ARSEN HAKOBIAN** – On the linguistic culture of tataphone Armenians (research) – (p.70-82).
20. **VACHAGAN GRIGORIAN** – Biblical themes in the works of Levon Shant (research) – (p.83-88).
21. **GOURGEN MANOUKIAN** – Essays and thesis of the students of Gevorkian Theological Academy (research) – (p.89-93).

## PUBLICATIONS

22. **SANDRO BEHBOUTIAN** – The "Sad Speech" of the late Catholicos Vazken I (on the remarks of "Sad Speech" by Catholicos Vazken I, of blessed memory, dedicated to the memory of martyr Catholicos Khoren I Mouradbekian) – (p.94).
23. **VAZKEN I, CATHOLICOS OF ALL ARMENIANS** – Our Sad Speech (on preparing the volume dedicated to Catholicos Khoren I Mouradbekian, of blessed memory) – (p.95).

## WITHIN THE MOTHER SEE AND THE DIOCESES

24. Beginning of the new Academic Year at the Gevorkian Theological Academy, September 10, 2002 (p.96-98).

### Vazgenian Seminary of Sevan

25. Inauguration of the new-built dormitory complex of the Vazgenian Seminary of Sevan by His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, September 7, 2002 (p.99).
26. Beginning of the new academic year of the Vazgenian Seminary, September 14, 2002 (p.100).

27. **DEACON GEVORK MAKARIAN** – Festivity at the Catholicosate, dedicated to the 1000th Anniversary of the Consecration of Cathedral of Ani, September 22, 2002 (p.101-103).
28. Opening of new play-ground and computer laboratory of Children Center of Nor Nork by His Holiness, Karekin II, Catholicos of All Armenians, September 26, 2002 (p.104).
29. **DEACON ARISTAKES NAVASARDIAN** – Ordination of Priests at the Mother See of Holy Echmiadzin, September 1, 2002 (Biographies of Rev. Fr. Psak Muradian, Rev. Fr. Gabriel Sargsian, Fr. Nahapet Khachatrian, Fr. Nshan Panfiorov, Fr. Asoghik Karapetian, Fr. Adam Makarian, Fr. Tirdat Bozikian and Fr. Petros Yezekian) – (p.105-115).
30. **VAHAN MAGHALIAN** – Inauguration of a new Memorial in the new building of Yerevan State University square (the blessing was performed by His Eminence, Shahe Ajemian, the Dean of the Faculty of Theology), September 3, 2002 (p.116-118).
31. Inauguration of a new dormitory at the Gavar Orphanage (Canon of Home Benediction was done by Very Rev. Fr. Derenik Davtian, Locum Tenens of Guegharkunik Diocese), September 24, 2002 (p.119).

## News from the Diocese of Gugark

32. **NUNE BALIAN** – Pilgrimage to the Akhtala Monastery of Holy Virgin and to the St. Gevork Church of Ghursalu, September 21, 2002 (p.120-121).
33. **LUSINE BALIAN** – Members of the Union of Pious Youth visit to Carlos Abovian Gallery of Vanadzor (p.121).

34. **BISHOP SEPUH CHOULJIAN** – Symposium dedicated to the 1000th Anniversary of "Book of Lamentations" of Grigor of Narek at the Mekhitarist Congregation of Venice, September 3-8, 2002 (p.122-123).

## ECUMENICAL NEWS

35. **GAYANE ALEXANIAN**
    a. The Last Ritual Preparatory Session of the ECC in Trondheim (Norway), September 20-25, 2002 (p.124).
    b. The 10th Ecumenical Symposium of Boze (Italy), September 15-21, 2002 (p.125).

36. **HAYKANOOSH MESROPIAN** – The Vigorous Clergyman (on the occasion of the 45th Anniversary of birthday of His Grace, Bishop Navasard Ketchoyan, Vicar of the Pontifical Diocese of Ararat) – (p.126-127).

## AUDIENCES AT THE MOTHER SEE

37. Audience granted by His Holiness, Karekin II to Mr. André Santini, Mayor of Issy-les-Moulineaux (France), September 1, 2002 (p.128).
38. Audience granted by His Holiness, Karekin II to the members of the Civil Service Council of the Republic of Armenia, September 6, 2002 (p.128-129).
39. Audience granted by His Holiness, Karekin II to Mr. Alexandre Voloshin, Head of the Administration of the Russian Federation President, September 18, 2002 (p.129).
40. Audience granted by His Holiness, Karekin II to Mr. Teymuraz Mosiashvili, Plenipotentiary Representative of Samtskhe-Javakheti, September 25, 2002 (p.129).

41. Audience granted by His Holiness, Karekin II to Mr. Dmitri Ayatskov, Governor of the Saratov region, September 27, 2002 (p.130).
42. **HAYKANOOSH MESROPIAN** – Bereavement of His Eminence, Archbishop Gevork Seraydarian, late Primate of the Armenian Diocese of Georgia, September 11, 2002 (p.131-133).
43. Brief Church News: Descriptions of Divine Liturgies, sermons and other services held at the Mother See and the Cathedral of Holy Etchmiadzin during September (p.134-135).

# "ETCHMIADZINE" ORGANE OFFICIEL DU SAINT-SIEGE D'ETCHMIADZINE

(Septembre 2002)


## ENCYCLIQUES PONTIFICALES ET LETTRES DE BENEDICTION

1. Encyclique de Sa Sainteté Garéguine II, Catholicos de tous les Arméniens, à M. Edik Barséghian à l'occasion de sa décoration de l'ordre de «St. Grégoire l'Illuminateur», 4 septembre 2002, no.110 (p. 3-4).
2. Message de bénédiction et de félicitation de Sa Sainteté Garéguine II, Catholicos de tous les Arméniens, aux membres de la Séance Générale de l'UGAB, 11 septembre 2002 no. 295 (p. 5-6).
3. Distinctions pontificales (encycliques, lettres de bénédiction, Ordre de «St. Nerses Chnorhali» accordés au cours du mois de septembre 2002 à des personnalités ecclésiastiques et laïques ayant rendu d'éminents services à l'Eglise arménienne) – (p. 7).

## INFORMATION OFFICIELLE

4. 11e Anniversaire de l'Indépendance de la République d'Arménie au Saint-Siège d'Etchmiadzine, 21 septembre 2002 (p. 8).
5. Message de félicitation de Sa Sainteté Garéguine II, Catholicos de tous les Arméniens, à l'occasion du Jour de l'Indépendance, 21 Septembre 2002 (p. 8).
6. Sa Sainteté Jean-Paul II, Pape de la Sainte Eglise de Rome, a exprimé à Sa Sainteté Garéguine II son soutien concernant les problèmes posés par la propriété «Paron Ter», 4 septembre 2002 (p. 9).
7. Action de Grâce à la Cathédrale Saint-Grégoire l'Illuminateur d'Erevan. Décoration de Mme Louise Simon-Manoukian et de M. et Mme Nazarian d'Ordres jubilaires du 1700e Anniversaire, 9 septembre 2002 (p. 10).
8. Office des Morts au Saint-Siège d'Etchmiadzine en mémoire des victimes de l'acte de terrorisme du 11 septembre, 10 septembre 2002 (p. 11).
9. Office des Morts sur la tombe du Catholicos Vazguen Ier, de radieuse mémoire, 20 septembre 2002 (p. 12).
10. Séance du Conseil Ecclésiastique Suprême au Saint-Siège d'Etchmiadzine, 25 septembre 2002 (p. 13).

## SERMONS

11. Sermon prononcé par Son Eminence l'archevêque Parguev Martirossian à la Cathédrale de St.-Etchmiadzine à la fête de la Sainte Croix, 15 septembre 2002 (p. 14-15).
12. Sermon prononcé par l'archimandrite suprême Sassoun Zmroukhtian à la Cathédrale de St.-Etchmiadzine à la fête de la Croix de Varag, 29 septembre 2002 (p. 16-17).
13. Sermon prononcé par l'archimandrite Arcbak Khatchatrian à la Cathédrale de St.-Etchmiadzine, 22 septembre 2002 (p. 18-20).

## ETUDES ARMENIENNES

14. EGHICHE BADJOYAN – Histoire d'une sculpture sur le mur de la Cathédrale de St.-Etchmiadzine (recherche scientifique) – (p. 21-31).

### Etude musicologique

15. LILIT SIMONIAN – Les variations folkloriques de l'hymne de Noël «Mystère grand et merveilleux» (recherche scientifique) – (p. 32-41).

16. HOVHANNES ZATIKIAN – Les églises de la région de Karno de la province de Karine (recherche scientifique) – (p. 42-45).
17. MARGOT MEKHITARIAN – La vie et la carrière de journaliste de l'évêque Khoren Stépané (recherche scientifique) – (p. 46-57).
18. RIMA A. MIRUMIAN – L'importance de la religion et de l'Eglise pour l'organisation de la vie étatique et juridique du peuple arménien d'après les penseurs arméniens du XIX[e] siècle (recherche scientifique) – (p. 58-69).
19. ARSENE HACOBIAN – Sur la culture linguistique des Arméniens tataphones (recherche scientifique) – (p. 70-82).
20. VATCHAGAN GRIGORIAN – Les thèmes bibliques dans les œuvres de Lévon Chante (recherche scientifique) – (p. 83-88).
21. GOURGUEN MANOUKIAN – Les compositions et les thèses de fin d'études des étudiants du Séminaire Guévorkian (recherche scientifique) – (p. 89-93).

### Publications

22. SANDRO BEHBOUTIAN – Les «Paroles tristes» du Catholicos Vazguen (Sur l'écrit «Paroles tristes» du Catholicos Vazguen I[er], de radieuse mémoire, consacré à la mémoire du Catholicos martyr Khoren I[er] Mouradbékian) – (p. 94).
23. VAZGUEN I[er], CATHOLICOS DE TOUS LES ARMENIENS – Nos Paroles tristes (A l'occasion du livre consacré au Catholicos Khoren I[er] Mouradbékian) – (p. 95).

## AU SAINT-SIEGE ET DANS LES DIOCESES

24. Début de l'année universitaire au Séminaire Guévorkian, 10 septembre 2002 (p. 96-98).

### Séminaire Vazguénian de Sévan

25. Inauguration du nouveau foyer du Séminaire Vazguénian de Sévan par Sa Sainteté Garéguine II, Catholicos de tous les Arméniens, 7 septembre 2002 (p. 99).
26. Début de l'année universitaire au Séminaire Vazguénian de Sévan, 14 septembre 2002 (p. 100).

27. DIACRE GUEVORK MAKARIAN – Festivité à la Résidence du Catholicos, consacrées au Millénaire de la consécration de la Cathédrale d'Ani, 22 septembre 2002 (p. 101-103).
28. Nouveaux espace de jeux et salle d'ordinateurs à la Maison Hayordats de Nork (Inauguration par Sa Sainteté Garéguine II, Catholicos de tous les Arméniens, 26 septembre 2002 (p. 104).
29. DIACRE ARISTAKES NAVASSARDIAN – Ordination de prêtres à la Cathédrale de St.-

Etchmiadzine, 1er septembre 2002 (Biographies du Rev. Fr. Psak Mouradian, du Rev. Fr. Gabriel Sargsian, des prêtres Nahapet Khatchatrian, Nchan Panfiorov, Assoghik Karapétian, Adam Makarian, Trdat Bozikian et Pétros Ezékian) – (p. 105-115).

30. **VAHAN MAGHALIAN** – Inauguration du nouveau Monument commémoratif sur la place du nouveau bâtiment de l'Université d'Erevan (Bénédiction donnée par Son Eminence l'archevêque Chahé Adjémian, doyen de la Faculté de Théologie), 3 septembre 2002 (p. 116-118).
31. Inauguration du nouveau foyer de l'Orphelinat de Gavar (Canon de Bénédiction du foyer accompli par l'archimandrite Dérénik Davtian, Locum Tenens du Primat du Diocèse de Vanadzor, 24 septembre 2002 (p. 119).

## Nouvelles du Diocèse de Gougark

32. **NOUNE BALIAN** – Pèlerinage au monastère de la Sainte-Vierge d'Akhtala et à l'église St.-Guévork de Ghoursalou, 21 septembre 2002 (p. 120-121).
33. **LOUSSINE BALIAN** – Les membres de l'Union des jeunes gens pieux à la Galerie Carlos Abovian de Vanadzor (p. 121).

34. **EVEQUE SEPOUH TCHOULDJIAN** – Symposium consacré au Millénaire du «Livre de Lamentations» de Grigor Narékatsi à la Congrégation des Mekhitaristes de Venise, 3-8 septembre 2002 (p. 122-123).

## INFORMATION INTER-ECCLESIASTQUE

35. **GAYANE ALEXANIAN**

* Dernière réunion rituelle préparatoire du CEE à Trondheim (Norvège), 20-25 septembre 2002 (p. 124).
* Xe Symposium œcuménique de Bozen (Italie), 15-21 septembre 2002 (p. 125).

36. **HAYKANOUCHE MESROPIAN** – Un ecclésiastique actif (à l'occasion du 45e anniversaire de la naissance de Son Eminence l'évêque Navassard Kdjoyan, Adjoint du Diocèse patriarcal d'Ararat) – (p. 126-127).

## AUDIENCES AU SAINT- SIEGE

37. Audience accordée par Sa Sainteté Garéguine II à M. André Santini, Maire d'Issy-les-Moulineaux (France), 1er septembre 2002 (p. 128).
38. Audience accordée par Sa Sainteté Garéguine II aux membres du Conseil du Service civil de la République d'Arménie, 6 septembre 2002 (p. 128-129).
39. Audience accordée par Sa Sainteté Garéguine II à M. Alexandre Volochine, Chef de l'Administration du Président de la Fédération de Russie, 18 septembre 2002 (p. 129).
40. Audience accordée par Sa Sainteté Garéguine II à M. Teymouraz Mossiachvili, représentant Plénipotentiaire de la Samtskhé-Djavakhétie, 25 septembre 2002 (p. 129).
41. Audience accordée par Sa Sainteté Garéguine II à M. Dmitri Ayatskov, Gouverneur de la région de Saratov, 27 septembre 2002 (p. 130).

42. **HAYKANOUCHE MESROPIAN** – Décès de Son Eminence l'archevêque Guévork Séraydarian, Primat du Diocèse des Arméniens de Géorgie, 11 septembre 2002 (p. 131-133).

43. Brèves nouvelles ecclésiastiques. Information sur les Saintes Messes, les sermons et les autres services accomplis au Saint-Siège et à la Cathédrale d'Etchmiadzine au mois de septembre 2002 (p. 134-135).

ԳԼԽԱՎՈՐ ԽՄԲԱԳԻՐ՝ ՎԱՐԴԱՆ ԴԵՎՐԻԿՅԱՆ

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, ԷՋՄԻԱԾԻՆ
«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Республика Армения, Эчмиадзин. Редакция журнала
"Эчмиадзин"
Rédaction de la revue "Etchmiadzine", Etchmiadzine, Arménie

ԴԱՍԻՉ՝ 77764

---

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՏՊԱՐԱՆ